Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

22
9-82

1426

ОБЪЕДИНЕННЫЙ ФОНД
ИМ. А. МЯСНИКЯНА
Б-КА Арм. С.С.Р.
010

22
Գ-82

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼՈՑ

ԵՒ ԹՈՒՂԹՔ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1877

2001 43270-ист. կ.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм. ССР
Им. А. Мяс...

27606-62

ՀՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՌ–ССР А.
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գալուստ Հոգւոյն Սրբոյ:

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԶԲԱՆՆ առաջին զոր արարի՝ վասն ամենայնի,
ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել և ուսու-
2 ցանել, մինչև յօրն պատուիրելոյ Առաքելոցն 'ի ձեռն
3 Հոգւոյն սրբոյ՝ զորս ընտրեաց, և վերացաւ: Որոց
յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարա-
նացն իւրոց, 'ի բազում արուեստս, յաւուրս քառա-
սուն երևել նոցա և ասել վասն արքայութեանն
4 Աստուծոյ: Եւ 'ի հաղորդել ընդ նոսա հացի՝ պա-
տուէր տայր նոցա յԵրուսաղեմէ մի մեկնել, այլ
5 սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուքն յինէն: Զի
Յովհաննէս մկրտեաց 'ի ջուր, այլ դուք մկրտիցիք
'ի Հոգին սուրբ, ոչ յետ բազում ինչ աւուրցս այսո-
6 ցիկ: Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա և ա-
սէին. Տէր, եթէ 'ի ժամանակի՞ աստ յայսմիկ հա-
7 տուցանելոց իցես զարքայութիւնն Իսրայելի: Ասէ
ցնոսա. Ոչ է ձեր գիտել զժամս և զժամանակս,
8 զոր Հայր եդ յիւրում իշխանութեան. այլ առջիք
զօրութիւն 'ի հասանել Հոգւոյն սրբոյ 'ի վերայ ձեր,
և եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ և յամենայն
Հրէաստանի և 'ի Սամարիա, և մինչև 'ի ծագս երկ-

րի։ Եւ զայս իբրեւ ասաց՝ մինչդեռ հայէին նոքա՝ վե- 9
րացաւ, եւ ամպն կալաւ զնա յաչաց նոցա։ Եւ մինչ- 10
դեռ պշուցեալ հայէին ընդ երկինս երթալոյ նորա,
եւ ահաւասիկ արք երկու երեւեցան նոցա 'ի հան-
դերձս սպիտակս, որք եւ ասացին. Արք գալիլեա- 11
ցիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս՝
որ վերացաւն 'ի ձէնջ յերկինս, սոյնպէս եկեսցէ
զոր օրինակ տեսէք զնա երթեալ յերկինս։ Ապա 12
դարձան յԵրուսաղէմ յանուանեալ լեռնէն ձիթե-
նեաց, որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբաթուն
ճանապարհի։ Եւ իբրեւ մտին, ելին 'ի վերնատունն 13
ուր վանքն իսկ էին, Պետրոս եւ Յակովբոս եւ Յով-
հաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս, Բար-
թողոմէոս, եւ Մատթէոս, Յակովբոս ալփեան, եւ
Շմաւոն նախանձայոյզ եւ Յուդա յակովբեան։ Սո- 14
քա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յա-
ղօթս հանդերձ կանամբք եւ Մարեմաւ մարբն Յի-
սուսի եւ եղբարբք նորա։

Ա. Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս 'ի 15
մէջ եղբարցն ասէ. եւ էր անդ բազմութիւն անուանց
իբրեւ հարիւր եւ քսանից. Արք եղբարք, պարտ էր 16
կատարել գրոյն, զոր յառաջագոյն ասաց Հոգին
սուրբ 'ի բերանոյ Դաւթի վասն Յուդայի՝ որ եղեւ
առաջնորդ ունելեացն Յիսուսի. զի 'ի թիւս մեր էր 17
ընդ մեզ, եւ հասեալ էր նմա վիճակ պաշտամանս այ-
սորիկ։ Սա ստացաւ գեօղ 'ի վարձուց անիրաւու- 18
թեան, եւ ուռուցեալ հերձաւ ընդ մէջ եւ հեղաւ ա-
մենայն փոր նորա. եւ յայտնի եղեւ ամենեցուն որ 19
բնակեալ են յԵրուսաղէմ. մինչեւ կոչել գեղջն այն-
միկ բարբառովն իւրեանց Ակեղդամա, այսինքն է՝
գեօղ արեան։ Զի գրեալ է 'ի գիրս Սաղմոսաց. Ե- 20
ղիցի բնակութիւն նորա աւերակ, եւ մի՛ ոք իցէ որ
բնակիցէ 'ի նմա. եւ զկարգ նորա առցէ այլ։ Արդ 21
պարտ է յարանցս յայսցանէ եկելոցս ընդ մեզ յա-
մենայն ժամանակի, յորում մուտ եւ ել առ մեզ տէր 22

Յիսուս, սկսեալ 'ի մկրտութենէն Յովհաննու մին-
չեւ յօրն՝ յորում վերացաւ 'ի մէնջ, վկայ յարու-
23 թեան նորա ընդ մեզ լինել միում 'ի սոցանէ։ Եւ
կացուցին երկուս. զՅովսէփ՝ որում Բարսաբայն
կոչէին, որ անուանեցաւն Յուստոս եւ զՄատա-
24 թիա. եւ կացեալ յաղօթս՝ ասեն. Դու Տէր, սըր-
տագէտ ամենայնի, յայտնեա զմի ոք զոր ընտրեցեր
25 'ի սոցանէ յերկոցունց, առնուլ զվիճակ պաշտամանս
այսորիկ եւ զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս
26 գնալ 'ի տեղի իւր։ Եւ ետուն վիճակս նոցա, եւ ե-
լանէր վիճակն Մատաթեայ. եւ համարեցաւ ընդ
ՎԵՐՋ) մետասան Առաքեալսն։

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ 'ի կատարել աւուրցն պենտակոստէից՝ էին ա-
2 մենեքեան միաբան 'ի միասին։ Եւ եղեւ յանկար-
ծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հող-
3 մոյ, եւ ելից զամենայն տունն յորում նստէին. եւ ե-
րեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ 'ի հրոյ, եւ
4 նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա։ Եւ լցան ամե-
նեքեան Հոգւով սրբով, եւ սկսան խօսել յայլ լե-
5 զուս՝ որպէս եւ Հոգին տայր բարբառել նոցա։ Եւ
էին յԵրուսաղէմ բնակեալ Հրեայք՝ արք երկիւ-
6 ղածք, յամենայն ազգաց որ 'ի ներքոյ երկնից։ Եւ
իբրեւ եղեւ բարբառս այս, եկն միաբան բազմու-
թիւնն եւ խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս
7 խօսել նոցա։ Սքանչանային ամենեքեան եւ զարմա-
նային եւ ասէին ընդ միմեանս. Ո՞չ աւասիկ ամենե-
8 քեան սոքա որ խօսինս՝ գալիլեացիք են, եւ զիա՞րդ
լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում
9 ծնեալ եմք. Պարթեւք եւ Մարք եւ Իլամացիք, եւ որ
բնակեալ են 'ի Միջագետս, 'ի Հրէաստանի եւ 'ի
10 Գամիրս, 'ի Պոնտոս եւ յԱսիա, 'ի Փռիւգիա եւ 'ի
Պամփիւլիա, յԵգիպտոս եւ 'ի կողմանս լիբացւոց,

որ ընդ կիւրենացիս և որ եկք հռոմայեցիք, Հրէայք 11
և եկք նոցուն, կրետացիք և արաբացիք, լսեմք խօ-
սից նոցա 'ի մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ: Ըս- 12
քանչանային ամենեքեան զարմացեալք և ասէին ցմի-
մեանս. Զի՞նչ կամիցի այս լինել: Եւ կիսոցն ընդ 13
խաղ արկեալ ասէին, եթէ քաղցուալից իցեն: Յա- 14
րուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն, ամբարձ
զձայն իւր և խօսեցաւ ընդ նոսա. Արք հրէաստա-
նեայք, և որ բնակեալ էք յԵրուսաղէմ ամենե-
քեան, այս ձեզ յայտնի լիցի և ունկն դիք բանից ի-
մոց. ոչ որպէս դուք կարծէք՝ թէ սոքա արբեալ ի- 15
ցեն. զի դեռ երեք ժամք են աւուրս: Այլ այս է որ 16
ասացաւ 'ի ձեռն մարգարէին Յովելայ. և եղիցի յետ 17
այսորիկ յաւուրս յետինս, ասէ Աստուած, հեղից
յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմնոյ, և մարգա-
րէասցին ուստերք ձեր և դստերք ձեր: Եւ երիտա-
սարդք ձեր տեսիլս տեսցեն, և ծերք ձեր երազովք
յերազեսցին. և 'ի վերայ ծառայից իմոց և 'ի վերայ 18
աղախնաց իմոց յաւուրսն յայնոսիկ հեղից յոգւոյ
իմմէ, և մարգարէասցին: Եւ տաց նշանս յերկինս 'ի 19
վեր, և նշանս յերկիր 'ի խոնարհ, արիւն և հուր և
մրրիկ ծխոյ. արեգակն դարձցի 'ի խաւար և լուսին 20
յարիւն, մինչ չև եկեալ իցէ օր Տեառն մեծ և ե-
րևելի: Եւ եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն 21
Տեառն՝ կեցցէ:

Բ. Արք իսրայելացիք, լուարուք զբանս զայսոսիկ. 22
զՅիսուս Նազովրացի՝ զայր ցուցեալ յԱստուծոյ 'ի
ձեզ՝ զօրութեամբ և նշանօք և արուեստիւք, զոր ա-
րար նովաւ Աստուած 'ի միջի ձերում, որպէս և դուք 23
իսկ գիտէք զնա՝ նկատեալ խորհրդով և կանխագի-
տութեամբն Աստուծոյ՝ մատնեալ 'ի ձեռաց անօրի-
նաց՝ բևեռեալ 'ի փայտի սպանէք. զոր Աստուած յա- 24
րոյց լուծեալ զերկունս մահու, քանզի ոչ էր հնար
ըմբռնել նմա 'ի նմանէ: Դաւիթ իսկ ասէ զնմանէ. 25
Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն

ժամ, զի է ընդ աջմէ իմմէ, զի մի սասանեցայց.
26 վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լե-
27 զու իմ. ևս և մարմին իմ բնակեսցէ յուսով. զի ոչ
թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ
28 քում տեսանել զապականութիւն. Ծանուցեր ինձ
զճանապարհս կենաց, լցուցեր զիս ուրախութեամբ
29 երեսաց քոց: Արք եղբարք, պարտ է համարձակու-
թեամբ ասել ձեզ վասն նահապետին Դաւթի, զի
և մեռաւ և թաղեցաւ, և գերեզման նորա կայ 'ի
30 միջի մերում մինչև ցայսօր: Զի մարգարէ էր և
գիտէր, եթէ երդմամբ երդուաւ նմա Աստուած՝ 'ի
պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա.
31 յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վասն յարու-
թեանն Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի նորա 'ի դը-
ժոխս, և ոչ մարմին նորա ետես զապականութիւն:
32 Զայս Յիսուս յարոյց Աստուած, որում ամենեքին
33 մեք վկայ եմք: Աջովն Աստուծոյ բարձրացեալ, զա-
ւետիս Հոգւոյն սրբոյ ընկալեալ 'ի Հօրէ, սփռեաց
34 զայս՝ զոր դուք իսկ տեսանէք և լսէք: Զի ոչ եթէ
Դաւիթ ել յերկինս. ասէ իսկ ինքն. Ասաց Տէր
35 ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթըշ-
36 նամիս քո պատուանդան ոտից քոց: Արդ ճշմարտի
գիտասցէ ամենայն տունդ Իսրայելի, զի և Տէր զնա
և օծեալ՝ Աստուած արար, զայն Յիսուս՝ զոր դուքն
37 խաչեցէք: Եւ լուեալ զայս՝ զղջացան 'ի սիրտս իւ-
րեանց, և ասեն ցՊետրոս և ցայլ Առաքեալսն.
Զի՞նչ գործեսցուք, արք եղբարք: Ասէ ցնոսա Պետ-
38 րոս. Ապաշխարեցէք, և մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի
ձէնջ յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի 'ի թո-
ղութիւն մեղաց, և ընկալջիք զաւետիս Հոգւոյն
39 սրբոյ. զի ձեզ են աւետիքս և որդւոց ձերոց, և ա-
մենայն հեռաւորաց զորս կոչեսցէ տէր Աստուած
40 մեր: Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն դնէր,
և մխիթարէր զնոսա և ասէր. Ապրեցարուք յազգէ
41 աստի խոտորելոյ յայսմանէ: Ոմանք յօժարութեամբ

ընկալեալ զբան նորա՝ մկրտեցան, և յաւելան յա-
ւուր յայնմիկ հոգիք իբրև երեք հազարք։
Գ. Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան 42
Առաքելոցն, և հաղորդութեան և բեկանելոյ հացին
և աղօթից։ Եւ լինէր ամենայն անձին ահ և եր- 43
կիւղ, և բազում նշանք և արուեստք 'ի ձեռս Առա-
քելոցն գործէին։ Ամենայն հաւատացեալքն էին 'ի 44
միասին, և ունէին զամենայն ինչ հասարակաց. և 45
զստացուածս և զինչս վաճառէին, և բաշխէին զայն
ամենեցուն ում զիարդ պիտոյ ինչ լինէր։ Հանապա- 46
զօր կանխեալ միաբանութեամբ 'ի տաճարն, և առ
տնին բեկանէին զհացն, և առնուին կերակուր ուրա-
խութեամբ, և միամտութեամբ սրտի օրհնէին զԱս- 47
տուած. և ունէին շնորհս առ ամենայն ժողովուրդն.
և Տէր յաւելոյր 'ի փրկեալսն հանապազօր 'ի նոյն։

ԳԼՈՒԽ Գ.

Պետրոս և Յովհաննէս ելանէին 'ի տաճար անդր 1
յիններորդ ժամու աղօթիցն։ Եւ էր այր մի կաղ 2
յորովայնէ մօր իւրոյ, զոր բարձեալ դնէին հանա-
պազօր առ դրան տաճարին, որ կոչէր գեղեցիկ, խնդ-
րել ողորմութիւն յայնցանէ որ մտանէին 'ի տա-
ճարն։ Որոյ տեսեալ զՊետրոս և զՅովհաննէս զի 3
մտանէին 'ի տաճարն, աղաչէր ողորմութիւն առ-
նուլ։ Հայեցաւ 'ի նա Պետրոս Յովհաննու հան- 4
դերձ, և ասէ. Հայեաց 'ի մեզ։ Նա դարձաւ 'ի նո- 5
սա, և ակն ունէր առնուլ ինչ 'ի նոցանէ։ Եւ ասէ 6
Պետրոս. Արծաթ և ոսկի ոչ ունիմ, բայց զոր ու-
նիմ զայս տաց քեզ. յանուն Յիսուսի Քրիստոսի
Նազովրեցւոյ՝ արի և գնա։ Եւ կալեալ զաջոյ ձեռա- 7
նէ նորա յարոյց զնա. և անդէն հաստատեցան բարձք
նորա և սրունք. 'ի վեր վազեաց և սկսաւ գնալ, և 8
եմուտ ընդ նոսա 'ի տաճարն. գնայր և վազվազէր և
օրհնէր զԱստուած։ Եւ ետես ամենայն ժողովուրդն 9

10 զնա, զի գնայր և օրհնէր զԱստուած. և գիտէին
զնա զի սա էր՝ որ նստէր վասն ողորմութեան առ
գեղեցիկ դրան տաճարին. և լցան զարմանալեօք 'ի
11 վերայ նշանին որ եղև։ Եւ մինչ նա ունէր զՊետ-
րոս և զՅովհաննէս, ընթացաւ ամենայն ժողո-
վուրդն առ նոսա 'ի սրահն՝ որ կոչէր Սողոմոնի՝
12 զարմացեալք։ Իբրև ետես Պետրոս՝ պատասխանի
ետ ժողովրդեանն. Արք իսրայելացիք, զի՞ զարմա-
ցեալ էք 'ի վերայ այսորիկ, կամ ընդ մեզ զի՞ էք
պշուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ կամ
13 քաջութեամբ արարեալ իցէ զգնալդ դմա։ Աս-
տուած Աբրահամու, և Աստուած Սահակայ, և
Աստուած Յակովբայ, Աստուած հարցն մերոց փա-
ռաւորեաց զորդի իւր զՅիսուս, զոր դուքն մատնե-
ցէք և ուրացարուք առաջի Պիղատոսի՝ 'ի դատելն
14 նորա արձակել։ Եւ դուք զսուրբն և զարդարն ու-
րացարուք, և խնդրեցէք այր մի մահապարտ շնորհել
15 ձեզ. և զառաջնորդ կենացն սպանէք, զոր Աստուած
16 յարոյց 'ի մեռելոց, որում մեք իսկ վկայեմք։ Եւ
հաւատովք անուան նորա՝ զսա զոր տեսանէքդ և գի-
տէք, հաստատեաց անուն նորա. և հաւատքն որ
նովաւ՝ ետուն դմա զառողջութիւնս զայս յանդիման
17 ձեր ամենեցուն։ Եւ արդ, եղբարք, գիտեմ զի ան-
18 գիտութեամբ արարէք՝ որպէս և իշխանքն ձեր. այլ
Աստուած՝ որպէս յառաջագոյն պատմեաց 'ի բերա-
նոյ ամենայն մարգարէից զչարչարելն Քրիստոսի իւ-
19 րոյ, նոյնպէս և կատարեաց։ Արդ ապաշաւեցէք և
20 դարձարուք 'ի ջնջել զմեղս ձեր. որպէս զի եկեսցեն
ժամանակք հանգստեան յերեսաց Տեառն, և առա-
քեսցէ զյառաջագոյն նկատեալն ձեզ՝ զՅիսուս
21 Քրիստոս։ Զոր պարտ է երկնից ընդունել՝ մինչև
'ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ. զորոց խօ-
սեցաւ Աստուած 'ի բերանոյ սրբոց իւրոց մարգա-
րէից։
22 Դ. Մովսէս ասաց ցհարսն, թէ մարգարէ յա-

բուսցէ ձեզ տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբ-
րեւ զիս, նմա լուիջիք՝ ըստ ամենայնի որ զինչ եւ խօ-
սեսցի առ ձեզ. եւ եղիցի ամենայն անձն՝ որ ոչ լուի- 23
ցէ մարգարէին այնմիկ, սատակեսցի 'ի ժողովրդենէն։
Եւ ամենայն մարգարէք որ 'ի Սամուելէ եւ այսր խօ- 24
սեցան եւ պատմեցին զաւուրսս զայսոսիկ։ Դուք էք 25
որդիք մարգարէիցն, եւ ուխտին զոր ուխտեաց Աս-
տուած ընդ հարսն մեր, եւ ասէ ցԱբրահամ. Ի զա-
ւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի։ Ձեզ 26
նախ յարոյց Աստուած զորդին իւր, եւ առաքեաց զնա
օրհնել զձեզ, 'ի դառնալ ձեզ իւրաքանչիւր 'ի չա-
րեաց ձերոց։

Գ Լ Ո Ւ Խ Դ.

Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, 1
հասին 'ի վերայ նոցա քահանայապետք եւ իշխանք
տաճարին եւ սադուկեցիքն, զայրագնեալք վասն 2
ուսուցանելոյ նոցա զժողովուրդն եւ պատմելոյ Յի-
սուսիւ զյարութիւն մեռելոց. մխեցին 'ի նոսա 3
զձեռս իւրեանց, եւ եդին զնոսա 'ի բանտի մին-
չեւ 'ի վաղիւն, զի էր ընդ երեկս։ Իսկ բազումք 4
'ի լսողաց բանին հաւատացին, եւ եղեւ թիւ մարդ-
կան իբրեւ հազարաց հնգից։ Եւ եղեւ 'ի վաղիւ- 5
անդր ժողովել նոցա զիշխանս եւ զերիցունս եւ
զդպիրս յԵրուսաղէմ, եւ զԱննա քահանայապետ 6
եւ զԿայիափա, եւ զՅովհաննէս եւ զԱղեքսանդրոս,
եւ որք միանգամ էին յազգէ քահանայութեանն.
եւ կացուցեալ զնոսա 'ի մէջ հարցանէին. Որո՞վ 7
զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք
զայս։ Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով սրբով՝
ասէ ցնոսա. Իշխանք ժողովրդեան եւ երիցունք 8
Իսրայելի, թէ արժա՞ն ինչ իցէ դատել զմեզ այսօր 9
վասն երախտեաց առն միոյ տկարի, որով սա բժշկե-
ցաւ։ Յայտնի լիցի ամենեցուն ձեզ, եւ ամենայն ժո- 10

ղովրդեանդ Իսրայելի, զի յանուն Յիսուսի Քրիս-
տոսի Նազովրեցւոյ զոր դուքն խաչեցէք՝ զոր Աս-
տուած յարոյց 'ի մեռելոց, նովաւ սա կայ աւասիկ
11 առաջի ձեր ողջացեալ։ Նա է վէմն անարգեալ 'ի
ձէնջ շինողաց, որ եղեւ գլուխ անկեան. եւ չիք այ-
12 լով իւիք փրկութիւն. զի եւ ոչ անուն այլ գոյ 'ի
ներքոյ երկնից տուեալ 'ի մարդիկ՝ որով արժան իցէ
կեալ մեզ։
13 Ա. Հայեցեալ 'ի համարձակութիւնն Պետրոսի
եւ Յովհաննու, եւ 'ի վերայ հասեալք թէ արք տը-
գէտք եւ առանց դպրութեան են, զարմանային. զի
14 ճանաչէին զնոսա թէ ընդ Յիսուսի էին. եւ զայրն
եւս տեսանէին զբժշկեալն՝ զի կայր ընդ նոսա, եւ ոչ
15 ինչ կարէին տալ պատասխանի։ Եւ հրամայեալ
նոցա արտաքս քան զատեանն ելանել, խորհէին
16 ընդ միմեանս, եւ ասէին. Զի՞նչ արասցուք արանցս
այսոցիկ. զի երեւելի նշան եղեւ 'ի ձեռս նոցա. ամե-
նայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայտ է, եւ ոչ կա-
17 րեմք ուրանալ. այլ զի մի՛ առաւել ճարակեսցի 'ի
ժողովուրդն, սպառնասցուք նոցա մի՛ եւս խօսել յա-
18 նունն յայն՝ մի՛ ումեք 'ի մարդկանէ։ Եւ կոչեցեալ
զնոսա պատուիրեցին ամենեւին մի՛ խօսել, եւ մի՛ ու-
19 սուցանել յանուն Յիսուսի։ Իսկ Պետրոս եւ Յով-
հաննէս պատասխանի ետուն եւ ասեն ցնոսա. Եթէ
արժան իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել
քան Աստուծոյ, ընտրեցէք. այլ մեք ոչ կարեմք զոր
20 տեսաքն եւ լուաք՝ չխօսել։ Նոքա սպառնացեալ ար-
21 ձակեցին զնոսա, եւ ոչ ինչ գտեալ թէ որպէս պա-
տուհասեսցեն զնոսա՝ վասն ժողովրդեանն. զի ամե-
նեքեան փառաւոր առնէին զԱստուած վասն իրայն
22 եղելոյ. զի ամաց էր այրն աւելի քան զքառասուն,
23 յորոյ վերայ եղեւ նշանս այս բժշկութեան։ Եւ ան-
տի արձակեալ եկին առ իւրեանսն, եւ պատմեցին՝
որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն եւ երի-
24 ցունքն։ Եւ նոցա լուեալ, ամբարձին զձայն իւ-

րեանց առ Աստուած՝ և ասեն. Դու տէր Աստուած՝
որ արարեր զերկինս և զերկիր և զծով և զամենայն
որ 'ի նոսա, որ 'ի բերանոյ հօր մերոյ Դաւթի ծա- 25
ռայի քոյ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ ասացեր. Զմ՞
խռովեցան հեթանոսք՝ և ժողովուրդք խորհեցան 'ի
ունոտիս. յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշ- 26
խանք ժողովեցան 'ի միասին վասն Տեառն և վասն
օծելոյ նորա։ Ժողովեցան արդարև 'ի քաղաքիս 27
յայսմիկ 'ի վերայ սրբոյ որդւոյ քոյ Յիսուսի զոր օ-
ծերն՝ Հերովդէս և պոնտիոս Պիղատոս՝ ազգօք և
ժողովրդովք Իսրայելի, առնել որչափ ձեռն քո և 28
կամք յառաջագոյն սահմանեցին լինել։ Եւ արդ, 29
Տէր, հայեաց 'ի սպառնալիս նոցա, և տուր ծառայից
քոց ամենայն համարձակութեամբ խօսել զբանն
քո. 'ի ձգել զձեռն քո 'ի բժշկութիւն և նշանս և ա- 30
րուեստս՝ լինել անուամբն սրբոյ որդւոյ քոյ Յիսուսի։
Եւ մինչ կային նոքա յաղօթս՝ շարժեցաւ տեղին յո- 31
րում էին ժողովեալ, և լցան ամենեքին Հոգւով
սրբով, և խօսէին զբանն Աստուծոյ համարձակու-
թեամբ։

Զ. Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ և 32
անձն մի. և ոչ ոք 'ի նոցանէ ասէր զինչ իւրոց թէ
իւր իցէ, այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց. և 33
զօրութեամբ բազմաւ տային վկայութիւն Առա-
քեալքն զյարութեանն տեառն Յիսուսի Քրիստո-
սի։ Եւ շնորհք մեծամեծք էին 'ի վերայ ամենե-
ցուն նոցա. և ոչ ոք կարօտէր 'ի նոսա. զի որ միան- 34
գամ տեարք էին գիւղից կամ ապարանից՝ վաճա-
ռէին, և բերէին զգինս վաճառելոցն՝ դնէին առ ոտս 35
Առաքելոցն. և բաշխէին իւրաքանչիւր՝ որպէս ումեք
պիտոյ ինչ լինէր։ Յովսէփ՝ որ կոչեցաւն Բառնաբաս 36
յԱռաքելոց անտի, որ թարգմանի որդի մխիթարու-
թեան, ղեւտացի, յազգէ կիպրացի, էր նորա գեօղ. 37
վաճառեաց և եբեր զգինսն՝ և եդ առ ոտս Առաքե-
լոցն։

ԳԼՈՒԽ Ե

1 Իսկ այր ոմն Անանիա անուն, հանդերձ կնաւ իւ-
2 րով Սափիրաւ, վաճառեաց ագարակ, և խորեաց 'ի
գնոց անտի՝ գիտելով և կնոջն. և եբեր մասն ինչ՝ եդ
3 առ ոտս Առաքելոցն։ Ասէ Պետրոս. Անանիա, ըն-
դէ՞ր ելից սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն
4 սրբոյ, և խորել 'ի գնոց գեղջն. ո՞չ ապաքէն մինչ
կայրն քո էր, և 'ի վաճառելն՝ ընդ քո իշխանու-
թեամբ էր. զի՞ է՝ զի եդիր 'ի սրտի քում զիրս զայս.
5 ոչ ստեցեր մարդկան՝ այլ Աստուծոյ։ Եւ լուեալ
Անանիա զբանս զայսոսիկ, անկաւ և եհան զոգի. և
եղև ահ մեծ 'ի վերայ ամենեցուն որ լուան զայն։
6 Յոտն կացին երիտասարդքն՝ և ամփոփեցին զնա, և
7 տարան թաղեցին։ Եւ եղև, իբրև ժամք երեք ան-
ցին, և կին նորա ոչ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ
8 'ի ներքս։ Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ
ցնա. Ասա դու ինձ՝ թէ ա՞յնչափ գնոյ զգեօղն վա-
9 ճառեցէք։ Եւ նա ասէ. Այո, այնչափ։ Եւ ասէ
ցնա Պետրոս. Զի՞ է՝ զի միաբանեցէք դուք փոր-
ձել զՀոգին Տեառն. ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն
10 քո 'ի դրան, հանցեն և զքեզ։ Եւ անկաւ անդէն
առ ոտս նորա և եհան զոգի. մտին երիտասարդքն՝
գտին զնա մեռեալ, և հանին թաղեցին առ առն իւ-
11 րում։ Եւ եղև երկիւղ մեծ 'ի վերայ ամենայն ե-
կեղեցւոյն, և 'ի վերայ ամենեցուն որ լուանն զայն։
12 Է. Եւ 'ի ձեռս Առաքելոցն լինէին նշանք և ա-
րուեստք բազումք 'ի ժողովրդեանն. և էին միաբան
13 ամենեքեան 'ի սրահին Սողոմոնի. և յայլոց անտի
ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա, այլ յարգէր զնոսա
14 ժողովուրդն։ Եւ առաւել ևս յաւելուին հաւատա-
ցեալքն 'ի Տէր, բազմութիւն արանց և կանանց.
15 մինչև 'ի հրապարակս հանել զհիւանդս՝ և դնել
պատգարակօք և մահճօք իւրեանց, զի ընդ անցա-

նէն Պետրոսի՝ գոնէ հովանին նորա հասցէ ումեք 'ի
նոցանէ։ Եւ ժողովէր բազմութիւնն շուրջ 'ի քաղա֊ 16
քաց անտի յԵրուսաղէմ. բերէին զհիւանդս և զնե֊
ղեալս յայսոց պղծոց, որք և բժշկէին ամենեքեան։
Յարուցեալ քահանայապետն և ամենեքին որ ընդ 17
նմա, և աղանդ սադուկեցւոց, լցան նախանձու. և 18
արկին զձեռս յԱռաքեալսն, և եդին զնոսա հրապա֊
րակաւ 'ի բանտի։ Ապա հրեշտակ Տեառն գիշերի 19
եբաց զդուրս բանտին, և հանեալ զնոսա՝ ասէ.
Գնացէք կացէք 'ի տաճարին, և խօսեցարուք ընդ 20
ժողովրդեանն զամենայն պատգամս կենացս այսո֊
ցիկ։ Եւ իբրև լուան, մտին ընդ առաւօտն 'ի տա֊ 21
ճարն՝ և ուսուցանէին։ Եկն քահանայապետն՝ և որ
ընդ նմա, կոչեցին միաբան զատեանն և զամենայն
ծերակոյտ որդւոյն Իսրայելի. և առաքեցին 'ի բան֊
տըն՝ ածել զնոսա։ Եւ իբրև եկին սպասաւորքն, ոչ 22
գտին զնոսա 'ի բանտին. դարձեալ անդրէն պատմե֊ 23
ցին, և ասեն, Թէ զբանտն գտաք փակեալ ամենայն
զգուշութեամբն, և զպահապանսն զի կային առ
դրանն. բացաք՝ և 'ի ներքս զոք ոչ գտաք։ Իբրև 24
լուան զբանս զայս իշխանք տաճարին և քահանայա֊
պետքն, հիանային վասն նոցա, թէ զինչ արդեօք լի֊
նիցի այն։ Եւ եկն ոմն պատմեաց նոցա, թէ ահա 25
արքն զորս եդիք 'ի բանտին՝ կան 'ի տաճարին և ու֊
սուցանեն զժողովուրդն։ Յայնժամ երթեալ իշ֊ 26
խանն սպասաւորօքն հանդերձ՝ ած զնոսա ոչ բռնու֊
թեամբ. քանզի երկնչէին 'ի ժողովրդենէն՝ զի մի
քարկոծեսցին։ Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յատե֊ 27
նի. եհարց զնոսա քահանայապետն, և ասէ. Ո՞չ պա֊ 28
տուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի՛ ուսուցանել յա֊
նուանն յայն. և արդ աւասիկ լցէք զԵրուսաղէմ ու֊
սմամբդ ձերով, և կամիք ածել 'ի վերայ մեր զարիւն
զառն զայնորիկ։ Պատասխանի ետ Պետրոս և Առա֊ 29
քեալքն և ասեն. Հնազանդել պարտ է Աստուծոյ
առաւել քան մարդկան։ Աստուած հարցն մերոց յա֊ 30

րոյց զՅիսուս՝ զոր դուքն սպանէք կախեալ զփայտէ.
31 զնա Աստուած առաջնորդ և փրկիչ բարձրացոյց ա֊
ջովն իւրով՝ տալ ապաշխարութիւն Իսրայելի և թո֊
32 ղութիւն մեղաց. և մեք եմք նորա վկայք բանիցս
այսոցիկ, և Հոգին սուրբ՝ զոր ետ Աստուած հնա֊
33 զանդելոց իւրոց։ Եւ նոքա իբրև լուան, առատա֊
նային և խորհէին սպանանել զնոսա։
34 ԲԻ. Յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին փարիսե֊
ցի, որում անուն էր Գամաղիէլ՝ օրէնսուսոյց, պա֊
տուական ամենայն ժողովրդեանն, հրամայեաց սա֊
35 կաւիկ մի զարսն արտաքս տանել. և ասէ ցնոսա.
Արք Իսրայելացիք, հայեցարուք 'ի ձեզ վասն ա֊
36 րանցս այսոցիկ, զինչ արժան իցէ գործել։ Յառաջ
քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թևդաս՝ ասել
զանձնէ թէ իցէ ոմն. յոր անկան արք թուով իբրև
չորեք հարիւր. որ սպանաւ, և ամենեքեան որ միա֊
բանեալ էին ընդ նմա՝ քակտեցան և եղեն յոչինչ։
37 Յետ նորա յարեաւ Յուդաս գալիլեացի՝ յաւուրս
աշխարհագրին. և ապստամբեցոյց ժողովուրդ բա֊
զում զկնի իւր. և նա կորեաւ, և ամենեքեան որ
38 ընդ նմայն հաւանեալ էին՝ ցրուեցան։ Եւ զարդիս
ասեմ ձեզ, 'ի բաց կացէք յարանցդ յայդցանէ, և
թոյլ տուք դոցա. զի եթէ 'ի մարդկանէ իցէ խոր֊
39 հուրդդ այդ կամ գործդ՝ քակտեսցի. ապա թէ
յԱստուծոյ է՝ ոչ կարէք քակտել զդոսա. գուցէ և
40 աստուածամարտք գտանիցիք։ Հաւանեցան նմա. և
կոչեցեալ զԱռաքեալսն՝ գան հարին, և պատուիրե֊
ցին՝ մի՛ ևս խօսել յանուն Յիսուսի. և արձակեցին
41 զնոսա։ Եւ նոքա գնային խնդալով յերեսաց ատե֊
նին, զի վասն անուանն արժանի եղեն անարգելոյ։
42 Եւ զամենայն օր 'ի տաճարին և առտնին ոչ դադա֊
րէին ուսուցանել և աւետարանել զՅիսուս Քրիս֊
տոս։

ԳԼՈՒԽ Զ

Եւ յաւուրսն յայնոսիկ 'ի բազմանալ աշակեր֊ 1
տացն՝ եղև տրտունջ Յունացն առ Հեբրայեցիսն.
զի արհամարհեալ լինէին 'ի պաշտամանն հանապա֊
զորդի այրիքն նոցա: Կոչեցին երկոտասանքն զբազմու֊ 2
թիւն աշակերտացն և ասեն. Ոչ է հաճոյ մեզ թո֊
ղուլ զբանն Աստուծոյ և պաշտել զսեղանս. ընտրե֊ 3
ցէք, եղբարք, վկայեալս 'ի ձէնջ արս եօթն, զորս
կացուսցուք 'ի վերայ պիտոյիցս այսոցիկ. և մեք ա֊ 4
ղօթից և պաշտաման և բանին հպատակ լիցուք: Եւ 5
հաճոյ թուեցաւ բանն առաջի ամենայն բազմու֊
թեանն. և ընտրեցին զՍտեփանոս, այր լի հաւա֊
տով և Հոգւով սրբով, և զՓիլիպպոս և զՊրոքորոն
և զՆիկանովրայ և զՏիմոնայ և զՊարմենայ և զՆի֊
կողայոս զեկն անտիոքացի. զորս կացուցին առաջի Ա֊ 6
ռաքելոցն, և աղօթս արարեալ՝ եդին 'ի վերայ նոցա
զձեռս: Եւ բանն Աստուծոյ աճէր, և բազմանայր 7
թիւ աշակերտացն յոյժ յԵրուսաղէմ. և բազում
ժողովք 'ի քահանայիցն անսային հաւատոցն:

ԲԲ. Ստեփանոս՝ այր լի շնորհօք և զօրութեամբ, 8
առնէր արուեստս և նշանս մեծամեծս 'ի ժողովր֊
դեանն: Յարեան ոմանք 'ի ժողովրդենէն, որ կոչէր 9
լիբեացւոց և կիւրենացւոց և աղեքսանդրացւոց՝ և որ
'ի կիլիկեցւոց և յԱսիայ, վիճել ընդ Ստեփանոսի.
և ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեանն և զհո֊ 10
գւոյն՝ որով խօսէր: Յայնժամ հրապուրեցին արս ո֊ 11
մանս ասել զնմանէ, թէ լուաք զդորա խօսել բանս
հայհոյութեան 'ի Մովսէս և յԱստուած: Եւ խռո֊ 12
վեցին զժողովուրդն և զերիցունսն և զդպիրսն, և
հասեալ 'ի վերայ յափշտակեցին զնա և ածին յա֊
տեանն: Եւ կացուցին վկայս սուտս որ ասէին. 13
Այրս այս 'ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան

14 զտեղւոյն սրբոյ և զօրինացն. լուաք 'ի դմանէ զի ա֊
սէր, թէ Յիսուս Նազովրեցի՝ նա քակեսցէ զտեղիս
զայս, և փոխեսցէ զօրէնսս զոր ետ մեզ Մովսէս:
15 Եւ հայեցեալ 'ի նա ամենեցուն որ նստէին յատե֊
նին, տեսին զերեսս նորա իբրև զերեսս Հրեշտակի:

ԳԼՈՒԽ Է

1 Ասէ քահանայապետն՝ եթէ արդարև այդ այդ֊
2 պէս իցէ: Եւ նա ասէ. Արք եղբարք և հարք,
լուարուք ինձ: Աստուած փառաց երևեցաւ հօր մե֊
րում Աբրահամու, մինչդեռ 'ի Միջագետս էր,
մինչ չև բնակեցուցեալ էր զնա 'ի Խառան. և ասէ
3 ցնա. Ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ, և եկ
4 յերկիր՝ զոր ցուցից քեզ: Յայնժամ ելեալ յերկ֊
րէն քաղդեացւոց բնակեցաւ 'ի Խառան. և անտի
յետ մեռանելոյ հօր նորա, փոխեաց պանդխտեցոյց
զնա յերկրիս յայսմիկ, յորում դուքս այժմ բնա֊
5 կեալ էք: Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն 'ի սմա,
և ոչ քայլ մի ոտին. և խոստացաւ տալ նմա զսա 'ի
6 բնակութիւն, և զաւակի նորա յետ նորա. և մինչ
ոչ գոյր նորա որդի, խօսեցաւ Աստուած այսպէս,
թէ եղիցի զաւակ նորա պանդուխտ յօտար երկրի.
և ծառայեցուսցեն զնա՝ և չարչարեսցեն ամս չորեք
7 հարիւր. և զազգն որում ծառայեսցեն՝ դատեցայց
ես, ասէ Աստուած. և յետ այսորիկ ելցեն՝ և պաշ֊
8 տեսցեն զիս 'ի տեղւոջս յայսմիկ: Եւ ետ նմա ուխտ
թլփատութեան. և ապա ծնաւ զԻսահակ, և թլ֊
փատեաց զնա յաւուր ութերորդի. և Իսահակ ըզ֊
Յակովբ, և Յակովբ զերկոտասան նահապետսն:
9 Եւ նահապետքն նախանձեալ ընդ Յովսեփայ՝ վա֊
ճառեցին յԵգիպտոս. և էր Աստուած ընդ նմա, և
10 փրկեաց զնա յամենայն նեղութեանց նորա, և ետ
նմա շնորհս և իմաստութիւն առաջի Փարաւոնի ար֊
քային եգիպտացւոց, և կացոյց զնա իշխան Եգիպ֊

27606-62

տացւոցն՝ և ամենայն տան նորա։ Եւ եկն սով յա- 11
մենայն երկիրն Եգիպտոսի և 'ի Քանան՝ նեղու-
թիւն մեծ, և ոչ գտանէին կերակուրս հարքն մեր։
Եւ լուեալ Յակովբայ թէ գտանի կերակուր յԵ- 12
գիպտոս, առաքեաց զհարսն մեր յառաջագոյն. և 13
յերկրորդումն ետ ծանօթս Յովսէփ եղբարց իւրոց,
և յայտնի եղև Փարաւոնի ազգ նորա։ Առաքեաց 14
Յովսէփ և կոչեաց զՅակոբ զհայր իւր և զամենայն
ազգատոհմն՝ ոգիս եօթանասուն և հինգ։ Եւ էջ 15
Յակոբ յԵգիպտոս, և վախճանեցաւ ինքն և հարքն
մեր. և փոխեցան 'ի Սիւքէմ, և եդան յայրին զոր 16
ստացաւ Աբրահամ գնոց արծաթոյ յորդւոցն Ե-
մովրայ 'ի Սիւքէմ։ Իբրև մերձեցաւ ժամանակ աւե- 17
տեացն՝ զոր խոստացաւ Աստուած Աբրահամու, ա-
ճեաց ժողովուրդն՝ և բազմացաւ յԵգիպտոս, մինչև 18
յարեաւ այլ թագաւոր յԵգիպտոս, որ ոչ ճանաչէր
զՅովսէփ։ Նա հնարեցաւ ազգին մերում և չար- 19
չարեաց զհարսն մեր, առնել ընկեցիկ զմանկունս նո-
ցա զի մի ապրեսցին։ Յորում ժամանակի ծնաւ 20
Մովսէս, և էր կայտառ առաջի Աստուծոյ. որ և
սնաւ 'ի տան հօր իւրոյ ամիսս երիս. և յընկեցիկն 21
առնել զնա՝ եբարձ զնա դուստրն Փարաւոնի, և սնոյց
զնա իւր յորդեգիրս. և վարժեցաւ Մովսէս ամենայն 22
իմաստութեամբ եգիպտացւոցն. և էր զօրաւոր բա-
նիւք և գործովք իւրովք։ Իբրև լցաւ նորա քառաս- 23
նամեայ ժամանակ, անկաւ 'ի սիրտ նորա շրջել զեղ-
բարբք իւրովք՝ զորդւովքն Իսրայելի. և տեսեալ 24
զոմն զրկեալ՝ զչարեցաւ, և խնդրեաց զվրէժ զրկե-
լոյն՝ սպանեալ զեգիպտացին։ Զմտաւ ածէր թէ 25
իմասցին եղբարք նորա, զի Աստուած 'ի ձեռն նորա
տալոց էր զփրկութիւն նոցա, և նոքա ոչ իմացան։
Եւ 'ի վաղիւ անդր երևեցաւ նոցա մինչդեռ մարտըն- 26
չէինն, և վարեաց զնոսա 'ի խաղաղութիւն. ասէ.
Արք, եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս։ Իսկ որ 27
զրկէր զընկերն՝ մերժեաց զնա, և ասէ. Ո՞ կացոյց

28 զքեզ իշխան և դատաւոր 'ի վերայ մեր. միթէ
սպանանե՞լ կամիցիս զիս, զոր օրինակ սպաներ երէկ
29 զեգիպտացին։ Եւ փախեաւ Մովսէս 'ի բանիցս
յայսցանէ, և եղև պանդուխտ յերկրին Մադիա-
մու. ուր ծնաւ երկուս որդիս։
30 ԻԳ. Եւ 'ի կատարել ամացն քառասնից՝ երևե-
ցաւ նմա յանապատին լերինն Սինայ հրեշտակ
31 Տեառն 'ի բոց հրոյ մորենւոյն։ Եւ Մովսիսի տե-
սեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն. և 'ի մատչելն նորա
32 նշմարել՝ եղև ձայն Տեառն. Ես եմ Աստուած հարց
քոց, Աստուած Աբրահամու և Սահակայ և Յա-
կովբայ. և զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայել։
33 Եւ ասէ ցնա Տէր. Լոյծ զկօշիկս ոտից քոց, զի տե-
ղիդ յորում դուդ կացեր՝ երկիր սուրբ է. տեսա-
34 նելով տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵ-
գիպտոս, և լուայ հեծութեան նոցա, և իջի փրկել
զնոսա. և արդ եկ առաքեցից զքեզ յԵգիպտոս։
35 Զայն Մովսէս՝ զոր ուրացան և ասէին, ո՞ կացոյց
զքեզ իշխան և դատաւոր 'ի վերայ մեր, զնա Աս-
տուած իշխան և փրկիչ առաքեաց 'ի ձեռն Հրեշ-
36 տակին, որ երևեցաւ նմա 'ի մորենւոջն։ Նա եհան
զնոսա՝ արարեալ նշանս և արուեստս յերկրին Ե-
գիպտացւոց և 'ի Կարմիր ծովուն և յանապատի՝ ամս
37 քառասուն։ Այս Մովսէս է՝ որ ասաց ցորդիսն Իս-
րայելի. Մարգարէ ձեզ յարուսցէ տէր Աստուած
38 յեղբարց ձերոց՝ իբրև զիս, նմա լուիջիք։ Սա է որ
եղև յեկեղեցւոջն յանապատին ընդ Հրեշտակին,
որ խօսեցաւ ընդ նմա 'ի լերինն Սինայ՝ և ընդ հարսն
մեր, որ ընկալաւ զպատգամս կենդանիս տալ մեզ։
39 Որում ոչ կամեցան հնազանդ լինել հարքն մեր,
այլ մերժեցին և դարձան սրտիւք իւրեանց յԵգիպ-
40 տոս. և ասեն ցԱհարոն. Արա մեզ աստուածս որ եր-
թայցեն առաջի մեր. զի Մովսէսն այն որ եհան
զմեզ յերկրէն Եգիպտացւոց՝ ոչ գիտեմք զի եղև
41 նմա։ Եւ արարին յաւուրսն յայնոսիկ որթ, և մա-

թուցին զոհս կռոց, և ուրախ լինէին 'ի գործս ձե-
ռաց իւրեանց: Դարձոյց Աստուած՝ և մատնեաց զնո- 42
սա 'ի պաշտօն զօրութեան երկնից. որպէս և գրեալ
է 'ի գիրս մարգարէից. Մի թէ զոհս և պատարագս
մատուցէք ինձ զամս քառասուն յանապատին, տունդ
Իսրայէլի. և առէք զխորանն Մողոքայ, և զաստղն 43
աստուածոյն Հռեմփայ, զպատկերսն զոր արարէք
երկիր պագանել նոցա. և փոխեցից զձեզ յայն կողմ 44
Բաբելացւոց: Խորանն վկայութեան էր ընդ հարսն
մեր յանապատին, որպէս հրաման ետ որ խօսէրն
ընդ Մովսիսի՝ առնել զայն ըստ օրինակին զոր ետես:
Զոր և ընկալեալ բերէին հարքն մեր հանդերձ 45
Յեսուաւ 'ի վիճակս ազգացն՝ զորս մերժեաց Աստուած
յերեսաց հարցն մերոց, մինչև յաւուրս Դաւթի,
որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ, և խնդրեաց գը- 46
տանել զյարկս Աստուծոյ Յակոբայ: Նա և Սողո- 47
մովն շինեաց նմա տուն. այլ ոչ եթէ Բարձրեալն 'ի 48
ձեռագործ տաճարս բնակէ: Այլ որպէս մարգարէն
ասէ. երկինք աթոռ իմ են, և երկիր պատուանդան 49
ոտից իմոց. որպիսի՞ տուն շինեցէք ինձ, ասէ Տէր,
կամ զի՞նչ տեղի հանգստեան իմոյ. ո՞չ ձեռն իմ ա- 50
րար զայս ամենայն: Խստապարանոցք և անթըլ- 51
փատք սրտիւք և ականջօք, դուք հանապազ Հոգւոյն
սրբոյ հակառակ կայք, որպէս հարքն ձեր, և դուք:
Զո՞ 'ի մարգարէից ոչ հալածեցին հարքն ձեր, և 52
սպանին զայնոսիկ որ յառաջագոյն պատմեցին վասն
գալստեան արդարոյն, որոյ դուք այժմ մատնիչք և
սպանողք եղերուք. ո՞յք առէք զօրէնս 'ի հրամանս 53
հրեշտակաց, և ոչ պահեցէք: Եւ լուեալ զայս 54
զայրանային 'ի սիրտս իւրեանց, և կրճտէին զատա-
մունս 'ի վերայ նորա: Եւ նա էր լի հոգւով սրբով.
հայեցաւ յերկինս՝ և ետես զփառս Աստուծոյ, և 55
զՅիսուս զի կայր ընդ աջմէ Աստուծոյ. և ասէ. Ա-
հա տեսանեմ զերկինս բացեալ՝ և զորդի մարդոյ զի
կայ ընդ աջմէ Աստուծոյ: Աղաղակեալ 'ի ձայն մեծ՝ 56

խցին զականջս իւրեանց, և դիմեցին առ հասարակ
57 'ի վերայ նորա. և հանեալ արտաքոյ քաղաքին՝ քար-
կոծէին, և վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս
58 երիտասարդի միոջ՝ որ կոչէր Սաւուղ: Եւ քարկոծ
առնէին զՍտեփանոս, որ կարդայր և ասէր. Տէր
59 Յիսուս, ընկալ զոգի իմ: Եդ ծունր և աղաղակեաց
'ի ձայն բարձր. Տէր, մի՛ համարիր դոցա զայս մեղս:
Եւ զայս իբրև ասաց՝ ննջեաց. և Սաւուղ էր կա-
մակից սպանման նորա:

ԳԼՈՒԽ Ը

1 Եւ եղև յաւուր յայնմիկ հալածումն մեծ 'ի վե-
րայ եկեղեցւոյն յԵրուսաղէմ, և ամենեքեան ցը-
րուեցան 'ի գեօղս հրէաստանի և 'ի Սամարիայ բաց
2 յԱռաքելոցն: Եւ բարձին զՍտեփանոս արք երկիւ-
ղածք, և արարին կոծ մեծ 'ի վերայ նորա:
3 Բ·Դ· Բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն.
'ի տունս տունս մտանէր, քարշեալ զարս և զկանայս՝
4 մատնէր 'ի բանտ: Եւ սփռեալքն շրջէին աւետա-
5 րանէին զբանն: Իսկ Փիլիպպոս իջեալ 'ի քաղաքն
սամարացւոց՝ քարոզէր նոցա զՔրիստոս Յիսուս:
6 Ունկն դնէին ժողովուրդքն բանիցն Փիլիպպոսի
միաբան, 'ի լսել նոցա և 'ի տեսանել զնշանսն զոր
7 առնէր: Քանզի բազումք որ ունէին զայս պիղծ՝
8 աղաղակէին 'ի ձայն մեծ և ելանէին, և բազում
9 անդամալոյծք և կաղք բժշկէին. և եղև ուրախու-
թիւն մեծ 'ի քաղաքին յայնմիկ: Այր ոմն Սիմովն
անուն, յառաջագոյն էր 'ի քաղաքին. մոգէր և ապ-
շեցուցանէր զազգն սամարացւոց, ասել զանձնէ թէ
10 իցէ մեծ ոմն: Յոր հայէին ամենեքեան 'ի փոքուէ
մինչև 'ի մեծամեծս և ասէին. Սա է զօրութիւն
11 Աստուծոյ՝ որ կոչի մեծ: Հայէին 'ի նա վասն բա-
զում ժամանակաց մոգութեամբքն ապշեցուցանելոյ
12 զնոսա: Բայց յորժամ հաւատացին Փիլիպպոսի, որ

աւետարանէր վասն արքայութեանն Աստուծոյ և ա-
նուանն Յիսուսի Քրիստոսի, մկրտէին ամենեքեան
արք և կանայք։ Այլ և ինքն Սիմոն հաւատաց, և 13
մկրտեալ կանխէր առ Փիլիպպոս. տեսեալ զնշանս
և զմեծամեծ զօրութիւնս որ լինէին՝ զարմանայր։
Իբրև լուան որ յԵրուսաղէմ Առաքեալքն էին, թէ 14
և 'ի Սամարիա ընկալան զբանն Աստուծոյ, առաքե-
ցին առ նոսա զՊետրոս և զՅովհաննէս. որք իջեալ 15
կացին յաղօթս 'ի վերայ նոցա, որպէս զի առցեն
զՀոգի սուրբ. զի ցայնժամ չև ևս էր և ոչ 'ի վերայ 16
միոյ նոցա հասեալ, բայց միայն մկրտեալք էին յա-
նուն տեառն Յիսուսի։ Յայնժամ եդին զձեռս 'ի 17
վերայ նոցա՝ և առնուին Հոգի սուրբ։ Տեսեալ Սի- 18
մոնի՝ թէ ձեռն 'ի վերայ դնելով Առաքելոցն՝ տուեալ
լինի Հոգի սուրբ, մատոյց նոցա ինչս և ասէ. Տուք 19
և ինձ զիշխանութիւնս զայս, զի յոյր վերայ դնիցեմ
զձեռս՝ առցէ Հոգի սուրբ։ Եւ Պետրոս ասէ ցնա. 20
Արծաթ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ, զի զպար-
գևսն Աստուծոյ համարեցար ընչիւք ստանալ. ոչ գոյ
քեզ մասն և վիճակ 'ի բանիդ յայդմիկ, քանզի սիրտ 21
քո ոչ է ուղիղ առաջի Աստուծոյ։ Ապաշաւեա դու 22
'ի չարեացդ քո յայդցանէ, և աղաչեա զՏէր, թե-
րևս թողութիւն լիցի քեզ 'ի մեղմելս խորհրդոյ
սրտի քոյ. քանզի 'ի դառնութիւն մաղձի, և 'ի կրն- 23
ճիռն անիրաւութեան տեսանեմ զքեզ։ Պատասխա- 24
նի ետ Սիմոն և ասէ. Աղաչեցէք դուք վասն իմ ըզ-
Տէր, զի մի ինչ եկեսցէ 'ի վերայ իմ՝ յորոց դուքդ
ասացէք։ Եւ նոքա եդեալ վկայութիւն՝ խօսեցան
զբանն Աստուծոյ, և դարձան յԵրուսաղէմ. և 'ի 25
բազում գեօղս սամարացւոյն աւետարանէին։
Բն. Հրեշտակ Տեառն խօսեցաւ առ Փիլիպպոս 26
և ասէ. Արի և գնա դու 'ի կողմն հարաւոյ՝ ընդ ճա-
նապարհ որ իջանէ յԵրուսաղեմէ 'ի Գազա. զի այս
է անապատ։ Եւ յարեաւ գնաց։ Եւ ահաւասիկ այր 27
մի եթովպացի ներքինի՝ հզօր Կանդակայ տիկնոջ

եթովպացւոց, որ էր 'ի վերայ ամենայն գանձուց
նորա. որ եկեալ էր երկիր պագանել յԵրուսաղէմ.
28 և անդրէն դարձեալ և նստեալ 'ի կառս իւրում՝ ըն-
թեռնոյր զմարգարէն զԵսայի։ Ասէ Հոգին ցՓի-
29 լիպպոս. Մատիր և յարեաց 'ի կառսդ յայդոսիկ։
30 Եւ ընթացեալ Փիլիպպոս՝ լսէր զի ընթեռնոյր զԵ-
սայի մարգարէ. և ասէ. Գիտիցե՞ս արդեօք զոր ըն-
31 թեռնուցուսդ։ Եւ նա ասէ. Զիա՞րդ կարիցեմ,
թէ ոչ ոք առաջնորդեսցէ ինձ։ Եւ աղաչեաց զՓի-
32 լիպպոս՝ ելանել նստել ընդ նմա։ Եւ գլուխ գրոցն
զոր ընթեռնոյր՝ էր այս. Իբրև զոչխար 'ի սպանդ
վարեցաւ, և իբրև զորոջ առաջի կտրչի իւրոյ ան-
33 մռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր. 'ի խոնար-
հութեան նորա դատաստան նորա բարձաւ, և զազ-
գատոհմ նորա ո՞ պատմեսցէ. զի բառնան յերկրէ
34 կեանք նորա։ Պատասխանի ետ ներքինին Փիլիպ-
պոսի և ասէ. Աղաչեմ զքեզ, վասն ո՞յր ասէ մար-
գարէն զայս. վասն ի՞ւր, եթէ վասն այլոյ ուրուք։
35 Եբաց Փիլիպպոս զբերան իւր, և սկսեալ 'ի գրոցս
յայսցանէ աւետարանեաց նմա զՅիսուս Քրիստոս։
36 Իբրև երթային զճանապարհայն, եկին 'ի ջուր ինչ.
և ասէ ներքինին. Ահաւասիկ ջուր, զի՞նչ արգելու
37 զիս 'ի մկրտելոյ։ Եւ ասէ ցնա. Եթէ հաւատաս բո-
լորով սրտիւ քով՝ մարթ է։ Պատասխանի ետ և ա-
սէ. Հաւատամ՝ եթէ է Յիսուս Քրիստոս որդի
38 Աստուծոյ։ Եւ հրամայեաց կացուցանել զկառսն.
և իջին երկոքին 'ի ջուրն՝ Փիլիպպոս և ներքինին,
39 և մկրտեաց զնա։ Եւ իբրև ելին 'ի ջրոյ անտի, Հո-
գի սուրբ եկն 'ի վերայ ներքինւոյն. և Հրեշտակ
Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, և ոչ ևս ետես
զնա ներքինին. և գնայր զճանապարհ իւր ուրախու-
40 թեամբ։ Բայց Փիլիպպոս գտաւ յԱզովտոս, և շըր-
ջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն, մինչև 'ի
գալ նորա 'ի Կեսարիա։

ԳԼՈՒԽ Թ

ԲԶ. Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք 1
և սպանմամբ աշակերտացն Տեառն, մատուցեալ առ
քահանայապետն՝ խնդրեաց 'ի նմանէ թուղթս 'ի 2
Դամասկոս առ ժողովսն. որպէս թէ զոք գտցէ զայնր
ճանապարհաւ՝ արս կամ կանայս, կապեալս ածցէ
յԵրուսաղէմ։ Եւ ընդ երթալն նորա՝ եղև մերձե- 3
նալ 'ի Դամասկոս. յանկարծակի շուրջ զնովաւ փայ-
լատակեաց լոյս յերկնից, և անկեալ յերկիր՝ լուաւ
բարբառ որ ասէր ցնա։ Սաւուղ Սաւուղ, զի՞ հալա- 4
ծես զիս։ Եւ ասէ. Ո՞վ ես Տէր։ Եւ նա ասէ. Ես 5
եմ Յիսուս զոր դու հալածես. այլ յոտն կաց և 6
մուտ 'ի քաղաք, և պատմեսցի քեզ՝ զինչ քեզ պարտ
իցէ առնել։ Իսկ արքն որ ընդ նմայն երթային, կային 7
անշշունջ. զձայնն միայն լսէին, բայց տեսանէին և
ոչ ինչ։ Յարեաւ Սաւղոս յերկրէ անտի, և աչօք բա- 8
ցօք ոչ զոք տեսանէր. զձեռանէ առեալ նորա մուծին
'ի Դամասկոս. և էր անդ աւուրս երիս, և ոչ տեսա- 9
նէր. և ոչ եկեր և ոչ արբ։ Եւ էր ոմն աշակերտ 'ի 10
Դամասկոս՝ Անանիա անուն. ասէ ցնա Տէր 'ի տես-
լեան. Անանիա։ Եւ նա ասէ. Ահաւասիկ եմ Տէր։
Եւ ասէ ցնա Տէր. Յոտն կաց և գնա ընդ փողոցն՝ որ 11
կոչի ուղիղ, և խնդրեսցես յապարանս Յուդայ՝ Սաւ-
ղոս անուն զտարսոնացի. զի կայ դեռ յաղօթս։ Եւ 12
ետես 'ի տեսլեան այր մի Անանիա անուն, մտեալ և
եդեալ 'ի վերայ նորա զձեռն, որպէս զի տեսցէ։ Պա- 13
տասխանի ետ Անանիա. Տէր, լուայ 'ի բազմաց վասն
առնն այնորիկ՝ որչափ արար չարիս սրբոց քոց յԵրու-
սաղէմ. և աստ ունի իշխանութիւն 'ի քահանայա- 14
պետացն՝ կապել զամենեսեան որ կարդան զանուն
քո։ Ասէ ցնա Տէր. Երթ դու, զի անօթ ընտրու- 15
թեան է ինձ նա, կրել զանուն իմ առաջի հեթանո-
սաց և թագաւորաց և որդւոցն Իսրայէլի. քանզի 16

ես իսկ ցուցից նմա՝ որչափ պարտ իցէ նմա չարչարել
17 վասն անուան իմոյ։ Եւ գնաց Անանիա և եմուտ
յապարանսն. և եդեալ 'ի վերայ նորա ձեռս, և ասէ.
Սաւուղ եղբայր, 'ի վեր հայեաց. Տէր առաքեաց
զիս, Յիսուս՝ որ երևեցաւն քեզ 'ի ճանապարհին
յորում գայիրն, որպէս զի տեսցես և լցցիս Հոգւով
18 սրբով։ Եւ վաղվաղակի անկան յաչաց նորա իբրև
կեղևանք. ետես, և յարեաւ մկրտեցաւ. և առեալ
19 կերակուր զօրացաւ։ Եւ եղև 'ի Դամասկոս ընդ
20 աշակերտսն աւուրս ինչ. և վաղվաղակի 'ի ժողո-
վուրդսն քարոզեաց զՅիսուս, թէ սա է որդին Աս-
21 տուծոյ։ Զարմացեալ էին ամենեքեան որ լսէին,
և ասէին. Ո՞չ սա էր որ աւարն հարկանէր յԵրու-
սաղէմ զայնոսիկ որ կարդային զանուն Յիսուսի. և
այսր նմին իրի եկեալ էր, զի կապեալս զսոսա տար-
22 ցի առ քահանայապետսն։ Այլ Սաւղոս առաւել
ևս զօրանայր՝ և յաղթահարէր զՀրեայսն, որ բնա-
կեալ էին 'ի Դամասկոս. և խելամտեցուցանէր թէ
23 սա է Քրիստոսն։ Իբրև կատարէին աւուրք բա-
24 զումք, խորհեցան Հրեայքն սպանանել զնա։ Յայտ-
նեցաւ Սաւղոսի նենգութիւնն նոցա. քանզի պա-
հէին զդրունսն 'ի տուէ և 'ի գիշերի, որպէս զի
25 սպանցեն զնա։ Եւ առեալ զնա աշակերտացն 'ի գի-
շերի՝ ընդ պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ։
26 Իբրև եկն Սաւղոս յԵրուսաղէմ, ընդելանէր յա-
րել յաշակերտսն. և ամենեքեան երկնչէին 'ի նմա-
27 նէ, չհաւատային թէ իցէ աշակերտ։ Բայց Բառ-
նաբաս առեալ զնաած առ Առաքեալսն, և պատ-
մեաց նոցա՝ որպէս 'ի ճանապարհին ետես զՏէր, և
զի խօսեցաւ ընդ նմա. և զի 'ի Դամասկոս համար-
28 ձակեցաւ յանուն Յիսուսի։ Եւ էր ընդ նոսա մտա-
նել և ելանել յԵրուսաղէմ, համարձակեալ յանուն
29 Տեառն. խօսէր և վիճէր ընդ Յոյնս, և նոքա խո-
30 կային սպանանել զնա։ Եւ իմացեալ եղբարց՝ իջու-
ցին զնա 'ի Կեսարիա, և առաքեցին զնա 'ի Տար-

սոն։ Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան և 'ի 31
Սամարիա և 'ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շի-
նեալ և երթեալ զհետ երկիւղի Տեառն, և մխիթա-
րութեամբ Հոգւոյն սրբոյ բազմանայր։
ԲԷ. Եւ եղև 'ի շրջելն Պետրոսի առ ամենե- 32
քումբք՝ իջանել նմա և առ սուրբսն որ բնակեալ էին
'ի Լիւդդա. և եգիտ անդ այր մի, որում անուն էր 33
Ենեա, ութեմեան դնէր 'ի մահիճս անդամալոյծ։
Եւ ասէ ցնա Պետրոս. Ենեա, բժշկէ զքեզ տէր 34
Յիսուս Քրիստոս, արի և քեզէն թօթափեա զան-
կողինս քո։ Եւ վաղվաղակի յարեաւ։ Եւ տեսին 35
զնա ամենեքեան որ բնակեալ էին 'ի Լիւդդա և 'ի
Սարովնա, որք և դարձան իսկ 'ի Տէր։ Եւ 'ի Յոպ- 36
պէ էր կին ոմն աշակերտեալ՝ անուն Տաբիթա, որ
թարգմանեալ կոչի այծեմնիկ. սա էր լի գործովք
բարեօք և ողորմութեամբք զոր առնէր։ Եւ եղև 37
յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա և մեռանել.
լուացին զնա և եդին 'ի դստիկոնի անդ։ Եւ մերձ 38
էր Լիւդդա 'ի Յոպպէ. աշակերտացն լուեալ եթէ
Պետրոս անդ է, առաքեցին երկուս արս առ նա, ա-
ղաչել՝ զի մի դանդաղեսցի գալ առ նոսա։ Եւ յա- 39
րուցեալ Պետրոս եկն ընդ նոսա. զոր իբրև եկն՝
հանին 'ի վերնատունն, և կացին շուրջ զնովաւ այ-
րիքն ամենայն. լային և ցուցանէին զձորձս և զհան-
դերձս, որչափ առնէր նոցա այծեմնիկն։ Եւ հանեալ 40
արտաքս զամենեսեան Պետրոսի, եդ ծունր՝ եկաց
յաղօթս. և դարձաւ 'ի մարմինն և ասէ. Տաբիթա,
արի կաց յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի։ Եւ
նա եբաց զաչս իւր, և տեսեալ զՊետրոս՝ նստաւ
կանգուն. ձեռն ետ նմա և յարոյց զնա. կոչեաց ըզ- 41
սուրբսն և զայրիսն, առաջի կացոյց զնա կենդանի։
Եւ յայտնի եղև ընդ ամենայն Յոպպէ, և հաւա- 42
տացին բազումք 'ի Տէր։ Եւ եղև աւուրս բազումս 43
լինել նմա 'ի Յոպպէ՝ առ ումեմն Սիմովնի խաղա-
խորդի։

ԳԼՈՒԽ Ժ

1 ԳԱ. Այր մի էր 'ի Կեսարիա՝ անուն Կոռնէլիոս,
2 հարիւրապետ՝ 'ի գնդէ որ կոչէր իտալիացի, բարե-
պաշտօն և երկիւղած յԱստուծոյ ամենայն տամբ
իւրով. առնէր ողորմութիւնս բազումս 'ի ժողովր-
դեանն, և յաղօթս կայր առ Աստուած յամենայն
3 ժամ։ Ետես 'ի տեսլեան յայտնապէս զիններորդ
ժամու աւուրն՝ զհրեշտակ Աստուծոյ զի մտանէր
4 առ նա և ասէր ցնա. Կոռնէլիէ։ Եւ նա հայեցեալ
ընդ նա՝ զարհուրեցաւ, և ասէ. Զի՞ է Տէր։ Եւ
ասէ ցնա. Աղօթք քո և ողորմութիւնք քո ելին յի-
5 շատակս առաջի Աստուծոյ. և արդ յղեա արս 'ի
Յոպպէ՝ և կոչեա զՍիմոն զոմն՝ որ կոչի Պետրոս.
6 նա մտեալ է առ Սիմոնի ումեմն խաղախորդի, որոյ
7 է տունն մերձ 'ի ծով։ Եւ իբրև գնաց հրեշտակն
որ խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս 'ի ծառայիցն, և
8 զինուոր մի բարեպաշտօն 'ի սպասաւորացն իւրոց, և
պատմեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա 'ի Յոպ-
9 պէ։ Եւ 'ի վաղիւ անդր 'ի ճանապարհ անկանել
նոցա և մօտ 'ի քաղաքն լինել, ել Պետրոս 'ի տա-
նիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն. քաղցեաւ,
10 և կամէր ճաշակել։ Եւ 'ի պատրաստելն նոցա՝ եղև
'ի վերայ նորա զարմացումն. և տեսանէ զերկինս
11 բացեալ, և զչորեցունց տրտնոց կախեալ անօթ ինչ
իբրև կտաւոյ մեծի իջեալ նստեալ 'ի վերայ երկրի.
12 յորում էր ամենայն չորքոտանիք և սողունք երկրի
13 և թռչունք երկնից. և եղև ձայն առ նա. Արի,
14 Պետրոս, զեն և կեր։ Եւ Պետրոս ասէ. Քաւ լի-
ցի, Տէր, զի ոչ երբէք կերայ խառնակ ինչ և ան-
15 սուրբ։ Ձայն եղև կրկին անգամ առ նա. Զոր
16 Աստուած սրբեաց՝ դու մի պղծեր։ Այս եղև երիցս,
17 և վերացաւ անօթն յերկինս։ Եւ մինչդեռ զարմա-
ցեալ էր ընդ միտս Պետրոս՝ թէ զի՞նչ իցէ տեսիլն

զոր ետես, ահա արքն առաքեալք 'ի Կոռնելեայ՝
հարցին զապարանիցն Սիմոնի, կացին առ դրանն,
կոչեցին և հարցանէին, եթէ Սիմոն՝ որ կոչի Պետ- 18
րոս՝ աստ մտեա՞լ իցէ: Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ 19
ածէր վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա. Ահաւա-
սիկ արք ոմանք խնդրեն զքեզ. այլ արի էջ և երթ 20
ընդ նոսա առանց իրիք խղճելոյ, զի ես առաքեցի
զնոսա: Եւ իբրև էջ Պետրոս առ նոսա, ասէ. Ա- 21
հաւասիկ ես եմ զոր խնդրէքն. զի՞նչ իրք են՝ վասն
որոյ եկիքդ: Եւ նոքա ասեն. Կոռնելիոս հարիւրա- 22
պետ՝ այր արդար և երկիւղած յԱստուծոյ, վկայեալ
յամենայն ազգէն Հրէից, հրաման ա՛ռ 'ի Հրեշտա-
կէ սրբոյ՝ կոչել զքեզ 'ի տուն իւր և լսել բանս 'ի
քէն: Կոչեաց զնոսա 'ի ներքս և առ իւր ագոյց: Եւ 23
'ի վաղիւ անդր յարուցեալ Պետրոս գնաց ընդ նո-
սա. և ոմանք յեղբարց անտի որ 'ի Յոպպէ էին՝ ե-
կին ընդ նմա: Եւ 'ի վաղիւ անդր մտին 'ի Կեսարիա. 24
և Կոռնելիոս մնայր նոցա. կոչեցեալ զազգատոհմն
իւր և զկարևոր բարեկամսն:
ԳԲ. Եւ եղև 'ի մտանելն Պետրոսի, ընդ առաջ 25
եղև նմա Կոռնելիոս, անկեալ առ ոտսն նորա երկիր
պագանէր: Եւ Պետրոս կանգնեաց զնա և ասէ. 26
Յոտն կաց, և ես ինքն մարդ եմ: Եւ խօսելով ընդ 27
նմա եմուտ 'ի ներքս, և գտանէր անդ ժողովեալ
զբազումս: Եւ ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք՝ 28
որպէս անմարթ է առն Հրէի հպել կամ մերձենալ
առ այլազգի. և ինձ Աստուած եցոյց՝ մի զոք խառնակ
կամ անսուրբ ասել 'ի մարդկանէ: Վասն այսորիկ և 29
առանց ընդ բանս ինչ ածելոյ եկի կոչեցեալ. բայց
արդ հարցանեմ, յի՞նչ պէտս կոչեցէք զիս: Եւ Կոռ- 30
նելիոս ասէ. Յառաջ քան զչորս աւուրս մինչ ցայս
ժամ՝ կայի յաղօթս յիննն ժամու 'ի տան իմում, և ա-
հա այր մի եկն եկաց առաջի իմ 'ի հանդերձս սպի-
տակս, և ասէ. Կոռնելիէ, լսելի եղեն աղօթք քո, 31
և ողորմութիւնք քո յիշեցան առաջի Աստուծոյ: Եւ 32

արդ յղեա 'ի Յոպպէ, և կոչեա զՍիմոն՝ որ կոչե-
ցեալն է Պետրոս. սա մտեալ է 'ի տան Սիմոնի ո-
րումն խաղախորդի մերձ 'ի ծով. որ եկեսցէ և խօ-
33 սեսցի ընդ քեզ: Եւ ես իսկ և իսկ յղեցի առ քեզ.
դու բարւոք արարեր զի եկիր. արդ ամենեքեան մեք
առաջի Աստուծոյ կամք, լսել զամենայն որ հրամայ-
34 եալ է քեզ 'ի Տեառնէ: Եբաց Պետրոս զբերան
իւր, և ասէ. Ճշմարտութեամբ հասեալ եմ, զի
35 ոչ գոյ ակնառութիւն առաջի Աստուծոյ. այլ յա-
մենայն ազգս՝ որ երկնչին 'ի նմանէ և գործեն զար-
36 դարութիւն՝ ընդունելի է նմա: Զբանն առաքեաց
որդւոցն Իսրայէլի՝ աւետարանել զխաղաղութիւն
'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա է ամենայնի Տէր:
37 Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղև ընդ ամենայն
Հրէաստան սկսեալ 'ի Գալիլեէ, յետ մկրտութեանն
38 զոր քարոզեաց Յովհաննէս. զՅիսուս որ 'ի Նազա-
րեթէ, զոր օծ Աստուած Հոգւով սրբով և զօրու-
թեամբ. որ շրջեցաւ բարի առնել՝ և բժշկել զամե-
նայն ըմբռնեալսն 'ի սատանայէ, զի Աստուած էր
39 ընդ նմա: Եւ մեք վկայեմք ամենայնի զոր արար
յերկրին Հրէաստանի և յԵրուսաղէմ. զոր և սպա-
40 նին կախեալ զփայտէ. զնա Աստուած յարոյց յեր-
41 րորդ աւուր, և ետ նմա յայտնի լինել. ոչ ամենայն
ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս՝ յառաջագոյն ընտ-
րելոցս յԱստուծոյ, որք և կերաք և արբաք ընդ նմա
42 յետ յարութեան նորա 'ի մեռելոց: Եւ պատուի-
րեաց մեզ քարոզել ժողովրդեանն՝ և վկայութիւն
դնել թէ նա է սահմանեալն յԱստուծոյ դատաւոր
43 կենդանեաց և մեռելոց. Նմա ամենայն մարգարէքն
վկայեն, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա
44 ամենայն հաւատացելոց 'ի նա: Եւ մինչդեռ խօսէր
Պետրոս զբանս զայս, հանգեաւ Հոգին սուրբ 'ի
45 վերայ ամենեցուն՝ որ լսէին զբանն: Զարմացան՝
որք 'ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ
էին ընդ Պետրոսի, զի և 'ի հեթանոսս պարգևք

Հոգւոյն սրբոյ զեղուլն. քանզի լսէին ՚ի նոցանէ 46
խօսել լեզուս և մեծացուցանել զԱստուած: Յայն֊ 47
ժամ պատասխանի ետ Պետրոս. Մի թէ զջուրն ոք
արգելուլ կարէ առ ՚ի չմկրտելոյ զսոսա, որք և զՀո֊
գին սուրբ ընկալան որպէս և մեք: Եւ հրամայեաց 48
նոցա մկրտել յանուն Յիսուսի Քրիստոսի. յայն֊
ժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Գ.Գ. Լուան Առաքեալքն և եղբարքն որք էին ՚ի կող֊ 1
մանս Հրէաստանի, զի և ՚ի հեթանոսս ընկալան զբանն
Աստուծոյ: Բայց յորժամ ել Պետրոս յԵրուսաղէմ, 2
խղճէին ՚ի նմանէ որ ՚ի թլփատութենէ անտի հա֊
ւատացեալքն, և ասէին, եթէ եմուտ առ արս ան֊ 3
թլփատս և եկեր ընդ նոսա: Եւ սկսաւ Պետրոս 4
պատմել նոցա կարգաւ՝ և ասէ. Ես էի ՚ի քաղաքին 5
Յոպպէ յաղօթս, և տեսի զարմացման տեսիլ. իջա֊
նել անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի, զչորեցունց տրտ֊
նոց կախեալ յերկնից՝ և եհաս մինչև առ իս. յոր պշ֊ 6
շուցեալ հայէի, և տեսի զչորքոտանիս երկրի և զգա֊
զանս և զսողունս, և զթռչունս երկնից. և լուայ բար֊ 7
բառ որ ասէր ցիս. արի, Պետրոս, զեն և կեր. և ա֊ 8
սեմ. քաւ լիցի, Տէր, զի խառնակ ինչ և անսուրբ
ոչ երբէք եմուտ ՚ի բերան իմ: Պատասխանի ետ ինձ 9
երկիցս անգամ բարբառն յերկնից, զոր Աստուած
սրբեաց՝ դու մի խառնակ համարիր. այս եղև երիցս, 10
և վերացաւ դարձեալ ամենայն անօթն յերկինս:
Եւ ահա անդէն երեք արք եկին կացին առ ապարա֊ 11
նիցն՝ ուր եմն էի, առաքեալք ՚ի Կեսարեայ առ իս.
և ասէ ցիս Հոգին երթալ ընդ նոսա, և մի ինչ խղ֊ 12
ճել. եկին ընդ իս և սոքա վեցեքին եղբարքս, և մ֊
տաք ՚ի տուն առնն այնորիկ: Եւ պատմեաց մեզ՝ որ֊ 13
պէս ետես զհրեշտակն ՚ի տան իւրում, զի կայր և
ասէր ցնա. առաքեա ՚ի Յոպպէ, և կոչեա զՍիմոն

14 զկոչեցեալն Պետրոս, որ խօսեսցի բանս ընդ քեզ. ո֊
15 րովք կեցցես դու և ամենայն տուն քո: Եւ իբրև
սկսայ խօսել՝ եկն Հոգին սուրբ ՚ի վերայ նոցա՝ որ֊
16 պէս ՚ի վերայ մեր ՚ի սկզբանն: Յիշեցի զբանն Տեառն
զոր ասէրն. Յովհաննէս մկրտեաց ՚ի ջուր, բայց
դուք մկրտիջիք ՚ի Հոգին սուրբ: Իսկ եթէ զհաւա֊
17 սարակաց պարգևն ետ Աստուած նոցա որպէս և մեզ՝
՚ի հաւատալն ՚ի տէր Յիսուս Քրիստոս, ես զինչ
18 կարող էի արգելուլ զԱստուած: Եւ լուեալ զայս՝
լռեցին, և փառաւոր առնէին զԱստուած և ասէին.
Ուրեմն և ՚ի հեթանոսս ետ Աստուած զապաշխա֊
19 րութիւն կենաց: Եւ ցրուեալքն ՚ի նեղութենէն որ
եղև ՚ի վերայ Ստեփանոսի՝ հասին մինչև ՚ի Փիւ֊
նիկէ և ՚ի Կիւպրոս և յԱնտիոքիա. ոչ ումեք խօ֊
20 սէին զբանն՝ բայց միայն Հրէից. Եւ էին ոմանք ՚ի
նոցանէ արք Կիւպրացիք և Կիւրենացիք, որք մտեալ
յԱնտիոք՝ խօսէին ընդ Յոյնս, աւետարանեալ
21 տէր զՅիսուս: Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա, և
22 բազմութիւն հաւատացելոց դարձաւ ՚ի Տէր: Լու
եղև բանս այս յականջս եկեղեցւոյն որ էր յԵրու֊
սաղէմ՝ վասն նոցա. և առաքեցին զԲառնաբաս
23 մինչև յԱնտիոք: Որ իբրև եկն ետես զշնորհսն Աս֊
տուծոյ՝ ուրախ եղև, և մխիթարէր զամենեսեան՝
24 յօժարութեամբ սրտի կալ նոցա ՚ի Տէր. զի էր այր
զուարթամիտ և լի Հոգւով սրբով և հաւատովք.
25 և յաւելաւ ժողովուրդ բազում Տեառն: Եւ ել
՚ի Տարսոն խնդրել զՍաւղոս, և գտեալ զնա ած
26 յԱնտիոք: Եւ եղև նոցա զամն ողջոյն ժողովել յե֊
կեղեցին, և ուսուցանել ժողովուրդ բազում, և ա֊
նուանել նախ յԱնտիոք զաշակերտեալսն՝ քրիստո֊
նեայս:

27 Գ.Դ. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրուսա֊
28 ղեմէ մարգարէք յԱնտիոք: Յարուցեալ մի ոմն ՚ի
նոցանէ՝ անուն Ագաբոս, նշանակեաց Հոգւովն՝ սով
մեծ լինել ընդ ամենայն աշխարհ, որ եղև առ Կղ֊

ղաւդեաւ։ Բայց յաշակերտաց անտի՝ որպէս զիարդ 29
կարող ոք էր, իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ որոշեցին
առաքել 'ի պէտս եղբարցն՝ որ բնակեալ էին 'ի Հրէաս-
տանի. զոր և արարին իսկ՝ առաքեալ առ երիցունսն 30
'ի ձեռն Բառնաբայ և Սաւղոսի։

ԳԼՈՒԽ ԺԲ

Դ.Է. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերով- 1
դէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն. և 2
սպան զՅակովբոս զեղբայր Յովհաննու սրով։ Եւ 3
տես եթէ հաճոյ է Հրէիցն, յաւել ևս ունել զՊետ- 4
րոս. և էին աւուրք բաղարջակերաց. զոր իբրև կա-
լաւ՝ եդ 'ի բանտի, և մատնեաց չորից չորրորդաց զի-
նուորաց պահել զնա. և կամէր յետ զատկին ածել 5
զնա ժողովրդեանն։ Եւ Պետրոս 'ի պահեստի էր 'ի
բանտին, և աղօթք ստէպ լինէին յեկեղեցւոյն վասն
նորա առ Աստուած։ Իբրև կամեցաւ զնա ածել Հե- 6
րովդէս, 'ի գիշերին յայնմիկ էր Պետրոս 'ի քուն 'ի
մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղթայիւք, և
պահապանքն առաջի դրանն պահէին զբանտն։ Եւ 7
ահա Հրեշտակ Տեառն եկն եկաց 'ի վերայ, և լոյս
ծագեաց 'ի տանն և խթեաց զկողսն Պետրոսի, յա-
րոյց զնա և ասէ. Արի վաղվաղակի։ Եւ անկան
շղթայքն 'ի ձեռաց նորա։ Եւ ասէ ցնա Հրեշտակն. 8
Ած զգօտի քո, և արկ զհողաթափս յոտս քո։ Եւ
արար այնպէս։ Եւ ասէ ցնա. Արկ զձորձս քո, և
եկ զկնի իմ։ Եւ ելեալ երթայր զհետ, և ոչ գիտէր՝ 9
եթէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն 'ի Հրեշտակէն. զի 10
համարէր երազ տեսանել։ Եւ իբրև անցին նոքա
ըստ մի պահ և ըստ երկուս, եկին մինչև 'ի դուռնն
երկաթի՝ որ հանէր 'ի քաղաքն, որ ինքնին բացաւ
նոցա, և մտեալ անցին ընդ փողոց մի, և վաղվաղա-
կի 'ի բաց եկաց 'ի նմանէ Հրեշտակն։ Եւ Պետրոս 11
իբրև 'ի միտս եղև, ասէ. Արդ գիտեմ ճշմարիտ ե-

թէ առաքեաց Տէր զՀրեշտակ իւր, և փրկեաց զիս
'ի ձեռաց Հերովդի, և յամենայն ակնկալութենէ
12 ժողովրդեանն Հրէից։ Եւ լեալ 'ի միտս՝ եկն 'ի տուն
Մարեմու մօր Յովհաննու, որ կոչեցաւն Մարկոս,
13 ուր էին բազումք ժողովեալ և աղօթս առնէին։ Եւ
բախեալ զդուրս տանն՝ մատեաւ աղախին մի ունկն
14 դնել, որում անուն էր Հռովդէ. և ծանուցեալ
զձայնն Պետրոսի՝ 'ի խնդալոյն ոչ եբաց զդուռն, 'ի
ներքս ընթացեալ պատմեաց, եթէ Պետրոս առ
15 դրանն կայ։ Նոքա ասեն ցնա. Մոլիս։ Եւ նա ևս
պնդէր՝ թէ այդպէս է. և նոքա ասէին. Հրեշտակ
16 նորա իցէ։ Եւ Պետրոս ստէպ բախէր. իբրև բա-
17 ցին՝ տեսին զնա և զարմացան։ Եւ նա ձեռամբ ցու-
ցանէր նոցա լռել. և պատմեաց որպէս և Տէր եհան
զնա 'ի բանտէն, և ասէ. Պատմեցէք Յակոբայ և
18 եղբարց զայս։ Եւ ելեալ գնաց յայլ տեղի։ Եւ
իբրև եղև այգ, էր խռովութիւն մեծ 'ի մէջ զինուո-
19 րացն. զի՞ արդեօք Պետրոսն եղև։ Իսկ Հերով-
դէս իբրև խնդրեաց զնա՝ և ոչ եգիտ, հարցեալ
զպահապանսն՝ հրամայեաց սպանանել, և իջեալ 'ի
20 Հրէաստանէ 'ի Կեսարիա՝ և անդ լինէր։ Եւ էր
Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդով-
նացիս. և նոքա առ հասարակ եկին առ նա, և 'ի
բանի արարեալ զԲղաստոս սենեկապետ արքային՝
խնդրէին զխաղաղութիւն վասն կերակրելոյ երկրին
21 նոցա յարքունուստ։ Յաւուր միում յերևելում՝
Հերովդէս զգեցեալ էր զհանդերձ թագաւորու-
թեան և նստէր յատենի, և խօսէր ընդ նոսա հրա-
22 պարակաւ. և ամբոխն աղաղակէր, թէ Աստուծոյ
23 բարբառ է, և ոչ մարդոյ։ Եւ անդէն եհար զնա
Հրեշտակ Տեառն, փոխանակ զի ոչ ետ փառս Աս-
24 տուծոյ. և եղեալ որդնալից՝ սատակեցաւ։ Եւ բանն
Աստուծոյ աճէր և բազմանայր։
25 Գ.Զ. Բառնաբաս և Սաւղոս դարձան յԵրուսա-
ղեմէ՝ իբրև կատարեցին զպաշտօնն. առեալ էր ընդ
իւրեանս և զՅովհաննէս՝ որ կոչեցեալն էր Մարկոս։

ԳԼՈՒԽ ԺԳ

Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք 1
և վարդապետք, Բառնաբաս և Շմաւոն կոչեցեալն
Նիգէր, և Ղուկիոս կիւրենացի, և Մանայէն
դայեկորդի Հերովդի չորրորդապետի, և Սաւղոս:
Մինչդեռ 'ի պաշտաման Տեառն կային և պահէին, 2
ասէ Հոգին սուրբ. Որոշեցէք ինձ զԲառնաբաս և
զՍաւղոս 'ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա: Յայն- 3
ժամ պահեալ և աղօթս արարեալ, եդին ձեռն 'ի
վերայ նոցա և արձակեցին: Եւ նոքա առաքեալք 'ի 4
Հոգւոյն սրբոյ՝ իջին 'ի Սելեւկիա, և անտի նաւեցին
'ի Կիւպրոս. և հասեալ 'ի Սաղամինա՝ պատմէին ըզ- 5
բանն Աստուծոյ 'ի ժողովուրդս Հրէիցն. ունէին
և զՅովհաննէս պաշտօնեայ: Շրջեալ ընդ ամե- 6
նայն կղզին մինչև 'ի Պափոս, գտին անդ այր զոմն
մոգ, սուտ մարգարէ՝ Հրեայ, որում անուն էր Բա-
րեյեսու. որ էր ընդ փոխանակի բդեշխին Սերգեայ 7
Պաւղոսի առն իմաստնոյ. նորա աղաչեալ զԲառնա-
բաս և զՍաւղոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ:
Ընդդէմ եկաց նոցա Եղիմաս՝ մոգն. քանզի այսպէս 8
թարգմանի անուն նորա, խնդրէր շրջել զփոխանակ
բդեշխին 'ի հաւատոյ: Իսկ Սաւղոս, որ և Պաւ- 9
ղոսն, լցեալ հոգւով սրբով՝ հայեցաւ 'ի նա և ասէ.
Ո՛վ լի ամենայն նենգութեամբ և խորամանկու-
թեամբ՝ որդի սատանայի և թշնամի ամենայն ար- 10
դարութեան, ոչ լռես 'ի թիւրելոյ զճանապարհս
Տեառն զուղիղս. և արդ ահա ձեռն Տեառն 'ի վե- 11
րայ քո, և եղիցես կոյր՝ չտեսանել զարև մինչև 'ի
ժամանակ մի: Եւ անդէն անկաւ 'ի վերայ նորա մէգ
և խաւար, և շրջէր խնդրէր առաջնորդս: Յայնժամ 12
տեսեալ փոխանակի բդեշխին զիրսն որ եղեն, հաւա-
տաց, զարմացեալ ընդ վարդապետութիւնն Տեառն:
Եւ ամբարձեալ 'ի Պափէ պաւղոսեանց՝ եկին 'ի 13

Պերգէ Պամփիլեայ: Յովհաննէս մեկնեալ 'ի նո-
14 ցանէ դարձաւ յԵրուսաղէմ, և նոքա գնացեալ 'ի
Պերգեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ, և մտեալ 'ի
15 ժողովուրդն յաւուր շաբաթու՝ նստան: Եւ յետ
ընթեռնլոյ զօրէնսն և զմարգարէս, առաքեցին առ
նոսա ժողովրդապետքն՝ և ասեն. Արք եղբարք՝ ե-
թէ իցէ 'ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողո-
վուրդդ՝ խօսեցարուք:
16 Գէ. Յոտն եկաց Պաւղոս՝ շարժեաց զձեռն, և ասէ.
Արք Իսրայէլացիք, և որք երկնչիք յԱստուծոյ, լուա-
17 րուք. Աստուած ժողովրդեանս այսորիկ Իսրայէլի՝
ընտրեաց զհարսն մեր, և զժողովուրդն բարձրացոյց
'ի պանդխտութեան յերկրին Եգիպտացւոց, և 'ի
18 բազուկ բարձր եհան զնոսա անտի: Եւ իբրև քա-
19 ռասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապա-
տի, և քակեալ ազգս եօթն յերկրին Քանանու՝
20 ժառանգեցոյց նոցա զերկիր նոցա իբրև ամս չորեք
հարիւր և յիսուն: Եւ յետ այսորիկ ետ նոցա դա-
21 տաւորս մինչև 'ի Սամուէլ մարգարէ, և անտի յա-
ռաջ խնդրեցին թագաւոր, և ետ նոցա Աստուած
զՍաւուղ որդի Կիսեայ, այր յազգէ Բենիամինի,
22 ամս քառասուն: Եւ իբրև փոխեաց զնա, յարոյց
նոցա զԴաւիթ թագաւոր, որում և ասաց վկայու-
թեամբ. գտի զԴաւիթ որդի Յեսսեայ՝ այր ըստ
23 սրտի իմում, որ արասցէ զամենայն զկամս իմ: Ի սորա
զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց Իսրայէ-
24 լի զփրկիչն Յիսուս, ըստ յառաջագոյն քարոզու-
թեանն Յովհաննու առաջի երեսաց մտի նորա՝
մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովր-
25 դեանն Իսրայէլի: Եւ իբրև լնոյր Յովհաննէս զըն-
թացսն, ասէր. Զի՞ ոք կարծէք զինէն թէ իցեմ.
չեմ ես այն. այլ ահա գայ զկնի իմ որում չեմ ար-
26 ժանի զկօշիկս ոտիցն լուծանել: Արք եղբարք, որ-
դիք աբրահամեան տոհմին, և որ 'ի ձեզ երկիւ-
ղածք իցեն յԱստուծոյ, ձեզ բանս այս փրկութեան

առաքեցաւ։ Բայց որ բնակեալ են յԵրուսաղէմ, և 27
իշխանք նոցա՝ անծանօթ եղեն 'ի նմանէ, և ըստ բար֊
բառոյ մարգարէիցն՝ որ զամենայն շաբաթս ընթեռ֊
նուին՝ դատեալ կատարեցին. և ոչ մի ինչ պատճառս 28
մահու գտեալ՝ խնդրեցին 'ի Պիղատոսէ սպանանել
զնա։ Եւ իբրև կատարեցին զամենայն՝ որ վասն նո֊ 29
րա գրեալ էր, իջուցեալ 'ի փայտէն՝ եդին 'ի գերեզ֊
մանի։ Այլ Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց, որ 30
երևեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ, որ ելեալ էին
ընդ նմա 'ի Գալիլեէ յԵրուսաղէմ, որ և արդ իսկ 31
վկայք են նորա առ ժողովուրդն։ Եւ մեք ձեզ աւե֊ 32
տարանեմք զխոստումն որ առ հարսն եղեալ էր. զի 33
զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յա֊
րուցեալ զՅիսուս. որպէս և 'ի Սաղմոսին գրեալ է՝
յերկրորդում. Որդի իմ ես դու՝ ես այսօր ծնայ
զքեզ։ Եւ զի յարոյց զնա 'ի մեռելոց, և ոչ ևս դառ֊ 34
նալոց է յապականութիւն, այսպէս ասէ, թէ տաց
քեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւատարիմս. քան֊ 35
զի և 'ի միւսումն ասէ. Ոչ տացես սրբոյ քում տե֊
սանել զապականութիւն։ Այլ Դաւիթ յազգի անդ 36
իւրում պաշտեաց, և 'ի կամս Աստուծոյ ննջեաց՝ և
յաւելաւ առ հարս իւր, և ետես զապականութիւն. 37
բայց զոր Աստուած յարոյց, ոչ ետես զապականու֊ 38
թիւն։ Յայտնի լիցի ձեզ՝ արք եղբարք, զի սովաւ
ձեզ թողութիւն մեղաց աւետարանի. և յամենայ֊
նէ՝ յորմէ ոչ կարացէք օրինօքն Մովսիսի արդարանալ, 39
սովաւ ամենայն որ հաւատայ՝ արդարանայ։ Զգոյշ 40
կացէք, գուցէ եկեսցէ 'ի վերայ ձեր որ ասացեալն է
'ի մարգարէս. Տեսէք, արհամարհոտք, և զարմա֊ 41
ցարուք և եղծարուք. զի գործ մի գործեմ ես յա֊
ւուրս ձեր, գործ՝ որում ոչ հաւատայցէք՝ եթէ ոք
պատմեսցէ ձեզ։ Եւ իբրև ելին անտի, աղաչէին 'ի 42
միւսում շաբաթու խօսել նոցա զնոյն բանս։ Եւ իբ֊ 43
րև արձակեցաւ ժողովուրդն, զհետ երթային բա֊
զումք 'ի Հրէից անտի և 'ի պաշտօնէիցն եկամտից՝

զՊաւղոսի և զԲառնաբայ, որք խօսէին ընդ նոսա
և հաւանեցուցանէին զնոսա կալ մնալ 'ի շնորհսն
Աստուծոյ։
44 ԴԱ. Եւ 'ի գալ միւսոյ շաբաթուն՝ գրեթէ ամե֊
նայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ։
45 Իբրև տեսին Հրեայքն զամբոխն, լցան նախանձու.
և ընդդէմ դարձեալ ասացելոցն 'ի Պաւղոսէ՝ հայ֊
46 հոյէին։ Համարձակեալ Պաւղոսի և Բառնաբայ՝
ասէին. Առ ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աս֊
տուծոյ. և քանզի դուք մերժէք զնա, և ոչ արժա֊
նիս համարիք զձեզ կենացն յաւիտենականաց, ա֊
47 հաւասիկ դառնամք 'ի հեթանոսս։ Զի այսպէս
պատուիրեաց մեզ Տէր. Եդի զքեզ 'ի լոյս հեթա֊
նոսաց, լինել քեզ 'ի փրկութիւն մինչև 'ի ծագս
48 երկրի։ Զայս լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին
և փառաւոր առնէին զբանն Տեառն. և հաւատացին
49 որք էին կարգեալ 'ի կեանսն յաւիտենականս. և
50 շրջէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն։ Բայց
Հրեայքն գրգռեցին զպաշտօնեայ կանայս զգաստս,
և զգլխաւորս քաղաքին, և յարուցեալ հալածանս 'ի
վերայ Պաւղոսի և Բառնաբայ, հանին զնոսա 'ի
51 սահմանացն իւրեանց։ Եւ նոցա թօթափեալ զփոշի
52 ոտից 'ի վերայ նոցա, եկին յԻկոնիոն. և աշակերտքն
լնուին խնդութեամբ և Հոգւով սրբով։

ԳԼՈՒԽ ԺԴ

1 Եւ եղև յԻկոնիոն 'ի միասին մտանել նոցա 'ի ժո֊
ղովուրդ Հրէիցն և խօսել նոյնպէս, մինչև հաւա֊
2 տալ Հրէից և Յունաց բազմաց յոյժ. բայց անհա֊
ւան Հրեայքն յարուցին և չարացուցին զանձինս հե֊
3 թանոսացն 'ի վերայ եղբարց։ Բազում ժամանակս
շրջէին՝ համարձակեալք Տեառն վկայութեամբ, բա֊
նիւ շնորհաց իւրոց, և տալ նշանս և արուեստս լինե֊
4 լոյ 'ի ձեռս նոցա։ Եւ եղեն հերձուածք բազմու֊

թեան քաղաքին. ոմանք էին 'ի Հրեայսն, և ո-
մանք յԱռաքեալսն: Իբրև եղև դիմել հեթանոսացն 5
և Հրէից իշխանօքն իւրեանց՝ 'ի թշնամանել և 'ի
քարկոծել զնոսա, ազդ եղեալ նոցա՝ փախեան 'ի քա- 6
ղաքսն լիկայոնացւոց, 'ի Լիւստրա և 'ի Դերբէ՝ և
շուրջ զգաւառաւն, և անդ աւետարանէին:
ԴԲ. Եւ այր ոմն լիւստրացի տկար յոտից նստէր՝ 7
կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբեք չէր գնա-
ցեալ. սա լուաւ զխօսսն Պաւղոսի, որոյ հայեցեալ 8
'ի նա և տեսեալ՝ թէ ունի հաւատս փրկութեան,
ասէ մեծաձայն. Քեզ ասեմ յանուն Տեառն մերոյ 9
Յիսուսի Քրիստոսի, յոտն կաց 'ի վերայ ոտից քոց
ուղիղ: Եւ վաղվաղէր և գնայր: Եւ ժողովրդոցն 10
տեսեալ զոր արարն Պաւղոս, բարձին զձայնս իւրեանց
լիկայոնարէն, և ասեն. Աստուածք նմանեալ մարդ-
կան իջին առ մեզ: Եւ կոչէին զԲառնաբաս՝ Դիոս, 11
և զՊաւղոս՝ Հերմէս, քանզի նա էր առաջնորդ բա-
նին: Իսկ քուրմն Դիայ՝ որ կայր առաջի քաղաքին, 12
ցուլս և պսակս հասուցեալ 'ի դուռն հանդերձ բազ-
մութեամբքն՝ կամէր զոհել: Եւ լուեալ Առաքելոցն 13
Բառնաբայ և Պաւղոսի, պատառեալ զհանդերձս իւ-
րեանց արտաքս վազեցին յամբոխն, աղաղակէին
և ասէին. Արք, զի՞նչ գործէք զայդ. մեք ձեզ նմա- 14
նօղք կարեօք մարդիկ եմք, աւետարանել ձեզ յայդ-
պիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդա-
նի, որ արար զերկինս և զերկիր և զծով՝ և զամենայն
որ 'ի նոսա. որ յանցեալ ազգսն թոյլ ետ ամենայն 15
հեթանոսաց գնալ 'ի ճանապարհս իւրեանց. և սա- 16
կայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող, բա-
րերարութեամբն տալ յերկնից ձեզ անձրևս, և ժա-
մանակս պտղաբերս, լնուլ կերակրովք և ուրախու-
թեամբ զսիրտս ձեր: Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռ- 17
ուեցուցանէին զժողովուրդսն 'ի չզոհելոյ նոցա, այլ
գնալ յիւրաքանչիւր տեղիս:
ԴԳ. Եւ 'ի շրջելն նոցա և յուսուցանել՝ եկին հա- 18

սին յԱնտիոքէ և յԻկոնիոնէ Հրեայք: Եւ 'ի վիճել
նոցա համարձակութեամբ. պատրեցին զժողովուրդսն
'ի բաց կալ 'ի նոցանէ, և ասէին թէ ոչ ինչ ճշմար-
տութիւն ասեն, այլ զամենայն ստեն. և քարկո-
ծեալ զՊաւղոս քարշեցին արտաքս քան զքաղաքն,
19 և համարէին զնա մեռեալ: Եւ 'ի պատել զնովաւ
աշակերտացն՝ յարեաւ եմուտ 'ի քաղաքն, և 'ի վա-
20 ղիւ անդր ել Բառնաբաւ հանդերձ 'ի Դերբէ: Ա-
ւետարանեալ 'ի քաղաքին յայնմիկ և աշակերտեալ
զբազումս, և դարձան 'ի Լիւստրա և յԻկոնիոն և
21 յԱնտիոքիա, հաստատել զանձինս աշակերտելոցն
և մխիթարել, կալ հաստատուն 'ի հաւատսն, և թէ
բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յար-
22 քայութիւն Աստուծոյ: Ձեռնադրեցին նոցա ըստ ե-
կեղեցեաց երիցունս. աղօթս արարեալ հանդերձ
պահովք, յանձն արարին զնոսա Տեառն՝ յոր հա-
23 ւատացեալ էին: Եւ շրջեալ ընդ Պիսիդեա՝ եկին
24 'ի Պամփիւլեա. և խօսեցեալ 'ի Պերգէ զբանն
25 Տեառն, իջին յԱտալիա. և անտի նաւարկեալ՝
գնացին յԱնտիոք, ուստի էին յանձն արարեալ
26 շնորհացն Աստուծոյ՝ 'ի գործն զոր կատարեցին: Ե-
կեալ ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին որչափ ա-
րար Աստուած ընդ նոսա, և զի եբաց հեթանոսաց
27 դուռն հաւատոյ. շրջէին ժամանակս ոչ սակաւս ընդ
աշակերտսն:

ԳԼՈՒԽ ԺԵ

1 ԴԴ. Եւ ոմանք իջեալ 'ի հրէաստանէ՝ ուսուցա-
նէին զեղբարս, եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն
2 Մովսիսի՝ ոչ կարէք ապրել: Եւ 'ի լինել ոչ սակաւ
հակառակութեան և խնդրոյ՝ Պաւղոսի և Բառնա-
բայ ընդ նոսա, եդին ելանել Պաւղոսի և Բառնա-
բայ և ոմանց 'ի նոցանէ՝ առ Առաքեալսն և երի-
3 ցունս յԵրուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ: Նո-

քա յուղարկեալք յեկեղեցւոյն՝ շրջեցան ընդ Փիւ֊
նիկէ և ընդ Սամարիա, պատմէին զդարձն հեթա֊
նոսաց, և առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղ֊
բարց: Եւ հասեալք յԵրուսաղէմ, ընկալեալք յե֊ 4
կեղեցւոյն և յԱռաքելոցն և յերիցանց, պատմեցին
որչափ ինչ արար ընդ նոսա Աստուած: Յարեան ո֊ 5
մանք 'ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք,
և ասէին՝ թէ պարտ է թլփատել զդոսա, և պատուի֊
րել պահել զօրէնսն Մովսիսի: Եւ ժողովեցան Ա֊ 6
ռաքեալքն և երիցունք տեսանել վասն բանիս այսո֊
րիկ: Եւ յետ բազում խնդիր լինելոյ, յոտն եկաց 7
Պետրոս և ասէ ցնոսա. Արդ եղբարք, դուք ինքնին
գիտէք, զի յաւուրցն առաջնոց 'ի միջի ձերում ընտ֊
րեաց Աստուած բերանով իմով լսել հեթանոսաց
բանին աւետարանի և հաւատալ, և սրտագէտն Աս֊ 8
տուած վկայեաց նոցա, տալով նոցա զՀոգին սուրբ՝
որպէս և մեզ. և ոչ ինչ ընտրութիւն արար 'ի մէջ 9
նոցա և մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա:
Արդ ընդէ՞ր փորձէք զԱստուած, դնել լուծ 'ի վե֊ 10
րայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր և
ոչ մեք կարացաք բառնալ. այլ շնորհօքն Տեառն Յի֊ 11
սուսի Քրիստոսի՝ հաւատամք ապրել, զոր օրինակ
և նոքա: Լռեաց ամենայն ժողովուրդն, և լսէին 12
Բառնաբայ և Պաւղոսի պատմելոյն՝ որչափ արար
Աստուած նշանս և արուեստս 'ի հեթանոսս 'ի ձեռն
նոցա:

ԴԵ. Եւ յետ լռելոյն նոցա, պատասխանի ետ 13
Յակովբոս և ասէ. Արք եղբարք, լուարուք ինձ.
Շմաւոն պատմեաց որպէս յառաջագոյն Աստուած 14
այց արար առնուլ ժողովուրդ 'ի հեթանոսաց՝ անուան
իւրոյ. և այնմ միաբանին բանք մարգարէիցն. որ֊ 15
պէս և գրեալ է. Յետ այսորիկ դարձայց՝ և շինեցից 16
զյարկն Դաւթի՝ զանկեալն, և զկործանեալսն նորա
վերստին շինեցից, և կանգնեցից զնա. որպէս զի 17
խնդրեսցեն մնացորդք մարդկան զՏէր, և ամենայն

հեթանոսք՝ յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ
18 Տէր. որ առնէ զայս ամենայն, յայտնի է 'ի յաւի֊
19 տենից: Վասն որոյ և ես իրաւունս համարիմ, մի՛
նեղել զայնոսիկ՝ ոյք 'ի հեթանոսացն դառնան առ
20 Աստուած. այլ տալ թուղթս առ նոսա, խորշել 'ի
կերակրոց կռոց, և 'ի պոռնկութենէ, և 'ի մեռելո֊
21 տւոյ, և յարենէ: Զի Մովսէս յազգացն առաջնոց
ըստ քաղաքաց զքարոզիչսն իւր ունի 'ի ժողովսն,
22 ըստ ամենայն շաբաթուց ընթերցեալ: Յայնժամ
հաճոյ թուեցաւ Առաքելոցն և երիցանցն ամենայն
եկեղեցեաւն՝ արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել
յԱնտիոք ընդ Պաւղոսի և ընդ Բառնաբայ. զՅուդա
զկոչեցեալն Բարսաբա՝ և զՇիղա, արս գլխաւորս.
23 գրեալ առ եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ. Առա֊
քեալք և երիցունք և եղբարք, յԱնտիոք և 'ի Սիւ֊
րիա և 'ի Կիլիկիա, եղբարցդ որ 'ի հեթանոսաց էք,
24 ողջոյն: Քանզի լուաք՝ թէ ոմանք իբրև 'ի մէնջ
խռովեցուցին զձեզ բանիւք՝ խախտել զանձինս ձեր.
ասեն թլփատել և պահել զօրէնսն, որոց ոչ հրա֊
25 մայեցաք: Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս՝
արս ընտրեալս յղել առ ձեզ, ընդ սիրելիս մեր՝ ընդ
26 Բառնաբայ և ընդ Պաւղոսի. արք՝ որք մատնեցին
զանձինս իւրեանց վասն անուանն Տեառն մերոյ Յի֊
27 սուսի Քրիստոսի: Արդ առաքեցաք զՅուդա և զ֊
28 Շիղա, և նոցա 'ի բանից զնոյն պատմել: Զի հա֊
ճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ և մեզ, մի՛ ինչ աւելի
բեռն դնել ձեզ. բայց միայն 'ի կարևորացս յայսո֊
29 ցիկ. 'ի բաց կալ 'ի զոհելոյ կռոց, և յարենէ, և 'ի
հեղձուցելոյ, և 'ի պոռնկութենէ. յորոց պահեալ
30 զանձինս՝ բարւոք գործիցէք. ողջ լերուք: Եւ նոքա
արձակեալք իջին յԱնտիոք, և ժողովեալ զժողո֊
31 վուրդսն՝ ետուն զթուղթն. և ընթերցեալ՝ ուրախ ե֊
32 ղեն 'ի վերայ մխիթարութեանն: Յուդա և Շիղա,
զի և նոքա մարգարէք էին, բանիւք բազմօք մխի֊
33 թարեցին զեղբարս և հաստատեցին: Եւ եղեալ

անդ ժամանակս, արձակեցան յեղբարց խաղաղու-
թեամբ առ Առաքեալսն. և հաճոյ թուեցաւ Շի- 34
ղայի մնալ անդէն: Բայց Պաւղոս և Բառնաբաս 35
շրջէին յԱնտիոք, ուսուցանել և աւետարանել և
այլովք բազմօք՝ զբանն Աստուծոյ:

ԴԶ. Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պաւղոս ցԲառ- 36
նաբաս. Դարձցուք և շրջեսցուք զեղբարբք՝ ըստ ա-
մենայն քաղաքաց յորս քարոզեցաք զբանն Տեառն,
թէ որպէս ունիցին: Բառնաբաս կամէր առնուլ և 37
զՅովհաննէս զկոչեցեալն Մարկոս. բայց Պաւղոս 38
աղաչէր՝ թէ զմեկնեալն 'ի նոցանէ 'ի Պամփիլեայ, և
զչեկեալն ընդ նոսա 'ի գործն, մի առնուլ ընդ ին-
քեանս: Եւ եղև գժտութիւն 'ի մէջ նոցա՝ մինչև մեկ- 39
նել 'ի միմեանց: Բառնաբայ առնուլ զՄարկոս նա-
ւել 'ի Կիւպրոս: Եւ Պաւղոսի ընտրեալ զՇիղա՝ 40
ել, յանձն արարեալ շնորհացն Աստուծոյ յեղբարց
անտի. և շրջէր 'ի կողմանս Ասորւոց և կիլիկեցւոց, 41
և հաստատէր զեկեղեցիսն:

ԳԼՈՒԽ ԺԶ

Եկն եհաս 'ի Դերբէ և 'ի Լիւստրա. և ահա ա- 1
շակերտ ոմն էր անդ՝ անուն Տիմոթէոս, որդի կնոջ
հրէի հաւատացելոյ՝ և հօր հեթանոսի, որ վկայեալ 2
էր 'ի լիւստրացւոց և յիկոնացւոց եղբարց: Զսա 3
կամեցաւ Պաւղոս ընդ իւր տանել. և առեալ թլ-
փատեաց զնա վասն Հրէիցն՝ որ էին 'ի տեղիսն յայ-
նոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր նորա թէ
հեթանոս էր: Իբրև անցանէին ընդ քաղաքսն, ա- 4
ւանդեցին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս
յԱռաքելոցն և յերիցանցն՝ որք յԵրուսաղէմ: Եւ 5
եկեղեցիքն հաստատէին 'ի հաւատս, և յաւելուին
'ի թիւն հանապազօր:

ԴԵ. Եւ շրջեցան ընդ Փռիւգիա և ընդ կողմանս 6
գաղատացւոց, արգելեալք 'ի Հոգւոյն սրբոյ խօսել

7 զբանն յԱսիա. բայց եկեալ առ Միւսեաւ՝ թևակո-
խէին երթալ 'ի Բիւթանիա. և ոչ համարձակեաց
8 նոցա Հոգին Յիսուսի: Եւ անցեալ ընդ Միւսիա՝
9 իջին 'ի Տրովադա. և տեսիլ երևեցաւ 'ի գիշերի
Պաւղոսի. այր ոմն մակեդոնացի կայր աղաչէր զնա
և ասէր. անցեալ 'ի Մակեդոնիա՝ օգնեսցես մեզ:
10 Եւ իբրև զտեսիլն ետես, վաղվաղակի խնդրեցաք
ելանել 'ի Մակեդոնիա, տեղեկացեալ թէ հրաւի-
11 րեաց զմեզ Տէր աւետարանել նոցա: Եւ ելեալ 'ի
Տրովադայ՝ դէպ ուղիղ գնացաք 'ի Սամոթրակէ. և
12 'ի վաղիւ անդր 'ի Նոր քաղաք, և անտի 'ի Փիլիպ-
պուս, որ է առաջին վիճակ մակեդոնացւոց՝ քաղաք
կողոնիա: Եւ անդ 'ի քաղաքին դադարեալ մեր ա-
13 ւուրս ինչ, յաւուր շաբաթու ելաք արտաքոյ քաղա-
քին առ գետափնն՝ ուր համարէին աղօթս մատու-
ցանել. և նստեալ խօսէաք ընդ ժողովեալ կանայ-
14 սըն: Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ՝ 'ի
Թիւատիր քաղաքէ, երկիւղած յԱստուծոյ, լուաւ.
զորոյ Տէր իսկ եբաց զսիրտն անսալ խօսիցն Պաւ-
15 ղոսի: Եւ իբրև մկրտեցաւ ինքն և տուն իւր, աղա-
չէր և ասէր. Եթէ համարիք զիս հաւատացեալ
Տեառն, մտեալ 'ի տուն իմ ագերուք: Եւ բռնա-
16 դատեաց տարաւ զմեզ: Եւ եղև մինչ երթայաք մեք
յաղօթս, պատահեաց մեզ աղախին ոմն՝ զոր ունէր
այս հարցուկ. որ շահս բազումս տայր տերանց իւ-
17 րոց մոլեւոփն: Նա զհետ եղեալ Պաւղոսի և մեր՝
աղաղակէր և ասէր. Արքս այս ծառայք Աստուծոյ
բարձրելոյ են, որ պատմեն ձեզ զճանապարհս փրր-
18 կութեան: Եւ զայս առնէր 'ի բազում աւուրս:
Զայրացեալ Պաւղոս՝ դարձաւ և ասէ ցայսն. Պա-
տուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի ելանել
19 'ի դմանէ. և ել 'ի նմին ժամու: Իբրև տեսին
տեարքն նորա՝ եթէ հատաւ յոյս շահի նոցա, առեալ
զՊաւղոս և զՇիղա՝ ձգեցին 'ի հրապարակն առ իշ-
20 խանսն. և ածեալ զնոսա առ զօրագլուխսն՝ ասեն.

Արքս այս խռովեցուցանեն զքաղաքս մեր․ ինքեանք
Հրեայք են, և պատմեն մեզ օրէնս, զոր չէ արժան 21
մեզ ընդունել և ոչ առնել, զի Հռոմայեցիք եմք։ Եւ 22
կուտեցաւ ամբոխն 'ի վերայ նոցա։ Եւ զօրագլուխքն
պատառեցին զհանդերձս իւրեանց, և հրամայեցին
գան հարկանել. և բազում վէրս եդեալ 'ի վերայ նո- 23
ցա՝ արկին 'ի բանտ, պատուիրեցին բանտապետին՝
զգուշութեամբ պահել զնոսա։ Որոյ առեալ զայս- 24
պիսի պատուէր, արկ զնոսա 'ի ներքին բանտն, և
զոտս նոցա պնդեաց 'ի կոճեղ։ Եւ 'ի մէջ գիշերոյն 25
Պաւղոս և Շիղա կային յաղօթս՝ և օրհնէին զԱս-
տուած․ ունկն դնէին նոցա կալանաւորքն։ Եւ եղև 26
յանկարծակի շարժումն մեծ, մինչև շարժել հիմանց
բանտին, և բացան անդէն դրունքն ամենայն, և ա-
մենեցուն կապանքն լուծան։ Իբրև զարթեաւ բան- 27
տապետն՝ և ետես բացեալ զդուրս բանտին, ձգեաց
զսուսեր՝ և կամէր երթալ զիւրովին. կարծէր փա-
խուցեալ զկապեալսն։ Եւ կոչեաց 'ի ձայն մեծ Պաւ- 28
ղոս և ասէ․ Մի՛ ինչ գործեր ընդ անձն քո չար,
քանզի ամենեքին աստ եմք։ Խնդրեաց լոյս՝ և դի- 29
մեաց 'ի ներքս. և զահի հարեալ՝ անկաւ առաջի
Պաւղոսի և Շիղայի․ և ածեալ զնոսա արտաքս՝ ա- 30
սէ․ Տեարք, զի՞նչ պարտ է ինձ առնել՝ զի ապրե-
ցայց։ Եւ նոքա ասեն․ Հաւատա 'ի տէր Յիսուս 31
Քրիստոս, և ապրեսցիս դու և ամենայն տուն քո։
Եւ խօսեցան նմա զբանն Տեառն, և ամենեցուն որ 32
էին 'ի տան նորա։ Եւ առեալ զնոսա 'ի նմին ժա- 33
մու գիշերուցն՝ լուաց 'ի վիրաց անտի, և մկրտեցաւ
ինքն և իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի. և
ածեալ զնոսա 'ի տուն իւր, եդ առաջի նոցա սեղան,
և ուրախ եղև ամենայն տամբն հաւատացեալ յԱս-
տուած։ Եւ իբրև այգ եղև՝ առաքեցին զօրագլուխքն 35
զնուիրակսն, և ասեն․ Արձակեա զարսդ զայդոսիկ։
Եւ պատմեաց բանտապետն զբանսն՝ Պաւղոսի, ե- 36
թէ առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք. արդ ե-

37 լէք և երթայք խաղաղութեամբ։ Իսկ Պաւղոս ա-
սէ ցնոսա․ Գան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս
անմեղս Հռովմայեցիս արկին 'ի բանտ, և արդ լռե-
լեա՞յն հանեն զմեզ. ոչ այդպէս. այլ եկեսցեն ին-
38 քեանք իսկ հանցեն զմեզ։ Եւ պատմեցին զօրա-
գլխացն նուիրակքն զբանսն. զահի հարան իբրև
լուան՝ թէ Հռովմայեցիք են, և եկեալ աղաչեցին
39 զնոսա. և իբրև հանին, աղաչեցին գնալ 'ի քաղա-
40 քէն։ Եւ ելեալ 'ի բանտէն՝ մտին առ Լիդիա, և
տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա, և գնացին։

ԳԼՈՒԽ ԺԷ

1 ԵԱ․ Եւ շրջեալ ընդ Ամփիպոլիս և ընդ Ապողո-
նիա, եկին 'ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ
2 Հրէից։ Եւ ըստ սովորութեանն Պաւղոս եմուտ
առ նոսա, և 'ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա
3 'ի գրոց. բանայր և դնէր առաջի, եթէ պարտ էր
Քրիստոսի չարչարել և յառնել 'ի մեռելոց. և թէ
4 նա է Քրիստոսն Յիսուս զոր եսն պատմեմ ձեզ։ Եւ
ոմանք 'ի նոցանէ հաւանեցան, և վիճակեցան Պաւ-
ղոսի և Շիղայի. բայց պաշտօնէից հեթանոսաց
էր բազմութիւն յոյժ, և 'ի կանանց գլխաւորաց ոչ
5 սակաւք։ Եւ նախանձեցան Հրեայքն, և առեալ
արս ոմանս գռեհիկս անօրէնս, ամբոխ արարեալ
խռովեցին զքաղաքն. և կուտեալ առ ապարանսն
6 Յասոնի, խնդրէին զնոսա ածել 'ի հրապարակ։ Եւ
իբրև ոչ գտին զնոսա, քարշէին զՅասոն և զոմանս
եղբարս առ քաղաքապետսն, բողոք բարձեալ՝ թէ
որք զաշխարհս խռովեցուցին՝ սոքա և այսր հասին,
7 զորս ընկալեալ է Յասոնի. և սոքա ամենեքեան
հակառակ հրամանացն կայսեր գործեն, թագաւոր
8 զոմն ասեն զՅիսուս։ Եւ խռովեցուցին զժողովն
9 և զքաղաքապետսն, որ լսէին զայն. և առեալ երաշ-
խաւորութիւն առ 'ի Յասոնայ և յայլոցն՝ արձա-

կեցին զնոսա։ Բայց եղբարք վաղվաղակի գիշերայն 10
յուղարկեցին զՊաւղոս և զՇիղա 'ի Բերիա. որք
իբրև հասին անդր, 'ի ժողովուրդն Հրէից գնացին. զի 11
սոքա էին ազնուագոյնք՝ քան որ 'ի Թեսաղոնիկն էին.
որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ, հա֊
նապազ քննէին զգիրս՝ եթէ իցէ՞ այս այսպէս։ Եւ 12
բազումք իսկ 'ի նոցանէ հաւատացին, և 'ի յունաց
կանանց զգաստից և յարանց ոչ սակաւք։ Բայց իբրև 13
գիտացին՝ որ 'ի Թեսաղոնիկէ Հրեայքն էին, եթէ
և 'ի Բերիա պատմեցաւ 'ի Պաւղոսէ բանն Աստու֊
ծոյ, եկին և անդր՝ շարժել և խռովեցուցանել զժո֊
ղովսն։ Յայնժամ զՊաւղոս վաղվաղակի առաքեցին 14
եղբարք գնալ մինչև 'ի ծովեզր, և մնացին Շիղա և
Տիմոթէոս անդէն։ Եւ որք տանէին զՊաւղոս, ա֊ 15
ծին զնա մինչև յԱթէնս. և առեալ պատուէր առ
Շիղա և Տիմոթէոս, զի վաղվաղակի եկեսցեն առ
նա, և գնացին։
ԵԲ. Եւ յԱթէնս 'ի մնալն նոցա Պաւղոսի, զայ֊ 16
րանայր հոգի նորա 'ի նմա, զի տեսանէր 'ի կռապաշ֊
տութեան զքաղաքն. և խօսէր 'ի ժողովրդեանն ընդ 17
Հրեայսն և ընդ պաշտօնեայսն, և 'ի հրապարակսն
զամենայն օր՝ որոց և պատահէին։ Ոմանք յեպիկու֊ 18
րեանցն և 'ի ստոյիկեանց փիլիսոփայից հակառակէին
ընդ նմա. և ոմանք ասէին, զի՞նչ կամիցի սերմանա֊
քաղս այս խօսել, իսկ այլք՝ թէ օտարոտի իմն դից
թուի պատմիչ լինելոյ. քանզի զՅիսուս և զյարու֊
թիւնն աւետարանէր։ Եւ առեալ զնա ածին յԱ֊ 19
րիոսպագոսն, և ասէին. Կարասցո՞ւք իմանալ՝ թէ
զի՞նչ է նոր վարդապետութիւնդ՝ որ 'ի քէն պատմի.
օտարացուցիչս իմն բերես 'ի լսելիս մեր. կամիմք գի֊ 20
տել՝ թէ զի՞նչ կամիցի այս լինել։ Զի աթենացիք 21
ամենեքին և եկքն օտարք՝ ոչ յայլ ինչ պարապէին,
բայց ասել ինչ, կամ լսել նորագոյնս։ Եկաց Պաւ֊ 22
ղոս 'ի մէջ Արիոսպագին՝ և ասէ. Արք աթենացիք,
ըստ ամենայնի իբրև պաշտօնասէրս տեսանեմ զձեզ.

23 քանզի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր, գտի
բագին մի՝ յորում գրեալ էր, Անծանօթի Աստու֊
ծոյ. զոր դուք յանծանօթս պաշտէք՝ ես զնոյն պատ֊
24 մեմ ձեզ։ Աստուած՝ որ արար զաշխարհս, և զա֊
մենայն որ 'ի նմա, նա երկնից և երկրի է Տէր. ոչ
25 'ի ձեռագործ տաճարս բնակէ, և ոչ 'ի ձեռաց մարդ֊
կան պաշտի իբրև կարօտ իմիք. նա տայ ամենայնի
26 կեանս և շունչ և զամենայն ինչ, արար 'ի միոջէ ա֊
րենէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել 'ի վերայ ե֊
րեսաց ամենայն երկրի. հաստատեաց կարգեալ ժա֊
մանակս և սահմանադրութիւնս բնակութեան նո֊
27 ցա՝ խնդրել զԱստուած, զի թերևս զննիցեն զնա և
գտանիցեն. նա՝ և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր
28 ումեքէ 'ի մէնջ. զի նովաւ կեամք և շարժիմք և
եմք, որպէս ոմանք 'ի ձերոց ճարտարաց ասացին,
29 թէ նորա և ազգ իսկ եմք։ Եւ արդ որովհետև ազգ
եմք Աստուծոյ, ոչ պարտիմք համարել ոսկւոյ կամ
արծաթոյ կամ քարի, որ 'ի ճարտարութենէ և 'ի
մտաց մարդկան քանդակեալ իցէ, զաստուածականն
30 լինել նմանօղ։ Բայց զժամանակս անգիտութեանն
անտես արարեալ Աստուծոյ՝ արդ զայս պատուիրէ
31 մարդկան, ամենայն ումեք ապաշխարել։ Քանզի
հաստատեաց օր, յորում պարտ է դատել զաշխարհս
արդարութեամբ 'ի ձեռն առնն, որով սահմանեաց
տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա 'ի մեռե֊
32 լոց։ Իբրև լուան զյարութիւն մեռելոց, ոմանք
ծաղր առնէին. կէսքն ասէին՝ լուիցուք 'ի քէն վասն
33 այդորիկ միւսանգամ։ Եւ ապա Պաւղոս ել գնաց 'ի
34 միջոյ նոցա. և ոմանք արք անկեալք 'ի նա հաւա֊
տացին, ընդ որս էր և Դիոնեսիոս արիոպագացի,
և կին մի անուն Դամարիս, և այլք ընդ նոսա։

ԳԼՈՒԽ ԺԸ

ԵԳ. Յետ այսորիկ մեկնեալ Պաւղոսի յաթենա- 1
ցւոց անտի, եկն 'ի Կորնթոս. և եգիտ զոմն Հրեայ՝ 2
անուն Ակիւղաս՝ յազգէ պոնտացի, այն ինչ եկեալ
յիտալիայ, և զՊրիսկիղա կին նորա, վասն հրամա-
նին Կղաւդեայ՝ որոշել զամենայն Հրեայս 'ի Հռով-
մայ. և յարեցաւ 'ի նոսա։ Եւ վասն զի համարուեստ 3
էր, եղև առ նոսա՝ և գործէր. քանզի էին խորա-
նակարք արուեստիւ։ Եւ խօսէր 'ի ժողովրդեանն 4
ըստ ամենայն շաբաթուց, և հաւանեցուցանէր զՀը-
րեայս և զհեթանոսս։ Իբրև իջին 'ի Մակեդոնիայ 5
Շիղա և Տիմոթէոս, ստիպէր հոգւովն Պաւղոս դը-
նել վկայութիւն Հրէիցն՝ թէ Յիսուս է Քրիս-
տոսն։ Եւ յընդդէմ դառնալ նոցա և հայհոյել, թօ- 6
թափեալ զձորձս և ասէ ցնոսա. Արիւն ձեր 'ի գլուխս
ձեր, քաւեալ եմ ես. յայսմ հետէ 'ի հեթանոսս եր-
թամ։ Եւ գնացեալ անտի եմուտ 'ի տուն ուրուք, 7
որոյ անուն էր Տիտոս Յուստոս՝ պաշտօնեայ Աստու-
ծոյ, որոյ ապարանքն էին մերձ 'ի ժողովատեղն։ Կրիս- 8
պոս ժողովրդապետ հաւատաց 'ի Տէր ամենայն տամբ
իւրով, և բազմաց 'ի կորնթացւոցն լուեալ՝ հաւատա-
ցին և մկրտեցան։ Եւ ասէ Տէր 'ի գիշերի տես- 9
լեամբ ցՊաւղոս. Մի երկնչիր, այլ խօսեաց՝ և մի
լռեր. քանզի ես ընդ քեզ եմ, և ոչ ոք ընդդէմ դարձ- 10
ցի քո 'ի չարչարել զքեզ. քանզի ժողովուրդ է իմ
բազում 'ի քաղաքիս յայսմիկ։ Եւ նստաւ անդ տա- 11
րի մի և ամիս վեց՝ ուսուցանել նոցա զբանն Աս-
տուծոյ։

ԵԴ. Առ Գաղլիոնիւ փոխանակաւ բդեշխին աքայ- 12
եցւոց՝ յարեան միաբան Հրեայքն 'ի վերայ Պաւ-
ղոսի, և ածին զնա յատեան. և ասէին, եթէ ար- 13
տաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ՝ պաշտել զԱս-

14 տուած։ Եւ իբրև մերձ էր Պաւղոս բանալ զբերան
իւր, ասէ Գաղլիոն ցՀրեայսն. Եթէ էր ինչ անի-
րաւութիւն կամ խարդախութիւն չարեաց, ո՛վ
15 Հրեայք, 'ի դէպ էր ինձ անսալ ձեզ. ապա եթէ
խնդիրք ինչ են վասն բանի և անուանց և օրինաց ձե-
րոց, տեսէք ձեզէն. քանզի դատաւոր այդպիսի ի-
16 րաց չկամիմ լինել։ Եւ մերժեաց զնոսա յատենէ
17 անտի։ Եւ առեալ ամենեցուն Յունացն զՍոսթե-
նէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջի ատենին,
18 և ոչ ինչ զայնմանէ Գաղլիոնի փոյթ լինէր։ Բայց
Պաւղոսի տակաւին մնացեալ աւուրս բազումս,
յեղբարցն հրաժարեալ՝ նաւէր յԱսորիս. և ընդ նը-
մա Պրիսկիղա և Ակիւղաս, փոքրել զգլուխ 'ի Կենք-
19 րեա, քանզի ուխտադիր էր։ Եւ հասեալ յԵ-
փեսոս՝ զնոսա եթող անդ, և ինքն մտեալ 'ի ժողո-
20 վուրդն խօսէր ընդ Հրեայսն։ Եւ աղաչէին զնա՝
բազում ժամանակս լինել անդ. և ոչ առ յանձն,
21 այլ հրաժարեաց 'ի նոցանէն և ասէ. Դարձեալ
22 շրջեցայց Աստուծոյ կամօքն առ ձեզ։ Համբարձաւ
յԵփեսեայ, և իջեալ 'ի Կեսարիա՝ ել և ետ ողջոյն
23 եկեղեցւոյն։ Էջ յԱնտիոք, և եղեալ անդ ժա-
մանակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ գաղատացւոց
աշխարհն և ընդ Փռիւգիա, հաստատել զամենայն
24 աշակերտեալսն։ Հրեայ ոմն Ապողոս անուն՝ աղեք-
սանդրացի յազգէ, այր ճարտարաբան, եկն եհաս
25 յԵփեսոս. զօրաւոր էր գրովք։ Սա էր տեղեկա-
ցեալ ճանապարհին Տեառն, և եռայր հոգւով. խօ-
սէր և ուսուցանէր ճշմարտութեամբ վասն Յիսուսի.
26 գիտէր միայն զմկրտութիւնն Յովհաննու. սա սկը-
սաւ համարձակել 'ի ժողովրդեանն։ Եւ լուեալ 'ի
նմանէ Ակիւղայ և Պրիսկիղեայ՝ առին զնա առ ի-
րեանս, և ճշմարտագոյնս պատմեցին նմա զճանա-
27 պարհն Աստուծոյ. իբրև կամեցաւ նա գնալ յԱ-
քայիա, յօժարեալ եղբարք՝ գրեցին առ աշակերտսն
ընդունել զնա։ Որ իբրև եհաս անդր՝ բազում նը-

պատ լինէր հաւատացելոցն 'ի ձեռն շնորհացն.
քանզի պնդագոյնս զՀրեայսն յանդիմանէր հրապարա֊ 28
կաւ, ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոսն է Յիսուս:

ԳԼՈՒԽ ԺԹ

ԵԵ. Եւ եղեւ՝ մինչդեռ Ապողոսն 'ի Կորնթոս էր, 1
Պաւղոսի շրջեալ զվերին կողմամբքն՝ եւ իջանել յԵ֊
փեսոս, եւ գտանել զոմանս զաշակերտս. ասէ ցնոսա. 2
Եթէ Հոգի սուրբ ընկալարո՞ւք 'ի հաւատալն: Նո֊
քա ասեն ցնա: Այլ եւ ոչ թէ Հոգի սուրբ գուցէ՝
լուեալ է մեր: Եւ ասէ. Իսկ յի՞նչ մկրտեցարուք: 3
Նոքա ասեն. Ի Յովհաննու մկրտութիւնն: Եւ ա֊ 4
սէ Պաւղոս. Յովհաննէս քարոզեաց մկրտութիւն
ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն, եւ ասէր,
զի որ գալոցն է յետ նորա՝ 'ի նա հաւատասցեն, այս֊
ինքն է՝ 'ի Յիսուս Քրիստոս: Եւ իբրեւ լուան, մը֊ 5
կրտեցան յանուն տեառն Յիսուսի: Եւ 'ի դնել 'ի 6
վերայ նոցա Պաւղոսի զձեռն, եկն Հոգի սուրբ 'ի
վերայ նոցա. խօսէին լեզուս եւ մարգարէանային, եւ
էին ամենեքեան արք իբրեւ երկոտասան: Եւ մտեալ 7
'ի ժողովուրդն՝ համարձակէր ամիսս երիս, խօսէր եւ 8
հաւանեցուցանէր վասն արքայութեանն Աստուծոյ:
Իբրեւ ոմանք խստանային եւ ընդդիմդառնային՝ բամ֊ 9
բասել զճանապարհն առաջի բազմութեանն, մեկ֊
նեալ 'ի նոցանէ որոշեաց զաշակերտսն. հանապազօր
խօսէր 'ի դիւանին Տիւրաննեայ ուրումն: Եւ այս ե֊ 10
ղեւ զերկեամ մի, մինչեւ ամենայն բնակչացն Ասիա֊
ցւոց լսել զբանն Տեառն, Հրէից եւ հեթանոսաց:
Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած 'ի ձեռն 11
Պաւղոսի, մինչեւ 'ի հիւանդս տանել 'ի քրտանէ նո֊ 12
րա թաշկինակս կամ վարշամակս, եւ մերժել 'ի նո֊
ցանէ ախտիցն, եւ այսոց չարաց ելանել: Յանդգնե֊ 13
ցան ոմանք 'ի շրջող Հրէիցն՝ որ երդմնեցուցիչքն էին,

անուանել 'ի վերայ այնոցիկ որք ունէին այսս չարս՝
զանուն տեառն Յիսուսի, եւ ասէին. Երդմնեցու֊
ցանեմ զձեզ 'ի Յիսուս՝ զոր Պաւղոսն քարոզէ:
14 Էին ուրումն Սկեւեայ հրէի քահանայապետի եօթն
15 որդի որ զայս առնէին: Պատասխանի ետ այսն չար
եւ ասէ ցնոսա. ԶՅիսուս գիտեմ եւ զՊաւղոս ճա֊
16 նաչեմ, բայց դուք ո՞վ էք: Եւ վազեաց այրն յո֊
րում էր այսն չար, ըմբռնեալ զերկոսեան յաղթա֊
հարեաց զնոսա, մինչեւ մերկս եւ վիրաւորս փախչել
17 'ի տանէ անտի: Եւ այս յայտնի եղեւ ամենայն Հր֊
րէից եւ հեթանոսաց՝ որ բնակեալ էին յԵփեսոս.
եւ անկաւ երկիւղ յամենեսեան 'ի նոսա, եւ մեծա֊
18 նայր անուն տեառն Յիսուսի. եւ բազումք 'ի հաւա֊
տացելոցն գային եւ խոստովան լինէին, եւ պատմէին
19 զգործս իւրեանց: Եւ բազումք 'ի կախարդասարացն
բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն. եւ հա֊
մարեցան զգինս նոցա՝ եւ գտանէին արծաթոյ բիւրս
հինգ:
20 ԵԶ. Եւ այսպէս բանն Աստուծոյ աճէր եւ զօ֊
21 րանայր: Եւ իբրեւ կատարեցաւ այս, եդ Պաւղոս
'ի մտի՝ շրջել ընդ Մակեդոնիա եւ ընդ Աքայիա՝ եւ
գալ յԵրուսաղէմ. ասէր, եթէ յետ երթալոյն իմ
22 անդր, պարտ է ինձ եւ զՀռոմ տեսանել: Առաքեաց
'ի Մակեդոնիա երկուս 'ի պաշտօնէիցն իւրոց, զՏի֊
մոթէոս եւ զԵրաստոս, եւ ինքն մնաց ժամանակս ինչ
23 յԱսիա: Եւ եղեւ 'ի ժամանակին յայնմիկ խռովու֊
24 թիւն ոչ սակաւ վասն ճանապարհին: Իսկ Դեմետ֊
րիոս ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մեհեանս
արծաթիս Արտեմիս դից, եւ տայր ճարտարացն լի֊
25 նել ոչ սակաւ շահ. որ ժողովեացն իսկ եւ զձեռա֊
գէտս արուեստին, եւ ասէ. Արք, դուք ձեզէն իսկ
26 գիտէք զի յայսմ գործոյ է շահ մեզ. եւ տեսանէք
եւ լսէք՝ եթէ ոչ միայն զեփեսացւոց, այլ գրեթէ
զամենայն իսկ ասիացւոց՝ Պաւղոս այս հաւանեցու֊
ցեալ շրջեաց բազում ժողովս, ասել թէ ոչ են աս֊

տուածք ձեռագործք։ Եւ ոչ միայն այս ձգնէ զմեր 27
կողմն՝ գալ՚ի յանդիմանութիւն, այլ և զմեծին աս-
տուածոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել, նա՝
և քակելոց ևս իցէ մեծութիւն նորա՝ զոր ամենայն
Ասիա և տիեզերք պաշտեն։ Եւ զայս իբրև լուան, 28
լի եղեն բարկութեամբ, աղաղակէին և ասէին.
Մեծ է Արտեմիս եփեսացւոց։ Եւ լցաւ քաղաքն 29
խռովութեամբ. դիմեցին առ հասարակ՚ի թէատ-
րոնն, յափշտակեցին զԳայիոս և զԱրիստարքոս մա-
կեդոնացի՝ զուղեկիցսն Պաւղոսի։ Բայց Պաւղոս 30
իբրև կամեցաւ մտանել յամբոխն, ոչ թողին զնա
աշակերտքն. ոմանք և յասիապետացն՝ որ էին նորա 31
բարեկամք, յղէին առ նա և աղաչէին՝ մի՛ տալ զան-
ձըն՚ի թէատրոնն։ Այլք այլ ինչ աղաղակէին, զի 32
էր ժողովն նոցա խռովեալ. և բազումք՚ի նոցանէ ոչ
գիտէին թէ վասն ոյր ժողովեալ իցեն։ Եւ յամբո- 33
խէն բազմութենէ յառաջ կալան զԱղէքսանդրոս.
և իբրև ածին զնա յառաջ Հրեայքն, Աղէքսանդրոս
շարժեաց զձեռն՝ և կամէր պատասխանի առնել ամ-
բոխին։ Իբրև գիտացին թէ այրն Հրեայ է, միա- 34
բարբառ եղեալ յամենեցունց՝ իբրև ժամս երկուս
աղաղակել, թէ մեծ է Արտեմիս եփեսացւոց։ Լռե- 35
ցոյց դպրապետն զամբոխն և ասէ. Արք եփեսացիք,
իսկ ո՞վ է՚ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ զեփեսացւոց քա-
ղաքս՝ մեհենազարդ մեծին Արտեմեայ դիցն և Դիո-
պետեայ. և զի այդ այդպէս է անշուշտ, պարտ է 36
ձեզ հանդարտել և մի՛ ինչ յանդգնութեամբ գոր-
ծել. ածէք զարսդ զայդոսիկ այսր, ոչ մեհենակա- 37
պուտս և ոչ հայհոյիչս աստուածոյն մերոյ։ Զի ե- 38
թէ Դեմետրիոս և որ ընդ նմա ճարտարքդ՝ ունիցին
ինչ ընդ ումեք բանս, յատեան երթիցեն, և դա-
տաւորք գոն, և ամբաստան լիցին զմիմեանց. ապա 39
թէ վասն այլ իրիք խնդիր իցէ, յօրինաւոր ժողովսն
վճարեսցեն. քանզի և մեզ վիշտ վտանգի է ընդ կը- 40
ռուոյս այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց լինելոյ,

զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ վասն ժողո-
վոյս այսորիկ։ Եւ զայս ասացեալ՝ արձակեաց զժո-
ղովսն։

ԳԼՈՒԽ Ի

1 Ի. Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պաւ-
ղոս զաշակերտսն և մխիթարեաց. ողջոյն ետ, և ել
2 գնաց՚ի Մակեդոնիա։ Եւ շրջեալ ընդ կողմանսն
ընդ այնոսիկ, և մխիթարեալ զնոսա բանիւք բազ-
3 մօք, եկն յԵլլադա։ Իբրև արար անդ ամիսս երիս,
եղև նմա դաւ՚ի Հրէիցն, մինչդեռ կամէր ելանել
յԱսորիս. խորհուրդ կալաւ դառնալ ընդ Մակե-
4 դոնիա. և երթայր ընդ նմա մինչև յԱսիա Սոսի-
պատրոս Պիւռեայ բերիացի, և՚ի թեսաղոնիկեցւոց՝
Արիստարքոս և Սեկունդոս, և Գայիոս դերբեացի,
և Տիմոթէոս, և ասիացիք՝ Տիւքիկոս և Տրոփիմոս։
5 Սոքա յառաջ երթեալ մնային մեզ՚ի Տրովադա։
6 Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց՚ի
Փիլիպպեայ, և եկաք առ նոսա՚ի Տրովադա մինչև
7 յաւուրս հինգ. անդ դադարեցաք աւուրս եօթն։ Եւ
յաւուրն շաբաթուց՝ մինչդեռ ժողովեալ էաք բե-
կանել զհացն, Պաւղոս խօսէր ընդ նոսա, զի գնա-
լոց էր՚ի վաղիւ անդր. և երկայնեաց զբանն մինչև
8 ՚ի մէջ գիշերւոյն. և էին լապտերք բազումք՚ի վեր-
9 նատանն՝ ուր էաք ժողովեալ։ Եւ նստէր ոմն երի-
տասարդ՝ անուն Եւտիքոս՝ ՚ի վերայ պատուհանին,
նիրհէր՚ի քուն թանձրութեան, ՚ի խօսելն Պաւ-
ղոսի յաճախ. ընկղմեալ՚ի քնոյ անտի՝ անկաւ յեր-
10 րորդ դստիկոնէն՚ի վայր, և բարձաւ մեռեալ։ Եւ
իջեալ Պաւղոս՝ անկանէր զնովաւ, և առնոյր զնա ընդ
գիրկս՝ և ասէր. Մի՛ խռովիք, քանզի ոգի սորա՚ի
11 սմին է։ Եւ ել եբեկ զհացն՝ և ճաշակեաց. և բա-
զում ևս խօսեցաւ մինչև յառաւօտն, և ապա ել
12 գնաց, և ածին զպատանին կենդանի, և մխիթարե-

ցան ոչ սակաւ։ Եւ մեք մտեալ ՚ի նաւն՝ ամբարձաք 13
յԱսոն. անտի ակն ունէաք միւսանգամ առնուլ
զՊաւղոս, զի այնպէս պատուիրեալ էր՝ մինչ ինքն
զցամաքաւն երթալոց էր։ Եւ իբրեւ դիպեցաւ մեզ ՚ի 14
յԱսոն, առեալ զնա եկաք ՚ի Միտիլինէ. և անտի 15
նաւեալ՝ ՚ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիայ, և
՚ի միւս օրն հասաք ՚ի Սամոս, և ՚ի վաղիւ անդր ե-
կաք ՚ի Միլետոն։ Զի ՚ի մտի եդեալ էր Պաւղոսի 16
նաւել առ Եփեսոաւ, որպէս զի մի լիցի նմա ժամա-
նակ ինչ յամել յԱսիա. քանզի փութայր, եթէ
հնար ինչ իցէ նմա, զօրն պենտակոստէից երթալ
յԵրուսաղէմ։

Զէ. Եւ ՚ի Միլետեայ յղեալ յԵփեսոս, կոչեաց 17
զերիցունս եկեղեցւոյն։ Եւ իբրեւ եկին առ նա, ա- 18
սէ ցնոսա. Դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ
յորմէ եկի յԱսիա, որպէս ընդ ձեզ զամենայն ժա-
մանակն եղէ, ծառայել Տեառն ամենայն խոնար- 19
հութեամբ և բազում արտասուօք և փորձութեամբք՝
որ դիպեցան ինձ ՚ի նենգութեանց Հրէից։ Որպէս 20
ոչ ինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ,
և ուսուցանել ձեզ հրապարակաւ և առտնին, տալ 21
վկայութիւն Հրէից և հեթանոսաց զապաշխարու-
թեանն՝ որ առ Աստուած, և զհաւատոցն՝ որ ՚ի Տէր
մեր Յիսուս Քրիստոս։ Եւ արդ ահաւասիկ ես կա- 22
պեալ Հոգւոյն՝ երթամ յԵրուսաղէմ, և որ ինչ անդ
ընդ իս անցանելոց է՝ չգիտեմ. բայց զի Հոգին սուրբ 23
ըստ քաղաքաց վկայէ ինձ և ասէ, եթէ կապանք և
նեղութիւնք մնան քեզ։ Այլ և ոչ իւիք համարիմ 24
զանձն իմ պատուական, որպէս զկատարել զընթացս
իմ ուրախութեամբ՝ և զպաշտօնն զոր առի ՚ի Տեառ-
նէ Յիսուսէ Քրիստոսէ, վկայ լինել աւետարանի
շնորհացն Աստուծոյ։ Եւ արդ ահաւասիկ գիտեմ 25
ես, եթէ ոչ ևս տեսանէք զերեսս իմ դուք ամենե-
քեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն Աս-
տուծոյ։ Վասն որոյ և վկայութիւն դնեմ ձեզ յա- 26

27 ւուր յայսմիկ, զի սուրբ եմ յարենէ ամենեցուն.
քանզի ոչ խորշեցայ ՚ի չպատմելոյ ձեզ զամենայն
28 կամսն Աստուծոյ։ Զգոյշ կացէք անձանց և ամե-
նայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տե-
սուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց
29 արեամբ իւրով։ Քանզի գիտեմ ես, եթէ յետ ի-
մոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակօղք ՚ի ձեզ որ
30 ոչ խնայեսցեն հօտիդ, և ՚ի ձէնջ յարիցեն արք որ
խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։
31 Վասն այսորիկ արթուն կացէք, և յիշեցէք՝ զի զե-
րեամ մի զցայգ և զցերեկ՝ ոչ դադարեցի արտա-
32 սուօք խրատել զմի մի իւրաքանչիւր։ Եւ արդ յանձն
առնեմ զձեզ Աստուծոյ և բանի շնորհաց նորա, որ
կարօղն է շինել և տալ ձեզ ժառանգութիւն ընդ
33 սուրբսն ամենեսեան։ Արծաթոյ կամ ոսկւոյ կամ
34 հանդերձից՝ ոչ ուրուք ՚ի ձէնջ ցանկացայ. դուք ինք-
նին գիտէք՝ զի զպէտսն իմ և որոց ընդ իսն էին՝ պաշ-
35 տեցին ձեռքս այս։ Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ, զի
այսպէս պարտ է վաստակել, և դարմանել զհիւանդս,
և յիշել զբանն Տեառն Յիսուսի զոր ինքն իսկ ա-
36 սաց. Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն։ Եւ
զայս իբրեւ ասաց, եդեալ ծունր ամենեքումբք՝ ե-
37 կաց յաղօթս։ Բազում լալիւն եղեւ ամենեցուն, և
անկեալ զպարանոցաւն Պաւղոսի համբուրէին զնա.
38 մորմոքէին մանաւանդ ՚ի վերայ բանին զոր ասէր,
թէ ոչ ևս տեսանելոց են զերեսս նորա. և յուղար-
կեցին զնա ՚ի նաւ անդր։

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Զբ. Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ և մեկնել ՚ի
նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք ՚ի Կօս, և ՚ի վա-
2 ղիւ անդր ՚ի Հռոդոն, և անտի ՚ի Պատարա։ Եւ
գտեալ նաւ մի զի երթայր ՚ի Փիւնիկէ, ելեալ ՚ի նա
3 գնացաք։ Եւ յայտ եղեալ Կիպրեայ, թողաք զնա ՚ի

ձախակողմ, նաւեցաք յԱսորիս և իջաք 'ի Տիւրոս.
քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինսն։ Եւ գը- 4
տեալ զաշակերտսն՝ կացաք անդ աւուրս եօթն, որք
ասէին ցՊաւղոս 'ի ձեռն Հոգւոյն, մի ելանել յԵ-
րուսաղէմ։ Եւ իբրև եղև մեզ կատարել զաւուրսն՝ 5
ելեալ գնացաք, յուղարկեալ զմեզ ամենեցուն՝ հան-
դերձ կանամբք և որդւովք՝ մինչև արտաքոյ քաղա-
քին։ Եւ եդեալ ծունր առ ծովեզերբն՝ կացաք յա-
ղօթս, և հրաժարեցաք 'ի միմեանց և ելաք 'ի նաւն. 6
և նոքա դարձան յիւրեանց տեղիս։ Եւ մեր զնաւն 7
աւարտեալ 'ի Տիւրոսէ՝ հասաք 'ի Պտղոմայիդա.
և ողջոյն տուեալ եղբարց, եղեաք օր մի առ նոսա։
Եւ 'ի վաղիւ անդր ելեալ անտի՝ եկաք 'ի Կեսարիա, 8
և մտեալ յապարանսն Փիլիպպոսի աւետարանչի, որ
էր յեօթանց անտի, ագաք առ նմա. նորա էին դըս- 9
տերք չորք կուսք՝ մարգարէք։ Եւ 'ի լինելն մեր անդ 10
աւուրս բազումս, էջ ոմն 'ի Հրէաստանէ անուն Ագա-
բոս, և եկեալ առ մեզ՝ առեալ զգօտին Պաւղոսի՝ 11
կապեաց զոտս և զձեռս իւր, և ասէ. Այսպէս ասէ
Հոգին սուրբ, զայրն որոյ գօտիս այս է՝ այսպէս կա-
պեսցեն յԵրուսաղէմ Հրեայք, և մատնեսցեն զնա
'ի ձեռս հեթանոսաց։ Եւ իբրև լուաք զայն, աղա- 12
չեցաք մեք և որ 'ի տեղւոջն էին՝ չելանել նմա յԵ-
րուսաղէմ։ Յայնժամ պատասխանի ետ Պաւղոս և 13
ասէ. Զի՞նչ գործէք՝ զի լայք և ճմլեցուցանէք զսը-
իրտ իմ. քանզի ես ոչ միայն կապելոյ, այլ և մեռա-
նելոյ յԵրուսաղէմ պատրաստ եմ վասն անուանն
տեառն Յիսուսի Քրիստոսի։ Եւ 'ի չանսալն նորա՝ 14
լռեցաք. ասեմք, Տեառն կամք լիցին։
Զ Պ. Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ ե- 15
լանէաք յԵրուսաղէմ։ Եկին ընդ մեզ և յաշակեր- 16
տաց անտի Կեսարացւոց, և տանէին զմեզ առ որում
վանս ունելոց էաք՝ Մնասոնի ումեմն կիպրացւոյ
առաջին աշակերտի։ Եւ 'ի մտանելն մեր յԵրու- 17
սաղէմ, խնդութեամբ ընկալան զմեզ եղբարք։ Ի վա- 18

ղիւ անդր եմուտ Պաւղոս ընդ մեզ առ Յակոբոս.
19 և եկին ամենայն երիցունքն. և ողջոյն տուեալ նո-
ցա՝ պատմէր մի ըստ միոջէ զոր արար Աստուած 'ի
20 հեթանոսս 'ի ձեռն պաշտաման նորա։ Եւ նոցա լը-
ուեալ՝ փառաւոր առնէին զԱստուած. և ասեն ցնա.
Տեսանես, եղբայր, քանի՞ բիւրք են հաւատացելոցն
Հրէից, և ամենեքեան նախանձաւոր օրինացն են։
21 Բայց իրազեկ եղեն վասն քո՝ թէ ապստամբութիւն
ուսուցանես 'ի Մովսիսէ՝ որոց 'ի հեթանոսս ամե-
նայն Հրեայք են, ասես՝ մի թլփատել նոցա զորդիս,
22 և մի ըստ կրօնից օրինացն գնալ։ Արդ զի՞նչ լինի-
23 ցի. ապաքէն լուեն թէ եկեալ ես. արդ զայս արա
զոր ասեմք քեզ. են 'ի մեզ արք չորք ուխտադիրք
24 յանձինս իւրեանց, զնոսա առեալ սրբեսցիս ընդ նո-
սա. և ծախեա ինչ 'ի նոսա՝ զի գերծցեն զգլուխս
իւրեանց. և գիտասցեն ամենեքին, թէ զորոց իրա-
զեկն եղեն զքէն՝ ոչ ինչ է, այլ միաբանիս և դու
25 պահել զօրէնսն։ Բայց վասն հաւատացելոցն հե-
թանոսաց՝ մեք առաքեցաք՝ որպէս ընտրեցաք, մի՛
ինչ այնպիսի պահել նոցա. բայց միայն զգուշանալ
նոցա 'ի կուոց զոհելոյ և յարենէ և 'ի հեղձուցելոյ
26 և 'ի պոռնկութենէ։ Յայնժամ Պաւղոսի առեալ
զարսն՝ 'ի վաղիւ անդր ընդ նոսա սրբեալ եմուտ 'ի
տաճարն. յայտ առնել զկատարումն աւուրցն սըր-
բութեան, մինչև մատեաւ 'ի վերայ իւրաքանչիւր
ուրուք 'ի նոցանէ պատարագ։
27 Զ Պ. Եւ իբրև մերձ էին եօթն աւուրքն 'ի կա-
տարել, տեսեալ զնա 'ի տաճարին Ասիացւոց Հը-
րէիցն՝ զեղուին զնովաւ զամենայն ամբոխն, և ար-
28 կեալ 'ի նա ձեռս՝ աղաղակէին. Արք իսրայելացիք,
օգնեցէք. այս այր է՝ որ հակառակ ժողովրդեանն և
օրինացն և տեղւոյս այսորիկ՝ ամենեցուն ամենայն
ուրեք ուսուցանէ, մինչև հեթանոսս ևս եմոյծ 'ի
29 տաճարն և պղծեաց զսուրբ տեղիս։ Քանզի էր
յառաջագոյն տեսեալ զՏրոփիմոս զԵփեսացի 'ի

քաղաքին ընդ նմա, զոր կարծէին եթէ ’ի տաճար
անդր եմոյծ Պաւղոս։ Շարժեցաւ քաղաքն ամե- 30
նայն, և կուտեցաւ ժողովուրդն. և առեալ զՊաւ-
ղոս ձգէին արտաքոյ տաճարին. և վաղվաղակի փա-
կեցան դրունքն, և խնդրէին զնա սպանանել։ Եւ 31
հաս զրոյց ’ի հազարապետ գնդին, եթէ խռովեալ
է ամենայն Երուսաղէմ. որոյ անդէն առեալ զօրա- 32
կանս և հարիւրապետս՝ դիմեաց ’ի վերայ նոցա. և
նոցա տեսեալ զհազարապետն և զզօրականսն, դա-
դարեցին ’ի հարկանելոյ զՊաւղոս։ Յայնժամ մա- 33
տուցեալ հազարապետն կալաւ զնա, և հրամայեաց
կապել կրկին շղթայիւք, և հարցանէր թէ ով իցէ,
և զի՞նչ իցէ արարեալ։ Այլք այլ ինչ աղաղակէին 34
զնմանէ յամբոխին. իբրև ոչ կարաց գիտել զստոյգն
վասն ամբոխին, հրամայեաց ածել զնա ’ի բանակն։
Եւ իբրև եհաս յաստիճանսն, դէպ եղև բառնալ 35
բերել զնա ’ի զօրականացն՝ վասն բռնութեան ամ-
բոխին. քանզի զհետ երթայր բազմութիւն ժողովր- 36
դեանն, և ասէին՝ Բարձ զդա։ Մինչ դեռ մտանե- 37
լոց էր Պաւղոս ’ի բանակն, ասէ ցհազարապետն.
Եթէ արժա՞ն իցէ ինձ խօսել ընդ քեզ։ Եւ նա ա-
սէ. Յունարէն գիտե՞ս. մի արդեօք դու՞ իցես եգիպ- 38
տացին, որ յառաջ քան զայս աւուրս ապստամբե-
ցուցեր և հաներ յանապատ չորս հազարս արս սիկա-
րեանս։ Եւ ասէ Պաւղոս. Ես եմ այր հրեայ, ’ի 39
Տարսոնէ կիլիկեցւոց, ոչ աննշան քաղաքի քաղաքա-
ցի. աղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողո-
վուրդդ։ Եւ ’ի հրամայելն նորա, Պաւղոս կացեալ 40
’ի վերայ աստիճանացն՝ շարժեաց զձեռն ժողովր-
դեանն. իբրև բազում լռութիւն լինէր, սկսաւ բար-
բառել հեբրայեցւոց բարբառոյն և ասէ.

ԳԼՈՒԽ ԻԲ

1 Արք եղբարք և հարք, լուարուք ինձ այժմ առ
2 ձեզ պատասխանատուութեանս։ Իբրև լուան՝ թէ
հեբրայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա, առա-
3 ւել ևս դադարեցին ’ի լռութիւն։ Եւ նա ասէ. Ես
եմ այր հրեայ, ծնեալ ’ի Տարսոնի կիլիկեցւոց, սը-
նեալ ’ի քաղաքիս յայսմիկ առ ոտս Գամաղիէլի,
խրատեալ ըստ ճշմարտութեան հայրենի օրինացն,
նախանձայոյզ էի Աստուծոյ՝ որպէս ամենեքեան դուք
4 այսօր։ Որ զայս ճանապարհ վարեցի մինչև ’ի մահ,
5 կապել և մատնել ’ի բանտս արս և կանայս, որպէս
և քահանայապետդ վկայէ ինձ՝ և ամենայն ծերա-
կոյտդ. յորոց և թուղթս առեալ առ եղբարս ’ի Դա-
մասկոս երթայի, ածել և անտի կապեալս յԵրու-
6 սաղէմ, զի պատժեսցին։ Եւ եղև ինձ ’ի գնալն և
’ի մերձենալ ’ի Դամասկոս, զմիջաւուրբն յանկար-
ծակի յերկնից փայլատակեալ լոյս սաստիկ զինև, և
7 անկայ յերկիր. և լուայ բարբառ որ ասէր ցիս. Սա-
8 ւուղ՝ Սաւուղ, զի՞ հալածես զիս։ Եւ ես ետու պա-
տասխանի, թէ ո՞վ ես Տէր. և ասէ ցիս. Ես եմ
9 Յիսուս Նազովրեցի՝ զոր դու հալածես։ Բայց որ
ընդ իս էին՝ զլոյսն տեսին, այլ զձայնն ոչ լսէին՝ որ
10 խօսէր ընդ իս։ Եւ ասեմ. Զի՞նչ արարից Տէր. և
ասէ ցիս Տէր. Յարուցեալ երթիցես ’ի Դամաս-
կոս, և անդ պատմեսցի քեզ վասն ամենայնի որ հը-
11 րամանեալ է քեզ առնել։ Իբրև ոչ տեսանէի ’ի փառաց
լուսոյն այնորիկ, զձեռանէ ձգեալ ’ի նոցանէ որ ընդ
12 իս էին, մտի ’ի Դամասկոս։ Անանիա ոմն այր եր-
կիւղած ըստ օրինացն, վկայեալ յամենայն բնակչաց
որ ’ի Դամասկոս Հրեայքն էին, եկն եկաց առ իս
13 և ասէ. Սաւուղ եղբայր, ’ի վեր հայեաց։ Եւ ես
14 նոյնժամայն ’ի վեր հայեցայ ’ի նա. և նա ասէ ցիս.
Աստուած հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց ըզ-

քեզ ճանաչել զկամս նորա, և տեսանել զարդարն,
և լսել բարբառ 'ի բերանոյ նորա. զի եղիցես վկայ 15
նորա առ ամենայն մարդիկ, որոց տեսերն և լուար.
և արդ զի՞ հեղգաս, արի՛ մկրտեաց, և լուա զմեղս 16
քո 'ի կարդալ զանուն նորա։ Եւ եղև ինձ 'ի դառ- 17
նալն յԵրուսաղէմ և կալ յաղօթս 'ի տաճարին՝
լինել 'ի զարմացման, և տեսանել զնա զի ասէր ցիս. 18
Փութա ել յԵրուսաղեմէ վաղվաղակի, քանզի չեն
ընդունելոց զքո վկայութիւնդ վասն իմ։ Եւ ես ա- 19
սեմ. Տէր, ինքեանք իսկ գիտեն՝ զի ես էի որ 'ի
բանտս տայի, և գան հարկանէի ըստ ժողովրդոցն
զհաւատացեալսն 'ի քեզ. և յորժամ հեղոյր արիւնն 20
Ստեփանոսի վկայի քո, ես ինքն էի որ 'ի վերայ կայի,
և կամակից լինէի սպանման նորա, և պահէի զհան-
դերձս սպանողացն նորա։ Եւ ասէ ցիս. Գնա, զի 21
ես 'ի հեթանոսս հեռաւորս առաքեցից զքեզ։ Եւ 22
ունկն դնէին նմա մինչև ցայս բան. ապա բարձին
զձայնս իւրեանց և ասեն. Բարձ յերկրէ զայդպի-
սիդ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ։ Եւ յաղաղա- 23
կելն նոցա և ընկենուլ զհանդերձս և զփոշին ցանել
յօդսն, հրամայեաց հազարապետն մուծանել զնա 24
'ի բանակն. ասէր գանիւ հարցանել զնա, զի գիտա-
ցից վասն որոյ յանցման այնպէս աղաղակէին զնմա-
նէ։ Եւ իբրև պրկեցին զնա փոկովք, ասէ Պաւղոս 25
ցհարիւրապետն որ 'ի վերայ կայր. Եթէ զայր հռո-
մայեցի և անպարտ պա՞րտ իցէ ձեզ գան հարկանել։
Իբրև լուաւ հարիւրապետն, մատուցեալ առ հազա- 26
րապետն պատմեաց և ասէ. Զի՞նչ կամիս առնել,
քանզի այրս այս հռովմայեցի է։ Եւ մատուցեալ հա- 27
զարապետն, ասէ ցնա. Ասա դու ցիս, հռոմայեցի՞
ես։ Եւ նա ասէ. Այո։ Պատասխանի ետ հազա- 28
րապետն. Ես բազում գլխոց զզինուորութիւնս զայս
ստացայ։ Ասէ Պաւղոս. Ես ծնեալ իսկ 'ի դմին եմ։
Եւ վաղվաղակի 'ի բաց կացին 'ի նմանէ՝ որ հարկա- 29
նելոցն էին զնա. և հազարապետն իսկ երկեաւ, իբ-

րև գիտաց եթէ հռովմայեցի իցէ, և զի կապեալն
ևս էր զնա։
30 Ջ.Ջ. Եւ 'ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմա-
րիտն, թէ զինչ չարախօսութիւն իցէ Հրէիցն. ար-
ձակեաց զնա, և հրամայեաց կոչել զքահանայա-
պետսն և զամենայն ատեանն, և իջուցեալ զՊաւ-
ղոս՝ կացոյց 'ի մէջ նոցա։

ԳԼՈՒԽ ԻԳ

1 Եւ հայեցեալ Պաւղոսի յատեանն՝ ասէ. Արք
եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք գնացեալ եմ ա-
2 ռաջի Աստուծոյ մինչև ցայսօր։ Եւ քահանայապետն
Անանիա հրամայեաց սպասաւորացն հարկանել զբ-
3 բերան նորա։ Յայնժամ Պաւղոս ասէ ցնա. Հար-
կանելոց է զքեզ Աստուած, որմ բռեալ. և դու
նստիս դատե՞լ զիս ըստ օրինաց, և առանց օրինաց
4 հրամայես զիս հարկանել։ Եւ որ շուրջն կային՝ ա-
5 սեն. Զքահանայապետ Աստուծոյ հայհոյե՞ս։ Եւ
ասէ Պաւղոս. Ոչ գիտէի, եղբարք, եթէ իցէ քա-
հանայապետ. գրեալ իսկ է՝ զիշխան ժողովրդեան քո
6 ոչ հայհոյեսցես։ Իբրև գիտաց Պաւղոս՝ եթէ մի կողմն
սադուկեցւոց է՝ և միւսն փարիսեցւոց, աղաղակէր 'ի
մէջ ատենին. Արք եղբարք, ես փարիսեցի եմ, որդի
փարիսեցւոյ. վասն յուսոյ և յարութեան մեռելոց ես
7 աւասիկ դատիմ։ Եւ զայս իբրև ասաց՝ եղեն հեր-
ձուածք փարիսեցւոցն և սադուկեցւոց, և պատառե-
8 ցաւ բազմութիւնն. քանզի սադուկեցիքն ասեն, չիք
յարութիւն, և ոչ հրեշտակ և ոչ հոգի. բայց փարի-
9 սեցիքն խոստովանին զերկոսեան։ Եւ եղև աղաղակ
մեծ. յոտն կացին ոմանք 'ի դպրաց անտի 'ի կողմա-
նէն փարիսեցւոց, հակառակէին և ասէին. Ոչ ինչ
չարութիւն գտանեմք յառնս յայսմիկ, բայց եթէ
10 հոգի խօսեցաւ 'ի դմա, կամ հրեշտակ։ Եւ 'ի բազ-
մանալ ամբոխին, երկուցեալ հազարապետն՝ թէ

գուցէ ճեղքիցի Պաւղոս 'ի նոցանէ, հրամայեաց զօ֊
րականին իջանել յափշտակել զնա 'ի միջոյ նոցա, և
ածել 'ի բանակն: Եւ 'ի վաղուեան գիշերին՝ եկաց 11
առ նմա Տէր, և ասէ. Քաջալերեաց, Պաւղէ, զի
որպէս վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ, սոյնպէս
պարտ է քեզ և 'ի Հռոմ վկայել:

ԶԵ. Եւ իբրև այգ եղև՝ արարեալ ժողով Հր֊ 12
րէից, նզովեցին զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել՝
մինչև սպանցեն զՊաւղոս: Եւ էին աւելի քան զքա֊ 13
ռասուն՝ որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ
էր: Որք մատեան առ քահանայապետսն և երիցունս՝ 14
և ասեն. Նզովիւք նզովեցաք զանձինս՝ ոչ ինչ ճաշա֊
կել մինչև սպանցուք զՊաւղոս. բայց դուք զգացու֊ 15
ցէք հազարապետին հանդերձ ատենիւն, զի իջուսցէ
զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտագոյնս ինչ
գիտել զնմանէ. և մեք յառաջ քան զմօտել նորա՝
պատրաստ եմք 'ի սպանանել զնա: Եւ լուեալ քեռոր֊ 16
դւոյն Պաւղոսի զդաւաճանութիւնն, եկն եմուտ 'ի
բանակ անդր՝ պատմեաց Պաւղոսի: Եւ կոչեցեալ 17
Պաւղոսի առ իւր զմի 'ի հարիւրապետաց անտի՝ ա֊
սէ. Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի
ունի ինչ պատմել նմա: Եւ նորա առեալ զնա տա֊ 18
րաւ առ հազարապետն՝ և ասէ. Կապեալն Պաւղոս
կոչեաց զիս, և աղաչեաց զպատանիս զայս ածել առ
քեզ, ունի ինչ խօսել ընդ քեզ: Առեալ զձեռանէ 19
նորա հազարապետին՝ գնաց մեկուսի, հարցանէր՝ թէ
զի՞նչ ունիս խօսել ընդ իս: Եւ նա ասէ. Հրեայք 20
միաբանեցին աղաչել զքեզ, զի վաղիւ զՊաւղոս ի֊
ջուսցես յատեան, իբրև թէ կամիցին ինչ ճշմարտա֊
գոյնս հարցանել վասն նորա. արդ դու մի՛ անսայցես 21
նոցա. քանզի դարան գործեալ է նմա 'ի նոցանէ ա֊
րանց աւելի քան զքառասուն, որք նզովեցին զան֊
ձինս՝ ոչ ուտել և ոչ ըմպել՝ մինչև սպանցեն զնա.
արդ պատրաստ են, և սպասեն քում հրամանի: Ա֊ 22
պա հազարապետն արձակեաց զպատանին, պատուի֊

23 րեալ մի՛ ումեք ասել՝ թէ զայս զգացուցեր ինձ: Եւ
կոչեաց երկուս 'ի հարիւրապետացն և ասէ. Պատ֊
րաստեցէք զօրականս երկերիւր, որպէս զի երթի֊
ցեն մինչև 'ի Կեսարիա. և հեծեալս եօթանասուն
և տիգաւորս երկերիւր, յերից ժամու գիշերոյն.
24 և գրաստս պատրաստական, որպէս զի իջուցեալ
25 զՊաւղոս ապրեցուսցեն առ Փելիքս դատաւոր. գր֊
26 րեալ թուղթ՝ որ ունէր օրինակ զայս. Կղաւդիոս
Լիւսիաս, առ քաջ դատաւոր Փելիքս, ողջոյն:
27 Զայրս զայս կալեալ 'ի Հրէից՝ և մերձ 'ի սպա֊
նանել 'ի նոցանէ, հասեալ 'ի վերայ զօրականաւ
28 ապրեցուցի, իմացեալ թէ Հռոմայեցի է: Կամեցայ
գիտել զվնասն՝ վասն որոյ ամբաստանէին զնմանէ,
29 իջուցի զդա յատեան նոցա. զոր գտի ամբաստա֊
նեալ վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց, և ոչ
30 ինչ արժանի մահու կամ կապանաց ունէր վնաս: Իբ֊
րև ազդ եղև ինձ նենգութեան յայրդ լինելոյ 'ի նո֊
ցանէ՝ յղեցի առ քեզ, հրաման տուեալ և չարախօ֊
31 սացն խօսել զնմանէ առաջի քո. ողջ լեր: Եւ զօ֊
րականացն ըստ հրամանի նորա առեալ զՊաւղոս
32 ածին գիշերեայն յԱնտիպատրիս. և 'ի վաղիւ անդր
արձակեալ զհեծեալսն՝ ընդ նմա երթալ, դարձան
33 'ի բանակն: Նոքա մտին 'ի Կեսարիա, և տուեալ
ցդատաւորն զթուղթն, առաջի կացուցին նորա և ըզ
34 Պաւղոս: Իբրև ընթերցաւ, եհարց թէ յորմէ՞ նա֊
հանգէ իցէ. և ստուգեալ եթէ 'ի Կիլիկեայ է.
35 Լուայց՝ քեզ, ասէ, յորժամ և չարախօսքն քո ե֊
կեսցեն: Եւ հրամայեաց յապարանին Հերովդի
պահել զնա:

ԳԼՈՒԽ ԻԴ

ԿԱ. Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն 1
Անանիա հանդերձ ծերովք ոմամբք, և ճարտարա֊
խօսաւ Տերտիղեաւ ոմամբ, որք և զգացուցին դա֊
տաւորին վասն Պաւղոսի։ Եւ 'ի կոչելն զնա, սկսաւ 2
Տերտիղոսն ամբաստան լինել և ասել. Բազում
խաղաղութիւն գտեալ 'ի քէն և իրաց ուղղութիւն
ազգիս այսորիկ քով խնամով, ամենայնիւ և ամե֊ 3
նայն ուրեք շնորհակալ եմք, քաջդ Փելիքս, ամե֊
նայն գոհութեամբ։ Բայց զի մի աւելի ևս աշխատ 4
արարից զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ 'ի կարճոյ
քոյին հեզութեամբդ։ Քանզի գտաք զայրս զայս 5
ապականիչ և խռովիչ ամենայն Հրէից՝ որք են ընդ
տիեզերս, և առաջնորդ Նազովրացւոց հերձուածոյն.
որ և զտաճարն իսկ կամեցաւ պղծել, զոր և կալաք, 6
և ըստ մերոց օրինացն դատել կամեցաք։ Եկեալ 7
Լիւսիաս հազարապետ՝ մեծաւ բռնութեամբ 'ի ձե֊
ռաց մերոց եհան. հրամայեաց և չարախօսացն նո֊ 8
րա գալ առ քեզ, յորմէ դու իսկ բաւական լինիցիս
'ի վերստին դատեալ, ամենայնի հասու լինել՝ զորոց
մեքս ամբաստանիս եմք զդմանէ։ — Միաբանեցին 9
և Հրեայքն, ասեն. Այդպէս է։ Պատասխանի ետ 10
Պաւղոս, յակնարկելն նմա դատաւորին խօսել. Ի
բազում ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ
գիտեմ, յօժարութեամբ վասն իմոց իրաց պատաս֊
խանի առնեմ. քանզի կարող ես գիտել, զի ոչ ինչ 11
աւելի է իմ քան զաւուրս երկոտասան, յորմէ հե֊
տէ ելի երկիր պագանել յԵրուսաղէմ. և ոչ 'ի տա֊ 12
ճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, և կամ
ժողովս արարեալ բազմաց. ոչ 'ի ժողովուրդս և ոչ
'ի քաղաքի. և ոչ յանդիման առնել կարեն քեզ, 13
վասն որոյ այժմս չարախօսեն զինէն։ Բայց զայս խոս֊ 14
տանիմ քեզ, եթէ ըստ ճանապարհին զոր ասեն հեր֊

ձուած, այնպէս պաշտեմ զհայրենի Աստուածն,
հաւատացեալ ամենայնի՝ որ ինչ յօրէնսն և 'ի մար֊
15 գարէս գրեալ է։ Ունիմ յոյս առ Աստուած, որում
և դոքա իսկ ակն ունին, թէ յարութիւն լինելոց է
16 արդարոց և մեղաւորաց. յորում և ես իսկ ճգնիմ
անխիղճ միտս ունել առ Աստուած և առ մարդիկ
17 յամենայն ժամ։ Ի բազում ամաց ողորմութիւնս
եկի առնել յազգ իմ, և ետու պատարագս. ո֊
18 րովք գտին զիս սրբեալ 'ի տաճարին, ոչ բազմօք և
19 ոչ ամբոխիւ, ոմանք յԱսիացւոց անտի Հրեայք, ո֊
րոց պարտ էր գալ առաջի քո և ամբաստան լինել,
20 եթէ ունիցին ինչ զինէն. և կամ ինքեանք սոքա
ասասցեն, զի՞նչ գտին յիս անիրաւութիւն՝ մինչդեռ
21 կայի յատենին. բայց միայն վասն միոյ բարբառոյս
այսորիկ՝ զոր աղաղակեցի մինչ կայի 'ի մէջ նոցա,
եթէ վասն յարութեան մեռելոց դատիմ ես այսօր
22 'ի ձէնջ։ — Եւ յապաղեաց զնոսա Փելիքս, զի ըս֊
տուգագոյնս գիտէր վասն ճանապարհին, ասէ. Յոր֊
ժամ Լիւսիաս հազարապետ իջցէ այսր, տեղեկա֊
23 ցայց վասն ձեր։ Հրամայեաց հարիւրապետին պա֊
հել զնա, և ունել յընդարձակի, և մի զոք յիւրոց
անտի արգելուլ 'ի պաշտելոյ զնա։

24 ԿԲ. Եւ յետ աւուրց ինչ, եկն Փելիքս հան֊
դերձ Դրուսիլլաւ կնաւ իւրով՝ որ էր հրեայ, կոչեաց
զՊաւղոս, և լուաւ 'ի նմանէ վասն որ 'ի Յիսուս
25 Քրիստոս հաւատոյն։ Եւ 'ի խօսելն նորա վասն
արդարութեան և ժուժկալութեան և հանդերձեալ
դատաստանին, զահի հարեալ Փելիքս, ետ պատաս֊
խանի. Դու առ այժմ երթ, և յորժամ ժամ լի֊
26 նիցի, կոչեցից զքեզ։ Միանգամայն և ակն ունէր,
թէ տացի ինչ նմա 'ի Պաւղոսէ. վասն որոյ և ստէպ
27 կոչեցեալ զնա՝ խօսէր ընդ նմա։ Եւ 'ի կատարել եր֊
կուց ամաց՝ եկն փոխանակ Փելիքսի՝ Փեստոս Պոր֊
կիոս. իբրև կամեցաւ շնորհս առնել Հրէիցն Փե֊
լիքս, եթող զՊաւղոս կապեալ։

ԳԼՈՒԽ ԻԵ

Փեստոս իբրև եհաս յիշխանութիւնն, յետ ե- 1
րից աւուրց ել յԵրուսաղէմ 'ի Կեսարեայ. և զգա- 2
ցուցին նմա քահանայապետքն և գլխաւորք Հրէիցն
զՊաւղոսէ, և աղաչէին՝ խնդրեալ շնորհս 'ի նմա- 3
նէ, զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ. դարան գործեալ
սպանանել զնա 'ի ճանապարհի։ Իսկ Փեստոս արար 4
պատասխանի՝ պահել զնա 'ի Կեսարիա, թէ ինքն
իսկ ընդ հուպ անդր երթալոց էր. Եւ որ 'ի ձէնջ 5
կարողք իցեն, ասէ, ընդ իս իջցեն, և թէ իցէ ինչ
յառնն վնաս՝ ամբաստան լիցին զնմանէ։ Եւ լեալ 6
անդ աւուրս՝ ոչ աւելի քան զութ կամ զտասն, եկն
էջ 'ի Կեսարիա. և 'ի վաղիւ անդր նստեալ յատե-
նի, հրամայեաց ածել զՊաւղոս։ Եւ իբրև եկն, 7
կացին շուրջ զնովաւ որ յԵրուսաղեմէ իջեալ էին
Հրեայքն, բազում և ծանր վնաս դնէին, զորս ոչ կա-
րէին ցուցանել. քանզի առնէր պատասխանի Պաւ- 8
ղոս, եթէ ոչ յօրէնս Հրէից, և ոչ 'ի տաճարն, և
ոչ 'ի կայսր ինչ վնասակար եմ։ Բայց Փեստոս կա- 9
մեցեալ Հրէիցն շնորհս առնել՝ պատասխանի ետ
Պաւղոսի և ասէ. Կամիս յԵրուսաղէմ ելանել, և
անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ։ Եւ ասէ 10
Պաւղոս. Յատենի կայսեր հասեալ կամ, ուր պարտ
է ինձ դատել. Հրէից ինչ չեմ վնասակար, որպէս
և դու իսկ քաջ գիտես. ապա եթէ վնասակար եմ՝ 11
և արժանի ինչ մահու գործեցի, ոչ զանգիտեմ 'ի
մեռանելոյ, իսկ եթէ ոչ ինչ է՝ զորոց սոքա ամբաս-
տան լինին զինէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել. 'ի
կայսր բողոքեմ։ Յայնժամ Փեստոսի խօսեցեալ ընդ 12
խորհրդակցին՝ արար պատասխանի. Ի կայսր բողո-
քեցեր՝ առ կայսր երթիջիր։

ԻԳ. Իբրև անցին աւուրք ինչ, Ագրիպպաս արքայ 13
և Բերինիկէ եկին 'ի Կեսարիա՝ յողջոյն Փեստոսի։

14 Եւ իբրև աւուրս բազումս հանէին անդ, Փեստոս
զեկոյց արքային զՊաւղոսէ և ասէ. Այր մի է աստ
15 մնացեալ կապեալ 'ի Փելիքսէ. վասն որոյ իբրև չո-
գայ յԵրուսաղէմ՝ զգացուցին ինձ քահանայա-
պետքն և գլխաւորք Հրէիցն. խնդրէին յինէն առ-
16 նել նմա պատուհաս. որոց ետու պատասխանի, եթէ
չէ օրէն հռոմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչ չև
ամբաստանեալն յանդիման ունիցի զդատախազսն,
և տեղի պատասխանւոյ առնուցու վասն ամբաստա-
17 նութեանն։ Եւ իբրև եկին այսր, ոչ ինչ յապաղե-
ցի, այլ 'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեցի ա-
18 ծել զայրն։ Վասն որոյ մատուցեալ ամբաստանքն,
և ոչ մի ինչ վնաս չարութեան 'ի մէջ բերէին՝ զորոյ
19 ես կարծէի. բայց խնդիրս ինչ՝ որ վասն իւրեանց
պաշտաման ունէին ընդ նմա. և վասն Յիսուսի ո-
րումն մեռելոյ, զորմէ ասէր Պաւղոս թէ կենդանի
20 է։ Իբրև յանհնարս մտի վասն այնպիսի իրաց քըն-
նութեան, ասեմ եթէ կամիցի՞ երթալ յԵրուսա-
21 ղէմ, և անդր դատել վասն նոցին իրաց։ Բայց 'ի
Պաւղոսի բողոքելն՝ զի պահեսցի 'ի քաջի արանցն
յանդիմանութիւն, հրամայեցի պահել զնա՝ մինչև
22 տաց տանել առ կայսր։ Ագրիպպաս ցՓեստոս ասէ.
Կամէի և ես լսել առնն։ Եւ նա ասէ. Ի վաղիւ
23 լուիցես։ Եւ 'ի վաղիւ անդր իբրև եկն Ագրիպպաս
և Բերինիկէ բազում երևելի սպասուք, և մտին
յատեանն հանդերձ հազարապետօքն և արամբք
պատուաւորօք քաղաքին, և հրամայեալ Փեստոսի՝
24 ածին զՊաւղոս։ Եւ ասէ Փեստոս. Արքայ Ագրիպ-
պա, և ամենայն արք որք ընդ մեզ էք, տեսանէ՞ք
զսա. վասն սորա ամենայն ժողովք Հրէից ամբաս-
տան եղեն ինձ յԵրուսաղէմ, և աստ աղաղակէին՝
25 թէ չէ պարտ դմա կեալ. բայց ես 'ի վերայ հասի,
թէ ոչ ինչ է դորա արժանի մահու գործեալ. և դո-
րա ինքնին բողոք կալեալ առ քաջ արանցն, խորհե-
26 ցայ յղել։ Վասն որոյ ստուգութեամբ ինչ գրել

տեառն իմում ոչ ունիմ. վասն այնորիկ ածի զդա ա-
ռաջի ձեր, և մանաւանդ առաջի քո, արքայ Ագ-
րիպպա, որպէս վերստին քննեալ՝ մարթասցիմ ինչ
գրել. քանզի անպատեհ իմն թուի ինձ՝ տալ տանել 27
կապեալ մի, և ոչ ինչ զվնաս զնմանէ նշանակել:

ԳԼՈՒԽ ԻԶ

Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս. Հրամայեալ է 1
քեզ վասն քո խօսել: Յայնժամ Պաւղոսի ձգեալ
զձեռն՝ առնէր պատասխանի. Վասն ամենայն ամ- 2
բաստանութեան Հրէից զինէն, արքայ Ագրիպպա,
համարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տա-
լոց եմ պատասխանի. մանաւանդ՝ զի գիտակ իսկ ես 3
ամենայն կրօնից և խնդրոց Հրէից. վասն որոյ աղա-
չեմ երկայնմտութեամբ լսել ինձ: Քանզի կենաց 4
իմոց՝ որ ՚ի մանկութենէ իսկզբանէ լեալ յազգի անդ
իմում յԵրուսաղէմ, տեղեակ են ամենայն Հրեայք.
յառաջագոյն գիտեն ՚ի վաղուց հետէ, եթէ կամի- 5
ցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն
մերոց կեցեալ եմ փարիսեցի: Եւ արդ վասն յուսոյն 6
առ հարսն եղելոյ աւետեացն յԱստուծոյ՝ դատեալ 7
կամ յատենի, յոր երկոտասան ազգատոհմքն մերոյ
անպակաս զցայգ և զցերեկ պաշտեալ՝ ակն ունին
հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ,
՚ի Հրէիցդ. զի՞նչ անհաւատ թուի ձեզ, եթէ Աս- 8
տուած զմեռեալս յարուցանէ: Ես իսկ ինքնին պատ- 9
շաճ համարէի, զբազում ինչ հակառակ անուանն
Յիսուսի Նազովրեցւոյ գործել. զոր և արարի իսկ 10
յԵրուսաղէմ. և զբազումս ՚ի սրբոցն ես բանտար-
գել առնէի՝ ՚ի քահանայապետիցն առեալ իշխանու-
թիւն, և զսպանելոյն նոցա բերէի համար: Եւ ըստ 11
ամենայն ժողովրդոցն բազում անգամ պատժեալ
զնոսա, բռնադատէի հայհոյել. առաւել ևս մոլեալ
՚ի վերայ նոցա, հալածէի մինչև յարտաքին քաղաքսն:

12 ԻԴ. Որովք գնացեալ ՚ի Դամասկոս՝ իշխանու-
13 թեամբ և հրամանօք քահանայապետիցն, զմէջ ա-
ւուրն ՚ի ճանապարհի տեսի, արքայ, յերկնից ա-
ռաւել քան զլուսաւորութիւն արեգական՝ ծագեալ
14 զինև լոյս, և զնոքօք որ ընդ իմն երթային. և յա-
մենեցուն մեր անկանելն յերկիր՝ լուայ ձայն որ ասէր
ցիս հեբրայեցւոց բարբառով. Սաւուղ Սաւուղ,
զի՞ հալածես զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի ա-
15 քացել: Եւ ես ասեմ. Ո՞ ես Տէր: Եւ Տէր ասէ.
16 Ես եմ Յիսուս զոր դու հալածես. այլ արի և կաց
՚ի վերայ ոտից քոց, զի վասն այսորիկ երևեցայ քեզ՝
առնուլ զքեզ ՚ի ձեռն պաշտօնեայ և վկայ որոց տե-
17 սերդ զիս, և որոց երևեցայց քեզ. փրկել զքեզ ՚ի
ժողովրդենէդ և ՚ի հեթանոսաց՝ յորս ես առաքեցից
18 զքեզ. բանալ զաչս նոցա, դարձուցանել ՚ի խաւարէ
՚ի լոյս, և յիշխանութենէ սատանայի յԱստուած.
առնուլ նոցա զթողութիւն մեղաց և վիճակ ընդ
19 սուրբսն հաւատովքն որ յիս: Ուստի, արքայ Ագ-
րիպպա, ոչ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն.
20 այլ նախ որոց ՚ի Դամասկոս և յԵրուսաղէմ էին՝ և
ընդ ամենայն գաւառն հրէաստանի և ՚ի հեթա-
նոսս՝ պատմեցի զղջանալ և դառնալ յԱստուած կեն-
դանի. արժանի ապաշխարութեան գործս գործել:
21 Վասն այսորիկ Հրէից կալեալ զիս ՚ի տաճարին,
22 կամէին սպանանել. օգնութիւն հասեալ առ ՚ի յԱս-
տուծոյ, մինչև ցայսօր կացի վկայեալ փոքու և մե-
ծի. ոչ ինչ արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն և
23 Մովսէս խօսեցան զհանդերձելոցն լինելոյ. եթէ
չարչարելոց է Քրիստոս, եթէ առաջին ՚ի յարու-
թենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն և
24 հեթանոսաց: — Եւ նորա զայս պատասխանի տը-
ւեալ, Փեստոս ՚ի ձայն մեծ ասէ. Մոլիս, Պաւղէ.
բազում դպրութիւնք զքեզ ՚ի մոլորութիւն դար-
25 ձուցանեն: Իսկ Պաւղոս ասէ. Ոչ մոլիմ, քաջդ
Փեստոս, այլ զցածութեան և զճշմարտութեան

քանս բարբառիմ. գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ 26
որում համարձակեալ խօսիմ. քանզի ծածկել ՚ի քէն
իմիք ՚ի սոցանէ՝ չաւանում յանձն. զի ոչ եթէ յան֊
կեան ուրեք գործեալ իցէ այս։ Հաւատա՞ս արքայ 27
Ագրիպպաս, մարգարէից. գիտեմ զի հաւատաս։
Եւ ասէ Ագրիպպաս ցՊաւղոս. Փոքու իմն հաւա֊ 28
նեցուցանես զիս լինել քրիստոնեայ։ Եւ Պաւղոս ա֊ 29
սէ. Խնդրէի յԱստուծոյ՝ և փոքու և մեծաւ, ոչ
միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ լսեն ինձ այսօր՝ լի֊
նել այսպիսի որպէս և ես եմ, բաց ՚ի կապանաց աս֊
տի։ Յոտն եկաց արքայն և դատաւորն և Բերնի֊ 30
կէ, և որք ընդ նոսայն նստէին։ Եւ իբրև գնացին, 31
խօսէին ընդ միմեանս և ասէին, թէ ոչ ինչ արժանի
մահու կամ կապանաց գործէ այրս այս։ Իսկ Ագ֊
րիպպաս ցՓեստոս ասէ. Արձակել մարթ էր զայրս 32
զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ ՚ի կայսր։

ԳԼՈՒԽ ԻԷ

ԻԷ. Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, 1
տային զՊաւղոս և զայլս ոմանս կապեալս ՚ի հարիւ֊
րապետ մի, որում անուն էր Յուլիոս, սեբաստեան
գնդին։ Եւ ելեալ ՚ի նաւ մի ադրամիտտացի, որ եր֊ 2
թալոց էր ՚ի կողմանս ասիացւոց՝ գնացաք. էր ընդ
մեզ Արիստարքոս մակեդոն թեսաղոնիկեցի։ Եւ ՚ի 3
վաղիւ անդր իջաք ՚ի Սիդոն. և մարդասիրութիւն ցու֊
ցեալ Յուլիոյ առ Պաւղոս, հրամայեաց առ բարե֊
կամսն երթալ և դարման գտանել։ Եւ անտի ելեալ՝ 4
խոնարհագոյն նաւեցաք ՚ի Կիպրոս վասն հողմոցն
ընդդէմ լինելոյ։ Յայնժամ ընդ մէջ ծովուն Կիլի֊ 5
կեայ և Պամփիլեայ նաւեալ՝ իջաք ՚ի Միւռա լիկիա֊
ցւոց։ Եւ անդ գտեալ հարիւրապետին նաւ մի ա֊ 6
ղեքսանդրացի՝ որ երթայր յԻտալիա, եմուծ զմեզ
անդր։ Եւ ՚ի բազում աւուրս ծանրանաւեալք՝ հա֊ 7
զիւ հասաք առ Կնիդեաւ. և ՚ի չթողացուցանել մեզ

հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն ՚ի Կրետէ առ
8 Սաղմոնեաւ. հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք ՚ի
տեղի ինչ՝ որ կոչէր Գեղեցիկ նաւահանգիստ, յոր
9 հուպ էր քաղաքն Լասեայ։ Եւ իբրև բազում ժա֊
մանակք անցանէին, և սխալ ևս լինէր նաւելոյն, և
վասն այն ինչ ևս պահոյն անցանելոյ, տայր խրատ
10 Պաւղոս, և ասէր ցնոսա. Արք, տեսանեմ զի թըշ֊
նամանօք և բազում վնասու՝ ոչ միայն բեռինդ և
նաւիդ, այլ և անձանց մերոց լինելոց է նաւարկու֊
11 թիւնս։ Իսկ հարիւրապետն նաւապետին և նաւա֊
վարին առաւել անսայր, քան բանիցն Պաւղոսի։
12 Իբրև դժպատեհ իմն թուէր նաւահանգիստն առ
ձմերել, բազումք խորհեցան գնալ անտի. թերևս
կարասցեն հասանել ՚ի Փիւնիկէ, ձմերել ՚ի նաւա֊
հանգստին կրետացւոց, որ հայէր ընդ հարաւակողմ
13 և ընդ աշխարհն։ Եւ ՚ի շնչել հարաւոյն՝ համարե֊
ցան ուր դիմեալն էին հասանել, և արկեալ՝ մօտ
14 անցանէին առ Կրետեաւ. և ոչ յետ բազում ժա֊
մուց՝ անկաւ զնովաւ հողմ ուռուցիկ որ կոչի եւրա֊
15 կիկղոն։ Ընդ յափշտակել նաւին և ՚ի չհանդուր֊
ժել ընդդէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք և
16 գայաք. ՚ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչէր Կլաւդա, հա֊
17 զիւ կարացաք ըմբռնել զմակոյկն, զոր առեալ՝ յօգ֊
նականութիւն կապէին ընդ նաւն։ Երկուցեալք թէ
գուցէ ՚ի յորձանուտն անկանիցին, իջուցեալ զառա֊
18 գաստն՝ այնպէս երթային և գային։ Եւ ՚ի սաստ֊
կագոյն վտանգելոյն մերոյ՝ ՚ի վաղիւ անդր զկարասին
19 ընկեցիկ առնէին. և յերիր աւուր ընդ իւրեանց
20 ձեռն զգործին նաւին ընկեցին։ Իբրև ոչ արև և ոչ
աստեղք երևէին ՚ի բազում աւուրս, և ձմեռն ոչ
սակաւ կայր ՚ի վերայ, ապա բառնայր ամենայն յոյս
21 փրկութեան մերոյ։ Եւ զի բազում աւուրս նօթի
էին, յայնժամ Պաւղոս կացեալ ՚ի մէջ նոցա՝ ասէ.
Պարտ էր ձեզ, ո՛վ արք, անսալ ինձ, և ոչ ելանել
22 ՚ի Կրետեայ՝ և շահել զվիշտս զայս և զվնաս. և արդ

խրատեմ զձեզ քաջալերել. զի վնաս անձին՝ և ոչ
միում ՚ի ձէնջ լինիցի, բաց ՚ի նաւէդ։ Քանզի ե- 23
րևեցաւ ինձ յայսմ գիշերի Հրեշտակ Աստուծոյ՝ ո-
րոյ եմն եմ և պաշտեմ զնա, և ասէ. Մի երկնչիր, 24
Պաւղէ, կայսեր ևս պարտ է քեզ յանդիման լինել.
և ահա շնորհեալ է քեզ յԱստուծոյ զամենեսեան՝
որ են ընդ քեզ ՚ի նաւիդ։ Վասն այսորիկ քաջալե- 25
րեցարուք, արք, զի հաւատամ յԱստուած՝ եթէ
այսպէս լինի՝ զոր օրինակ խօսեցաւ ընդ իս. բայց ՚ի 26
կղզի ինչ հասանէ մեզ անկանել։

ԻԷ. Իբրև չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ մինչ 27
դեռ ծփէաք ՚ի Հանդրին անդունդս, ՚ի մէջ գիշերին
կարծէին նաւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ
ուրեք. և ընկեցեալ զգունդն՝ գտին գիրկս քսան. 28
և սակաւ ինչ դադարեալ, դարձեալ ընկեցին՝ և գը-
տին գիրկս հնգետասան։ Զահի հարեալ թէ գու- 29
ցէ ՚ի խիստ ինչ տեղիս անկանիցին, յետուստ կող-
մանէ ընկեցին խարիսխս չորս. ըղձանային այգուն լի-
նելոյ։ Բայց նաւավարքն խնդրէին փախչել ՚ի նաւէ 30
անտի, և իջուցեալ զկուրն ՚ի ծով անդր՝ պատճառա-
նօք, որպէս թէ առաջոյ կողմանէ խարիսխս ձգելոց
իցեն, ասէ Պաւղոս ցհարիւրապետն և ցզօրականսն. 31
Եթէ ոչ դոքա մնան ՚ի նաւիս՝ դուք ապրել ոչ կա-
րէք։ Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին, և 32
՚ի բաց ընկեցին։ Եւ մինչդեռ այգն կամէր լինել, ա- 33
ղաչէր Պաւղոս զամենեսեան՝ առնուլ կերակուր, ա-
սէ. Այս չորեքտասաներորդ օր է՝ որում ակն ունիք
նօթիս կատարել, և չէ ինչ ճաշակեալ. վասն որոյ 34
աղաչեմ զձեզ՝ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն
ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք ՚ի ձէնջ մազ մի
՚ի գլխոյ կորիցէ։ Եւ իբրև ասաց զայս, առեալ հաց՝ 35
գոհացաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն, եբեկ և
սկսաւ ուտել։ Եւ քաջալերեցան ամենեքին, և նո- 36
քա առին կերակուր. և էաք ամենայն հոգիք ՚ի նա- 37
ւին՝ երկերիւր եօթանասուն և վեց։ Իբրև յագե- 38

ցան կերակրովն, թեթևացուցին զնաւն՝ թափեալ
39 զցորեանն ՚ի ծով։ Եւ իբրև այգ եղև՝ զերկիրն ոչ
ճանաչէին, բայց զգոգ մի նշմարէին՝ թէ ափն ծո-
վուն իցէ. յոր խորհէին թէ հնար ինչ իցէ՝ զեր-
40 ծուցանել զնաւն։ Եւ զխարիսխսն հատեալ ընկե-
ցին ՚ի ծովն, թուլացուցին զխառնելիս թևոցն, և
՚ի բաց առին զառագաստն, և ետուն հողմոյն յափն
41 կոյս ծովուն։ Անկեալ ՚ի տեղի մի երկծով՝ թիւրե-
ցին զնաւն, և առաջին կողմն նաւին խրեալ անշարժ
մնայր, և յետին կողմն քակէր ՚ի բռնութենէն։
42 Եւ զօրականացն խորհուրդ արարեալ՝ զի զկապեալսն
43 սպանցեն, և զի մի ոք լուղիցի և փախիցէ։ Եւ հա-
րիւրապետն քանզի կամեցաւ ապրեցուցանել զՊաւ-
ղոս, արգել զնոսա ՚ի խորհրդոյն. հրամայեաց զի
որ կարօղն իցեն լուղել՝ անկանիցին նախ և ՚ի ցա-
44 մաքն ելանիցեն. և զայլսն՝ զորս ՚ի տախտակս, և
զորս յայլ ինչ կահ ՚ի նաւէ անտի. և այսպէս եղև
ամենեցուն փրծանել յերկիր։

ԳԼՈՒԽ ԻԸ

1 Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք եթէ Մելի-
տինէ էր անուն կղզւոյն։ Բայց բարբարոսքն շնոր-
հեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ. քանզի լու-
2 ցին խարոյկ՝ և ընկալան զամենեսեան զմեզ, վասն
3 անձրևին որ ստիպէր և վասն ցրտոյն։ Եւ ՚ի ժողո-
վել Պաւղոսի խուռ ինչ բազում՝ և դնել ՚ի վերայ
խարուկին, իժ մի ՚ի ջերմութենէն ելեալ կալաւ
4 զձեռանէ նորա։ Եւ իբրև տեսին բարբարոսքն կա-
խեալ զգազանն զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս.
Ուրեմն սպանօղ է այրս այս, որ թէպէտ ապրեցաւ
5 ՚ի ծովէն, իրաւունքն ոչ ետուն կեալ։ Եւ նորա
թօթափեալ զգազանն ՚ի հուրն, եղև նմա չար և
6 ոչ ինչ. և նոքա ակն ունէին նմա այտնլոյ, կամ
անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ. իբրև շատ

ակն կալեալ՝ և տեսանէին թէ ոչ ինչ վնաս եղև նմա,
դարձեալ դարձուցին զբանսն և ասէին, թէ աստուած
ոմն է։ Եւ շուրջ զտեղեաւն զայնուիկ էին գեօղք 7
գլխաւորի կղզւոյն որում անուն էր Պոպլիոս, որ ա-
ռեալ զմեզ յերաշխի զերիս աւուրս՝ և սիրով ընկալաւ։
Եւ եղև հօրն Պոպլեայ 'ի ջերմ և յախտ թանչից 8
հիւանդանալ դնել. առ որ մտեալ Պաւղոս և կա-
ցեալ յաղօթս՝ եդ ձեռն և բժշկեաց զնա։ Իբրև 9
այս եղև, այլ հիւանդք որ էին 'ի կղզւոջն՝ գային և 10
բժշկէին. որք և բազում պատուով պատուեցին զմեզ.
և իբրև գնացաք, ետուն որ ինչ պէտք էին։
ԻԷ. Եւ յետ երից ամսոց ելաք 'ի նաւ մի աղեք- 11
սանդրացի՝ որ ձմերեալ էր 'ի կղզւոջն, նշանաւորաւ
դիոսկուրացւոց։ Եւ իջեալ 'ի Սիւրակուսաս՝ եղեաք 12
աւուրս երկուս. ուստի գնացեալ հասաք 'ի Հռե- 13
գիոն։ Եւ յետ աւուր միոյ 'ի շնչել հարաւոյն՝ եր-
կօրեայք եկաք 'ի Պատիոլուս, ուր և գտաք եղբարս, 14
աղաչեցեալք 'ի նոցանէ լինել աւուրս եօթն։ Եւ ա-
պա ելաք 'ի Հռոմ. և անտի՝ լուեալ եղբարց զմէնջ, 15
ելին ընդ առաջ մեր մինչև յորգոստայն Ապփեայ և
երիցն կրպակաց. զորս տեսեալ Պաւղոսի՝ գոհացաւ
զԱստուծոյ և քաջալերեցաւ։ Եւ իբրև մտաք 'ի 16
Հռոմ, հրամայեցաւ Պաւղոսի լինել առանձինն
հանդերձ զինուորաւն՝ պահպանաւ իւրով։ Եւ եղև 17
յետ երից աւուրց կոչել նմա զՀրէիցն գլխաւորս.
և իբրև եկին, ասէ ցնոսա. Ես, արք եղբարք, ոչ
ինչ հակառակ գործեալ ժողովրդեան կամ կրօնիցն
հայրենեաց, կապեալ յԵրուսաղեմէ՝ մատնեցայ 'ի
ձեռս հռովմայեցւոց։ Որք իբրև դատեցանն զիս, 18
կամեցան արձակել, վասն և ոչ մի ինչ վնաս մահու
գտանելոյ յիս. 'ի հակառակել Հրէիցն՝ հարկ եղև 19
բողոքել 'ի կայսր. իբր ոչ եթէ զազգէն իմմէ ունէի
ինչ չարախօսել։ Վասն այսր պատճառանաց աղա- 20
չեցի զձեզ՝ տեսանել և խօսել. քանզի վասն յուսոյն
Իսրայելի կամ 'ի շղթայս յայսոսիկ։ Եւ նոքա ասեն 21

ցնա. Մեք ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք 'ի
հրէաստանէ. և ոչ եկեալ ոք յեղբարց պատմեաց
22 կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն։ Բայց ա-
ղաչեմք՝ 'ի քէն լսել՝ թէ զինչ խորհիցիս. զի վասն
հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն
23 ուրեք հակառակութիւն կրէ։ Ժամ եդեալ նմա օր
մի, եկին 'ի վանսն առ նա բազումք. որոց պատմէր
վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ, և հաւա-
նեցուցանէր զնոսա վասն Յիսուսի՝ յօրէնացն Մով-
սիսի և 'ի մարգարէից, յայգուէ մինչև ցերեկոյ։
24 Եւ ոմանք հաւանէին բանիցն, և կէսք չհաւատա-
25 յին. և անմիաբանք լինեալ միմեանց՝ արձակէին, յա-
սելն Պաւղոսի բան մի, թէ բարւոք խօսեցաւ Հո-
գին սուրբ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն
26 մեր, և ասէ. Երթ առ ժողովուրդն և ասասցես. լսե-
լով լուիջիք՝ և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք՝
27 և մի տեսջիք։ Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն
այնորիկ, և ականջօք իւրեանց ծանր լուան, և զաչս
իւրեանց կափուցին, զի մի երբեք տեսցեն աչօք, և
ականջօք լուիցեն, և սրտիւքն իմասցին, և դարձցին
28 և բժշկեցից զնոսա։ Եւ արդ յայտնի լիցի ձեզ, զի
հեթանոսաց առաքեցաւ փրկութիւնս Աստուծոյ.
30 նոքին և լուիցեն։ Եւ եղև զերկեամ մի բովանդակ
31 իւրով վարձու. և ընդունէր զամենեսեան որ մտա-
նէին առ նա. քարոզէր զարքայութիւնն Աստուծոյ,
32 և ուսուցանէր վասն տեառն Յիսուսի Քրիստոսի
անխափան՝ ամենայն համարձակութեամբ։

Առաքելական Թղթոց մատենագիրք։

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԱԲ․ Պաւղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի, կո-
չեցեալ Առաքեալ, որոշեալ յաւետարանն Աստու-
2 ծոյ, որ յառաջ խոստացաւ 'ի ձեռն մարգարէից իւ-
3 րոց գրովք սրբովք, վասն Որդւոյ իւրոյ՝ եղելոյ 'ի
4 զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ. սահմանելոյ Որ-
դւոյն Աստուծոյ զօրութեամբ ըստ Հոգւոյն սրբու-
թեան, 'ի յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիս-
5 տոսի Տեառն մերոյ. որով ընկալաք շնորհս և առա-
քելութիւն 'ի հնազանդութիւն հաւատոց յամե-
6 նայն հեթանոսս՝ վասն անուան նորա, յորս և դուք
7 էք կոչեցեալ Յիսուսի Քրիստոսի. ամենեցուն ո-
րոց էք 'ի Հռովմ՝ սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց
սրբոց։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱս-
տուծոյ Հօրէ մերմէ, և'ի Տեառնէ Յիսուսէ Քրիս-
8 տոսէ։ Նախ գոհանամ զԱստուծոյ իմոյ 'ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի վասն ձեր ամենեցուն, զի հաւատք
9 ձեր պատմեալ են ընդ ամենայն աշխարհ։ Վկայ է
ինձ Աստուած, զոր պաշտեմն հոգւով իմով յաւե-

տարանի Որդւոյ նորա, թէ որպէս զյիշատակս ձեր
առնեմ. յամենայն ժամ յաղօթս իմ աղաչելով, զի 10
թերեւս երբեք յաջողեսցի ինձ կամօքն Աստուծոյ
գալ առ ձեզ։ Քանզի անձկացեալ եմ տեսանել 11
զձեզ, զի փոխեցից 'ի ձեզ շնորհս ինչ հոգեւորս՝ առ
'ի հաստատել զձեզ. այսինքն է՝ մխիթարակից լի֊ 12
նել ձեզ վասն ընդ միմեանց իմոյ եւ ձերդ հաւատոց։
Ոչ կամիմ եթէ տգէտ իցէք, եղբարք, զի բազում 13
անգամ յօժարեցի գալ առ ձեզ, եւ արգելայ մինչե֊
ցայժմ. զի եւ 'ի ձեզ գտից պտուղ ինչ՝ որպէս եւ յայլ
հեթանոսս։ Քանզի Յունաց եւ բարբարոսաց, ի֊ 14
մաստնոց եւ անմտից պարտապան եմ, այնպէս որչափ 15
իմովսանն յօժարութեամբ՝ եւ ձեզ որ 'ի Հռոմ էք ա֊
ւետարանել։ Զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զԱ֊ 16
ւետարանն. քանզի զօրութիւն Աստուծոյ է 'ի փրը֊
կութիւն ամենայն հաւատացելոց. նախ Հրէի եւ ա֊
պա հեթանոսի. զի արդարութիւն Աստուծոյ նովաւ 17
յայտնի հաւատոց 'ի հաւատս. որպէս եւ գրեալ է,
թէ արդարն 'ի հաւատոց կեցցէ։

Ա.Գ. Քանզի յայտնելոց է բարկութիւն Աստու֊ 18
ծոյ յերկնից 'ի վերայ ամենայն ամպարշտութեան եւ
անիրաւութեան մարդկան. որք զճշմարտութիւնն ա֊
նիրաւութեամբ ունին. վասն զի գիտութիւնն Ա֊ 19
տուծոյ յայտնի է 'ի նոսա. քանզի Աստուած իսկ
յայտնեաց նոցա։ Զի աներեւոյթք նորա իսկզբանէ 20
աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին. այս֊
ինքն է՝ մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ աս֊
տուածութիւն նորա. զի ոչ գտանիցեն ամենեւին
տալ պատասխանի։ Զի ծանեան զԱստուած, եւ ոչ 21
իբրեւ զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. այլ
նանրացան 'ի խորհուրդս իւրեանց, եւ խաւարեցան
անմտութեամբ սիրտք նոցա. զանձինս առ իմաս֊ 22
տունս ունէին՝ յիմարեցան. եւ փոխեցին զփառս ա֊ 23
նեղծին Աստուծոյ 'ի նմանութիւն պատկերի եղծա֊
նելի մարդոյ, եւ թռչնոց, եւ չորքոտանեաց, եւ սող֊

24նոց։ Վասն որոյ մատնեաց զնոսա Աստուած 'ի ցան֊
կութիւն սրտից նոցա 'ի պղծութիւն, անարգել ըզ֊
25մարմինս իւրեանց յանձինս իւրեանց. որք փոխանա֊
կեցին զճշմարտութիւնն Աստուծոյ ընդ ստութեան,
հնազանդեցան եւ պաշտեցին զարարածս՝ եւ ոչ զա֊
26րարիչն, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։ Վասն
այնորիկ մատնեաց զնոսա Աստուած 'ի կարիս անար֊
գութեան. զի էգք նոցա փոխանակեցին զպէտս բը֊
27նականս 'ի պէտս անբնականս։ Նոյնպէս եւ արուացն
թողեալ զբնական պէտս իգութեանն, բորբոքեցան
ցանկութեամբք իւրեանց 'ի միմեանս. արուք ընդ
արուս զխայտառակութիւն գործէին, եւ զզարձ փո֊
խարինին որ պարտ էր մոլորութեանն նոցա՝ յանձինս
28իւրեանց ընդունէին։ Եւ որպէս զի ոչ ընտրեցին
զԱստուած ունել 'ի գիտութեան, մատնեաց զնոսա
Աստուած 'ի միտս անարգութեան՝ գործել զանար֊
29ժանս, զլցեալսն ամենայն անիրաւութեամբ, պոռնը֊
կութեամբ, անզգամութեամբ, ագահութեամբ,
չարութեամբ, լի նախանձու, սպանութեամբ, հե֊
30ռիւ, նենգութեամբ, չարաբարութեամբ, շոգմոգք,
չարախօսք, աստուածատեացք, թշնամանօղք, ամ֊
բարտաւանք, ամբարհաւաճք, գտիչք չարեաց, զծը֊
31նօղս անարգօւք, անմիտք, ուխտադրուժք, անագո֊
32րոյնք, աննուէրք, անողորմք։ Որք հասեալ էին
յԱստուծոյ իրաւանցն վերայ, եթէ ոյք զայսպիսիս
գործեն՝ արժանի են մահու. եւ ոչ միայն որ զայն
առնեն, այլ եւ որ կամակիցն լինին գործելեացն։

ԳԼՈՒԽ Բ

1 Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես, ով
մարդ, որ դատիդ. զի որով դատիս զընկերն, զանձն
քո դատապարտես. զի դու զնոյն գործես՝ որով դա֊
տիս։
2 Ա.Գ. Քանզի գիտեմք՝ եթէ Աստուծոյ դատաս֊

տանն ճշմարտութեամբ է 'ի վերայ այնոցիկ՝ որ զայն-
պիսիսն գործեն։ Իսկ արդ խորհիցի՞ս զայս, ո՜վ մարդ, 3
որ դատիս զայնոսիկ որ զայնպիսիսն գործեն՝ և դու
զնոյն գործես, եթէ դու ապրելոց իցես 'ի դատաս-
տանացն Աստուծոյ։ Եթէ զմեծութեամբ քաղցրու- 4
թեան նորա՝ և զներելոյն և զերկայնմտութեանն
արհամարհիցես, չգիտիցե՞ս զի քաղցրութիւնն Աս-
տուծոյ զքեզ յապաշխարութիւն ածէ. այլ ըստ խըս- 5
տութեան քում և ըստ անզեղջ սրտի՝ գանձես ան-
ձին քում բարկութիւն՝ յաւուր բարկութեան և
յայտնութեան արդար դատաւորութեանն Աստու-
ծոյ, որ հատուսցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւ- 6
րեանց։ Որ համբերութեամբ են 'ի գործս բարու- 7
թեան՝ և զփառս և զպատիւ և զանեղծութիւն խնդ-
րեն, զկեանսն յաւիտենից։ Իսկ որ 'ի հակառակու- 8
թենէ անտի են և ապստամբք 'ի ճշմարտութենէն,
և զհետ երթեալ զանիրաւութեան, բարկութիւն և
սրտմտութիւն։ Նեղութիւն և անձկութիւն 'ի վե- 9
րայ ամենայն մարդոյ որ գործէ զչար, նախ Հրէին,
և ապա հեթանոսի։ Փառք և պատիւ և խաղաղու- 10
թիւն ամենայնի որ գործէ զբարի, նախ Հրէին, և
ապա հեթանոսի։ Զի ոչ է ակնառութիւն առաջի 11
Աստուծոյ։

ԱԵ. Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, 12
արտաքոյ օրինացն և կորնչին. և որք ընդ օրինօքն
մեղան, օրինօքն դատեսցին։ Զի ոչ եթէ որ լսե- 13
լիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ,
այլ առնելիք օրինացն արդարասցին։ Այլ յորժամ 14
հեթանոսք որ զօրէնսն ոչ ունին, բնութեամբ զօրի-
նացն գործիցեն, նոքա որ զօրէնսն ոչ ունին, անձանց
իւրեանց իսկ են օրէնք. որք ցուցանեն զգործս օրի- 15
նացն գրեալ 'ի սիրտս իւրեանց, վկայութեամբ մը-
տաց իւրեանց, և յանդիմանել զմիմեանս 'ի խոր-
հըրդոց իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ.
յաւուրն յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդ- 16

կան, ըստ աւետարանիս իմում 'ի ձեռն Յիսուսի
17 Քրիստոսի։ Ապա թէ դու Հրեայ անուանեալ ես,
և յեցեալ ես յօրէնսն, և պարծիս յԱստուած, և
18 գիտես զկամս նորա, և ընտրես զլաւն, և խրատեալ
19 ես յօրինացն. վստահ ես յանձն քո առաջնորդ լի-
նել կուրաց, լոյս խաւարելոց, խրատիչ անզգամաց,
20 վարդապետ տղայոց, ունել զկերպարանս գիտու-
21 թեան և ճշմարտութեան յօրինացն։ Իսկ արդ որ
ուսուցանես զընկերն՝ զանձն քո ոչ ուսուցանես,
22 որ քարոզես չգողանալ՝ գողանաս, որ ասես չշնալ՝
23 շնաս. որ գարշիս 'ի մեհենաց՝ զսեղանս կողոպտես,
որ օրինօքն պարծիս՝ յանցանել ըստ օրէնսն զԱս-
24 տուած անարգես։ Զի անունն Աստուծոյ վասն ձեր
հայհոյի 'ի մէջ հեթանոսաց՝ որպէս և գրեալ է։
25 ԱԶ. Թլփատութիւն օգնէ եթէ զօրէնսն պա-
հիցես. ապա թէ յանցաւոր օրինացն իցես, թլփա-
26 տութիւն քո անթլփատութիւն եղև։ Իսկ եթէ
անթլփատութիւնն զիրաւունս օրինացն պահիցէ,
ո՞չ ապաքէն անթլփատութիւն նորա 'ի թլփատու-
27 թիւն համարեսցի. և դատիցի որ 'ի բնէ անթլփա-
տութիւնն է, զօրէնսն կատարելով, զքեզ որ գրովն
28 և թլփատութեամբն յանցաւոր օրինացն իցես։ Զի
ոչ եթէ որ յայտնի Հրեայն է, և ոչ որ յայտնի
մարմնովն թլփատութիւնն, այլ որ 'ի ծածուկ Հրեայն
29 է, և թլփատութիւն սրտի. հոգւով՝ և ոչ գրով.
որոյ գովութիւնն՝ ոչ 'ի մարդկանէ է, այլ յԱստու-
ծոյ։

ԳԼՈՒԽ Գ.

1 Իսկ արդ զի՞նչ աւելի է Հրէին, կամ զի՞նչ օգուտ
2 'ի թլփատութենէ անտի։ Բազում ինչ, ամենայն
իրօք. նախ այն իսկ, զի հաւատարիմ եղեն պատ-
3 գամքն Աստուծոյ։ Իսկ արդ եթէ չէր հաւատացեալ
ոմանց, մի թէ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ

հաւատոմն խափանիցէ՞. քաւ լիցի։ Արդ եղիցի Աս- 4
տուած ճշմարիտ, և ամենայն մարդ սուտ. որպէս և
գրեալ է. որպէս արդար եղիցես 'ի բանս քո, և յաղ-
թիցես 'ի դատել քեզ։ Իսկ արդ եթէ ապիրատու- 5
թիւնն մեր զԱստուծոյ արդարութիւնն յանդիման
կացուցանէ, զի՞նչ ասեմք. միթէ անիրաւ ինչ է Աս-
տուած՝ որ ածէ զբարկութիւնն. ըստ մարդկութեան 6
ասեմ. քաւ լիցի. ապա թէ ոչ՝ զիա՞րդ դատի Աս-
տուած զաշխարհ։ Զի եթէ ճշմարտութիւնն Աս- 7
տուծոյ յիմումս ստութեանն առաւելաւ 'ի փառս նո-
րա, զի՞ ևս ես իբրև զմեղաւոր դատիմ. և կամ թէ՝ 8
որպէս հայհոյիմքն, և որպէս ասեն ոմանք զմէնջ՝ ա-
սել, թէ արասցուք զչար՝ զի եկեսցէ բարի. որոց
դատաստանքն յիրաւի են։ Եւ արդ ի՞ւ իւիք առա- 9
ւել իցեմք. ապաքէն և ոչ իւիք. քանզի յառաջա-
գոյն իսկ մեղադիր եղեաք Հրէից և հեթանոսաց,
ամենեցուն ընդ մեղօք լինելոյ. որպէս և գրեալ է, 10
թէ ոչ ոք է արդար՝ և ոչ մի. և ոչ գոյ որ իմանայ, 11
և ոչ ոք է որ խնդրէ զԱստուած. ամենեքեան խո- 12
տորեցան 'ի միասին և անպիտանացան. ոչ ոք է որ
առնէ զքաղցրութիւն, ոչ ոք է մինչև 'ի մի։ Գերեզ- 13
ման բաց է կոկորդ նոցա, լեզուօք իւրեանց նենգա-
ւորք եղեն. թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց նոցա. ո- 14
րոց բերանք անիծիւք և դառնութեամբ լի են։ Ե- 15
րագ են ոտք նոցա հեղուլ զարիւն. բեկումն և թ- 16
շուառութիւն 'ի ճանապարհս նոցա, և զճանապարհն 17
խաղաղութեան ոչ ծանեան. ոչ է երկիւղ Աստու- 18
ծոյ առաջի աչաց նոցա։

ԲԴ. Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն ա- 19
սեն, այնոցիկ որ ընդ օրինօքն են՝ ասեն. զի ամե-
նայն բերան խցցի, և դատապարտ լիցի ամենայն աշ-
խարհ Աստուծոյ։ Զի 'ի գործոց օրինաց ոչ արդա- 20
րասցի ամենայն մարմին առաջի նորա. քանզի օրի-
նօքն է գիտութիւն մեղաց. բայց արդ առանց օրի- 21
նաց իսկ արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ է,

22 վկայեալ յօրինաց անտի և 'ի մարգարէից։ Քանզի
արդարութիւնն Աստուծոյ 'ի հաւատոց անտի Յի-
սուսի Քրիստոսի, յամենայն հաւատացեալս. և ոչ
23 ինչ է խտիր. քանզի ամենեքին մեղան, և նուա-
24 զեալ են 'ի փառացն Աստուծոյ, և արդարանան ձրի
նորին շնորհօք 'ի ձեռն փրկութեանն որ 'ի Քրիս-
25 տոս Յիսուս. զոր յառաջն եդ Աստուած քաւու-
թիւն 'ի ձեռն հաւատոցն արեամբն նորա 'ի հանդէս
արդարութեանն նորա՝ վասն թողութեան յառաջա-
26 գոյն մեղացն գործելոց. 'ի ներելն Աստուծոյ՝ 'ի հան-
դէս արդարութեանն նորա 'ի ժամանակի յայսմիկ.
զի եղիցի նա արդար, և արդարացուսցէ զայն որ 'ի
27 հաւատոցն Յիսուսի։ Իսկ արդ ու՞ր են պարծանքն.
արդելան. յորո՞ց օրինաց, 'ի գործո՞ց անտի. ոչ, այլ
28 'ի հաւատոցն օրինաց. քանզի համարիմք հաւատովք
29 արդարանալ մարդոյ՝ առանց գործոց օրինաց։ Եթէ
Հրէի՞ց միայն իցէ Աստուած՝ և հեթանոսաց ո՞չ. այո
30 և հեթանոսաց։ Զի եթէ մի է Աստուած, որ ար-
դարացուցանէ զթլփատութիւն 'ի հաւատոց, ապա
31 և զանթլփատութիւնն նովին հաւատովք։ Արդ զօ-
րէնսն ի՞նչ խափանեմք հաւատովքս. քաւ լիցի. այլ
զօրէնսն հաստատեմք։

ԳԼՈՒԽ Դ

1 ԲԶ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք գտանել Աբրա-
2 համու նահապետին մերոյ ըստ մարմնոյ. զի եթէ
Աբրահամու գործովք էր արդարացեալ, ունել ու-
3 նէր պարծանս, այլ ոչ առ Աստուած։ Իսկ զի՞նչ ա-
սիցէ գիր. Հաւատաց Աբրահամ յԱստուած, և
4 համարեցաւ նմա յարդարութիւն։ Բայց այնմ որ
գործիցէն, ոչ համարին վարձքն ըստ շնորհաց, այլ
5 ըստ պարտեաց. իսկ այնմ որ ոչն գործիցէ, բայց հա-
ւատայցէ յայն որ արդարացուցանէ զամպարիշտս,
6 համարին հաւատք նորա յարդարութիւն։ Որպէս

և Դաւիթ ասէ զերանութիւն մարդոյ, որում Աս֊
տուած համարի արդարութիւն առանց գործոց. Ե֊ 7
րանի որոց թողան անօրէնութիւնք, և որոց ծածկե֊
ցան մեղք իւրեանց. երանեալ է այր՝ որում ոչ հա֊ 8
մարեսցի Տէր զմեղս նորա։ Արդ երանութիւնս այս 9
'ի վերայ թլփատութեա՞նն է, թէ 'ի վերայ անթլը֊
փատութեան. քանզի ասեմք եթէ համարեցան Աբ֊
րահամու հաւատքն յարդարութիւն։ Արդ զիա՞րդ 10
համարեցան. մինչդեռ 'ի թլփատութեա՞նն էր՝ եթէ
յանթլփատութեանն. ոչ 'ի թլփատութեանն, այլ
յանթլփատութեանն. և նշանակ առ զթլփատու֊ 11
թիւնն, կնիք արդարութեան հաւատոյ՝ որ յանթլը֊
փատութենէ անտի։ Զի եղիցի նա հայր ամենայն
հաւատացելոց որ յանթլփատութենէ անտի իցեն,
առ 'ի համարելոյ և նոցա յարդարութիւն. և հայր 12
թլփատութեան, որոց ոչ 'ի թլփատութենէ անտի
և եթ, այլ և որոց երթայցեն ընդ հետս անթլփա֊
տութեան հաւատոյ հօր մերոյ Աբրահամու։
Գ.Դ. Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբրա֊ 13
համու և զաւակի նորա՝ ժառանգ լինել աշխարհի,
այլ 'ի հաւատոյն արդարութենէ։ Զի եթէ որք յօ֊ 14
րինացն են՝ ժառանգք իցեն, ապա ընդունայն են հա֊
ւատքն և դատարկ աւետիքն. քանզի օրէնքն զբար֊ 15
կութիւն գործեն. բայց ուր ոչ են օրէնք, և ոչ յան֊
ցանք ինչ։ Վասն այնորիկ 'ի հաւատոյ անտի, զի 16
ըստ շնորհացն իցէ. առ 'ի լինելոյ հաստատուն աւե֊
տեացն ամենայն զաւակին. ոչ այնմ միայն՝ որ յօրի֊
նաց անտի, այլ և այնմ որ 'ի հաւատոյն Աբրահա֊
մու, որ է հայր մեր ամենեցուն, որպէս և գրեալ է՝ 17
եթէ հայր ազգաց բազմաց արարից զքեզ, առաջի
Աստուծոյ, որում հաւատացն՝ եթէ կենդանի առնէ
զմեռեալս, և կոչէ զչգոյն իբրև զգոյ։ Որ յանյոյս 18
յուսով հաւատաց, լինել նմա հայր ազգաց բազմաց.
որպէս և ասացաւն, թէ այնպէս եղիցի զաւակ քո.
և նա ոչ երկմտեաց 'ի հաւատոյն, թէպէտ և հայե֊ 19

ցաւ 'ի մարմին իւր այնուհետև իբրև 'ի մեռեալ,
քանզի զհարիւրամենիւք ուրեմն էր, և 'ի մեռելու֊
20 թիւն արգանդին Սառայի։ Բայց յաւետեացն Աս֊
տուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ, այլ զօ֊
21 րացաւ հաւատովք, ետ փառս Աստուծոյ՝ և հաս֊
տատեցաւ 'ի միտս իւր, թէ որ խոստացաւն՝ կարող
22 է առնել. վասն որոյ համարեցաւ նմա յարդարու֊
23 թիւն։ Այլ զի գրեցաւն, ոչ եթէ վասն նորա միայն՝
24 թէ համարեցաւ նմա, այլ և վասն մերոյ՝ համարե֊
լոց է, որք հաւատամք յայն որ յարոյցն զՅիսուս
25 զՏէր մեր 'ի մեռելոց. որ մատնեցաւ վասն յանցա֊
նաց մերոց, և յարեաւ՝ վասն զմեզ արդարացու֊
ցանելոյ։

ԳԼՈՒԽ Ե

1 Այսուհետև արդարացեալք 'ի հաւատոյ անտի,
խաղաղութիւն կալցուք առ Աստուած 'ի ձեռն
2 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով և զըն֊
ծայութիւնն ընկալաք հաւատովք 'ի շնորհս յայս֊
սիկ, յորում կամք և պարծիմք յուսով փառացն
3 Աստուծոյ։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և պարծիմք
ևս 'ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նե֊
4 ղութիւնք զհամբերութիւն գործեն, համբերու֊
5 թիւն՝ զհանդէս, հանդէս՝ զյոյս, յոյս ոչ երբեք ա֊
մաչեցուցանէ. զի սէրն Աստուծոյ սփռեալ է 'ի սիրտս
6 մեր՝ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ որ տուաւ մեզ։ Զի
մինչդեռ տկարքն էաք, Քրիստոս վասն մեր 'ի ժա֊
7 մանակի 'ի վերայ ամպարշտաց մեռաւ. զի վասն ար֊
դարոյ հազիւ ոք մեռանիցի, այլ վասն բարւոյ թեր֊
8 ևս համարձակիցի ոք մեռանել։ Յայտնեաց Աս֊
տուած զսէրն իւր 'ի մեզ. զի մինչդեռ մեղաւորքն
9 էաք, Քրիստոս վասն մեր մեռաւ. ո՞րչափ ևս առա֊
ւել յարդարանալս մերում այժմիկ արեամբն նորա՝
10 ապրեսցուք նովաւ 'ի բարկութենէ անտի։ Զի ե֊

թէ մինչ թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ
մահուամբ Որդւոյ նորա, որչափ ևս առաւել 'ի հաշ- 11
տելս մերում ապրեսցուք կենօքն նորա: Եւ ոչ այս-
չափ միայն, այլ և պարծիմք ևս յԱստուած 'ի ձեռն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով և զհաշ-
տութիւն իսկ ընկալաք:
ԳԶ. Զի որպէս 'ի միջէ մարդոյ մեղք յաշխարհ 12
մտին, և 'ի մեղաց անտի մահ, և այնպէս յամենայն
մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքին մեղան.
քանզի մինչև յօրէնսն մեղք էին յաշխարհի, բայց 13
մեղք ոչ համարին ուր օրէնք ոչ իցեն: Այլ թա- 14
գաւորեաց մահ յԱդամայ մինչև 'ի Մովսէս, և 'ի
վերայ չյանցուցելոցն, ըստ նմանութեան յանցուա-
ծոյն Ադամայ, որ է օրինակ հանդերձելոյն: Այլ 15
ոչ որպէս յանցանքն՝ նոյնպէս և շնորհքն. զի եթէ
միոյն յանցանօք բազումք մեռան, որչափ ևս առա-
ւել շնորհքն Աստուծոյ և պարգևք շնորհօք միոյն
մարդոյ Յիսուսի Քրիստոսի, 'ի բազումս առաւե-
լաւ: Եւ ոչ որպէս 'ի միջէ յանցուցելոյն պարգևքս. 16
զի դատաստանն 'ի միջէ յանցուածոց անտի 'ի դա-
տապարտութիւն, այլ շնորհքն՝ 'ի բազմաց յան-
ցուածոցն յարդարութիւն: Զի եթէ 'ի միոյն յան- 17
ցանաց մահ թագաւորեաց միովն, որչափ ևս առա-
ւել՝ որք զառաւելութիւն շնորհաց և զպարգևաց
արդարութեանն առնուցուն, կենօք թագաւորեսցեն
'ի ձեռն միոյն Յիսուսի Քրիստոսի: Ապա ուրեմն 18
որպէս միոյն յանցանօք յամենայն մարդիկ դատա-
պարտութիւն, նոյնպէս և միոյն արդարութեամբն
յամենայն մարդիկ արդարութիւն կենաց: Զի որ- 19
պէս անհնազանդութեամբ միոյն մարդոյ մեղաւորք
բազումք եղեն, նոյնպէս և հնազանդութեամբ միոյն՝
արդարք բազումք եղիցին: Բայց օրէնք 'ի ներքս 20
անկան, զի յանցանքն բազմասցին. զի ուր առաւել
եղեն մեղքն, առաւել ևս յաւելան շնորհքն: Զի 21
որպէս թագաւորեցին մեղքն 'ի մահու անդ, նոյնպէս

և շնորհքն թագաւորեսցեն արդարութեամբ 'ի
կեանսն յաւիտենից 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
ՎԵՐՋ) Տեառն մերոյ:

ԳԼՈՒԽ Զ

1 Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. յաճախեսցուք 'ի մեղսն՝
2 զի շնորհքն բազմասցի՞ն: Քաւ լիցի. որք մեռաք մե-
3 ղացն, զիա՞րդ տակաւին 'ի նմին կեցեմք: Եթէ ո՞չ
գիտէք, զի որ միանգամ մկրտեցաք 'ի Քրիստոս
4 Յիսուս, 'ի մահ անդր նորա մկրտեցաք. թաղեցաք
ընդ նմին մկրտութեամբն 'ի մահ, զի որպէս յարեաւ
Քրիստոս 'ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս և մեք
5 'ի նորոգութեան կենաց շրջեսցուք: Զի եթէ տնկակից
եղեաքն նմանութեան մահու նորա, այլ և յարութեան
6 նորա լինիցիմք: Զայս գիտասջիք՝ զի հին մարդն մեր
խաչակից եղև նորա, զի խափանեսցի մարմին մե-
7 ղացն, մի ևս ծառայել մեզ մեղացն. զի որ մեռանին՝
8 արդարացեալ է 'ի մեղաց անտի. իսկ եթէ մեռաք
ընդ Քրիստոսի, հաւատամք թէ և կեցցուք ընդ
9 նմա: Գիտեմք եթէ Քրիստոս յարուցեալ է 'ի մե-
ռելոց. այսուհետև ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս
10 տիրէ. զի որ մեռաւն, մեղացն մեռաւ մի անգամ,
11 և որ կենդանին է՝ կենդանի է Աստուծոյ: Նոյնպէս և
դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն, և կեն-
դանիս Աստուծոյ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր:
12 ԴԿ. Մի այսուհետև թագաւորեսցեն մեղք 'ի
մահկանացու մարմինս ձեր, հնազանդել ցանկու-
13 թեանց նորա: Եւ մի պատրաստէք զանդամս ձեր
զէն անիրաւութեան մեղացն, այլ պատրաստեցէք
զանձինս ձեր Աստուծոյ, որպէս 'ի մեռելոց՝ 'ի կեն-
դանիս, և զանդամս ձեր՝ զէն արդարութեանն Աս-
14 տուծոյ. զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի ոչ էք
15 ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք: Իսկ արդ զիա՞րդ.
մեղիցո՞ւք՝ զի չեմք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք.

քաւ լիցի։ Ո՞չ գիտէք՝ թէ որում պատրաստէք զան֊ 16
ձինս ձեր ծառայս ՚ի հնազանդութիւն, ծառայ էք
որում հնազանդիքն. եթէ մեղաց՝ մահու, և եթէ
՚ի հնազանդութիւն՝ արդարութեան։ Այլ շնորհք 17
Աստուծոյ. զի էիք ծառայք մեղաց, հնազանդեցա֊
րուք ՚ի սրտէ որում աւանդեցայք յառակ վարդապե֊
տութեան։ Արդ ազատեալք ՚ի մեղաց՝ ծառայեցէք 18
արդարութեանն։ Մարդկօրէն ասեմ վասն տկա֊ 19
րութեան մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաստեցէք
զանդամս ձեր ծառայս պղծութեան և անօրէնու֊
թեան յանօրէնութիւն, նոյնպէս և այժմ պատ֊
րաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարութեան ՚ի
սրբութիւն։ Զի մինչ ծառայքն էիք մեղաց՝ ազա֊ 20
տացեալք էիք յարդարութենէն։ Իսկ արդ զի՞նչ 21
պտուղ ունէիք յայնժամ, որովք այժմդ զամօթի հա֊
րեալ էք. զի վախճան նոցա մահ է։ Բայց արդ ա֊ 22
զատացեալք ՚ի մեղացն և ծառայեալք Աստուծոյ,
ունիք զպտուղ ձեր ՚ի սրբութիւն, և վախճան նորա՝
կեանք յաւիտենից։ Զի թոշակն մեղաց՝ մահ է, 23
այլ շնորհքն Աստուծոյ՝ կեանք յաւիտենից ՚ի
Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր։

ԳԼՈՒԽ Է

Դ Դ. Եթէ ո՞չ գիտէք, եղբարք, — զի ընդ գի֊ 1
տունս օրինացն խօսիմ —, զի օրէնք տիրեն մարդոյ՝
որչափ ժամանակս կենդանի իցէ։ Քանզի կին առ֊ 2
նակին ՚ի կենդանի այր իւր կապեալ կայ օրինօք.
իսկ եթէ մեռանիցի այրն, արձակեալ է յօրինաց
առնն. ապա ուրեմն մինչ կենդանի է այրն, շուն կո֊ 3
չի՝ եթէ լինիցի առն այլում. և եթէ մեռանիցի այրն,
ազատ է յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի
առն այլում։ Այսուհետև և դուք, եղբարք, մե֊ 4
ռարուք օրինացն մարմնովն Քրիստոսի, լինել այ֊
լում, որ ՚ի մեռելոցն յարուցեալ է, զի պտղաբերք

5 լիցուք Աստուծոյ։ Քանզի մինչ էաքն մարմնով, կա֊
րիք մեղաց որ օրինօքն էին, զօրանային յանդամս
6 մեր, առ ՚ի պտղաբերս առնելոյ զմեզ մահու։ Բայց
այժմ դատարկացաք յօրինաց անտի. քանզի մե֊
ռաք այնմիկ որով ըմբռնեալն էաք, առ ՚ի ծառայել
մեզ նորոգութեամբ հոգւոյն՝ և ոչ հնութեամբ գը֊
7 րոյն։ Իսկ արդ զի՞նչ ասեմք. օրէնքն մե՞ղք իցեն.
քաւ լիցի. այլ զմեղս ոչ գիտէի, եթէ ոչ օրինօքն.
և զցանկութիւն ոչ ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր
8 ասացեալ, մի՛ ցանկանայցես։ Պատճառս առին մեղքն
պատուիրանաւն, և գործեցին յիս զամենայն ցան֊
կութիւն. զի առանց օրինաց մեղքն մեռեալ էին։
9 Եւ ես առանց օրինացն երբեմն էի կենդանի. այլ
իբրև եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդանացան,
10 և ես մեռայ. և գտաւ ինձ պատուիրանն՝ որ ՚ի
11 կեանսն էր, նոյն ՚ի մահ։ Զի մեղացն պատճառս
առեալ պատուիրանաւն խաբեցին զիս, և նովին ըս֊
պանին։
12 Դ Զ. Այսուհետև օրէնքն սուրբ են և պատուի֊
13 րանն, սուրբ և արդար և բարերար։ Իսկ արդ ինձ
բարի՞ն մահ եղև. քաւ լիցի. այլ մեղքն. զի երե֊
ւեսցին մեղքն բարեաւն գործել ինձ զմահ. զի եղի֊
ցին ըստ առաւելութեան մեղքն մեղաւոր ՚ի ձեռն
14 պատուիրանին։ Գիտեմ զի օրէնքն հոգևոր են, այլ
15 ես մարմնաւոր եմ ընդ մեղօք վաճառեալ. զի զոր
գործեմն՝ ոչ գիտեմ. ոչ եթէ զոր կամիմն՝ զայն առ֊
16 նեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ։ Ապա եթէ
զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օրինացն թէ
17 բարւոք են։ Այլ արդ ոչ եթէ ես գործեմ զայն,
18 այլ բնակեալ յիս մեղքն. գիտեմ զի ոչ բնակեալ
է յիս, այսինքն է՝ ՚ի մարմնի իմում, բարի ինչ. զի
19 կամքն առաջի կան ինձ, և առնել զբարին՝ ոչ։ Զի
ոչ եթէ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ զոր ոչն կա֊
20 միմ զչարն՝ զայն գործեմ։ Ապա եթէ զոր ոչն կամիմ՝
զայն առնեմ, ոչ ևս ես առնեմ զայն, այլ բնակեալ

յիս մեղքն։ Եւ արդ գտանեմ զօրէնս այնորիկ որ կա- 21
միցին առնել յիս զբարին, և ինձ չարն առաջի կայ։
Հաճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մար- 22
դոյն, բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ, զի- 23
նեալ հակառակ օրինաց մտաց իմոց, և գերեալ զիս
օրինօքն մեղաց որ են յանդամս իմ։ Այր մի տառա- 24
պեալ եմ ես. ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի
մահու. այլ շնորհքն Աստուծոյ՝ 'ի ձեռն Յիսուսի 25
Քրիստոսի Տեառն մերոյ։
ԵԿ. Ապա ուրեմն ես ինքնին մտօք իմովք ծա-
ռայեմ օրինացն Աստուծոյ, և մարմնով օրինացն
մեղաց։

ԳԼՈՒԽ Ը

Թէ այդպէս իցէ, ոչ ինչ դատապարտութիւն է 1
այնոցիկ որ 'ի Քրիստոս Յիսուս, որ ոչ գնան ըստ
մարմնոյ. զի օրէնք հոգւոյն կենաց 'ի Քրիստոս Յի- 2
սուս ազատեցին զիս յօրինաց մեղացն և մահու։
Զի որ անհնարինն էր օրինացն՝ որով տկարանայրն 3
մարմնով, Աստուած զՈրդին իւր առաքեաց 'ի նմանու-
թիւն մարմնոյ մեղաց և վասն մեղաց, և դատապար-
տեաց զմեղս 'ի մարմնի անդ. զի արդարութիւն օրինացն 4
կատարեսցի 'ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք՝ այլ
ըստ հոգւոյն։ Զի որք ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն 5
խորհին, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն։ Զի խորհուրդ 6
մարմնոյ՝ մահ է, և խորհուրդ հոգւոյն՝ կեանք և խա-
ղաղութիւն. քանզի խորհուրդ մարմնոյ թշնամու- 7
թիւն է յԱստուած, զի օրինացն Աստուծոյ ոչ հնա-
զանդի, նա՝ և կարէ իսկ ոչ. զի որ մարմնովն են՝ Աս- 8
տուծոյ հաճոյ լինել ոչ կարեն։ Բայց դուք ոչ էք 9
մարմնով՝ այլ հոգւով, եթէ իցէ հոգին Աստուծոյ 'ի
ձեզ բնակեալ. ապա եթէ ոք զհոգի Քրիստոսի ոչ
ունի, սա չէ նորա։ Իսկ եթէ Քրիստոս 'ի ձեզ է, 10
ապա մարմին մեռեալ է վասն մեղաց. և հոգին կեն-

11 դանի է վասն արդարութեան։ Եթէ հոգի այնորիկ
որ յարոյցն զՅիսուս 'ի մեռելոց՝ բնակեալ է 'ի ձեզ,
ապա և որ յարոյցն զՔրիստոս 'ի մեռելոց՝ կենդա-
նացուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակելո-
ԼԵՐՁ) դուռն իւրով 'ի ձեզ։
12 Այսուհետև, եղբարք, պարտապան եմք, ոչ
13 մարմնով ըստ մարմնոյ կեալ. զի եթէ ըստ մարմնոյ
կեցջիք, մեռանելոց էք. իսկ եթէ հոգւով զգործս
14 մարմնոյ սպանանիցէք, կեցջիք։ Զի որ հոգւովն Աս-
15 տուծոյ վարին՝ նոքա են որդիք Աստուծոյ. զի ոչ ա-
ռէք զհոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ,
այլ առէք զհոգին որդեգրութեան, որով աղաղակեմք՝
16 աբբա, հայր։ Նոյն ինքն Հոգին վկայէ հոգւոյս մե-
17 րում, եթէ եմք որդիք Աստուծոյ. և եթէ որդիք,
ապա և ժառանգք. ժառանգք Աստուծոյ և ժառան-
գակիցք Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդ լի-
18 նիմք, և փառացն հաղորդ լինելոց եմք։ Ինձ այսպէս
թուի, եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս
հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են 'ի մեզ։
19 Զի ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան որ-
20 դւոցն Աստուծոյ սպասէ. զի ընդունայնութեան ա-
րարածքն հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ, այլ
21 վասն այնորիկ որ հնազանդեցոյցն յուսով. զի և ին-
քեանք իսկ արարածքն ազատեսցին 'ի ծառայութէ
ապականութեան՝ յազատութիւն փառաց որդւոցն
22 Աստուծոյ։ Քանզի գիտեմք, եթէ ամենայն արա-
23 րածք հեծեն և երկնեն մինչև ցայժմ. և ոչ այսչափ
միայն, այլ և մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն ունիմք՝
անձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրութեանն
24 ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ։ Զի յու-
սով ապրեցաք. այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի զոր
25 տեսանէ ոք՝ զի՞ ևս յուսայ. ապա եթէ զոր ոչն տե-
սանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք։
26 Նոյնպէս և Հոգին 'ի թիկունս հասանէ տկարու-
թեանս մերում. զի զոր կամքն յաղօթս, որպէս ար-

ժամ իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխօս լի-
նի 'ի հեծութիւնս անմռունչս. բայց որ քննէն ըզ- 27
սիրտս, գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն. զի ըստ
Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց: Բայց գիտեմք՝ 28
եթէ որոց սիրեն զԱստուած, յամենայնի գործա-
կից լինի 'ի բարիս, որք հրաւիրմանն կոչեցան. զի 29
զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց
կերպարանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի
եղիցի նա անդրանիկ 'ի մէջ եղբարց բազմաց: Եւ 30
զորս յառաջագոյնն հրաւիրեաց՝ զնոսին և կոչեաց.
և զորս կոչեացն, զնոսին և արդարացոյց. և զորս
արդարացոյցն, զնոսին և փառաւորս արար: Իսկ արդ 31
զի՞նչ ասեմք առ այս. եթէ Աստուած 'ի մեր կոյս է,
ո՞վ իցէ մեր հակառակ. որ յիւր Որդին ոչ խնայեաց, 32
այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ
նովաւ հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ: Ո՞վ իցէ 33
որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած
է որ արդարացուցանէ, իսկ արդ ո՞վ է որ դատապարտ 34
առնիցէ. Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն, մանա-
ւանդ թէ յարուցեալ իսկ է, և է ընդ աջմէ Աս-
տուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր: Արդ ո՞վ 35
մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն Քրիստոսի. նեղութի՞ւն,
թէ անձկութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ
մերկութի՞ւն, թէ վի՞շտք, թէ սո՞ւր. որպէս և գը-
րեալ է. Վասն քո մեռանիմք զօրհանապազ, հա- 36
մարեցաք իբրև զոչխարս 'ի սպանդ: Այլ յայսմ 37
ամենայնի՝ առաւել յաղթեմք նովաւ որ սիրեացն
զմեզ: Քանզի հաստատեալ եմ՝ եթէ ոչ մահ, և 38
ոչ կեանք, և ոչ Հրեշտակք, և ոչ իշխանութիւնք,
և ոչ որ կանս, և ոչ հանդերձեալքն, և ոչ զօրու-
թիւնք, և ոչ բարձրութիւն, և ոչ խորութիւն, և ոչ 39
այլ ինչ արարած կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ անտի
Աստուծոյ, որ 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր:

ԳԼՈՒԽ Թ

1 ԵԴ. Ստուգութեամբ ասեմ 'ի Քրիստոս՝ և ոչ
2 ստեմ, վկայեն ինձ միտք իմ 'ի հոգի սուրբ. զի
տրտմութիւն է ինձ յոյժ, և անպակաս ցաւք սրտի
3 իմոյ: Զի ուխտիւք խնդրէի, ես իսկ ինքնին նզով
լինել 'ի Քրիստոսէ, վասն եղբարց իմոց և ազգա-
4 կանաց ըստ մարմնոյ, որ են իսրայելացիք. որոց որ-
դեգրութիւնն և փառքն և կտակարանքն և օրէնս-
5 դրութիւնն և պաշտօնն և աւետիքն. որոց հարքն,
յորոց և Քրիստոս ըստ մարմնոյն, որ է 'ի վերայ ա-
մենեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն:
6 Ոչ ինչ է մարթ՝ եթէ անկած լինիցի բանն Աստու-
ծոյ. զի ոչ ամենեքեան որ յիսրայելէն են, նոքա
7 իսրայելեանք իցեն. և ոչ որ զաւակն Աբրահամու են,
ամենեքեան որդիք իցեն. այլ Իսահակաւ կոչեսցի
8 քեզ զաւակ. այս ինքն՝ թէ ոչ որ որդիք մարմնոյն են՝
են որդիք Աստուծոյ, այլ որդիք աւետեացն համա-
9 րեսցին 'ի զաւակ. քանզի աւետեաց իսկ է բանս այս,
թէ 'ի ժամանակի յայսմիկ եկից, և եղիցի որդի Սա-
10 ռայի: Եւ ոչ այնչափ միայն, այլ և 'ի Հռեբեկայ 'ի
11 միոջէ անկողնոյ Սահակայ հօր մերոյ. զի մինչ չև
ծնեալ էին, և մինչ չև բարի ինչ կամ չար գործեալ
էր, զի ըստ ընտրութեանն յառաջադրութիւնն Աս-
12 տուծոյ հաստատեսցի, ոչ 'ի գործոց, այլ յայնմա-
13 նէ որ կոչեացն, ասացաւ նմա, թէ երէցն կրսերոյն
ծառայեսցէ. որպէս և գրեալ է, թէ զՅակոբ սիրե-
14 ցի, և զԷսաւ ատեցի: Իսկ արդ զի՞նչ ասեմք. միթէ
15 անիրաւութի՞ւն իցէ յԱստուծոյ. քաւ լիցի: Զի
Մովսիսի ասէ. Ողորմեցայց՝ որում ողորմեցայցն, և
16 գթացայց՝ յոր գթացայցն: Ապա ոչ ըստ այնմ ինչ
է՝ որ կամիցին, և ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ, այլ
ըստ Աստուծոյ՝ որ ողորմի:
17 ԵԶ. Քանզի ասէ գիր ցՓարաւոն, թէ վասն

այնորիկ զարթուցի զքեզ, զի 'ի քեզ ցուցից զզօրու֊
թիւն իմ, և պատմեսցի անուն իմ ընդ ամենայն եր֊
կիր: Ապա ուրեմն ում կամի՝ ողորմի, և ում կամի՝ 18
խստանայ: Իսկ արդ ասիցես թէ մեղ ևս զի՞ դնէ, 19
զի կամաց նորա ոչ ոք կայ հակառակ: Իսկ արդ դու 20
ո՞վ ես մարդ՝ որ պատասխանի տաս Աստուծոյ. միթէ
ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն՝ թէ ընդէ՞ր այդպէս
արարեր զիս. եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն բրուտն 21
կաւոյն՝ 'ի նմին զանգուածոյ առնել անօթ, զոմն 'ի
պատիւ և զոմն յանարգանս: Ապա թէ կամէր Աս֊ 22
տուած ցուցանել զբարկութիւն, և յայտնի առնել
զզօրութիւն իւր, զոր համբերերն բազում երկայն֊
մտութեամբ անօթոցն բարկութեան՝ պատրաստե֊
լոցն 'ի կորուստ: Զի յայտնի արասցէ զմեծու֊ 23
թիւն փառաց իւրոց 'ի վերայ անօթոցն ողորմու֊
թեան, զոր պատրաստեաց 'ի փառս. զորս և կոչեաց 24
զմեզ ոչ միայն 'ի Հրէից՝ այլ և 'ի հեթանոսաց:
Որպէս և յՈվսէէ ասէ. Կոչեցից զոր ոչ ժողովուրդ 25
իմ՝ ժողովուրդ ինձ, և զչսիրեցեալն՝ սիրեցեալ. և ե֊ 26
ղիցի 'ի տեղւոջ յորում ասացաւ նոցա, թէ ոչ ժո֊
ղովուրդ իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք Աս֊
տուծոյ կենդանւոյ: Եսայի աղաղակէ վասն Իսրայե֊ 27
լի. Եթէ իցէ թիւ որդւոցն Իսրայելի իբրև զաւազ
ծովու, սակաւ ինչ մնացորդք մնասցեն. զի բան մի 28
հակիրճ և համառօտ արդարութեամբ, զբանն հա֊
կիրճ արասցէ Տէր 'ի վերայ երկրի: Եւ որպէս ասէ 29
Եսայի. Եթէ ոչ Տէրն զօրութեանց թողեալ էր
մեզ զաւակ, իբրև զՍոդոմ լինէաք և Գոմորոյ նը֊
մանէաք:

ՋՀ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք՝ որ 30
ոչ երթային զհետ արդարութեան՝ հասին արդա֊
րութեան, այնմ արդարութեան՝ որ 'ի հաւատոց
անտի. այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդա֊ 31
րութեան, և յօրէնս արդարութեանն ոչ ժամանեաց:
Ընդէ՞ր. զի ոչ 'ի հաւատոց, այլ իբրև 'ի գործոց օ֊ 32

33 րինաց. քանզի գթեցին նոքա առ վիմին գայթագ֊
ղութեան, որպէս և գրեալ է. Ահաւասիկ դնեմ 'ի
Սիովն քար գայթագղութեան և վէմ գլորման. և
ամենայն որ հաւատասցէ 'ի նա՝ մի՛ ամաչեսցէ:

ԳԼՈՒԽ Ժ

1 Եղբարք, իմ կամք սրտի և աղօթք առ Աստուած
2 վասն նոցա են 'ի փրկութիւն. քանզի վկայեմ նոցա՝
եթէ զնախանձ Աստուծոյ ունին, այլ ոչ գիտու֊
3 թեամբ: Զի տգէտ են Աստուծոյ արդարութեանն,
և զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի արդարու֊
4 թեանն Աստուծոյ ոչ հնազանդեցան. քանզի կատա֊
րած օրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն
հաւատացելոց:

5 ՋԳ. Մովսէս գրէ զարդարութիւն որ յօրինաց
անտի է, եթէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ նովին:
6 Իսկ զհաւատոյն արդարութենէ այսպէս ասէ. Մի՛ ա֊
սիցես 'ի սրտի քում, ո՞վ ելանիցէ յերկինս. այս ինքն
7 է՝ զՔրիստոս իջուցանել. կամ ո՞վ իջանիցէ յան֊
դունդս. այս ինքն է զՔրիստոս հանել 'ի մեռելոց:
8 Այլ զի՞նչ ասէ գիր. մերձ է բանն, 'ի բերան քո և
'ի սրտի քում է. այս ինքն է՝ բանն հաւատոց զոր
9 քարոզեմք. զի եթէ խոստովանեսցես բերանով քով
տէր զՅիսուս, և հաւատասցես 'ի սրտի քում՝ թէ
10 Աստուած յարոյց զնա 'ի մեռելոց, կեցցես: Զի
սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանով
11 խոստովանիք 'ի փրկութիւն. քանզի ասէ գիր. Ամե֊
12 նայն որ հաւատասցէ 'ի նա, մի՛ ամաչեսցէ: Զի ոչ
գոյ խտիր Հրէի և հեթանոսի. քանզի նոյն Տէր է
ամենեցուն, բաւական յամենեսին որք կարդան առ
13 նա. Զի ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն՝
14 կեցցէ: Իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին,
կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչն լուան, կամ
զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ, կամ զիա՞րդ

քարոզեսցեն՝ եթէ ոչ առաքեսցին. Որպէս և գրեալ է. 15
Իբրև զի գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղա-
ղութեան, և աւետարանչացն բարութեան: Այլ 16
ոչ ամենեքեան հնազանդ եղեն Աւետարանին. Ե-
սայի ասէ. Տէր, ո՞ հաւատաց լրոյ մերում: Ապա 17
ուրեմն հաւատք 'ի լսելոյ են, և լուր 'ի բանէն
վերջ) Քրիստոսի:

Այլ ասեմ. միթէ ո՞չ լուան. մանաւանդ զի ընդ 18
ամենայն երկիր ել բարբառ նոցա, և ընդ ծագս
տիեզերաց խօսք նոցա: Այլ ասեմ. միթէ Իսրայէլ 19
ո՞չ լուաւ. նախ Մովսէս ասէ. Ես նախանձեցուցից
զձեզ ոչ ինչ ժողովրդեամբ, և ազգաւ անմտաւ բղ-
կծեցուցից զձեզ: Բայց Եսայի համարձակի իսկ և 20
ասէ. Գտայ այնոցիկ՝ որ զիս ոչ խնդրէին, յայտնի
եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին: Այլ առ 21
Իսրայէլ ասէ. Զօր ամենայն ձգեցի զձեռն իմ առ
ժողովուրդն անհաւան և հակառակօղ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԶԶ. Իսկ արդ ասեմ. միթէ մերժեա՞ց Աստուած 1
զժողովուրդ իւր. քաւ լիցի. քանզի և ես իսրայելացի
եմ, 'ի զաւակէ Աբրահամու, յազգէ Բենիամենի.
ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր, զոր յա- 2
ռաջն ծանեաւ. թէ ո՞չ գիտէք յԵղիա զինչ ասէ
գիր, որպէս ամբաստան լինի Աստուծոյ զԻսրայելէ:
Տէր, զմարգարէս քո կոտորեցին, և զսեղանս քո 3
կործանեցին. ես մնացի միայն, և խնդրեն զանձն
իմ: Այլ զի՞նչ ասէ նմա պատասխանին. Թողի ինձ, 4
ասէ, եօթն հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր Բա-
հաղու: Նոյնպէս և յայսմ ժամանակի մնացորդք 5
ըստ ընտրութեան շնորհացն եղեն: Իսկ եթէ շնոր- 6
հօք, ոչ ևս 'ի գործոց. ապա թէ ոչ՝ շնորհքն ոչ
ևս շնորհք լինին: Իսկ արդ զոր խնդրէրն Իսրայ- 7
էլ՝ այնմ ոչ եհաս, բայց ընտրութիւնն եհաս, և

8 այլքն կուրացան, որպէս և գրեալ է. Ետ նոցա Աս-
տուած հոգի յիմարութեան. աչս որովք ոչ տեսա-
նիցեն, և ականջս որովք ոչ լսիցեն, մինչև ցայսօր
9 ժամանակի: Եւ Դաւիթ ասէ. Եղիցին սեղանք նո-
ցա յորոգայթ և յորս և 'ի գայթագղութիւն, և 'ի
10 հատուցումն նոցին. խաւարեսցին աչք նոցա՝ զի մի
11 տեսցեն, և զթիկունս նոցա հանապազ կորացո: Իսկ
արդ ասեմ. միթէ վասն այնորիկ յանցեան՝ զի կոր-
ծանեսցի՞ն. քաւ լիցի. այլ նոցա յանցանօքն փրկու-
12 թիւն հեթանոսաց, զի նախանձ արկցէ նոցա: Իսկ
եթէ յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի, և պար-
տութիւն նոցա մեծութիւն հեթանոսաց, ո՞րչափ ևս
առաւել լրութիւն նոցա:
13 ԷԿ. Այլ ձեզ ասեմ հեթանոսաց, ցորքան ժա-
մանակս իցեմ հեթանոսաց Առաքեալ, զպաշտօնն իմ
14 փառաւոր առնեմ. զի թերևս նախանձ արկից նոցա
մարմնով իմով, և ապրեցուցից զոմանս 'ի նոցանէ:
15 Զի եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի
է, իսկ ընդունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ոչ կեն-
16 դանութիւն 'ի մեռելոց: Իսկ եթէ սկիզբն սուրբ է,
17 և զանգուածն. և արմատն, ապա և ոստքն: Եթէ
յոստոց անտի ոմանք փշրեցան, և դու որ ձիթենիդ
վայրենի էիր՝ պատուաստեցար 'ի նոսա, և բաժանորդ
18 եղեր արմատոյն և պարարտութեան ձիթենւոյն, մի
պարծիր առ ոստովքն. ապա թէ պարծիցիս, ոչ ե-
թէ դու զարմատն 'ի վեր ունիս, այլ արմատն զքեզ:
19 Իսկ արդ ասիցես. ոստքն փշրեցան, զի ես պատուաս-
20 տեցայց. բարւոք է, անհաւատութեամբն փշրե-
ցան, և դու հաւատովք հաստատեցար. մի հպարտա-
21 նար, այլ երկիր. զի եթէ Աստուած 'ի բուն ոստոյն
ոչ խնայեաց, դուցէ երբեք և 'ի քեզ ոչ խնայեսցէ:
22 Արդ տես զքաղցրութիւն և զսաստկութիւնն Աս-
տուծոյ. 'ի վերայ կործանելոցն սաստկութիւն, և 'ի
վերայ քո քաղցրութիւն Աստուծոյ, եթէ կայցես 'ի
նմին քաղցրութեան. ապա թէ ոչ՝ և դու կոտորես-

ցիս։ Եւ նոքա եթէ ոչ 'ի նմին անհաւատութեանն 23
կայցեն, պատուաստեսցին. զի կարող է Աստուած
միւսանգամ պատուաստել զնոսա։ Զի եթէ դու 'ի 24
բուն վայրենի ձիթենւոյ անտի հատար, և յանբուն
քո 'ի բարի ձիթենւոջն պատուաստեցար, ո՞րչափ ևս
առաւել նոքա որ բունքն իսկ են՝ պատուաստեսցին
յիւրեանց ձիթենւոջն։
ԻԲ. Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտք իցէք խոր- 25
հրդոյս այսմիկ. զի մի՛ յանձինս ձեր իցէք իմաս-
տունք. զի կուրութիւն փոքր 'ի շատէ եղև Իսրայէ-
լի. մինչև լրումն հեթանոսաց մտցէ, և ապա ամե- 26
նայն Իսրայէլ կեցցէ. որպէս և գրեալ է. Եկեսցէ
'ի Սիովնէ փրկիչ, և դարձուսցէ զամպարշտութիւնս
Յակովբայ. և այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ 27
բարձից զմեղս նոցա։ Ըստ Աւետարանիս՝ թշնամիք 28
են վասն ձեր, ըստ ընտրութեանն՝ սիրելիք վասն
հարցն. քանզի անզեղջ են շնորհքն և կոչումն Աս- 29
տուծոյ։ Զի որպէս և դուք երբեմն ապստամբք էիք 30
յԱստուծոյ, և արդ ողորմութիւն գտէք առ նոցա
ապստամբութեամբն, նոյնպէս և նոքա այժմ ա- 31
պըստամբք եղեն առ ձերով ողորմութեամբդ, զի և
նոքա ողորմութիւն գտցեն։ Քանզի արգել Աս- 32
տուած զամենեսին յանհաւանութիւն, զի ամենե-
ցուն ողորմեսցի։ Ո՜վ խորք մեծութեան և իմաս- 33
տութեան և գիտութեանն Աստուծոյ. ո՜րպէս ա-
ռանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց զըն-
նելոյ են ճանապարհք նորա։ Զի ո՞վ գիտաց զմիտս 34
Տեառն, կամ ո՞վ խորհրդակից լինիցի նմա. կամ 35
ո՞վ ետ նմա փոխ, և առնուցու փոխարէն 'ի նմանէ։
Զի 'ի նմանէ և նովաւ և 'ի նոյն ամենայն. նմա 36
փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Աղաչեմ զձեզ, եղբարք, գթութեամբքն Աստու-
ծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդա-
նի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխօսուն պաշտօնդ
2 ձեր. և մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս
այսորիկ, այլ նորոգեցարուք 'ի նորոգութիւն մտաց
ձերոց, առ 'ի քննել ձեզ զկամն, և եթէ զինչ են
կամքն Աստուծոյ բարին և հաճոյն և կատարեալն։
3 Զայս ասեմ շնորհօքն Աստուծոյ որ տուեալ են ինձ
ամենայնի որ է 'ի ձեզ, մի՛ առաւել ինչ խորհել քան
զարժանն խորհելոյ. այլ խորհել 'ի զգաստանալ
իւրաքանչիւր, որպէս և բաժանեաց Աստուած չափ
4 հաւատոյ։ Որպէս 'ի միում մարմնի անդամս բա-
զումս ունիմք, և անդամքն ամենայն ոչ զնոյն գործ
5 ունին, նոյնպէս և բազումքս մի մարմին եմք 'ի Քրիս-
6 տոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք։ Բայց
ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են
մեզ ազգս ազգս. եթէ մարգարէութիւն՝ ըստ չա-
7 փոյն հաւատոյ, եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ
8 որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն, եթէ որ
մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ առատն է՝
զուարթութեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ ո-
9 ղորմին՝ լղջմտութեամբ։ Սէր առանց կեղծաւորութե̃,
10 ատեալ զչար, զհետ երթալ բարեաց. յեղբայրսիրու-
թեան առ միմեանս գթածք, 'ի պատիւ զմիմեամբք
11 եղանել։ Ի փոյթ՝ մի՛ վեհերոտք, հոգւով եռացէք,
12 Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք, նեղութեան
13 համբերեցէք, աղօթից տէպ կացէք, 'ի պէտս սրբոց
հաղորդեցարուք, զհիւրասիրութե̃ զհետ երթայք.
14 օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհնեցէք և մի՛ անիծա-
15 նէք։ Խնդալ ընդ խնդացօղս, լալ ընդ լացօղս.
16 զնոյն միմեանց խորհիջիք. մի՛ ամբարտաւանէք՝ այլ
17 ընդ խոնարհս զիջանիցէք։ Մի՛ լինիք իմաստունք

յանձինս ձեր, մի՛ ումեք չարի չար հատուցանէք։
Խորհեցարուք զբարիս առաջի ամենայն մարդկան․
եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամենայն մարդկան 18
զխաղաղութիւն կալջիք։ Մի՛ զանձանց վրէժ խնդ֊ 19
րէք, սիրելիք՝ այլ տուք տեղի բարկութեան․ քան֊
զի գրեալ է․ Իմ է վրէժխնդրութիւն, և ես հա֊
տուցից՝ ասէ Տէր։ Այլ եթէ քաղցեալ է թշնամին 20
քո՝ հաց տուր նմա, և եթէ ծարաւի՝ ջուր տուր նմա․
զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես 'ի գլուխ
նորա։ Մի՛ յաղթիր 'ի չարէ․ այլ յաղթեա բարեաւն 21
չարին։

ԳԼՈՒԽ ԺԳ

Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է՝ 'ի հնա֊ 1
զանդութեան կացցէ․ քանզի ոչ ուստեք է իշխանու֊
թիւն, եթէ ոչ յԱստուծոյ․ և որ են, յԱստուծոյ
կարգեալ են։ Այսուհետև որ հակառակ կայ իշխա֊ 2
նութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ․ և
որք հակառակն կան, անձանց դատաստանս ընդու֊
նին․ զի իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց, 3
այլ չարեաց։ Կամի՞ս չերկնչել յիշխանութենէ ան֊
տի․ զբարիս գործեա, և ընկալցիս գովութիւն 'ի նը֊
մանէ․ զի Աստուծոյ պաշտօնեայ է՝ քեզ 'ի բարիս․ 4
ապա եթէ չար գործիցես, երկի՛ր․ զի ոչ եթէ վայրա֊
պար ածեալ է սուսեր ընդ մէջ․ Աստուծոյ սպասա֊
ւոր է՝ վրէժխնդիր 'ի բարկութիւն այնմ որ զչարն
գործիցէ։ Վասն որոյ հարկ է հնազանդ լինել, ոչ 5
միայն վասն բարկութեանն, այլ և վասն խղճի մը֊
տացն․ վասն այնորիկ և հարկս հարկանէք, զի Աս֊ 6
տուծոյ սպասաւորք են՝ 'ի նոյն կանխեալք։ Արդ հա֊ 7
տուցէք ամենեցուն զպարտս․ որում զհարկ՝ զհարկն,
որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն,
որում զպատիւ՝ զպատիւն․ և մի՛ ումեք պարտապան 8
գտանիցիք, բաց զմիմեանս սիրելոյ․ զի որ սիրէ զըն֊ 9

կերն, զօրէնսն կատարէ․ զմի՛ շնայցես, և մի՛ սպա֊
նանիցես, և մի՛ գողանայցես, և մի՛ սուտ վկայիցես, և
մի՛ ցանկանայցես։ Եւ եթէ այլ ինչ պատուիրան է՝
յայն բան բովանդակին, եթէ սիրեսցես զընկեր քո
10 իբրև զանձն քո․ սէր՝ ընկերի իւրում չար ոչ առնէ․
11 լրումն օրինացն սէր է։ Եւ զայս գիտասջիք վասն
ժամանակիս․ զի արդ ժամ իսկ է մեզ 'ի քնոյ զարթ֊
նուլ․ զի այժմ մերձ է մեզ փրկութիւն՝ քան յոր֊
12 ժամ հաւատացաքն․ գիշերն մերժեցաւ, և տիւն
մերձեցաւ․ 'ի բաց արասցուք այսուհետև զգործսն
13 խաւարի, և զգեցցուք զզէնն լուսոյ։ Իբրև 'ի տուըն֊
ջեան զգաստացեալք շրջեսցուք․ մի՛ անառակու֊
թեամբք և արբեցութեամբք, և մի՛ խառն ընկող֊
նովք և պղծութեամբ, և մի՛ նախանձու և հակա֊
14 ռակութեամբք․ այլ զգեցարուք զտէր Յիսուս
Քրիստոս, և մարմնոյ խնամ մի՛ տանիք 'ի ցանկու֊
թիւնս։

ԳԼՈՒԽ ԺԴ

1 Այլ զտկարացեալն 'ի հաւատս՝ ընկալարուք, մի՛
2 խղճիւ երկմտութեանց․ ոմն հաւատայ ուտել զա֊
3 մենայն․ և որ հիւանդն է՝ բանջար կերիցէ։ Որ ու֊
տէն, զայն որ ոչն ուտէ՝ մի՛ անգոսնեսցէ․ և որ ոչն
ուտէ, զայն որ ուտէն՝ մի՛ դատեսցի․ քանզի Աս֊
4 տուած զնա ընկալաւ։ Դու ո՞վ ես որ դատիս զայլոյ
ծառայ․ իւրում Տեառն կայ կամ անկանի․ բայց
5 կացցէ, զի կարող է Տէրն հաստատել զնա։ Ոմն
պահէ օր ըստ օրէ, և ոմն պահէ զօր հանապազ․
6 իւրաքանչիւր ոք զիւր միտս հաճեսցէ։ Որ խորհի
զօրն՝ Տեառն խորհի, և որ ոչն խորհի զօրն՝ Տեառն
չխորհի․ և որ ուտէ՝ Տեառն ուտէ և գոհանայ զԱս֊
տուծոյ, և որ ոչն ուտէ՝ Տեառն չուտէ և գոհանայ
7 զԱստուծոյ․ զի ոչ ոք 'ի մէնջ անձամբ կեայ, և ոչ ան֊
8 ձամբ մեռանի։ Եթէ կեամք՝ Տեառն կեամք, և եթէ

մեռանիմք՝ Տեառն մեռանիմք. և արդ եթէ կեամք և 9
եթէ մեռանիմք՝ Տեառն եմք։ Քանզի ՚ի նոյն իսկ և
Քրիստոս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և կենդանեաց
առ հասարակ տիրեսցէ։ Դու զի՞ դատիս զեղբայր քո, 10
կամ ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո. քանզի ամենե-
քին կալոց եմք առաջի ատենին Քրիստոսի։ Զի 11
գրեալ է. Կենդանի եմ ես, ասէ Տէր, զի ինձ
կրկնեսցի ամենայն ծունր, և ամենայն լեզու խոստո-
վան լիցի Աստուծոյ։ Ապա ուրեմն իւրաքանչիւր ոք 12
՚ի մէնջ ընդ անձին համարս տացէ Աստուծոյ։ Այսու- 13
հետև մի՛ զմիմեանս դատեսցուք. այլ առաւել զայս
դիք ՚ի մտի, չդնել գայթագղութիւն եղբօրն։ Զայս 14
գիտեմ և հաստատեալ եմ ՚ի Քրիստոս Յիսուս, զի
ոչ ինչ է պիղծ նովաւ. բայց այնմ որ համարիցի ոք
ինչ պիղծ, նմա է պիղծ. զի եթէ վասն կերակրոյ եղ- 15
բայրն քո տրտմի, ոչ ևս սիրով գնացեր. մի՛ կերակրովն
քո զնա կորուսաներ, վասն որոյ Քրիստոսն մեռաւ. մի՛ 16
հայհոյեսցի բարին ձեր։ Զի ոչ է արքայութիւնն Աս- 17
տուծոյ կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն և
խաղաղութիւն և խնդութիւն ՚ի Հոգին սուրբ. զի 18
որ յայսմ ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Աստուծոյ
և ընտիր մարդկան։ Ապա այսուհետև զհետ երթի- 19
ցուք խաղաղութեան և զշինութեան որ առ մի-
մեանս. մի՛ վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ. 20
ամենայն ինչ սուրբ է, այլ չար այնմ մարդոյ է՝ որ
խղճիւն ուտիցէ։ Լաւ է ոչ ուտել միս և ոչ ըմպել 21
գինի, և ոչ՝ որով եղբայրն քո գայթագղի, կամ գթէ,
կամ տկարանայ։ Դու ապաքէն հաւատս ունիս, 22
կալ առանձինն առաջի Աստուծոյ. երանի՛ որ ոչ դա-
տեսցի զանձն, որով զընկերն փորձիցէ։ Բայց որ խղ- 23
ճէն՝ թէպէտ և ուտիցէ՝ դատապարտեալ է, զի ոչ
ըստ հաւատոց. զի ամենայն ինչ որ ոչ ՚ի հաւատոց
է՝ մեղք են։ Այլ այնմ որ կարօղն է հաստատել զձեզ 24
ըստ աւետարանիս իմում, և ըստ քարոզութեանն
Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն՝

25 ժամանակօքն յաւիտենից լռեցելոյ, և յայտնելոյ այժ-
միկ ՚ի ձեռն գրոց մարգարէականաց, ըստ հրամանի
մշտնջենաւորին Աստուծոյ, ՚ի հնազանդութիւն հա-
ւատոց, յամենայն հեթանոսս ծանուցելոյ, միայնոյ
իմաստնոյն Աստուծոյ, ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի,
որում փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼՈՒԽ ԺԵ

1 ԻԴ. Պարտ է մեզ որ կարօղս եմք՝ զտկարութիւն
տկարացն բառնալ, և մի՛ անձանց ևեթ հաճոյ լի-
2 նել, այլ իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ ընկերին հաճոյ
3 լիցի ՚ի բարիս՝ վասն շինութեան։ Քանզի և Քրիս-
տոս ոչ եթէ անձին հաճոյ եղև, այլ որպէս և գրեալ
է. Նախատինք նախատչաց քոց անկան ՚ի վերայ իմ։
4 Բայց որ ինչ գրեցաւն՝ ՚ի մեր վարդապետութիւն
գրեցաւ, զի համբերութեամբ և մխիթարութեամբ
5 գրոց զյոյսն ընկալցուք։ Այլ Աստուած համբերու-
թեան և ամենայն մխիթարութեան տացէ ձեզ զնոյն
6 խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի. զի
միաբանութեամբ ՚ի մի բերան փառաւոր առնիցէք
զԱստուած և զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
7 տոսի. վասն որոյ ընկալարուք զմիմեանս, որպէս և
8 Քրիստոս ընկալաւ զձեզ ՚ի փառս Աստուծոյ։ Այլ
ասեմ, թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն
լինել՝ վասն ճշմարտութեանն Աստուծոյ էր, առ ՚ի
9 հաստատուն առնելոյ զաւետիս հարցն։ Այլ հեթա-
նոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱս-
տուած, որպէս և գրեալ է. Վասն այսորիկ գոհացայց
զքէն ՚ի հեթանոսս, և անուան քում սաղմոս ասա-
10 ցից։ Եւ դարձեալ՝ թէ ուրախ եղերուք հեթանոսք
11 ընդ ժողովրդեան նորա. և դարձեալ՝ թէ օրհնեցէք
ամենայն հեթանոսք զՏէր, և գովեցէք զնա ամե-
12 նայն ժողովուրդք։ Եւ դարձեալ Եսայի ասէ. Եղիցի

արմատն Յեսսեայ, և որ կանգնելոյն է իշխան հե-
թանոսաց, 'ի նա հեթանոսք յուսասցին: Այլ Աս- 13
տուած յուսոյ՝ լի արասցէ զձեզ ամենայն խնդու-
թեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յու-
սով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ:

ԿԴ. Հաստատեալ եմ և ես ինքնին, եղբարք իմ, 14
վասն ձեր, զի դուք լի էք բարութեամբ, լի էք ամե-
նայն գիտութեամբ, կարող էք զմիմեանս խրատել:
Այլ համարձակագոյնս գրեցի առ ձեզ, եղբարք, փոքր 15
'ի շատէ, իբրև յիշեցուցանելով ձեզ վասն շնորհացն
որ տուեալ են ինձ յԱստուծոյ, լինել ինձ սպասա- 16
ւոր Յիսուսի Քրիստոսի 'ի հեթանոսս. ըղձակերտս
առնել զԱւետարանն Աստուծոյ, զի եղիցի պատա-
րագն հեթանոսաց ընդունելի, սրբեալ Հոգւովն սըր-
բով: Ունիմ այսուհետև պարծանս 'ի Քրիստոս Յի- 17
սուս առ Աստուած. քանզի ոչ իշխեմ խօսել ինչ զոր 18
ոչ գործեաց Քրիստոս ինև 'ի հնազանդութիւն հե-
թանոսաց՝ բանիւք և արդեամբք, զօրութեամբ նշա- 19
նաց և արուեստից, զօրութեամբ Հոգւոյն սրբոյ, որ-
պէս ինձ յԵրուսաղեմէ և շուրջ մինչև 'ի կողմանս
Իլիւրիկացւոց լնուլ զաւետարանն Քրիստոսի: Այն- 20
պէս առատացեալ յաւետարանել, ոչ ուր անուանե-
ցաւ Քրիստոս, զի մի՛ իբրև յայլոյ հիման վերայ շի-
նիցեմ, այլ որպէս և գրեալ է, Թէ որոց ոչ պատմե- 21
ցաւ վասն նորա՝ տեսցեն, և որոց ոչ իցէ լուեալ՝ 'ի
միտ առցեն: Վասն որոյ շատ խափանեցայ գալ առ 22
ձեզ: Բայց արդ ոչ ևս գոյ ինձ տեղի 'ի կողմանս յայ- 23
սոսիկ. և անձուկ յոյժ ունիմ 'ի բազում ամաց գալ
առ ձեզ. յորժամ անցանիցեմ 'ի Սպանիա, ակն ու- 24
նիմ յանցանելն առ նոսա՝ տեսանել զձեզ, և 'ի ձէնջ
յուղարկել անդր, եթէ նախ իսկ փոքր 'ի շատէ ձեօք
լցայց: Բայց այժմ երթամ յԵրուսաղէմ պաշտել 25
զսուրբսն. քանզի հաճոյ թուեցաւ Մակեդոնացւոցն 26
և Աքայեցւոցն՝ հաղորդութիւն ինչ առնել ընդ աղ-
քատս սրբոցն՝ որ ենն յԵրուսաղէմ: Հաճոյ թուե- 27

ցաւ, քանզի և պարտապան իսկ են նոցա. զի եթէ
հոգևորացն նոցա հաղորդ եղեն հեթանոսք, պար-
28 տին և մարմնաւորացն կցորդ լինել: Արդ զայս կա-
տարեալ, և կնքեալ զպտուղ նոցա, անցից առ ձեօք
29 'ի Սպանիա. զայս գիտեմ, զի 'ի գալն իմում առ
ձեզ, լրութեամբ օրհնութեան աւետարանին Քրիս-
տոսի եկից:

30 ԿԵ. Աղաչեմ զձեզ, եղբարք, 'ի ձեռն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, և սիրով Հոգւոյն, պա-
տերազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աս-
31 տուած. զի ապրեցայց յապստամբացն որ 'ի Հրէաս-
տանի են, և պաշտօնն իմ որ յԵրուսաղէմ՝ ընդու-
32 նելի լիցի սրբոցն. զի խնդութեամբ եկեալ առ ձեզ
33 'ի կամս Աստուծոյ, հանգեայց ընդ ձեզ: Եւ Աս-
տուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենե-
սեան. ամէն:

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է ըս-
2 պասաւոր եկեղեցւոյն Կենքրայւոյ. զի զնա ընկալ-
ջիք 'ի Տէր՝ արժանի սրբոց, և վերակացու լինիջիք
նմա՝ յոր պէտս իրաց և կոչեսցէ զձեզ. քանզի և նա
վերակացու եղև բազմաց, և ինձ իսկ 'ի գլխովին:
3 Ողջոյն տաջիք Պրիսկեայ և Ակիւղայ՝ գործակցաց
4 իմոց 'ի Քրիստոս Յիսուս, որք ընդ անձին իմոյ
զիւրեանց պարանոցս մատուցին. զորոց ոչ ես միայն
գոհանամ, այլ և ամենայն եկեղեցիք հեթանոսաց.
5 և առտնին եկեղեցւոյն նոցա: Ողջոյն տաջիք Եպեն-
տեայ սիրելւոյ իմոյ, որ է պտուղ Ասիացւոց 'ի Քրիս-
6 տոս: Ողջոյն տաջիք Մարեայ, որ բազում վաստակս
7 վաստակեաց 'ի ձեզ: Ողջոյն տաջիք Անդրոնիկեայ և
Յունեայ ազգականաց իմոց և գերեկցաց, որք երե-
ւելիքն իսկ են յԱռաքեալս, որք և յառաջ իսկ քան
8 զիս եղեն 'ի Քրիստոս: Ողջոյն տաջիք Ամպղեայ սի-

րելոյ իմոյ 'ի Տէր։ Ողջոյն տաջիք Ուրբանեայ գոր- 9
ծակցի իմոյ 'ի Տէր, և Ստաքեայ սիրելոյ իմոյ։
Ողջոյն տաջիք Ապելլեայ՝ որ ընտիրն է 'ի Տէր։ Ող- 10
ջոյն տաջիք Նոյա՝ որ յԱրիստաբուլեայ տանէ անտի ի- 11
ցեն. ողջոյն տաջիք Հերովդիոնեայ ազգականի իմում։
Ողջոյն տաջիք այնոցիկ՝ որ 'ի Նարկիսեայ տանէն իցեն
'ի Տէր։ Ողջոյն տաջիք Տրիփոսեայ և Տրիփոնեայ՝ 12
վաստակաւորաց 'ի Տէր։ Ողջոյն տաջիք Պերսիդեայ
սիրելոյ, որ բազում վաստակս վաստակեաց 'ի Տէր։
Ողջոյն տաջիք Ռուփայ ընտրելոյ 'ի Տէր, և մօր նորա 13
և իմոյ։ Ողջոյն տաջիք Ասինկրիտեայ, Փլեգոնտեայ, 14
Երմայ, Պատրովբայ, Երմեայ, և որ ընդ նոսա եղ-
բարք իցեն։ Ողջոյն տաջիք Փիլողգեայ և Յուլեայ, 15
Ներեայ և քեռ նորա և Ողիմպիայ, և որ ընդ նոսա
սուրբք ամենեքին իցեն։ Ողջոյն տաջիք միմեանց 'ի 16
համբոյր սրբութեան։ Ողջոյն տան ձեզ ամենայն ե-
կեղեցիք Քրիստոսի։

ԻԶ. Աղաչեմ զձեզ, եղբարք, դիտել զայնպիսիսն՝ 17
որ հերձուածս և գայթագղութիւնս առնիցեն ար-
տաքոյ վարդապետութեանն՝ զոր դուքն ուսարուք.
և խորշեցարուք 'ի նոցանէ։ Զի այնպիսիքն Տեառն 18
մերոյ Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայ-
նին. և քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատ-
րեն զսիրտս անմեղաց։ Զի ձեր հնազանդութիւնդ 19
առ ամենեսեան հասեալ է. և արդ 'ի ձեզ ուրախ
եմ. բայց կամիմ զձեզ իմաստունս լինել 'ի բարիս և
անմեղս 'ի չարիս. և Աստուած խաղաղութեան խոր- 20
տակեսցէ զսատանայ ընդ ոտիւք ձերովք մերձ ընդ
մերձ։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
ընդ ձեզ։ Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս եղբայր և գոր- 21
ծակից իմ, և Ղուկիոս և Յասոն և Սոսիպատրոս,
ազգականք իմ։ Ողջոյն տամ ձեզ և ես Տերտիոս, որ 22
զթուղթս գրեցի 'ի Տէր։ Ողջոյն տայ ձեզ Գայիոս 23
ասպնջական իմ, և ամենայն եկեղեցւոյն։ Ողջոյն տայ
ձեզ Երաստոս շահապ քաղաքիս, և Կուարտոս եղ-

24 բայր։ Այլ այնմ որ կարօղն է հաստատել զձեզ
ըստ աւետարանիս իմում, և ըստ քարոզութեանն
Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրր-
25 դոյն, ժամանակօքն յաւիտենից լռեցելոյ, և յայտ-
նելոյ այժմիկ 'ի ձեռն գրոց մարգարէականաց, ըստ
հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, 'ի հնազան-
դութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծանու-
26 ցելոյ, միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, 'ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի. նմա փառք յաւիտեանս յաւի-
27 տենից. ամէն։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ձեզ ամենեսին։

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ ԳՐԵՑԱՒ Ի ԿՈՐՆԹՈՍԷ Ի ՁԵՌՆ
ՓԻԲԵԱՑ ՍԱՐԿԱՒԱԳԻ։

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԴ. Պաւղոս կոչեցեալ Առաքեալ Յիսուսի 1
Քրիստոսի՝ կամօքն Աստուծոյ, և Սոսթենէս եղ-
բայր. եկեղեցւոյդ Աստուծոյ որ է'ի Կորնթոս, նուի- 2
րելոց 'ի Քրիստոս Յիսուս՝ կոչեցելոց սրբոց, ամե-
նեքումբք հանդերձ որ կարդան զանուն Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն տեղիս նոցա և
մեր: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստու- 3
ծոյ Հօրէ մերմէ, և 'ի տեառնէ Յիսուսէ Քրիստո-
սէ: Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ 4
վասն ձեր՝ 'ի վերայ շնորհացն Աստուծոյ որ տուեալ
են ձեզ 'ի Քրիստոս Յիսուս. զի յամենայնի մե- 5
ծացարուք դուք նովաւ՝ ամենայն բանիւ, և ամե-
նայն գիտութեամբ, որպէս վկայութիւնն իսկ Աս- 6
տուծոյ հաստատեցաւ 'ի ձեզ. զի դուք մի նուազի- 7
ցիք և մի իւիք շնորհօք, ակն կալեալ յայտնութեանն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ և հաստա- 8
տեսցէ զձեզ մինչև 'ի կատարած անարատս յօրն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Հաւատարիմ 9
է Աստուած, որով կոչեցարուք 'ի հաղորդութիւն որ-
դւոյ նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:
ԱԶ. Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն Տեառն 10
մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի զնոյն բան ունիցիք
ամենեքեան, և մի լիցին 'ի ձեզ հերձուածք. քան-

զի էիք հաստատեալք 'ի նոյն միտս և 'ի նոյն հան-
11 ճար: Ազդ եղև ինձ վասն ձեր, եղբարք, 'ի քղոա-
12 ցւոց անտի, թէ հակառակութիւնք են 'ի ձեզ. և
արդ ասեմ իսկ, եթէ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ ա-
սէ. ես պաւղոսեան եմ, և միւսն՝ եթէ ես ապողո-
սեան, և միւսն՝ եթէ ես կեփայեան, և միւսն՝ եթէ
13 ես քրիստոսեան. իսկ արդ բաժանեա՞լ ինչ իցէ Քրիս-
տոս. մի թէ Պաւղո՞ս 'ի խաչ ելեալ իցէ վասն ձեր,
14 կամ յանո՞ւն Պաւղոսի մկրտեցարուք: Գոհանամ
զԱստուծոյ իմոյ՝ զի ոչ զոք 'ի ձէնջ մկրտեցի. բայց
15 միայն զԿրիսպոս և զԳայիոս, զի մի ոք ասիցէ, թէ
16 յիմ անուն մկրտեցարուք. տալ եւտու կնիք և տանն
Ստեփանեայ. զայլ ոք ոչ գիտեմ ամենևին թէ մը-
17 կրտեցի. զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել՝
այլ աւետարանել, ոչ ճարտարութեամբ բանից, զի մի
18 ընդունայն լիցի խաչն Քրիստոսի: Զի ճառ խաչին
կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ զօ-
19 րութիւն Աստուծոյ: Զի գրեալ է. Կորուսից զի-
մաստութիւն իմաստնոց, և զխորհուրդս խորհրդա-
20 կանաց արհամարհեցից: Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր,
ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարե-
ցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ:
21 Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշ-
խարհ իմաստութեամբն զԱստուած, հաճեցաւ Աս-
տուած յիմարութեամբ քարոզութեանն ապրեցու-
ցանել զհաւատացեալս:
22 ԲԿ. Իսկ որովհետև Հրեայք նշան հայցեն, և հե-
23 թանոսք իմաստութիւն խնդրեն, մեք քարոզեսցուք
զխաչելեալն Քրիստոս՝ Հրէից գայթագղութիւն և
24 հեթանոսաց յիմարութիւն. բայց նոցին իսկ կոչեցե-
լոցն Հրէից և հեթանոսաց՝ զՔրիստոս՝ Աստուծոյ
25 զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն. զի յիմարն
Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ, և տկարն
26 Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ: Թէպէտ և
զձեր իսկ կոչումնդ տեսէք, եղբարք, զի ոչ բազում

իմաստունք ըստ մարմնոյ, և ոչ բազում հզօրք, և
ոչ բազում ազնուականք. այլ զյիմարս աշխարհիս
ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զիմաս֊ 27
տունս. և զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած,
զի յամօթ արասցէ զհզօրս. և զանտոհմս աշխարհի 28
և զարհամարհեալս ընտրեաց Աստուած՝ և զոչինչսն,
զի զէսն իմն խափանեսցէ. որպէս զի մի պարծեսցի 29
ամենայն մարմին առաջի Աստուծոյ։ Զի 'ի նմանէ 30
դուք էք 'ի Քրիստոս Յիսուս, որ եղև մեզ իմաս֊
տութիւն յԱստուծոյ՝ արդարութիւն և սրբութիւն
և փրկութիւն. զի որպէս և գրեալ է. Որ պարծին 31
'ի Տէր պարծեսցի։

ԳԼՈՒԽ Բ

Եւ ես թէպէտ և եկի առ ձեզ, եղբարք, ոչ ըստ 1
առաւելութեան ինչ բանից իմաստութեան պատ֊
մել ձեզ զվկայութիւնն Աստուծոյ։ Զի ոչ եթէ 'ի 2
մտի եդի գիտել ինչ 'ի ձեզ, բայց միայն զՅիսուս
Քրիստոս, և զնոյն 'ի խաչ ելեալ. և ես տկարու֊ 3
թեամբ և երկիւղիւ և դողութեամբ բազմաւ եղէ
առ ձեզ. և բանն իմ և քարոզութիւն՝ ոչ պատիր 4
բանիւք իմաստութեան, այլ արդեամբք Հոգւոյն
և զօրութեամբ. զի հաւատք ձեր մի իցեն իմաս֊ 5
տութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստու֊
Կ.ԵՐՁ) ծոյ։

Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս, զի֊ 6
մաստութիւն ոչ զաշխարհիս այսորիկ և ոչ զիշխա֊
նաց աշխարհիս այսորիկ զխափանելեացս, այլ խօ֊ 7
սիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ խորհր֊
դով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց
Աստուած 'ի փառս մեր. զոր ոչ ոք յիշխանաց աշ֊ 8
խարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ,
ոչ արդեօք զՏէր փառացն 'ի խաչ հանէին։ Այլ որ֊ 9

պէս և գրեալ է, զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լը֊
ւաւ, և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց
Աստուած սիրելեաց իւրոց։
10 Բդ. Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւ֊
րով. զի Հոգին զամենայն քննէ՝ և զխորս Աստուծոյ.
11 զի ո՞ ոք 'ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ
հոգի մարդոյն որ 'ի նմա. նոյնպէս և ոչ զաստուծոյսն
12 ոք գիտէ, եթէ ոչ Հոգին Աստուծոյ։ Այլ մեք ոչ
եթէ զհոգի աշխարհիս այսորիկ առաք, այլ զՀոգին
որ յԱստուծոյ. զի ծանիցուք զայն որ յԱստուծոյն
13 շնորհեցաւ մեզ։ Եւ զոր խօսիմքս՝ ոչ եթէ մարդկե֊
ղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ վարդա֊
պետութեամբ Հոգւոյն՝ ընդ հոգևորս զհոգևորսն
14 համեմատեմք. քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի ըզ֊
Հոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա. և ոչ
15 կարէ գիտել՝ եթէ հոգեպէս քննիցի. իսկ հոգևորն
16 քննէ զամենայն, և ինքն յումեքէ ոչ քննի։ Իսկ
արդ ո՞վ գիտաց զմիտս Տեառն, որ և խրատու լինիցի
նմա. այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք։

ԳԼՈՒԽ Գ

1 Եւ ես, եղբարք, ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբ֊
2 րև ընդ հոգևորս՝ այլ իբրև ընդ մարմնաւորս։ Իբրև
տղայոց 'ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ՝ և ոչ կե֊
րակուր. զի ոչ ևս կարէիք. նա և արդ իսկ ոչ կարէք.
3 քանզի դեռ մարմնաւոր էք. ուր և արդ են իսկ 'ի
ձեզ հեռ և նախանձ. ո՞չ ապաքէն մարմնաւոր էք և
4 ըստ մարդկան գնայք։ Յորժամ ասէ ոք 'ի ձէնջ՝ ես
պաւղոսեան եմ, և միւսն՝ եթէ ես ապողոսեան, ոչ
մարդի՞կ էք։ Իսկ արդ ո՞վ է Պաւղոս, կամ ո՞վ Ապո֊
5 ղոս. պաշտօնեայք՝ որովք հաւատացէքն, և իւրա֊
6 քանչիւր որպէս Տէր ետ. ես տնկեցի, Ապողոս ջուր
7 ետ, այլ Աստուած աճեցոյց։ Այսուհետև ոչ այն ինչ

ոք է՝ որ տնկեացն, և ոչ այն՝ որ ջուրն ետ. այլ որ ա-
ճեցոյցն Աստուած. որ տնկեացն, և որ զջուրն ետ, 8
մի են. բայց իւրաքանչիւր ոք զիւր վարձս առնուցու
ըստ իւրում վաստակոյ: Զի Աստուծոյ գործակից 9
եմք, Աստուծոյ արդիւն էք, Աստուծոյ շինած էք:
Ըստ շնորհացն Աստուծոյ որ տուեալ են ինձ, իբրև 10
իմաստուն ճարտարապետ հիմն եդի. բայց այլ է որ
շինէն. այլ իւրաքանչիւր ոք զգոյշ լիցի՝ թէ որպէս
շինիցէ, զի հիմն այլ՝ ոք ոչ կարէ դնել քան զե- 11
ՎԵՐՋ) դեալն՝ որ է Յիսուս Քրիստոս:

Եթէ ոք շինէ 'ի վերայ հիմանս այսորիկ ոսկի, 12
արծաթ, ականս պատուականս, փայտ, խոտ, ե-
ղէգն, իւրաքանչիւր գործն յայտնելոց է. զի օրն 13
ընտրեսցէ. զի հրով յայտնելոց է. և զիւրաքանչիւր 14
գործն զիարդ և իցէ՝ հուրն փորձեսցէ: Եթէ ու- 15
րուք գործն զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ. և ե-
թէ ուրուք գործն այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն
կեցցէ. այլ այնպէս՝ որպէս թէ 'ի հուր: Ո՞չ գիտէք 16
եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բը-
նակեալ է 'ի ձեզ. եթէ ոք զտաճար Աստուծոյ ապա- 17
կանէ, ապականեսցէ զնա Աստուած. զի տաճար Աս-
տուծոյ սուրբ է, որ էք դուք: Մի՛ ոք զանձն խաբեսս- 18
ցէ. եթէ ոք կամիցի 'ի ձէնջ իմաստուն լինել յաշ-
խարհիս յայսմիկ, յիմար լիցի՝ զի եղիցի իմաստուն:
Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յիմարու- 19
թիւն է առաջի Աստուծոյ. քանզի գրեալ է, թէ որ
ըմբռնէ զիմաստունս 'ի խորագիտութեան իւրեանց. 20
և դարձեալ՝ թէ Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստ-
նոց, զի են ընդունայն: Այսուհետև մի՛ ոք պար- 21
ծեսցի 'ի մարդկանէ. զի ամենայն ինչ ձեր է. եթէ 22
Պաւղոս, եթէ Ապողոս, եթէ Կեփաս, եթէ աշ-
խարհ, եթէ կեանք, եթէ մահ, եթէ որ կան, ե-
թէ հանդերձեալքն. ամենայն ինչ ձեր է. դուք 23
Քրիստոսի, Քրիստոս Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Դ

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրև զպաշ-
տօնեայս Քրիստոսի և հազարապետս խորհրդոցն
2 Աստուծոյ: Արդ խնդիր է 'ի մէջ հազարապետաց,
3 եթէ ոք հաւատարիմ գտցի: Այլ ինձ և այս ա-
նարգանք են, եթէ 'ի ձէնջ դատեցայց կամ ընաւ
4 իսկ 'ի մարդկանէ. նա և զանձն իմ ոչ քննեմ. զի ոչ
ինչ գիտեմ զանձին իմոյ. այլ ոչ եթէ այսու արդա-
5 րանամ, զի որ քննէն զիս՝ Տէր է: Այսուհետև մի՛
յառաջ քան զժամանակն դատիք, մինչև եկեսցէ
Տէր որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, և
յայտնիցէ զխորհուրդս սրտից. և ապա իւրաքանչիւր
6 գովութիւն եղիցի յԱստուծոյ: Զայս, եղբարք, ա-
ռակեցի յանձն իմ և յԱպողոս վասն ձեր. զի 'ի
մէնջ ուսջիք՝ մի՛ ինչ առաւել քան զգրեալսն իմա-
նալ. զի մի՛ այր քան զընկեր հպարտանայցէք 'ի վե-
7 րայ ընկերին: Իսկ արդ ո՞վ է որ քննիցէ զքեզ. զի՞նչ
ունիս զոր ոչ իցէ առեալ. և եթէ առեր՝ զի՞ պար-
8 ծիս իբրև զչառեալ: Արդէն իսկ յագեալ իցէք, և
արդէն մեծացարուք, առանց մեր թագաւորեցէք.
և երանի՛ թէ թագաւորէիք, զի և մեք ընդ ձեզ թա-
9 գաւորէաք: Ինձ այսպէս թուի՝ թէ զմեզ զԱռա-
քեալս յետնորդս արար Աստուած՝ իբրև զմահա-
պարտս. զի տեսիլ եղեաք աշխարհի և Հրեշտակաց
10 և մարդկան: Մեք յիմարք վասն Քրիստոսի, և
դուք իմաստունք 'ի Քրիստոս. մեք տկարք՝ և դուք
11 հզօրք, դուք փառաւորեալք՝ և մեք անարգք. մինչև
ցայսօր ժամանակի և քաղցեաք, և ծարաւեցաք, և
մերկ գնացաք, և կռփահարեցաք, և անհանգիստե-
12 ղեաք, և աշխատեցաք ձեռօք մերովք. բամբասէին
զմեզ՝ օրհնէաք, հալածէին՝ յանձն առնուաք, հայ-
13 հոյէին՝ աղաչէաք. իբրև առակ նշաւակի եղեաք ա-

մենայն աշխարհի, ամենեցուն փարելի լինել մինչև
ցայժմ։ Ոչ եթէ յամօթ ինչ առնելով զձեզ՝ գրեմ 14
զայս, այլ իբրև զորդիս սիրելիս խրատեմ. Թէպէտ 15
և բիւր դաստիարակս ունիցիք 'ի Քրիստոս, այլ ոչ
եթէ բազում հարս. զի 'ի Քրիստոս Յիսուս Ա-
ւետարանաւն ես ծնայ զձեզ։ Արդ աղաչեմ զձեզ՝ 16
նմանօղք ինձ եղիջիք. վասն այնորիկ առաքեցի առ 17
ձեզ զՏիմոթէոս, որ է իմ որդի սիրելի և հաւատա-
րիմ 'ի Տէր. որ յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ
որ 'ի Քրիստոս Յիսուս, որպէս և ամենայն ուրեք՝
յամենայն եկեղեցիս ուսուցանեմ։ Որպէս թէ չի- 18
ցեմ գալոց առ ձեզ՝ ոմանք հպարտացան. այլ եկից 19
հուպ ընդ հուպ՝ եթէ Տէր կամեսցի, և 'ի միտ ա-
ռից՝ ոչ զբանս հպարտացելոցն, այլ զզօրութիւն.
զի ոչ եթէ բանիւք է արքայութիւն Աստուծոյ, այլ 20
զօրութեամբ։ Արդ ո՞րպէս կամիք. գաւազանաւ ե- 21
կից առ ձեզ, եթէ սիրով Հոգւոյն հեզութեան և
արդարութեան և խոնարհութեան։

ԳԼՈՒԽ Ե

Բնաւ և անուանի իսկ 'ի ձեզ ընդէ՞ր պոռնկու- 1
թիւն, և այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ և 'ի հե-
թանոսս, որպէս թէ զկին հօր իւրոյ ունել. և դուք 2
հպարտացեալ էք, և ոչ առաւել զգացարուք, զի
բարձցի 'ի միջոյ ձերմէ որ զգործն զայն գործեաց։
Զի ես թէպէտ և մարմնով մեկուսի եմ, սակայն 3
հոգւով մերձ եմ. բայց արդէն իսկ իբրև 'ի մօտոյ
ընտրեցի, զայն որ այնպէսն գործեաց, յանուն 4
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ժողովել ձեզ 'ի
միասին և իմոյ հոգւոյս՝ զօրութեամբն հանդերձ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, մատնել զայն- 5
պիսին սատանայի 'ի սատակումն մարմնոյ, զի ոգին
ապրեսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի։ Ոչ բարւօք են պարծանքդ ձեր. ո՞չ գիտէք 6

եթէ փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ.
7 սրբեցէք 'ի բաց զհին խմորն, զի եղիջիք նոր զան-
գուած, որպէս էքդ անխմորք. քանզի զատիկ մեր
8 զենաւ Քրիստոս։ Այսուհետև արասցուք տօնս՝ մի
'ի խմորն հին և մի 'ի խմորն չարութեան և անզգա-
մութեան, այլ յանխմոր ստուգութեան և ճշմար-
տութեան։

9 ԲԶ. Գրեցի ձեզ 'ի թղթի այդր չխառնակել ընդ
10 պոռնիկս. և ոչ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս այսո-
րիկ, կամ ընդ ագահս, կամ ընդ յափշտակօղս,
կամ ընդ կռապաշտս. ապա թէ ոչ՝ պարտ էիք և
11 յաշխարհէ իսկ ելանել. բայց արդ գրեցի ձեզ չխառ-
նակել, եթէ ոք եղբայր անուանեալ՝ կամ պոռնիկ ի-
ցէ, կամ կռապաշտ, կամ ագահ, կամ բամբա-
սօղ, կամ արբեցօղ, կամ յափշտակօղ, ընդ այնպի-
12 սումն և հաց մի ուտել։ Զի՞ կայ իմ և զարտաքինսն
13 դատել. ո՞չ ապաքէն դուք զներքինսն դատիցիք, և
զարտաքինսն Աստուած դատիցի. բարձէք զչարն 'ի
միջոյ ձերմէ։

ԳԼՈՒԽ Զ

1 Իշխէ՞ ոք 'ի ձէնջ, եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի
իւրում, դատել առաջի անիրաւաց, և ոչ առաջի սըր-
2 բոց. եթէ ո՞չ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատին.
և եթէ ձեօք դատի աշխարհ, ապա ոչ էք արժանի
3 անարգ ատենից. ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դա-
4 տիմք, թող թէ զերկրաւորս։ Զերկրաւոր ատեանս
եթէ յանձն առնուցուք՝ զանարգս եկեղեցւոյ դատա-
5 ւորս նստուցանէք. առ ամօթոյ ձերոյ ասեմ, այնչափ
ո՞չ գոյ ոք իմաստուն 'ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտ-
6 րել 'ի մէջ եղբօր իւրոյ, այլ եղբայր ընդ եղբօր դա-
7 տի, և զայն 'ի մէջ անհաւատից։ Եւ արդ ամենևին
իսկ վատթարութիւն է 'ի ձեզ, զի դատաստանք իսկ
8 գոն 'ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք զրկիք, և ոչ դուք

առաւել նեղէք, այլ դուք զրկէք և նեղէք, և այդ
զեղբարս ևս: Եթէ ոչ գիտէք՝ զի անիրաւք զար- 9
քայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն. մի խաբիք,
ոչ պոռնիկք, ոչ կռապաշտք, ոչ շունք, ոչ իգա- 10
ցեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք, ոչ ար-
բեցողք, ոչ բամբասողք, և ոչ յափշտակողք՝ զար-
քայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն: Եւ դուք 11
այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք, այլ սրբե-
ցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի, և 'ի Հոգին Աստուծոյ մերոյ:

գկ. Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն 12
ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ե-
թէ ես ընդ իշխանութեամբ ուրուք լինիցիմ: Կե- 13
րակուրք որովայնի, և որովայն կերակրոց. այլ Աս-
տուած զսա և զնոսա խափանեսցէ. բայց մարմին՝ ոչ
պոռնկութեան, այլ Տեառն, և Տէր մարմնոյ. այլ 14
Աստուած՝ որ և զՏէրն յարոյց, և զմեզ յարուսցէ
զօրութեամբ իւրով: Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր 15
անդամք են Քրիստոսի. արդ առեալ զանդամս
Քրիստոսի, առնիցեմք անդամս պոռնկի՞. քաւ լի-
ցի: Եթէ ոչ գիտէք, զի որ մերձենայ 'ի պոռնիկ՝ 16
մի մարմին է. եղիցին, ասէ, երկոքին 'ի մարմին մի.
և որ մերձենայ 'ի Տէր, մի հոգի են. փախերուք 17
'ի պոռնկութենէ: Զամենայն մեղս զոր և գործէ
մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է, իսկ որ պոռնկին՝
յիւր մարմինն մեղանչէ: Եթէ ոչ գիտէք, զի մար- 19
մինք ձեր տաճար են Հոգւոյն որ է 'ի ձեզ՝ զոր ու-
նիքն յԱստուծոյ. և չէք անձանց տէր, քանզի գնոց
գնեցայք. փառաւոր արարէք զԱստուած 'ի մար- 20
մինս ձեր:

ԳԼՈՒԽ Է

1 Այլ վասն որոյ գրեցէքն առ իս, բարւոք է մար-
2 դոյ 'ի կնոջ մերձենալ. բայց վասն պոռնկու-
թեան, իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի, և իւրա-
3 քանչիւր ոք կին՝ զիւր այր կալցի. կնոջ՝ այր իւր ըղ-
պարտն հատուսցէ, նոյնպէս և կինն՝ առն իւրում.
4 զի կին մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նոյնպէս
5 և այրն իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն: Մի զըր-
կէք զմիմեանս, բայց եթէ ինչ 'ի միաբանութենէ
առ ժամանակ մի, զի ուխտիցն պարապիցէք, և դար-
ձեալ 'ի նոյն դարձջիք. զի մի փորձեսցէ զձեզ սատա-
6 նայ վասն անխառնութեանն ձերոյ: Զայս ասեմ
7 ներելով, և ոչ հրաման տալով. քանզի կամիմ եթէ
ամենայն մարդ լինէր իբրև զիս. այլ իւրաքանչիւր ոք
զիւր շնորհս ունի յԱստուծոյ, ոմն այսպէս և ոմն այն-
8 պէս: Բայց ամուրեացն և այրեացն ասեմ, լաւ է նոցա
9 թէ կայցեն իբրև զիս. ապա թէ ոչ ունիցին ժոյժ, ա-
մուսնասցին. զի լաւ է ամուսնանալ քան զջեռնուլ:
10 Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ Տէր, կնոջ
11 յառնէ մի մեկնել. ապա եթէ մեկնեսցի, անայր մը-
նասցէ, կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի.
ՎԵՐՋ) և առն՝ զկին իւր մի թողուլ:
12 Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տէր. ե-
թէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, և նմա հա-
13 ճոյ իցէ բնակել ընդ նմա, մի թողցէ զնա. և կին
որ ունիցի այր անհաւատ, և նմա կամ իցէ բնակել
14 ընդ նմա, մի թողցէ զայրն. զի սուրբ է այրն անհա-
ւատ՝ կնաւն, և սուրբ է կինն անհաւատ՝ արամբն.
ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ էին. բայց այժմ սուրբ
15 են: Ապա եթէ անհաւատն մեկնիցի, մեկնեսցի. զի
ոչ ինչ հարկ 'ի վերայ կայ եղբօրն կամ քերն յայն-
պիսի իրս. քանզի 'ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աս-
16 տուած: Զի՞ գիտես կին դու՝ եթէ զայր քո ապրե-

ցուսցես, կամ զի՞ գիտես այր դու՝ եթէ զկին քո ապ-
րեցուսցես. եթէ ոչ՝ իւրաքանչիւր ումեք որպէս և 17
բաժանեաց Տէր, զիւրաքանչիւր ոք որպէս և կոչեաց
Աստուած, այնպէս գնասցէ. և այսպէս ընդ ամենայն
եկեղեցիս պատուէր տամ: Թլփատեալ ոք կոչեցաւ, 18
մի՛ ցանկասցի անթլփատութեան. յանթլփատութե-
նէ ոք կոչեցաւ, մի՛ թլփատեսցի. զի թլփատութիւն 19
ոչ ինչ է, և անթլփատութիւն ոչ ինչ. այլ պահպա-
նութիւն Աստուծոյ պատուիրանացն. բայց իւրաքան- 20
չիւր ոք յոր կոչումն կոչեցաւ, 'ի նմին կացցէ: Ծա- 21
ռայ կոչեցար, մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ կարիցես
եւս ազատ լինել, քեզ այնպէս լաւ իցէ. զի որ 'ի Տէր 22
կոչեցեալ իցէ ծառայն, ազատ Տեառն է. նոյնպէս և
որ ազատն կոչեցեալ է, ծառայ Քրիստոսի է: Գնոց 23
գնեցայք՝ մի՛ լինիք ծառայք մարդկան. իւրաքանչիւր 24
յոր կոչումն կոչեցաւ, եղբարք, 'ի նմին կացցէ առաջի
Աստուծոյ:

Գ.Դ. Այլ վասն կուսանաց հրաման ինչ 'ի Տեառ- 25
նէ ոչ ունիմ. բայց խրատ տամ, որպէս ողորմելոյ ու-
րուք 'ի Տեառնէ, հաւատարիմ լինել. համարիմ 26
թէ այնպէս լաւ իցէ. բայց վասն վտանգին որ 'ի վե-
րայ կայ, բարւոք է մարդոյ թէ այսպէս իցէ: Կա- 27
պեալ ես 'ի կին, մի՛ խնդրեր արձակել. արձակեալ
ես 'ի կնոջէ, մի՛ խնդրեր կին. զի եթէ ամուսնանայ- 28
ցես՝ ոչ մեղար, և եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ոչ մե-
ղաւ, բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն.
այլ ես խնայեցի 'ի ձեզ: Բայց զայս ասեմ, եղբարք, 29
եթէ ժամանակս կարճեալ է այսուհետև. զի որ ունի- 30
ցին կանայս՝ որպէս թէ չունիցին, և որ լայցենն՝ որ-
պէս թէ ոչ լայցեն, և որ խնդանն՝ որպէս թէ ոչ
խնդայցեն, և որ գնենն՝ որպէս թէ չունիցին, և որ 31
վարենն զաշխարհս՝ որպէս թէ չվայելիցեն. զի ան-
ցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ: Այլ կա- 32
միմ զձեզ անհոգս լինել. զի որ անկինն է՝ հոգայ ըզ-
Տեառն, թէ որպէս հաճոյ լիցի Տեառն. և որ կա- 33

նամբին է, հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լի-
34 ցի կնոջ իւրում: Եւ ահա մեկնեցան 'ի միմեանց
առնակինն և կոյսն. զի կոյսն հոգայ զՏեառն, զի ի-
ցէ սուրբ մարմնով և հոգւով, և առնակինն հոգայ
զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի առն իւրում:
35 Այլ զայս վասն ձերոյ օգտի ասեմ. ոչ եթէ խեղդ
ինչ արկանեմ ձեզ, այլ վասն պարկեշտութեան և
հպատակութեան Տեառն առանց զբաղանաց:
36 Գ.Զ. Ապա թէ ոք ամօթ համարեսցի վասն կու-
սին իւրոյ եթէ իցէ ելեալ ըստ չափ, և այնպէս ինչ
պարտ իցէ լինել, զոր կամի արասցէ, ոչ մեղանչէ.
37 ամուսնասցի: Իսկ որ հաստատեալ է 'ի սրտի իւ-
րում, և վտանգ ինչ ոչ իցէ նմա, իշխանութիւն ու-
նի 'ի վերայ կամաց իւրոց. և զայն ընտրեաց 'ի սըր-
38 տի իւրում՝ պահել զկոյսն իւր, բարւոք առնէ. և
որ ամուսնացուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առնէ, և որ
39 ոչն ամուսնացուցանէ՝ լաւ ևս առնէ: Կին կա-
պեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա.
ապա եթէ ննջիցէ այր նորա, ազատ է՝ ում կամիցի
40 ամուսնանալ. բայց միայն Տերամբ. բայց երանելի
ևս է՝ թէ այնպէս կացցէ ըստ իմում խրատու. ես
այսպէս համարիմ՝ թէ և յիս իցէ Հոգի Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Ը

1 Այլ վասն զոհից կռոցն, գիտեմք եթէ ամենե-
քին գիտութիւն ունիմք. գիտութիւն հպարտացու-
2 ցանէ, այլ սէր շինէ: Եթէ ոք կամիցի գիտել ինչ,
3 չև ևս գիտաց՝ որպէս արժան է գիտել. բայց որ սի-
4 րէ զԱստուած, նա է տեղեկացեալ 'ի նմանէ: Այլ
վասն կերակրոցն զոհելոյ՝ գիտեմք եթէ ոչ ինչ իսկ
կուռքդ են յաշխարհի. զի չիք ոք Աստուած բաց 'ի
5 միոյն: Զի թէպէտ և իցեն անուանեալ աստուածք՝
եթէ յերկինս և եթէ յերկրի, որպէս և են աս-
6 տուածք բազումք և տեարք բազումք, այլ մեզ մի է

Աստուած, Հայր՝ յորմէ ամենայն, և մեք 'ի նա. և
մի տէր Յիսուս Քրիստոս, որով ամենայն, և մեք
վերջ) նովաւ։

Այլ ոչ յամենեսեան գիտութիւն է. ոմանք առ 7
խղճի մտաց մինչև ցայժմ զկռոցն իբրև զզոհեալ
ուտեն, և խիղճ մտաց նոցա՝ քանզի տկար է, պղծի։
Այլ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ոչ կացուցանէ. 8
ոչ եթէ չուտեմք՝ պակասեմք ինչ, և ոչ եթէ ու-
տեմք՝ առաւելումք ինչ. բայց զգոյշ լերուք՝ գուցէ 9
իշխանութիւնդ ձեր այդ գայթագղութիւն լինիցի
տկարացն։ Եթէ ոք տեսանիցէ զքեզ որ զգիտու- 10
թիւնդ ունիս՝ բազմեալ 'ի մեհենի, ո՞չ ապաքէն
խիղճ մտաց նորա՝ որ տկարութեամբն զգածեալ է,
անդրէն շինիցի ուտել զզոհեալսն. և կորնչիցի տկար 11
եղբայրն 'ի քում գիտութեանդ, վասն որոյ Քրիս-
տոսն մեռաւ. և այնպէս յանցուցեալ յեղբարս, և 12
զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ, 'ի Քրիստոս
մեղանչէ։ Վասն որոյ եթէ կերակուր գայթագղե- 13
ցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի
մի զեղբայրն իմ գայթագղեցուցից։

ԳԼՈՒԽ Թ

Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն Առաքեալ եմ, 1
ո՞չ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս աչօք իմովք
տեսի, ո՞չ ապաքէն գործ իմ դուք էք 'ի Տէր. Թէպէտ 2
և այլոց չիցեմ Առաքեալ, այլ դէպ ձեզ եմ. զի կնիք
իսկ առաքելութեան իմոյ դուք էք 'ի Տէր։ Իմ պա- 3
տասխանի ուր զիս հարցանիցեն՝ այս է. միթէ ո՞չ ու- 4
նիցիմք իշխանութիւն ուտել և ըմպել, միթէ ո՞չ ու- 5
նիցիմք իշխանութիւն զքորս կանայս շրջեցուցանել
ընդ մեզ, որպէս և այլ Առաքեալքն, և եղբարքն
Տեառն, և Կեփաս. եթէ միայն ես և Բառնաբաս 6
ոչ ունիցիմք իշխանութիւն չգործել ինչ։ Ո՞ ոք եր- 7
բեք զինուորիցի իւրովք թոշակօք, ո՞ ոք տնկիցէ այ-

գի՝ և 'ի պտղոյ նորա ոչ ուտիցէ, ո՞ ոք արածիցէ խաշն՝
8 և 'ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ։ Միթէ ըստ մարդ-
կութեա՞ն խօսիցիմ զայս, կամ թէ և օրէնքն զսոյն
9 ո՞չ ասիցեն. 'ի Մովսիսի իսկ օրէնսն գրեալ է. Ոչ
կապեսցես զցռուկ եզին կալոտւոյ. միթէ զեզա՞նց
10 ինչ փոյթ էր Աստուծոյ. ո՞չ ապաքէն վասն մեր ա-
սէ, քանզի վասն մեր գրեցաւ. զի յուսով պարտի որ
սերմանէն՝ սերմանել, և որ կասուն՝ յուսով վայե-
11 լել։ Եթէ մեք 'ի ձեզ զհոգևորսն սերմանեցաք,
մե՞ծ ինչ է՝ եթէ 'ի ձէնջ զմարմնաւորսդ հնձիցեմք.
12 եթէ այլք ձերով իշխանութեամբդ վայելեն, ո՞չ ա-
ռաւել ևս մեք. այլ ոչ 'ի գործ ինչ արկաք զիշխանու-
թիւնս զայս. բայց ամենայնի համբերեմք, զի մի
13 խափան ինչ լինիցիմք Աւետարանին։ Ո՞չ գիտէք՝ ե-
թէ որ 'ի տաճարին գործեն, 'ի տաճարէ անտի ու-
տեն. և որ սեղանոյն պաշտօնեայք են, 'ի սեղանոյ
14 անտի վայելեն. նոյնպէս և Տէր հրաման ետ, որոց
զԱւետարանն աւետարանեն՝ յԱւետարանէ անտի
15 կեալ։ Բայց ես և ոչ զմի ինչ յայսցանէ արկի 'ի
գործ, և ոչ գրեցի զայդ, զի ինձ այսպէս ինչ լինիցի.
լաւ է ինձ մանաւանդ մեռանել, և ոչ զի զպարծանս
16 իմ ոք ընդունայն համարիցի։ Զի եթէ աւետարա-
նեմ, ոչ ինչ են ինձ պարծանք, քանզի հարկ 'ի վե-
17 րայ կայ. բայց վայ է ինձ՝ թէ ոչ աւետարանեմ. ե-
թէ կամաւ զայն առնեմ, վարձք են ինձ. և եթէ
18 ակամայ, տնտեսութիւն յանձն է ինձ։ Եւ արդ
զի՞նչ վարձք իցեն ինձ, եթէ յաւետարանելն ձրի
տաց զԱւետարանն, զի մի զեղծիցիմ ինչ իշխանու-
19 թեամբս իմով յԱւետարանի անդ։ Քանզի ազատ
էի յամենայնէ, և ամենեցուն զանձն 'ի ծառայու-
20 թեան կացուցի, զի զբազումս շահեցայց։ Եղէ ընդ
Հրեայսն իբրև զՀրեայ, զի զՀրեայսն շահեցայց.
21 եղէ ընդ օրինօք՝ իբրև զայնոսիկ որ ընդ օրինօքն էին,
իբրև ոչ եթէ ընդ օրինօքն էի, այլ զի որ ընդ օ-
րինօքն իցեն՝ և զնոսա շահեցայց. ընդ անօրէնս եղէ

իբրև զանօրէն, իբր ոչ եթէ անօրէն ինչ էի յԱս-
տուծոյ, այլ ընդ օրինօքն Քրիստոսի, զի շահեցայց
զանօրէնսն. եղէ ընդ տկարս իբրև զտկար, զի ըզ- 22
տկարսն շահեցայց. ընդ ամենայնի ամենայն եղէ, զի
թերևս ապրեցուցից զոմանս։ Զայս ամենայն առ- 23
նեմ վասն Աւետարանին, զի կցորդ՝ եղէց նմա։

ԴԿ. Ո՞չ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ընթա- 24
նան, ընթանալ ամենեքին ընթանան, բայց մի ոք
առնու զյաղթութեանն. այնպէս ընթացարուք՝ զի
հասանիցէք։ Ամենայն որ պատերազմի, ամենայնի 25
ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն առնու-
ցուն, և մեք զանեղծութեանն։ Արդ ես իսկ այն- 26
պէս ընթանամ, ոչ որպէս յաներևոյթս. այնպէս
մրցիմ, որպէս ոչ թէ զհողմս ինչ կոծելով, այլ ճըն- 27
շեմ զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ. զի գուցէ
որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանիցիմ։

ԳԼՈՒԽ Ժ

Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք, եղբարք, զի հարքն 1
մեր ամենեքին ընդ ամպովն էին, և ամենեքին ընդ 2
ծովն անցին, և ամենեքեան 'ի Մովսէս մկրտեցան 3
յամպն և 'ի ծովն, և ամենեքին զնոյն զհոգևոր զկե-
րակուրն կերան, և ամենեքին զնոյն զհոգևոր ըմպե- 4
լին արբին. զի ըմպէին 'ի հոգևոր վիմէն որ երթայր
զհետ նոցա, և վէմն էր ինքն Քրիստոս։ Այլ ոչ ե- 5
թէ ընդ բազումս 'ի նոցանէ հաճեցաւ Աստուած.
քանզի տապաստ անկան յանապատի անդ. և այն օ- 6
րինակ լինէր վասն մեր, զի մի՛ լիցուք ցանկացողք
չարեաց, որպէս նոքայն ցանկացան։ Եւ մի՛ կռապա- 7
րիշտք լինել՝ որպէս ոմանք 'ի նոցանէ, որպէս և գը-
րեալ է. Նստաւ ժողովուրդն ուտել և ըմպել՝ և յա-
րեան 'ի խաղալ։ Եւ մի՛ պոռնկեսցուք, որպէս ոմանք 8
պոռնկեցան 'ի նոցանէ, և անկան 'ի միում աւուր
քսան և չորք հազարք. և մի՛ փորձեսցուք զՏէր, որ- 9

պէս ոմանք 'ի նոցանէ փորձեցին, և յօձից անտի սա-
10 տակեցան. և մի՛ տրտնջեսցուք, որպէս ոմանք 'ի նո-
11 ցանէ տրտնջեցին, և կորեան 'ի սատակչէ անտի։ Այլ
այն ամենայն օրինակաւ անցանէր ընդ նոսա, բայց
գրեցաւ վասն մերոյ խրատու, յորս վախճան յաւի-
տեանցն եհաս։

12 ԴԴ. Այսուհետև որ համարիցի հաստատուն կալ,
13 զգոյշ լիցի՝ գուցէ անկանիցի։ Փորձութիւն 'ի ձեր
վերայ ոչ է եկեալ՝ բաց 'ի մարդկանէ. այլ հաւա-
տարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ 'ի փորձու-
թիւն առաւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ
փորձութեանն և զելսն, զի համբերել կարասջիք։
14 Վասն որոյ, սիրելիք իմ, փախերուք 'ի կռապաշ-
15 տութենէ. իբրև ընդ իմաստունս խօսիմ, ընտրեցէք
16 ձեզէն զոր ասեմս։ Բաժակն օրհնութեան զոր օրհ-
նեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիս-
տոսի. հացն զոր բեկանեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդու-
17 թիւն է մարմնոյն Քրիստոսի։ Զի մի հաց՝ մի մար-
մին եմք բազումքս. զի ամենեքին 'ի միոջէ հացէ
18 անտի վայելեմք։ Տեսէք զԻսրայէլ ըստ մարմնոյ.
ո՞չ ապաքէն որ ուտեն 'ի զոհիցն, հաղորդք են սե-
19 ղանոյն. իսկ արդ զի՞նչ ասեմ. եթէ զոհեալն իցէ՞
20 ինչ, և կամ կուռքն իսկ իցե՞ն ինչ։ Այլ զոր զո-
հենն հեթանոսք, դիւաց՝ և ոչ Աստուծոյ զոհեն.
ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել. քանզի ոչ
կարէք զբաժակն Տեառն ըմպել և զբաժակն դիւաց.
21 և ոչ կարէք 'ի սեղանոյ Տեառն վայելել և 'ի սեղա-
22 նոյ դիւաց. եթէ նախանձ ինչ արկանիցեմք Տեառն,
23 միթէ զօրագո՞յնք իցեմք քան զնա։ Ամենայն ինչ
ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ օգուտ է. ամե-
նայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն ինչ շինէ.
24 մի՛ ոք զանձին ևեթ խնդրեսցէ, այլ և զընկերին։ Ա-
25 մենայն ինչ որ 'ի սպանդանոցի վաճառի, կերայք՝ և
26 մի՛ խտրէք վասն խղճի մտաց. զի Տեառն է երկիր
ԿԵՐԶ) լրիւ իւրով։

Եթէ ոք կոչեսցէ զձեզ յանհաւատից, և կամի֊ 27
ցիք երթալ, զամենայն ինչ որ առաջի դնիցի՝ կե֊
րայք, և մի՛ խտրէք վասն խղճի մտաց. ապա թէ ոք 28
ասասցէ ձեզ՝ թէ այդ զոհեալ է, մի՛ ուտիցէք վասն
նորա՝ որ գուշակն եղև, և վասն խղճի մտացն: Այլ 29
զխիղճ մտացն ասեմ՝ ոչ զիւրն, այլ զընկերին. իսկ
ընդէ՞ր ընաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոյ խղ֊
ճէ մտաց. եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյ֊ 30
իցիմ, վասն որոյ ես գոհանամ: Արդ եթէ ուտի֊ 31
ցէք եթէ ըմպիցէք, եթէ զինչ և գործիցէք, զամե֊
նայն ինչ ՚ի փառս Աստուծոյ արասջիք. առանց գայ֊ 32
թագղութիւն դնելոյ Հրէից և հեթանոսաց՝ լինի֊
ցիք, և եկեղեցւոյն Աստուծոյ: Որպէս և ես ամենե֊ 33
ւին ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ զանձին
օգուտ, այլ զբազմաց զի ապրեսցին:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԴՋ. Նմանօղք ինձ եղերուք, որպէս և ես Քրիս֊ 1
տոսի: Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ յիշէք, և 2
որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք:
Կամիմ զի գիտիցէք դուք, եթէ առն ամենայնի 3
գլուխ Քրիստոս է, և գլուխ կնոջ այր, և գլուխ
Քրիստոսի Աստուած: Ամենայն այր յորժամ յա֊ 4
ղօթս կայցէ կամ մարգարէանայցէ, և զգլուխն ծած֊
կեալ ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր. և ամե֊
նայն կին յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէա֊ 5
նայցէ բացաւ գլխով, յամօթ առնէ զգլուխն իւր,
զի այնպէս համարի՝ թէ գերծեալ իցէ: Զի եթէ 6
ոչ սքողեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր. ապա թէ
անպատեհ է կնոջ փոքրել կամ գերծուլ, սքողեսցի:
Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ, զի պատկեր 7
և փառք Աստուծոյ է. իսկ կին՝ փառք առն իւրոյ. 8
զի ոչ եթէ այր ՚ի կնոջէ է, այլ կին յառնէ. քանզի 9

ոչ իսկ հաստատեցաւ այր վասն կնոջ, այլ կին վասն
10 առն. վասն այնորիկ պարտի կինն շուք դնել գլխոյն
11 վասն Հրեշտակաց: Բայց ոչ կին առանց առն, և ոչ
12 այր առանց կնոջ ՚ի Տէր. զի որպէս կին յառնէ, նոյն֊
պէս և այր ՚ի կնոջէ. բայց ամենայն յԱստուծոյ:
13 Այլ դուք ձեզէն տուք զիրաւ. արժա՞ն է կնոջ մար֊
14 դոյ հոլանի յաղօթս կալ առաջի Աստուծոյ. և ո՞չ
բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ, զի այր եթէ գի֊
15 սաւոր է՝ անարգանք են նմա, բայց կին եթէ գիսա֊
ւոր է՝ փառք են նմա. զի գէսք փոխանակ զգեստու
16 տուեալ են նմա: Ապա թէ ոք կամի հակառակօղ լի֊
նել, մեք չունիմք այնպիսի սովորութիւն, և ոչ ե֊
ՎԵՐՋ) կեղեցիքն Աստուծոյ:
17 Այլ զայս պատուիրեմ, ոչ որպէս թէ գովիցեմ,
18 զի ոչ ՚ի լաւ անդր՝ այլ ՚ի վատթարն նկրտիք: Նախ՝
յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին, լսեմ
եթէ հերձուածք գոն ՚ի ձեզ. և սակաւ ինչ հաւա֊
19 տամ. բայց և հերձուածք լինելոց են ՚ի ձեզ, զի որ
20 ընտիրքն իցեն ՚ի ձեզ՝ երևեսցին: Եւ արդ ՚ի ժո֊
ղովելն ձեզ ՚ի միասին, ոչ է տուն Տեառն ձեզ տեղի
21 հաց ուտելոյ. զի իւրաքանչիւր ոք զիւր ընթրիս յա֊
ռաջանայ ուտել, և ոմն քաղցեալ, և ոմն արբեալ:
22 Միթէ տունս ո՞չ ունիցիք ուտելոյ և ըմպելոյ. եթէ
զեկեղեցեա՞ն Աստուծոյ արհամարհէք, և յամօթ
առնէք զչքաւորսն. զի՞նչ ասացից, գովեցի՞ց զձեզ.
23 յայդմ ոչ գովեմ: Զի ես ընկալայ ՚ի Տեառնէ, զոր
և ձեզն աւանդեցի, եթէ տէր Յիսուս ՚ի գիշերին
24 յորում մատնէր՝ առ հաց, գոհացաւ, եբեկ և ա֊
սէ. Այս է իմ մարմին որ վասն ձեր. զայս արարէք
25 առ իմոյ յիշատակի: Նոյնպէս և զբաժակն յետ ընթ֊
րեացն առ և ասէ. Այս բաժակ նոր ուխտ է ի֊
մով արեամբ. զայս արարէք քանիցս անգամ թէ
26 ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի: Քանիցս անգամ
թէ ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք,
27 զմահն Տեառն պատմեցէք, մինչև եկեսցէ նա: Այ֊

սուհետև որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս
Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի
մարմնոյ և արեանն Տեառն. փորձեսցէ մարդ զանձն 28
իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ, և 'ի բաժա-
կէն արբցէ. զի որ ուտէ և ըմպէ անարժանու- 29
թեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ և ըմ-
պէ. զի ոչ խտրէ զմարմինն Տեառն: Վասն այնորիկ 30
իսկ են 'ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք, և
շատ ևս այն են՝ որ և ննջեցեալքն իսկ իցեն: Զի 31
եթէ զանձինս քննէաք, ապա ոչ դատապարտէաք.
և եթէ դատիմք՝ 'ի Տեառնէ խրատիմք, զի մի ընդ 32
աշխարհի դատապարտեսցուք: Այսուհետև, եղ- 33
բարք, յորժամ 'ի մի վայր ժողովիցիք ուտել՝ միմեանց
մնասջիք. ապա թէ ոք քաղցեալ իցէ, 'ի տան իւ- 34
րում կերիցէ, զի մի 'ի դատապարտութիւն ժողովի-
ցիք: Բայց զայլ ինչ յորժամ եկից, յայնժամ պա-
տուիրեցից:

ԳԼՈՒԽ ԺԲ

ԵԿ. Այլ վասն հոգևորացն, ոչ կամիմ եթէ 1
տգէտք իցէք. գիտէք իսկ՝ զի մինչ հեթանոսքն էիք՝ 2
առ կուռս անմռունչս որպէս երթայիք և գայիք:
Վասն որոյ ցուցանեմ ձեզ, զի ոչ ոք Հոգւով Աստու- 3
ծոյ խօսի, և ասիցէ թէ նզովեալ Յիսուս. և ոչ ոք
կարէ ասել տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն սրբով:
Թէպէտ և բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է, 4
եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է, ե- 5
թէ բաժինք յաջողութեանց են, այլ Աստուած նոյն 6
է՝ որ աջողէ զամենայն յամենայնի: Բայց իւրաքան- 7
չիւր ումեք տուեալ է յայտնութիւն Հոգւոյն՝ առ
իւրաքանչիւր օգուտ: Ումեմն 'ի Հոգւոյն տուեալ է 8
բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ
նմին Հոգւոյ, միւսումն հաւատք նովին Հոգւով, այ- 9

10 լում շնորհս բժշկութեանց նովին Հոգւով, այլում
աջողութիւնք զօրութեանց, այլում մարգարէու-
թիւն, այլում ընտրութիւն հոգւոց, այլում ազգք
11 լեզուաց, այլում թարգմանութիւնք լեզուաց. այլ
զայս ամենայն աջողէ մի և նոյն Հոգի, և բաժանէ
իւրաքանչիւր որպէս և կամի:
12 ԵԴ. Որպէս մարմին մի է, և անդամս բազումս
ունի, և ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի
13 մարմին է, նոյնպէս և Քրիստոս. քանզի միով
Հոգւով մեք ամենեքեան 'ի մի մարմին մկրտեցաք,
եթէ Հրեայք, եթէ հեթանոսք, եթէ ծառայք,
14 եթէ ազատք, ամենեքին զմի Հոգի արբաք: Քան-
15 զի մարմին ոչ մի անդամ է, այլ բազում: Եթէ ա-
սիցէ ոտն, զի չեմ ձեռն՝ չեմ 'ի մարմնոյ անտի,
16 ոչ այնու չիցէ 'ի մարմնոյ անտի. և եթէ ասիցէ
ունկն, վասն զի չեմ ակն՝ չեմ 'ի մարմնոյ անտի, ոչ
17 այնու չիցէ 'ի մարմնոյ անտի. եթէ ամենայն մար-
մինն ակն էր, ուր էր ունկն. և եթէ ամենայն լսե-
18 լիք էին, ուր էին հոտոտելիք: Բայց արդ Աստուած
եդ զանդամսն՝ զմի մի իւրաքանչիւր 'ի նոցանէն 'ի
19 մարմին՝ որպէս և կամեցաւ. ապա թէ էր ամենայն
20 մի անդամ, ուր էր մարմին: Բայց արդ անդամք բա-
21 զումք են, և մարմին մի. ոչ կարէ ակն ասել ձեռան,
թէ չէս ինձ պիտոյ, և կամ դարձեալ գլուխն ոտից՝
22 թէ չէք ինձ պիտոյ. այլ առաւել որ թուին անդամք
23 մարմնոյն՝ թէ տկարագոյնք իցեն, կարևորք են. և
որ թուին թէ անարգագոյնք իցեն մարմնոյն, այնց
առաւելագոյն պատիւ առնեմք. և ամօթոյքն մեր
24 առաւել ևս պարկեշտութիւն ունին: Եւ պարկեշ-
տիցն մերոց չէ ինչ պիտոյ. քանզի Աստուած խառ-
նեաց զմարմինն, և նուաղին առաւել ևս պատիւ ետ,
25 զի մի իցեն հերձուածք 'ի մարմնի անդ, այլ զի
26 նոյնք զմիմեանց հոգայցեն անդամքն: Եւ եթէ վըշ-
տանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն անդամքն
ընդ նմա, և եթէ փառաւորի մի անդամն, խնդան

ամենայն անդամքն ընդ նմա. այլ դուք մարմինք 27
վերջ) Քրիստոսի էք և անդամք յանդամոց նորա։
Եւ զորս եդն Աստուած յեկեղեցւոջ՝ այս են. 28
նախ զԱռաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ ըզ-
վարդապետս, ապա զօրութիւնս, ապա շնորհս բժըշ-
կութեանց, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց,
թարգմանութիւնս լեզուաց։ Միթէ ամենեքի՞ն ա- 29
ռաքեալք իցեն, միթէ ամենեքի՞ն մարգարէք իցեն,
միթէ ամենեքի՞ն վարդապետք իցեն, միթէ ամենե-
քի՞ն զօրութիւնք իցեն, միթէ ամենեքի՞ն շնորհս 30
բժշկութեան ունիցին, միթէ ամենեքի՞ն 'ի լեզուս
խօսեսցին, միթէ ամենեքի՞ն թարգմանիցեն։ Բայց 31
նախանձաւորք լերուք շնորհացն, որ լաւն են. այլ ես
առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ.

ԵՋ. Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշ- 1
տակաց, և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև զպղինձ որ
հնչէ, կամ իբրև զծնծղայս որ ղօղանջեն։ Եւ եթէ 2
ունիցիմ զմարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուր-
դըս ամենայն և զամենայն գիտութիւն, և եթէ ու-
նիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխե-
լոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ։ Եւ եթէ ջամբե- 3
ցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ ըզ-
մարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգ-
տիմ։ Սէր երկայնամիտ է, քաղցրանայ. սէր ոչ նա- 4
խանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ, ոչ
յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի ըզ- 5
չար. ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ 6
ստուգութիւն. ամենայնի տանի, ամենայնի հաւա- 7
տայ, ամենեւին յուսայ, ամենայնի համբերէ։ Սէր 8
ոչ երբէք անկանի. եթէ մարգարէութիւնք են՝ խա-
փանեսցին, եթէ լեզուք՝ լռեսցեն, եթէ գիտու-
թիւն՝ խափանեսցի. քանզի փոքր 'ի շատէ գիտեմք, 9

10 և փոքր 'ի շատէ մարգարէանամք. այլ յորժամ ե-
կեսցէ կատարումն, փոքր 'ի շատէս խափանեսցի։
11 ԶԿ. Մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խօսէի, իբրև
զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի. այլ յոր-
ժամ եղէ այր, զտղայութեանն 'ի բաց խափանեցի։
12 Այժմ տեսանեմք իբրև ընդ հայելի օրինակաւ, այլ
յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմ փոքր
'ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս և նայն
13 ծանեաւ զիս։ Բայց արդ մնան հաւատք, յոյս, սէր,
սոքա երեքեան. և մեծ քան զսոսա՝ սէր է։

Գ Լ Ո Ւ Խ Ժ Դ

1 Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր լերուք
հոգևորացն, առաւել զի և դուք մարգարէանայցէք։
2 Զի որ խօսի 'ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի, այլ
ընդ Աստուծոյ. զի ոչ ոք է որ լսէ, բայց հոգւով խօ-
3 սի խորհուրդս. իսկ որ մարգարէանայն, մարդկան
խօսի շինութիւն և մխիթարութիւն և սփոփու-
4 թիւն. որ խօսի 'ի լեզուս՝ զանձն իւր շինէ, և որ
5 մարգարէանայ՝ զեկեղեցին շինէ։ Կամիմ զի ամե-
նեքին դուք 'ի լեզուս խօսիցիք, առաւել զի մարգա-
րէանայցէք. զի լաւ է որ մարգարէանայն, քան զայն
որ 'ի լեզուսն խօսիցի. բայց եթէ թարգմանեսցէ,
վերջ) զի եկեղեցին շինութիւն առնուցու։
6 Բայց այժմ, եղբարք, եթէ եկից առ ձեզ 'ի լե-
զուս խօսելով, զինչ օգուտ լինիցիմ ձեզ, եթէ ոչ
խօսիցիմ կամ յայտնութեամբ, կամ գիտութեամբ,
կամ մարգարէութ͞բ, կամ վարդապետութեամբ.
7 այնպէս՝ որպէս անշունչքն ձայն տայցեն, եթէ փող
և եթէ քնար. զի եթէ ընտրութիւն ինչ բարբա-
ռոյն չառնիցեն, զիա՞րդ ճանաչիցի փողոյն հարկանել
8 կամ քնարին հնչել. քանզի եթէ խառնաձայն ար-
ձակիցէ փողն, ո՞վ պատրաստեսցի 'ի պատերազմ։
9 Նոյնպէս և դուք՝ եթէ լեզուօք ոչ նշանակիցէք ըզ-

բանն, զիա՞րդ ճանաչիցի խօսքն. զի լինիցիք այնու-
հետև իբրև ընդ օդս խօսեցեալք: Զի այնչափ 10
ազգք ձայնից են յաշխարհի, և ոչ ինչ է անձայն.
իսկ արդ եթէ ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լի- 11
նիցիմ այնմ որ խօսիցին ընդ իս՝ խուժ, և նա որ
խօսիցին ընդ իս՝ դուժ. նոյնպէս և դուք՝ քանզի նա- 12
խանձորդք էք հոգևորացն, վասն շինածոյ եկեղեցւոյն,
խնդրեցէք՝ զի առաւել ևս իցէք: Վասն որոյ որ խօսին 13
'ի լեզուս, աղօթս արասցէ՝ զի և թարգմանիցէ. ե- 14
թէ կամ յաղօթս լեզուաւ, հոգին իմ կայ յաղօթս,
այլ միտք իմ անպտուղ են: Իսկ արդ զի՞նչ իցէ. կա- 15
ցից յաղօթս և հոգւով, կացից յաղօթս և մտօք.
սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասացից և մտօք:
Ապա թէ ոչ, եթէ օրհնեսցես հոգւով, որ կայցէ 'ի 16
տեղւոջ տգիտին, զիա՞րդ ասիցէ 'ի քում գոհու-
թեանն՝ զամէնն. քանզի զոր ասեմն՝ նա ոչ գիտէ:
Զի դու բարւոք գոհանաս, այլ ընկերն ոչ շինի: 17
Զբ. Գոհանամ զԱստուծոյ, վասն ամենեցուն 18
ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ. այլ 'ի մէջ եկեղեցւոյն
կամիմ բանս հինգ՝ մտօք խօսել, զի և զայլս խրա- 19
տիցեմ, քան զբազում բանս լեզուաւ: Եղբարք, մի 20
տղայք լինիք մտօք, այլ 'ի չարեաց տղայացարուք, և
մտօք կատարեալք լինիջիք. քանզի և յօրէնս գրեալ 21
է, եթէ յօտար լեզուս և 'ի շրթունս օտարոտիս խօ-
սեցայց ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ, սակայն և ոչ
այնպէս լուիցեն ինձ: Ապա ուրեմն լեզուք՝ նշանակի 22
վասն են, ոչ հաւատացելոց՝ այլ անհաւատից. իսկ
մարգարէութիւն, ոչ անհաւատից՝ այլ հաւատացե-
լոց: Ապա թէ գայցէ եկեղեցին ամենայն 'ի մի վայր, 23
և ամենեքին 'ի լեզուս խօսիցին, և մտանիցեն անդր
տգէտք կամ անհաւատք, ո՞չ ասիցեն եթէ զի մո-
լեգդ: Իսկ եթէ ամենեքեան մարգարէանայցեն, և 24
մտանիցէ ոք անդր անհաւատ կամ տգէտ, յանդիմա- 25
նի յամենեցունց, և քննի յամենեցունց, և գաղտնիք
սրտի նորա յայտնի լինին. և ապա անկեալ 'ի վերայ

երեսաց՝ երկիր պագանիցէ Աստուծոյ, և խոստովան
լինիցի՝ թէ արդարև Աստուած է 'ի ձեզ:
26 Զգ. Եւ արդ զի՞նչ իցէ, եղբարք. յորժամ 'ի
մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ՝ եթէ
սաղմոս ունիցի, եթէ վարդապետութիւն ունիցի, ե-
թէ յայտնութիւն ունիցի, եթէ լեզուս ունիցի, եթէ
թարգմանութիւն ունիցի, ամենայն 'ի շինած լինի-
27 ցի: Եթէ 'ի լեզուս ոք խօսիցի, երկուք, և եթէ
ևս աւելի, երեք, և ապա մի ըստ միոջէ. և մինն
28 թարգմանեսցէ. ապա թէ չիցէ ոք որ թարգմանիցէ,
լուռ լիցի յեկեղեցւոջն. ընդ միտս իւր և ընդ Աստու-
29 ծոյ խօսեսցի: Բայց մարգարէք երկու կամ երեք խօ-
30 սեսցին, և այլքն քննեսցեն. ապա թէ այլ ումեք որ
31 նստիցին՝ յայտնեսցի, առաջինն լռեսցէ: Քանզի կա-
րող էք ամենեքեան մի ըստ միոջէ մարգարէանալ.
զի ամենեքեան ուսանիցին, և ամենեքեան մխիթա-
32 րեսցին. քանզի և ոգիք իսկ մարգարէից՝ մարգա-
33 րէից հնազանդին. զի ոչ եթէ խռովութեան է Աս-
տուած, այլ խաղաղութեան՝ որպէս յամենայն եկե-
34 ղեցիս սրբոց: Կանայք յամենայն եկեղեցիս լուռ լի-
ցին, զի ոչ հրամայի նոցա խօսել, այլ հնազանդ լի-
35 նել, որպէս և օրէնքն իսկ ասեն. ապա եթէ ուսա-
նել ինչ կամիցին, 'ի տան զարս իւրեանց հարցանիցեն.
քանզի անպատեհ է կնոջ մարդոյ յեկեղեցւոջ խօսել:
36 Եթէ 'ի ձէնջ բանն Աստուծոյ ել, և կամ թէ առ
37 ձեզ միայն եհաս: Իսկ եթէ ոք համարիցի մարգարէ
լինել կամ հոգևոր, գիտասցէ զոր գրեցից առ ձեզ,
38 թէ Տեառն պատուիրանք են. ապա թէ ոք տգիտա-
39 նայցէ, տգիտասցի: Այսուհետև, եղբարք, նա-
խանձեցարուք մարգարէանալ, և զխօսելն լեզուօք մի
40 արգելուք: Եւ ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ
ՎՆՐԶ) և ըստ կարգի լինիցի:

ԳԼՈՒԽ ԺԵ

Ցուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն իմ՝ զոր 1
աւետարանեցի ձեզ, զոր և ընկալարուք, յոր և հաս֊
տատեալ էք, որով ապրեցէքն. որով բանիւ աւե֊ 2
տարանեցի թէ ունիցիք. բայց եթէ 'ի զուր ինչ հա֊
ւատացէք: Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի, զոր և 3
եմն ընկալայ, թէ և Քրիստոս մեռաւ վասն մեղաց
մերոց ըստ գրոց, և զի թաղեցաւ, թէ և յարեաւ 4
յաւուր երրորդի՝ ըստ գրոց, և թէ երեւեցաւ Կե֊ 5
փայի և ապա երկոտասանիցն, ապա երեւեցաւ աւե֊ 6
լի ևս քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն, յո֊
րոց բազումք կան մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին.
և ապա երեւեցաւ Յակոբայ, ապա Առաքելոցն ա֊ 7
մենեցուն: Հուսկ յետոյ քան զամենեսին՝ իբրև ա֊ 8
նարգի միոջ՝ երեւեցաւ և ինձ. զի ես իսկ եմ տրուպն 9
Առաքելոց, որ չեմ իսկ արժանի թէ կոչեցայց Առա֊
քեալ, զի հալածեցի զեկեղեցին Աստուծոյ. այլ շնոր֊ 10
հօքն Աստուծոյ եմ զինչ և իցեմ, և շնորհք նորա որ
յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն, այլ առաւել քան զնո֊
սա ամենեսին վաստակեցի. և ոչ եթէ ես՝ այլ շը֊
նորհքն Աստուծոյ որ ընդ իս. արդ եթէ ես, և եթէ 11
նոքա՝ այսպէս քարոզեցաք, և դուք այսպէս հաւա֊
տացէք: Ապա եթէ Քրիստոս քարոզի թէ 'ի մե֊ 12
ռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք 'ի ձէնջ՝ ե֊
թէ յարութիւն մեռելոց չիք. եթէ յարութիւն մե֊ 13
ռելոց չիք, ապա և Քրիստոս չէ յարուցեալ. և ե֊ 14
թէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարո֊
զութիւնն մեր, ընդունայն են և հաւատքն ձեր. և 15
գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ, զի վկայեցաք
զԱստուծոյ՝ եթէ յարոյց զՔրիստոս. զոր ոչն ար֊
դեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ յառնիցեն: Իսկ ե֊ 16
թէ մեռեալք ոչ յառնեն, ապա և Քրիստոս չէ յա֊
րուցեալ. և եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ըն֊ 17

դունայն են հաւատքն ձեր, և տակաւին 'ի նմին 'ի
18 մեղս կայցէք: Իսկ արդ որ ննջեցինն 'ի Քրիստոս՝
19 կորեա՞ն արդեօք. եթէ այսու կենօքս միայն յուսա֊
ցեալ եմք 'ի Քրիստոս, ողորմելի եմք քան զամե֊
նայն մարդիկ:
20 ԶԳ. Այլ արդ Քրիստոս յարուցեալ է 'ի մեռե֊
21 լոց, առաջին պտուղ ննջեցելոց. քանզի մարդով ե֊
22 ղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց. որպէս
Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս և Քրիս֊
23 տոսիւ ամենեքին կենդանասցին, իւրաքանչիւր յիւ֊
րում կարգի. նախ Քրիստոս, և ապա քրիստո֊
24 սեանք 'ի գալստեան նորա, և ապա կատարած: Յոր֊
ժամ տացէ 'ի ձեռս զթագաւորութիւնն Աստուծոյ
և Հօր, յորժամ խափանեսցէ զամենայն իշխանու֊
թիւնս և զամենայն պետութիւն և զզօրութիւն.
25 զի պարտ է նմա թագաւորել, մինչև դիցէ զամենայն
26 թշնամիս 'ի ներքոյ ոտից իւրոց. յետին թշնամին
խափանի՝ մահ. և զամենայն ինչ հնազանդ արար 'ի
27 ներքոյ ոտից նորա: Այլ յորժամ ասիցէ, թէ հնա֊
զանդեալ է նմա ամենայն, յայտ է՝ թէ բաց յայն֊
28 մանէ որ հնազանդեցոյց նմա զամենայն. այլ յոր֊
ժամ հնազանդեսցի նմա ամենայն, յայնժամ և ինքն
որդի հնազանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա
զամենայն. զի եղիցի Աստուած ամենայն յամենայնի:
29 Ապա թէ ոչ, զի՞նչ գործիցեն որ մկրտիցինն վասն
մեռելոց, եթէ արդարև մեռեալք ոչ յառնիցեն.
30 ընդէ՞ր իսկ ընաւ մկրտին վասն նոցա. ընդէ՞ր և մեք
ձգնիմք յամենայն ժամ, և հանապազ մեռանիմք.
31 'ի պարծանս ձեր երդնում, եղբարք, զոր ունիմ 'ի
32 Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր: Եթէ վասն մար֊
դոյ 'ի գազանամարտի լեալ էի յԵփեսոս, զի՞նչ օ֊
գուտ էր ինձ, եթէ մեռեալք ոչ յառնեն. կերիցուք
33 արբցուք, քանզի վաղիւ մեռանիմք: Մի՛ խաբիք.
ապականեն զբարս քաղցունս բանք չարք:
34 ԶԵ. Սթափեցարուք արդարութեամբ, և մի՛ մե֊

ղանչէք. զի զգիտութիւն Աստուծոյ ոչ ունին ոմանք.
առ ամօթոյ ձերոյ ասեմ: Այլ ասիցէ ոք. զիա՞րդ 35
յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով գայցեն: Անզ- 36
միտ, դու զոր սերմանեսն՝ ոչ կենդանանայ՝ եթէ ոչ
մեռանիցի. և զոր սերմանեսն՝ ոչ զնոյն մարմին որ 37
ծնանելոցն իցէ՝ սերմանես, այլ հատ մերկ, եթէ
ցորենոյ իցէ և եթէ այլոց սերմանեաց. և Աստուած 38
տայ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրաքանչիւր
սերմանեացն զիւր մարմին: Ոչ ամենայն մարմին՝ 39
նոյն մարմին է. այլ այլ մարմին է մարդկան և այլ
մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց և այլ մարմին
ձկանց. և մարմինք երկնաւորք, և մարմինք երկրա- 40
ւորք. այլ այլ փառք երկնաւորաց են և այլ փառք
երկրաւորաց, այլ փառք արեգական և այլ փառք 41
լուսնի, այլ փառք աստեղաց. և աստղ քան զաստղ
առաւել է փառօք: Նոյնպէս և յարութիւն մեռե- 42
լոց. սերմանի ապականութեամբ՝ և յառնէ առանց
ապականութեան, սերմանի անարգութեամբ՝ և 43
յառնէ փառօք, սերմանի տկարութեամբ՝ և յառ-
նէ զօրութեամբ, սերմանի մարմին շնչաւոր՝ և յառ- 44
նէ մարմին հոգևոր. եթէ գոյ մարմին շնչաւոր,
գոյ և հոգևոր: Այսպէս և գրեալ է, եղև մարդն 45
առաջին Ադամ՚ի շունչ կենդանի, երկրորդ Ադամ
՚ի հոգի կենդանարար. բայց ոչ նախ հոգևորն, այլ 46
շնչաւորն, և ապա հոգևորն: Առաջին մարդն յերկրէ՝ 47
հողեղէն, իսկ երկրորդ մարդն Տէր՝ յերկնից. որպէս 48
հողեղէնն՝ նոյնպէս և հողեղէնքս, և որպէս երկնա-
ւորն՝ նոյնպէս և երկնաւորքն. և որպէս զգեցաք ըզ- 49
պատկեր հողեղինին, զգեցցուք և զպատկեր երկնա-
ւորին:

ԶԶ. Բայց զայս ասեմ, եղբարք, եթէ մարմին և 50
արիւն զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել ոչ կա-
րեն, և ոչ ապականութիւն զանապականութիւն ժա-
ռանգէ: Արդ խորհուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան 51
ննջեսցուք, այլ ոչ եթէ ամենեքեան: Նորոգեսցուք 52

յանկարծակի յական թօթափել՚ի փող յետին.
քանզի փող հարկանի, և մեռեալք յարիցեն առանց
53 ապականութեան, և մեք նորոգեսցուք: Զի պարտ
է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապակա-
նութիւն, և մահկանացուիս այսմիկ զգենուլ զան-
54 մահութիւն: Այլ յորժամ մահկանացուս այս ըզ-
գեցցի զանմահութիւն, և ապականութիւնս զանա-
պականութիւն, յայնժամ եղիցի բանն որ գրեցաւ,
55 եթէ ընկլաւ մահ՚ի յաղթութիւն: Ո՞ւր է, մահ,
յաղթութիւն քո. ո՞ւր է, դժոխք, խայթոց քո.
56 խայթոց մահու՝ մեղք են, և զօրութիւն մեղաց՝
57 օրէնք: Այլ շնորհք Աստուծոյ՝ որ ետ մեզ զյաղ-
թութիւն՚ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի:

58 ԱԳ. Այսուհետև, եղբարք իմ սիրելիք, հաս-
տատուն եղերուք, անշարժ կայցէք, առաւել լերուք
՚ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջիք՝ զի
վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն:

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Այլ վասն հաշուին որ՚ի սուրբսն է, որպէս պա-
2 տուէր ետու եկեղեցեացն գաղատացւոց, նոյնպէս և
դուք առնիջիք ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն.
իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ առանձին իւրում գանձեսցէ
3 որ ինչ և աջողեսցի. զի մի՛ յորժամ գայցեմ, յայն-
ժամ հաշիւք լինիցին. այլ յորժամ եկից, զոր միան-
գամ ընտրեցէք թղթովք, զնոսա առաքեցից տանել
4 զշնորհսն ձեր յԵրուսաղէմ. ապա թէ արժան իցէ
և ինձ երթալ, ընդ իս երթիցեն: Այլ եկից առ
5 ձեզ՝ յորժամ՚ի Մակեդոնիա անցանիցեմ. բայց ի-
6 րև շրջեցայց ընդ Մակեդոնիա, թէ դէպ լիցի, առ
ձեզ մնացից և կամ ձմերեցից. զի դուք յուղարկի-
7 ցէք զիս՝ ուր և երթալոցն իցեմ. զի ոչ կամիմ զձեզ
այժմ՚ի հարևանցի տեսանել. այլ ունիմ ժամանակ

ինչ առնել առ ձեզ, եթէ Տէր հրամայեսցէ։ Բայց 8
այժմ լինիմ յԵփեսոս մինչև ցպենտակոստէ․ զի 9
դուռն բացեալ է ինձ մեծ և կարևոր, և հակառա-
կորդք բազում են։ Արդ եթէ եկեսցէ Տիմոթէոս, 10
տեսջիք զիարդ աներկիւղ լինիցի առ ձեզ․ զի զգործ
Տեառն գործէ, որպէս և ես․ մի՛ ոք զնա անգոս- 11
նեսցէ․ և յուղարկեսջիք զնա խաղաղութեամբ, զի
եկեսցէ առ իս․ քանզի ակն ունիմ նմա եղբարբք
հանդերձ։

Ա.Զ. Այլ վասն Ապողոսի եղբօր՝ յոյժ աղաչեցի 12
զնա, զի եկեսցէ առ ձեզ եղբարբք հանդերձ․ և ար-
դեօք ոչ էին կամք զի այժմ եկեսցէ, այլ եկեսցէ
յորժամ և պարապեսցէ։ Հսկեցէք, հաստատուն 13
կացէք 'ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք, ամե-
նայն ինչ ձեր՝ սիրով լիցի։ Աղաչեմ զձեզ, եղբարք, 14
գիտէք զտունն Ստեփանեայ և Փորտունատեայ, որ 15
են պտուղ աքայեցւոց, և 'ի պաշտօն սրբոցն կարգե-
ցին զանձինս․ զի և դուք հնազանդ լինիցիք այնպի- 16
սեացն, և ամենայնի՝ որ գործակից իցէ և վաստա-
կակից։ Ուրախ եղէ 'ի գալ Ստեփանեայ և Փոր- 17
տունատեայ և Աքայիկոսի, զի զձեր պակասութիւն
նոքա լցին․ քանզի հանգուցին զհոգի իմ և զձեր․ 18
արդ ծանիջիք զայնպիսիսն։ Ողջոյն տան ձեզ եկե- 19
ղեցիքն ասիացւոց։ Ողջոյն շատ տան ձեզ 'ի Տէր Ա-
կիւղաս և Պրիսկա՝ հանդերձ առտնին եկեղեցեաւն 20
իւրեանց։ Ողջոյն տան ձեզ եղբարք ամենեքին։ Ող- 21
ջոյն տուք միմեանց 'ի համբոյր սրբութեան։ Ող- 22
ջոյնդ այդ իմոյ ձեռին Պաւղոսի է․ եթէ ոք ոչ սիրէ
զտէր Յիսուս, եղիցի նզովեալ, Մարան Աթա։
Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ 23
ձեզ, և սէրն իմ ընդ ամենեսին ձեզ 'ի Քրիստոս 24
Յիսուս․ ամէն։

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ՝ ԳՐԵՑԱՒ ՅԵՓԵՍՈՍԷ, Ի ՁԵՌՆ ՍՏԵՓԱՆԱՅ ԵՒ ՓՈՐՏՈՒՆԱՏԵԱՅ ԵՒ ԱՔԱՅԻԿՈՍԻ։

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԲԿ․ Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի
կամօքն Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր․ եկեղե-
ցւոյդ Աստուծոյ որ է 'ի Կորնթոս, սրբովքդ ամե-
նեքումբք՝ որ են յամենայն կողմանս աքայեցւոց։
2 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ մերմէ, և 'ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։
3 Օրհնեալ է Աստուած և հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, հայր գթութեանց և Աստուած
4 ամենայն մխիթարութեան, որ մխիթարէն զմեզ
յամենայն նեղութիւնս մեր, առ 'ի կարօղ լինելոյ
մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղու-
թիւնս իցեն, մխիթարութեամբն որով մեք մխի-
5 թարիմք յԱստուծոյ․ զի որպէս առաւելան չարչա-
րանքն Քրիստոսի 'ի մեզ, նոյնպէս և 'ի ձեռն
Քրիստոսի առաւել լիցի և մխիթարութիւնն մեր։
6 Զի եթէ նեղիմք, վասն ձերոյ մխիթարութեան և
փրկութեան․ և եթէ մխիթարիմք, վասն ձերոյ մը-
խիթարութեան․ որ յաջողեալն է համբերութեամբ
7 նոցին չարչարանաց, զոր և մեքն չարչարիմք․ և յոյսն
մեր հաստատուն է վասն ձեր․ քանզի գիտեմք՝
եթէ որպէս կցորդ եմք չարչարանացն, նոյնպէս և
8 մխիթարութեանն։ Քանզի ոչ կամիմ տգէտ լի-

նել ձեզ, եղբարք, վասն նեղութեան մերոյ եղե֊
լոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք,
մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց: Այլ անձամբ 9
յանձինս զվճիռ մահու ընկալաք, զի մի՛ յանձինս ա֊
պաստան իցեմք, այլ յԱստուած՝ որ յարուցանէ զմե֊
ռեալս, որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ և 10
փրկեսցէ. քանզի յուսացեալ եմք՝ եթէ տակաւին 11
փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն
մեր: Զի 'ի բազմադէմ շնորհացն՝ որ 'ի մեզ, բազ֊
մօք յաճախեսցեն գոհութիւնքն վասն մեր:
Բ Դ. Քանզի պարծանք մեր այս են. վկայութիւն 12
մտաց մերոց, զի սրբութեամբ և ստուգութեամբ
Աստուծոյ, և ոչ մարմնեղէն իմաստութեամբ, այլ
շնորհօքն Աստուծոյ շրջեցաք յաշխարհի, բայց առա֊
ւել ևս առ ձեզ: Քանզի ոչ եթէ այլ ազգ ինչ գրեմք 13
առ ձեզ, այլ զոր ընթեռնուցուքն և գիտակ լինիցիք.
քանզի յուսամ՝ թէ մինչև 'ի վախճան գիտիցէք,
որպէս և խելամուտ եղէք մեզ փոքր 'ի շատէ. զի 14
պարծանք ձեր եմք՝ որպէս և դուք մեր, յաւուրն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ յայս ա֊ 15
պաստան՝ կամէի նախ առ ձեզ գալ, զի դուք կրկին
շնորհս ընդունիջիք. և 'ի ձէնջ երթալ 'ի Մակեդո֊ 16
նիա. և դարձեալ 'ի Մակեդոնիայ գալ առ ձեզ, և
'ի ձէնջ յուղարկել 'ի Հրէաստան: Իսկ եթէ զայս 17
խորհեցայ՝ մի թէ թեթևութեամբ ինչ գնացի, և
կամ զոր խորհիմն՝ ըստ մարմնոյ ինչ խորհիցիմ. այլ
զի եղիցի յինէն կողմանէ, այոն՝ այո, և ոչն՝ ոչ: Հա֊ 18
ւատարիմ է Աստուած. զի բանն մեր որ առ ձեզ ե֊
հաս՝ ոչ է այո, և ոչ. քանզի որդին Աստուծոյ Յի֊ 19
սուս Քրիստոս, որ 'ի ձեզ մեօք քարոզեցաւ, ինև
և Սիղուանոսիւ և Տիմոթէիւ, ոչ եղև այո և ոչ.
այլ այոն 'ի նմին եղև. զի որչափ աւետիքն Աստու֊ 20
ծոյ են 'ի նմա այոն. վասն որոյ և նովին ամէնն մեօք
'ի փառս Աստուծոյ: Այլ որ հաստատեացն զմեզ 21
ձեօք հանդերձ 'ի Քրիստոս՝ և օծ զմեզ, Աստուած

22 է. որ և կնքեացն զմեզ, և ետ զառհաւատչեայ Հո֊
գւոյն 'ի սիրտս մեր:
23 Բ Զ. Այլ ես վկայ զԱստուած կոչեմ անձին իմոյ,
զի վասն խնայելոյ 'ի ձեզ ոչ ևս եկի 'ի Կորնթոս.
զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովքս, այլ գործա֊
կից եմք շնորհացդ ձերոց. քանզի հաւատովք հաս֊
տատեալ կայք:

ԳԼՈՒԽ Բ

1 Բայց զայս ևեթ ընտրեցի, զի մի՛ միւսանգամ
2 տրտմութեամբ եկից առ ձեզ. զի եթէ ես տրտմեցու֊
ցանեմ զձեզ, և ո՞վ է որ ուրախ առնիցէ զիս, եթէ
3 ոչ որ տրտմիցին յինէն: Եւ զայս գրեցի, զի մի՛ յոր֊
ժամ գայցեմ՝ տրտմութիւն ինչ կրիցեմ ուստի ար֊
ժանդ իցէ ինձ ուրախ լինել. յուսացեալ եմ 'ի ձեզ
ամենեսին, զի իմ ուրախութիւնս՝ ձեր ամենեցուն է.
4 զի 'ի բազում վշտաց և 'ի նեղութենէ սրտի գրեցի առ
ձեզ բազում արտասուօք. ոչ զի տրտմիցիք, այլ զի
զսէրն իմ գիտասջիք, զոր ունիմ առաւելապէս առ
5 ձեզ: Ապա թէ ոք տրտմեցոյց, ոչ եթէ զիս տրտ֊
մեցոյց, այլ փոքր 'ի շատէ, զի մի՛ ծանրացայց ամե֊
6 նեցուն ձեզ. շատ է այնպիսւոյն պատուհասն այն,
7 որ 'ի բազմաց անտի է: Այլ յաւհետև նմին հակա֊
ռակ՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա և մխիթարել,
զի մի՛ յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այնպի֊
8 սին. վասն որոյ աղաչեմ զձեզ՝ հաստատել 'ի նա ըզ֊
9 սէրն: Վասն այնորիկ իսկ և գրեցի, զի զչափ ա֊
10 ռից զձեր, եթէ յամենայնի հպատակ իցէք. զի ե֊
թէ ումեք շնորհիցէք՝ և ես. քանզի և ես եթէ շնոր֊
հիցեմ, զոր ինչ շնորհիցեմն՝ վասն ձեր 'ի դէմս
11 Քրիստոսի. զի մի՛ զրկիցիմք 'ի սատանայէ. քանզի
չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա:
12 Գ Կ. Այլ իբրև հասի ես 'ի Տրովադա յԱւետա֊

րանն Քրիստոսի, և դուռն բաց էր ինձ 'ի Տէր, ոչ
եստու հանգիստ հոգւոյ իմում. քանզի ոչ գտի ես 13
անդ զՏիտոս զեղբայր իմ: այլ հրաժարեալ 'ի նոցա_
նէ՝ գնացի 'ի Մակեդոնիա: Այլ Աստուծոյ շնորհքն, 14
որ յամենայնի հաշակ հարկանէ զմեզ 'ի Քրիստոս
Յիսուս, և զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի առնէ
մեօք յամենայն տեղիս. զի հոտ անոյշ եմք Քրիս_ 15
տոսի առ Աստուած՝ 'ի մէջ փրկելոցն և 'ի մէջ կորու_
սելոցն. ոմանց հոտ մահուանէ 'ի մահ, և ոմանց հոտ 16
կենդանութենէ 'ի կեանս. և առ այս ո՞ բաւական
իցէ: Քանզի ոչ եմք իբրև զայլսն, որ վաճառական 17
լինին բանին Աստուծոյ. այլ իբրև 'ի հաստատութե_
նէ, այլ իբրև յԱստուծոյ՝ առաջի Աստուծոյ 'ի Քրիս_
տոս խօսիմք:

ԳԼՈՒԽ Գ.

Սկսանիմք այսուհետև վերստին զանձինս ընծա_ 1
յեցուցանել, թէպէտ և ոչ պիտոյ իցեն մեզ, որպէս
ոմանց թուղթք ընծայութեան առ ձեզ կամ 'ի ձէնջ:
Այլ թուղթք մեր դուք էք՝ գրեալ 'ի սիրտս մեր, 2
ծանուցեալ և ընթերցեալ յամենայն մարդկանէ.
յայտնեալք՝ զի էք թուղթք Քրիստոսի, պաշտե_ 3
ցեալ 'ի մէնջ. և գրեալ՝ ոչ մելան, այլ Հոգւովն Աս_
տուծոյ կենդանւոյ. ոչ 'ի տախտակս քարեղէնս, այլ
'ի տախտակս սրտի մարմնեղէնս:

ԴԴ. Յոյս մի այսպիսի ունիմք 'ի ձեռն Քրիստոսի 4
առ Աստուած. իբր ոչ եթէ անձամբ բաւական եմք 5
խորհել ինչ իբրև 'ի մէնջ, այլ բաւականութիւնն
մեր յԱստուծոյ է, որ և բաւականս արար զմեզ՝ 6
պաշտօնեայս նորոց կտակարանացս, ոչ գրով, այլ
հոգւով. զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ:
Զի եթէ պաշտօն մահու՝ գրով դրոշմեալ 'ի տախ_ 7
տակսն քարեղէնս՝ եղև փառօք, զի մի կարասցեն

հայել որդիքն Իսրայելի յերեսսն Մովսիսի, վասն
8 փառաց երեսաց նորա՝ որ խափանելոցն էր, որչափ
9 ևս առաւել պաշտօն հոգւոյն եղիցի փառօք: Զի ե_
թէ պաշտօն դատապարտութեանն փառօք էր, որ_
չափ ևս առաւել պաշտօն արդարութեանն փառօք.
10 քանզի ոչ եթէ փառաւորի փառաւորեալն յայսմ
11 մասին, վասն առաւելութեան փառացն: Զի եթէ
որ խափանելոցն էր՝ այն փառօք էր, որչափ ևս ա_
12 ռաւել որ գալոցն է՝ փառօք իցէ: Նա արդ, զի ու_
նիմք այսպիսի յոյս, բազում համարձակութեամբ
13 վարեսցուք. և ոչ որպէս Մովսէս արկանէր քող 'ի
վերայ երեսաց իւրոց, վասն չհայելոյ որդւոցն Իս_
14 րայելի 'ի վախճան խափանելոյն: Այլ կուրացան
միտք նոցա. քանզի մինչև ցայսօր ժամանակի՝ նոյն
քող ձգեալ կայ 'ի վերայ ընթերցուածոց հին կտա_
կարանացն. և ոչ վերանայ, զի Քրիստոսիւ խափա_
15 նելոց է: Այլ մինչև ցայսօր յորժամ ընթեռնուն
զՄովսէս, նոյն առագաստ կայ 'ի վերայ սրտից նո_
16 ցա. այլ յորժամ դարձցին առ Տէր, ապա վերասցի
վերջ) առագաստն:
17 Զի Տէր Հոգին է. ուր հոգի Տեառն է, անդ
18 ազատութիւն է: Բայց մեր ամենեցուն բացաւ ե_
րեսօք զփառսն Տեառն իբրև ընդ հայելի տեսեալ,
'ի նոյն պատկեր նորոգիմք՝ փառաց 'ի փառս, որպէս
և 'ի Տեառն հոգւոյ:

ԳԼՈՒԽ Դ.

1 Վասն այնորիկ ունիմք զպաշտօնս զայս, որպէս և
2 գտաք զողորմութիւն, և ոչ ձանձրանամք. այլ հրա_
ժարեցաք 'ի գաղտնեաց ամօթոյն, զի մի գնասցուք
խորամանգութեամբ, և մի նենգեսցուք զբանն Աս_
տուծոյ. այլ յայտնութեամբ ճշմարտութեանն ըն_
ծայեցուսցուք զանձինս մեր առ ամենայն միտս մարդ_
3 կան առաջի Աստուծոյ: Ապա թէ իցէ ևս ծածկեալ

աւետարանն մեր, 'ի մէջ կորուսելոցն է ծածկեալ·
որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս 4
անհաւատիցն, զի մի՛ ծագեսցէ 'ի նոսա լուսաւորու-
թիւն Աւետարանի փառացն Քրիստոսի· որ է պատ-
կեր աներեւութին Աստուծոյ· զի ոչ եթէ զանձինս 5
քարոզեմք, այլ զՔրիստոս Յիսուս զտէր, և զմեզ
ծառայս ձեզ վասն Քրիստոսի։ Զի Աստուած որ 6
ասաց 'ի խաւարէ լոյս ծագել, որ և ծագեաց իսկ 'ի
սիրտս մեր 'ի լուսաւորութիւն գիտութեան փառացն
Աստուծոյ 'ի դէմս Յիսուսի Քրիստոսի։ Այսու- 7
հետև ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս· զի
առաւելութիւն զօրութեանն իցէ յԱստուծոյ, և ոչ
'ի մէնջ· յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք, 8
կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք, հալածեալք՝ 9
այլ ոչ լքեալք, չարչարեալք՝ այլ ոչ սատակեալք· յա- 10
մենայն ժամ զմահն Յիսուսի 'ի մարմինս մեր կրես-
ցուք, զի և կեանքն Յիսուսի 'ի մարմինս մեր յայտ-
նեսցին։ Քանզի միշտ մեք որ կենդանիքս եմք, 'ի 11
մահ մատնիմք վասն Յիսուսի· զի և կեանքն Յի-
սուսի յայտնի լիցին 'ի մահկանացու մարմինս մեր·
այսուհետև մահ 'ի մեզ զօրանայ, և կեանք 'ի ձեզ։ 12
Արդ ունիմք զնոյն հոգի հաւատոյ, որպէս և գրեալ 13
է· Հաւատացի՝ վասն որոյ և խօսեցայ· և մեք հա-
ւատամք՝ վասն որոյ և խօսիմք իսկ։ Զայս գիտեմք՝ 14
եթէ որ յարոյցն զՅիսուս, և զմեզ ընդ Յիսուսի
յարուսցէ, և յանդիման կացուսցէ ձեօք հանդերձ·
քանզի ամենայն ինչ վասն ձեր է· զի շնորհքն յա- 15
ճախեալք 'ի բազմաց գոհութենէ անտի, առաւե-
լեսցին 'ի փառս Աստուծոյ։ Վասն որոյ և ոչ ձանձ- 16
րանամք· այլ թէպէտ և արտաքին մարդս մեր ա-
պականի, այլ ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օ-
րէ· զի առժամայն յաճախութիւն թեթև նեղու- 17
թեանս մերոյ 'ի յաւիտենական առաւելութիւն,
զմեծութիւն փառացն գործէ 'ի մեզ։ Քանզի ոչ գի- 18
տեմք զերևելիս, այլ զաներևոյթս· զի երևելիքս

առ ժամանակ մի են, և աներևոյթքն յաւիտե-
նականք։

ԳԼՈՒԽ Ե

1 Քանզի գիտեմք՝ զի եթէ երկրաւոր տաճար շի-
նուածոյս մերոյ քակտեսցի, շինած յԱստուծոյ ու-
նիմք՝ տաճար առանց ձեռագործի յաւիտենական
2 յերկինս· և ընդ այս տաղտկամք, քանզի զընակու-
3 թիւնն երկնից փափագեմք զգենուլ· միայն թէ յոր-
4 ժամ զգենուցումքն, ոչ մերկ գտանիցիմք։ Քանզի
որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք ծան-
րացեալք· զի ոչ կամիմք մերկանալ, այլ զայն 'ի վե-
րայ այսր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանացուս 'ի
5 կենաց անտի։ Այլ որ յաջողէն մեզ 'ի սոյն, Աս-
տուած է· որ ետ մեզ զառհաւատչեայ Հոգւոյն։
6 Գ.Զ. Արդ համարձակիմք յամենայն ժամ, և գի-
տեմք եթէ որչափ յամեմք 'ի մարմնի աստ, օտա-
7 րանամք 'ի Տեառնէ· զի հաւատովք գնամք, և ոչ
8 կարծեօք։ Այլ համարձակիմք, և առաւել ևս հա-
ճեալ եմք ելանել 'ի մարմնոյ աստի՝ և մտանել առ
9 Աստուած· վասն որոյ և առատանամք· զի եթէ յա-
միցեմք և եթէ ելանիցեմք, հաճոյ ևեթ իցեմք ն-
10 մա։ Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ
առաջի ատենին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքան-
չիւր իւրով մարմնովն՝ զոր ինչ գործեաց յառաջ, եթէ
11 բարի և եթէ չար։ Իսկ արդ զահ Տեառն գիտելով
չափ, զմարդկան ինչ զմիտս հաճեմք, սակայն առա-
ջի Աստուծոյ յայտնեալ եմք· բայց ես յուսամ և 'ի
12 ձեր միտս յայտնի լինել։ Ոչ եթէ միւսանգամ
զանձինս ինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ պատ-
ճառս տամք ձեզ պարծանաց վասն մեր· զի ունիցիք
առ այնոսիկ որ առ աչօք պարծիցին, և ոչ սրտիւ·
13 զի եթէ առանցաք ինչ, այն Աստուծոյ է· և եթէ
14 զգաստանամք, այն ձեր է։ Զի սէրն Քրիստոսի

ստիպէ զմեզ քննել զայս. զի եթէ մին փոխանակ
ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մե-
ռեալ են. և ’ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ 15
կենդանիքն իցեն՝ մի անձանց իցեն կենդանիք, այլ
այնմ որ ’ի վերայ նոցայն մեռաւ և յարեաւ: Այ- 16
սուհետև մեք ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ
և գիտէաք մարմնով զՔրիստոս, այլ արդ ոչ ևս նոյն-
պէս գիտեմք. բայց եթէ ինչ ’ի Քրիստոս նոր արա- 17
րած իցէ. զի հինն անց, և արդ նոր եղև ամենայն:
Այլ ամենայն ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ 18
ընդ իւր ’ի ձեռն Քրիստոսի, և ետ մեզ զպաշտօնն
ՎԵՐՋ) հաշտութեան:

Եւ քանզի Աստուած էր, Քրիստոսիւ զաշխարհս 19
հաշտեցուցանել ընդ իւր, և չհամարել նոցա զմեղս
իւրեանց, և եդ ’ի մեզ զբանն հաշտութեան. արդ 20
վասն Քրիստոսի պատգամաւորիմք որպէս և Աստու-
ծոյ բարեխօսութեամբ մերօք. աղաչեմք վասն Քրիս-
տոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ, զի զայն՝ որ ոչն 21
գիտէր զմեղս՝ վասն մեր մեղս արար, զի մեք եղի-
ցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Զ

Գործակից եմք ձեր՝ և աղաչեմք, մի ընդունայն 1
զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ. զի ’ի ժամանա- 2
կի ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, և յաւուր
փրկութեան օգնեցի քեզ: Ահաւասիկ ժամանակ ըն-
դունելի, ահա օր փրկութեան. մի և մի իւիք տայ- 3
ցեք պատճառս, զի մի արատեսցի պաշտօնն. այլ 4
յամենայնի ընծայեցուցէք զանձինս ձեր իբրև զպաշ-
տօնեայս Աստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ, ’ի
նեղութիւնս, ’ի վիշտս, ’ի չարչարանս, ’ի գանս, ’ի 5
բանտս, ’ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ’ի
հսկմունս, ’ի պահս, ’ի սրբութեան, ’ի գիտութեան, 6
յերկայնմտութեան, ’ի քաղցրութեան, ’ի հոգի

7 սուրբ, ’ի սէր առանց կեղծաւորութեան, ’ի բանս
ճշմարտութեան, ’ի զօրութեան Աստուծոյ. վասն
զինուն արդարութեան՝ որ ընդ աջմէն և ընդ ահե-
8 կէն է. փառօք և անարգութեամբ, գովութեամբ և
պարսաւանօք, իբրև մոլարք՝ և ճշմարիտք, իբրև ան-
9 ծանօթք՝ և ծանուցեալք, իբրև մահկանացուք՝ և
ահաւասիկ կենդանի եմք, իբրև խրատեալք՝ և ոչ
10 մահապարտեալք, իբրև տրտմեալք՝ և հանապազ
ուրախ եմք, իբրև տնանկք՝ և զբազումս մեծացու-
ցանեմք, իբրև ոչ ինչ ունիցիմք՝ և զամենայն ինչ
11 ունիմք: Բերանք մեր բացեալ են առ ձեզ, կորըն-
12 թացիք, և սիրտք մեր ընդարձակեալք. ոչ ինչ նե-
13 ղիք ’ի մէնջ, բայց եթէ ’ի գութս ձեր նեղիցիք. արդ
զնոյն հատուցումն իբրև ընդ որդեակս ունիմ. ըն-
14 դարձակեցարուք և դուք. և մի լինիք լծակիցք ան-
հաւատից, քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդա-
րութեան ընդ անօրէնութեան, և կամ զի՞նչ հա-
15 ւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի, և կամ զի՞նչ
միաբանութիւն է Քրիստոսի ընդ Բելիարայ, կամ
զի՞նչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին,
16 կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի Աստուծոյ՝ մե-
հենաց: Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդա-
նւոյ էք, որպէս ասաց Աստուած, թէ բնակեցայց ’ի
նոսա, և գնացից ’ի նոսա, և եղէց նոցա Աստուած,
17 և նոքա եղիցին իմ ժողովուրդ: Վասն որոյ ելէք
’ի միջոյ նոցա և մեկնեցարուք, ասէ Տէր, և ’ի պիղծս
18 մի մերձենայք. և ես ընկալայց զձեզ, և ես եղէց
ձեզ ’ի հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և ’ի
դստերս, ասէ Տէր ամենակալ:

ԳԼՈՒԽ Է

1 Իսկ որովհետև զայս աւետիս ունիմք, սիրելիք,
սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ
մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն ա-

հիւն Աստուծոյ: Տարայք մեզ, զի ոչ ումեք մեղաք, 2
և ոչ զոք եղծաք, և ոչ զոք զրկեցաք: Ոչ եթէ 'ի 3
դատապարտութիւն ինչ ասեմ. քանզի յառաջ իսկ
ասացի, եթէ 'ի սրտի մերում կայք՝ 'ի կեալ և 'ի
մեռանել ընդ ձեզ:

ԴԿ. Բազում համարձակութիւն է ինձ առ ձեզ, 4
բազում պարծանք են ինձ վասն ձեր, լի եմ մխի-
թարութեամբ, առաւելեալ եմ ուրախութեամբ յա-
մենայն նեղութիւնս մեր: Քանզի յորժամ հասաք 5
մեք 'ի Մակեդոնիա, և ոչ միով իւիք հանգիստ գը-
տաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նեղեալք.
քանզի արտաքոյ մարտք և 'ի ներքոյ արհաւիրք: Այլ 6
որ մխիթարէն զխոնարհս՝ մխիթարեաց զմեզ Ած
'ի գալստեանն Տիտոսի. ոչ միայն 'ի գալստեան 7
նորա, այլ և 'ի մխիթարութեանն զոր մխիթարե-
ցաւ նա 'ի ձեզ, 'ի պատմել մեզ զանձուկն ձեր,
զողբումն ձեր, զնախանձն ձեր վասն իմ, մինչ առա-
ւել ուրախ լինել ինձ: Զի թէ և տրտմեցուցի զձեզ 8
թղթովն՝ ոչ զղջանամ, թէպէտ և զղջացեալ էի.
քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ առ ժամա-
նակ մի տրտմեցոյց զձեզ. արդ ուրախ եմ, ոչ զի 9
տրտմեցիք՝ այլ զի յապաշխարութիւն տրտմեցարուք.
քանզի տրտմեցայք դուք ըստ Աստուծոյ, զի մի ի-
ւիք զրկիցիք 'ի մէնջ: Զի որ ըստ Աստուծոյն տըրտ- 10
մութիւն է, ապաշխարութիւն 'ի փրկութիւն առանց
զղջանալոյ գործէ. իսկ աշխարհի տրտմութիւն մահ
գործէ: Արդ նոյն իսկ որ ըստ Աստուծոյն տրտմեցա- 11
րուք, որչափ ինչ փոյթ գործեաց 'ի ձեզ, կամ ա-
ղերս, կամ սաստ, կամ երկիւղ, կամ անձուկ, կամ
նախանձ, կամ վրէժխնդրութիւն. քանզի յամե-
նայնի ընծայեցուցէք զանձինս ձեր՝ սուրբս լինել յի-
րիդ յայդմիկ: Ապա ուրեմն թէ և գրեցի ես առ ձեզ, 12
ոչ վասն այնորիկ որ զրկեացն, և ոչ վասն այնորիկ
որ զրկեցաւն, այլ վասն յայտնի լինելոյ փութոյն ձե-
րոյ որ վասն մեր՝ առ ձեզ առաջի Աստուծոյ: Վասն 13

այնորիկ մխիթարեալ եմք 'ի վերայ մխիթարութեանն
մերոյ. առաւել ևս խնդացաք 'ի վերայ խնդութեանն
Տիտոսի, քանզի հանգուցեալ էր հոգի նորա 'ի ձէնջ
14 ամենեցունց. զի զինչ և պարծեցայ առ նմա վասն
ձեր, ոչ ամաչեցի. այլ որպէս զամենայն ճշմարտու-
թեամբ խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս և պարծանքն
15 մեր առ Տիտոս ճշմարիտ եղեն: Նա՝ և գութք նո-
րա առաւել ևս են 'ի ձեզ. քանզի յիշեցուցանէր
մեզ զամենեցուն զձեր հնազանդութիւն, թէ որ-
16 պէս ահիւ և դողութեամբ ընկալարուք զնա: Եւ
արդ ուրախ եմ, զի յամենայնի համարձակ եմ
առ ձեզ:

ԳԼՈՒԽ Ը

1 ԴԲ. Ցուցանեմ ձեզ, եղբարք, զշնորհսն Աստու-
2 ծոյ՝ որ տուեալ են եկեղեցեացն մակեդոնացւոց. զի
մեծաւ հանդիսիւ նեղութեան՝ առաւելութիւն խըն-
դութեանն նոցա, և ծանր աղքատութիւնն նոցա ա-
ռաւել եղև 'ի մեծութիւն առատութեան նոցա.
3 զի ըստ կարի նոցա վկայեմ, և աւելի քան զկար,
4 ինքնակամ բազում աղաչանօք աղաչէին զշնորհսն և
զհաղորդութիւն պաշտամանն որ 'ի սուրբսն՝ տալ
5 ցմեզ: Ոչ որչափ ակն ունէաք, այլ և զանձինս ևս
ետուն, նախ Տեառն և ապա մեզ կամօքն Աստու-
6 ծոյ. աղաչել զՏիտոս, զի որպէս սկսաւն յառաջա-
դոյն՝ նոյնպէս և կատարեսցէ 'ի ձեզ և զայդ ևս շը-
7 նորհս: Այլ որպէս յամենայնի առաւել էք հաւա-
տովք և բանիւ և գիտութեամբ, և ամենայն փու-
թով, և որ 'ի մէնջ 'ի ձեզ սէրն է, զի և յայդմ ևս
8 շնորհի առաւել լինիցիք. ոչ որպէս հրաման տալոյ
ասեմ, այլ վասն այլոց փութոյ և վասն ձերոյ սիրոյ՝
9 զմտերմութիւնդ փորձեմ. քանզի գիտէք զշնորհսն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի վասն ձեր
աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք նորա աղ-

քատութեամբն մեծասջիք: Եւ խրատ մի յայսմիկ 10
տամ. զի այն իսկ օգուտ է ձեզ. որք ոչ միայն զառ֊
նելն, այլ և զկամելն յառաջագոյն սկսայք 'ի հերուն
հետէ. բայց արդ և զառնելն իսկ կատարեցէք. զի 11
որպէս յօժարութիւնն 'ի կամաց է, նոյնպէս և առ֊
նելն ըստ գոյին. զի եթէ յօժարութիւնն առաջի 12
կայ, ըստ գոյին ընդունելի է, և ոչ եթէ ըստ չգոյին:
Զի ոչ եթէ այլոց հանգիստ կամիցիմ, և ձեզ նե֊ 13
ղութիւն. այլ հաւասարութեամբ յայժմու ժամա֊ 14
նակիս, ձեր առաւելութիւնդ 'ի նոցա պակասու֊
թիւնն, զի և նոցա առաւելութիւնն եղիցի 'ի ձե֊
րումպակասութեանդ. զի եղիցի հաւասարութիւն,
որպէս և գրեալ է, թէ որ բազումն ա՛ռ՝ ոչ առաւե֊ 15
լաւ, և որ սակաւն՝ ոչ նուազեցաւ:

Դգ. Բայց շնորհք Աստուծոյ՝ որ արկ զնոյն փոյթ 16
վասն ձեր 'ի սիրտ Տիտոսի. զի զաղաչանսն ընկա֊ 17
լաւ, և փութացաւ յօժարագոյնս գնաց գալ առ
ձեզ. և առաքեցաք ընդ նմա զեղբայրն, որոյ գովու֊ 18
թիւնն յաւետարանի անդ է՝ ընդ ամենայն եկեղե֊
ցիս: Եւ ոչ այսչափ միայն, այլ և ձեռնադրեալ յե֊ 19
կեղեցեաց անտի, նշդեհակից մեր եղև 'ի շնորհս
յայսմիկ, որ պաշտի 'ի մէնջ 'ի փառս Տեառն, և
'ի մեր յօժարութիւն: Բայց զայս խղճեաք իսկ, 20
թէ գուցէ արատ ոք ինչ դնիցէ 'ի հաստատութեանս
յայսմիկ՝ որ պաշտեցաւս 'ի մէնջ: Քանզի խորհիմք 21
զբարիս՝ ոչ միայն առաջի Տեառն, այլ և առաջի մարդ֊
կան. և առաքեցաք ընդ նոսա զեղբայրն մեր՝ զոր 22
ընտրեցաք 'ի բազում իրս բազում անգամ պինդ գը֊
տեալ, և առաւել ևս այժմ պնդագոյն յուսով մեծաւ
'ի ձեզ: Բայց եթէ վասն Տիտոսի ինչ բանք են, իմ 23
հաւասար է և ձեր գործակից. և եթէ եղբարք մեր
Առաքեալքն եկեղեցւոյ, և փառք Քրիստոսի: Եւ 24
արդ զհանդէս սիրոյ ձերոյ և զմերոյ պարծանաց
վասն ձեր՝ 'ի դոսա ցուցջիք յանդիման ամենայն ե֊
կեղեցեաց:

ԳԼՈՒԽ Թ

1 Դդ. Այլ վասն պաշտամանն որ 'ի սուրբսն է,
2 աւելի է ինձ և գրել առ ձեզ. զի գիտեմ զյօժարու֊
թիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ եմ 'ի մէջ
մակեդոնացւոցն, թէ աքայեցիքն 'ի հերուն հետէ
պատրաստ են. և ձեր նախանձն զբազումս յորդո֊
3 րեաց. և առաքեցաք զեղբարսն, զի մի պարծանքն
մեր որ վասն ձեր՝ ընդունայն լինիցի 'ի մասինդ յայդ֊
միկ. այլ որպէս ասէի իսկ, պատրաստագոյնք գտա֊
4 նիջիք. գուցէ յորժամ գայցեն ընդ մեզ մակեդոնա֊
ցիքն, և գտանիցեն զձեզ անպատրաստս, և ամաչես֊
ցուք մեք, — զի մի ասասցուք՝ թէ դուք —, 'ի մա֊
5 սինդ յայդմիկ պարծանաց: Արդ կարևոր համարե֊
ցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն եկեսցեն առ
ձեզ. և յառաջագոյն պատրաստեսցեն զյառաջագոյն
խոստացեալ օրհնութիւնն ձեր 'ի պատրաստի ունել.
այնպէս՝ իբրև զօրհնութիւն, և մի իբրև զագահու֊
6 թիւն: Քանզի զայդ որ սերմանէ ճշդելով՝ ճշդե֊
լով և հնձեսցէ, և որ սերմանէ առատութեամբ՝
7 առատութեամբ և հնձեսցէ, իւրաքանչիւր որպէս
և յօժարեսցի ոք սրտիւ, մի առ հարկի և տրտ֊
մութեան. քանզի զտուրս զուարթառատս սիրէ Ա֊
8 տուած: Այլ կարող է Աստուած զամենայն շնորհս
առաւելուլ 'ի ձեզ. զի յամենայնի յամենայն ժամ
զամենայն բաւականութիւն ընկալեալ՝ առաւելու֊
9 ցուք յամենայն գործս բարութեան, որպէս և գը֊
րեալ է. Սփռեաց և ետ տնանկաց, արդարութիւն
նորա մնայ յաւիտեան:

10 Դե. Այլ այն որ պարգևէ սերմն սերմանահա֊
նաց՝ և հաց 'ի կերակուր, պարգևեսցէ և բազմա֊
ցուսցէ զսերմանիս ձեր, և աճեցուսցէ զարդիւնս ար֊
11 դարութեան ձերոյ. յամենայնի մեծացեալք ամե֊
նայն առատութեամբ, որ յօրինէն մեօք գոհութիւն

Աստուծոյ: Զի պաշտօն հարկիս այսորիկ՝ ոչ միայն 12
առ ՚ի լնուլ զպակասութիւն սրբոցն է, այլ առաւե-
լուլ բազմօք գոհութիւն Աստուծոյ. հանդիսիւ 13
պաշտամանս այսորիկ, փառաւորել զԱստուած ՚ի վե-
րայ հնազանդութեան խոստովանութեան ձերոյ յԱ-
ւետարանն Քրիստոսի. և առատութեամբ հաղոր-
դութեանն ՚ի նոսա և յամենեսին. և նոցա աղօթք 14
վասն ձեր, քանզի անձկացեալ են առ մեզ վասն ա-
ռաւել շնորհացն Աստուծոյ՝ որ ՚ի մեզ: Այլ շնորհք 15
Աստուծոյ ՚ի վերայ անպատում պարգևացն նորա:

ԳԼՈՒԽ Ժ

Այլ ես իսկ Պաւղոս աղաչեմ զձեզ հեզութեամբ 1
և հանդարտութեամբն Քրիստոսի, որ յանդիման
ձեզ իբրև տառապեալ մի եմ ՚ի միջի ձերում. բայց
՚ի հեռուստ համարձակիմ առ ձեզ: Աղաչեմ, զի մի 2
՚ի մօտոյ ևեթ համարձակիցիմ վստահութեամբ,
կամ համարիցիմ յանդգնել ՚ի վերայ ոմանց, որ կար-
ծեն զմեզ եթէ ըստ մարմնոյ գնայցեմք. զի թէպէտ 3
և մարմնով գնամք, այլ ոչ եթէ ըստ մարմնոյ զինուո-
րիմք: Զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնա- 4
ւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ, առ ՚ի քակելոյ զա-
մուրս. զխորհուրդս քակեմք, և զամենայն բարձրու- 5
թիւն հպարտացեալ ՚ի վերայ գիտութեանն Աստու-
ծոյ. և գերեմք զամենայն միտս ՚ի հնազանդութիւն
Քրիստոսի. և ՚ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ 6
ամենայն անհնազանդութեան, յորժամ ձեր ես
հնազանդութիւնդ կատարեսցի:
ԴԶ. Ըստ իւրաքանչիւր երեսաց գիտեսջիք. ե- 7
թէ ոք վստահ յանձն իւր է Քրիստոսի լինել, զայս
խորհեսցի դարձեալ ՚ի միտս իւր, թէ որպէս նայն
Քրիստոսի է՝ նոյնպէս և մեք. զի թէ առաւել ևս 8
պարծեցայց վասն իշխանութեանս մերոյ՝ զոր ետ մեզ
Տէր ՚ի շինել՝ և ոչ ՚ի քակել զձեզ, ոչ ինչ ամաչեցից.

9 զի մի թուեցայց իբրև ահ ինչ արկանել ձեզ թղ-
10 թովքս: Ասիցէք. թուղթքս ծանունք են և սաս-
տիկք, բայց տեսիլ մարմնոյ տկար, և բանն արհա-
11 մարհեալ: Զայս խորհեսցի այնպիսին, զի որպիսիք
եմք բանիւք թղթովք ՚ի հեռուստ, նոյնպիսիք և ՚ի
12 մօտոյ արդեամբք: Քանզի ոչ իշխեմք կշռել և հա-
ւասարել զանձինս մեր ոմանց, որ զանձինս իւրեանց
ձեզ ընծայեցուցանեն. այլ անձամբ յանձինս՝ զան-
ձինս չափեն, և ՚ի կշռել անձամբ յանձինս՝ ոչ առ-
13 նուն ՚ի միտ: Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ պար-
ծեսցուք, այլ ըստ չափոյ կանոնին, զոր բաժանեաց
14 մեզ Աստուած չափով՝ հասանել մինչև առ ձեզ. իբր
ոչ եթէ հասու ինչ չիցեմք ՚ի ձեզ, և ձգտեցուցանի-
ցեմք զանձինս. քանզի մինչև առ ձեզ հասաք աւե-
15 տարանաւ Քրիստոսի. և ոչ յանչափս ինչ պար-
ծիմք օտար վաստակօք: Բայց յոյս մի ունիմք զաճ-
մանն հաւատոց ձերոց, այդրէն ՚ի ձեզ մեծանալոյ,
16 ըստ կանոնիս մերոյ՝ յառաւելութիւն. ՚ի վեր ևս
քան զձեզ աւետարանել. ոչ օտար կանոնաւ ՚ի պատ-
17 րաստականս ինչ պարծել: Զի որ պարծիցին՝ ՚ի Տէր
պարծեսցի:
18 ԲԿ. Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ՝
նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ:

ԳԼՈՒԽ ԺԱ

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում անզգա-
2 մութեանս. այլ և անսացէք իսկ. Նախանձեցուցա-
նեմ զձեզ ՚ի նախանձն Աստուծոյ. զի խօսեցայ ըզ-
ձեզ առն միում, իբրև զկոյս մի սուրբ՝ յանդիման կա-
3 ցուցանել Քրիստոսի: Բայց երկնչիմ, գուցէ որպէս
օձն խաբեաց զԵւա խորամանգութեամբ իւրով՝ ա-
պականեսցին միտք ձեր ՚ի միամտութենէն որ ՚ի
4 Քրիստոս. զի եթէ որ գալոցն իցէ՝ այլ Քրիստոս
քարոզիցէ զոր մեքն ոչ քարոզեցաք, կամ ոգի օտար

առնուցուք՝ զոր ոչ առէք, կամ Աւետարան օտար՝
զոր ոչ ընկալարուք, բարւոք անսայիք նոցա։ Բայց 5
ես այսպէս համարիմ, թէ ոչ ինչ իւիք պակաս իցեմ
քան զլաւ Առաքեալսն. թէպէտ և տգէտ եմ իցեմ 6
բանիւ, այլ ոչ եթէ գիտութեամբ. սակայն յամե-
նայնի յայտնեցաք զանձինս ամենևին առ ձեզ։ Եւ 7
եթէ վնաս ինչ գործեցի՝ զի զանձն խոնարհեցուցի,
և այն՝ զի դուք բարձրասջիք. զի ձրի զԱւետարանն
Աստուծոյ աւետարանեցի ձեզ. զայլ եկեղեցիս կո- 8
ղոպտեցի, առեալ թոշակ 'ի ձեր սպասաւորութիւն։
Եւ յորժամ եկի առ ձեզ, թէպէտ և պակասեայ 9
ինչ, ոչ զոք 'ի ձէնջ ձանձրացուցի, զի զպակասու-
թիւնն իմ լցին եղբարքն եկեալք 'ի Մակեդոնացւոց.
և յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ
պահեցի՝ և պահեցից. զի գոյ յիս Ճշմարտութիւնն 10
Քրիստոսի։

ԲԳ. Զի պարծանքս այս ոչ արգելցին յինէն 'ի
կողմանս աքայեցւոց։ Ընդէ՞ր. իբրու թէ ո՞չ սիրի- 11
ցեմ զձեզ. զայն Աստուած գիտէ. զոր առնեմն՝ և ա- 12
րարից. զի հատից զպատճառս այնոցիկ՝ որ զպատ-
ճառսն կամիցին. զի որով պարծին, և նոքա իբրև
զմեզ գտանիցին։ Զի այնպիսիքն՝ սուտ Առաքեալք, 13
մշակք նենգաւորք, կերպարանին 'ի կերպարանս Ա-
ռաքելոց Քրիստոսի. և չէն ինչ զարմանք, քանզի 14
և ինքն սատանայ կերպարանի 'ի Հրեշտակ լուսոյ.
և ոչ ինչ է մեծ՝ թէ և պաշտօնեայք նորա կերպա- 15
րանին իբրև զպաշտօնեայք արդարութեան. որոց
կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց։ Դարձեալ 16
ասեմ. մի՛ ոք համարեսցի զիս անզգամ. ապա թէ ոչ,
գոնէ իբրև զանզգամ ընկալարուք զիս, զի և ես
փոքր մի ինչ պարծեցայց. և զոր խօսիմս, ոչ եթէ 17
ըստ Տեառն ինչ խօսիմ, այլ իբրև անզգամութեամբ՝
ըստ կարգի այդց պարծանաց։ Եւ քանզի բազումք 18
պարծին ըստ մարմնոյ, և ես պարծեցայց. մտադիւր 19
իմն անսայիք անմտայն՝ ձերովդ իմաստութեամբ.

20 քանզի անսայք՝ եթէ ոք խաբէ զձեզ, եթէ ոք ծա-
ռայեցուցանէ, եթէ ոք ուտէ զձեր, եթէ ոք առ-
նու ինչ, եթէ ոք հպարտանայ, եթէ ոք զձեզ յան-
21 դիման հարկանէ. ըստ անարգանացդ ասեմ, իբրև
թէ մեք տկարացա՞ք արդեօք. յոր ինչ ոք համարձա-
կիցի, անզգամութեամբ ասեմ, համարձակիմ և ես։
22 Եբրայեցի՞ք իցեն, և ես. Իսրայելացի՞ք իցեն, և ես.
23 զաւակ Աբրահամո՞ւ իցեն, և ես. պաշտօնեայք
Քրիստոսի՞ իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ ա-
ռաւել եմ ես. եթէ վաստակօք՝ առաւել, եթէ գա-
նիւք՝ եմ առաւել, եթէ բանտիւ՝ աւելի քան զնոսա,
24 եթէ մահուամբք՝ բազում անգամ. 'ի Հրէից՝ հին-
25 գիցս քառասուն միով պակաս առի, երիցս ձաղկե-
ցայ, մի անգամ քարկոծ եղէ, երիցս նաւակոծ եղէ,
26 զտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ, 'ի ճանա-
պարհս բազում անգամ. Վիշտս 'ի գետոց, վիշտս
յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս 'ի հեթանո-
սաց, վիշտս 'ի քաղաքի, վիշտս յանապատի, վիշտս
27 'ի ծովու, վիշտս 'ի սուտ եղբարց. 'ի ջանս և 'ի
վաստակս, 'ի տքնութիւնս բազում անգամ, 'ի քաղց
և 'ի ծարաւ, 'ի պահս բազում անգամ, 'ի ցուրտ և
28 'ի մերկութեան։ Թող զայլ նեղութիւնսն. և զի
հանապազ խուժանն 'ի վերայ իմ կուտէր, և հոգք
29 ամենայն եկեղեցեաց։ Ո՞ հիւանդանայ, և ոչ ես
հիւանդանամ. ո՞ գայթագղի, և ոչ ես տապանամ։
30 ԲԴ. Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտկարու-
31 թեանն պարծեցայց. Աստուած և Հայր Տեառն մե-
րոյ Յիսուսի գիտէ, որ է օրհնեալ յաւիտեանս, զի
32 ոչ ստեմ։ Ի Դամասկոս ազգապետն Արետայ ար-
քայի պահէր զքաղաքն դամասկացւոց՝ ունել զիս.
33 և ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ պա-
րիսպն, և փախեայ 'ի ձեռաց նորա։

ԳԼՈՒԽ ԺԲ

Արդ պարծել ինձ պարտ իցէ, այլ օգնէ ինձ ոչ. 1
բայց եկից 'ի տեսիլս և յայտնութիւնս Տեառն։ Գի֊ 2
տեմ այր մի 'ի Քրիստոս յառաջ քան զչորեքտասան
ամ. եթէ մարմնով՝ ոչ գիտեմ, և եթէ առանց մարմ֊
նոյ՝ ոչ գիտեմ, Աստուած գիտէ. յափշտակեալ զայն֊
պիսին մինչև յերրորդ երկինս. և գիտեմ զայնպիսի 3
այր, եթէ մարմնով՝ և եթէ առանց մարմնոյ՝ ոչ գի֊
տեմ, Աստուած գիտէ, զի յափշտակեցաւ 'ի դրախ֊ 4
տըն, և լուաւ բանս անճառս, զոր ոչ է պարտ մար֊
դոյ խօսել։ Վասն այնպիսւոյն պարծեցայց, այլ վասն 5
անձին ինչ ոչ պարծեցայց, բայց եթէ 'ի տկարու֊
թիւնս. զի եթէ և կամիցիմ պարծել, ոչ եղէց ան֊ 6
զգամ, քանզի զարդարն ասեմ. այլ անխայեմ, գուցէ
ոք համարիցի յիս աւելի քան զոր տեսանիցէ յիս
կամ լուիցէ յինէն։ Եւ զի մի՛ առաւելութեամբ յայտ֊ 7
նութեանցն հպարտացայց, տուաւ ինձ խայթ մարմ֊
նոյ, հրեշտակ սատանի՝ կափել զիս, զի մի՛ հպարտա֊
ցայց. և վասն այնորիկ երիցս անգամ աղաչեցի զՏէր՝ 8
զի 'ի բաց արասցէ յինէն, և ասէ ցիս. շատ են քեզ 9
շնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կա֊
տարի. և արդ լաւ ևս լիցի ինձ պարծել 'ի տկարու֊
թիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւնն Քրիստոսի։
Գ.Դ. Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, 10
ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս, և ընդ
նեղութիւնս վասն Քրիստոսի. զի յորժամ տկարա֊
նամ, յայնժամ զօրանամ։ Եղէ անզգամ, քանզի 11
դուք ստիպեցէք. զի ինձ պարտ էր 'ի ձէնջ վկայու֊
թիւն առնուլ, թէ ոչ ինչ պակաս գտայ քան զլաւ
Առաքեալսն. զի թէպէտ և ես ոչ ինչ եմ, սակայն 12
նշանք Առաքելոյ գործեցան 'ի ձեզ ամենայն համբե֊
րութեամբ, նշանօք և արուեստիւք և զօրութեամբք.
և արդ զի՞նչ իցէ՝ որով պակաս գտայք քան զայլ ե֊ 13

կեղեցիս. բայց եթէ այնու, զի ես զձեզ ոչ ձանձ֊
14 րացուցի. շնորհեցէք ինձ զմնասդ զայդ։ Ահաւա֊
սիկ այս երիցս անգամ պատրաստեալ եմ գալ առ
ձեզ, և ձեզ բեռն ինչ ոչ եղէց. զի ոչ խնդրեմ ինչ
զձեր, այլ զձեզ. քանզի ոչ պարտին որդիք հարց
15 գանձել, այլ հարք որդւոց. բայց ես մտադիւրու֊
թեամբ ծախեցից և ծախեցայց վասն անձանց ձե֊
րոց. զի թէպէտ և յառաւել սիրոյն զձեզ՝ սակաւ
16 սիրիցիմ։ Այլ գրեթէ ես ոչ ինչ ծանրացայ ձեզ.
17 այլ քանզի խորագէտ էի, խելօք կալայ զձեզ. միթէ
որովք առաքեցին առ ձեզ, նոքօք ինչ ագահեցի՞ 'ի
18 ձէնջ. աղաչեցի զՏիտոս՝ և առաքեցի ընդ նմա զեղ֊
բայրն. մի՞ թէ ագահեա՞ց ինչ զձեր Տիտոս. ո՞չ նովին
ոգւով գնացաք, ո՞չ նովին շաւղօք շրջեցաք։
19 Գ.Զ. Դարձեալ համարիցիք եթէ յողոք անկեալ
ինչ ձեզ աղերսիցեմք. առաջի Աստուծոյ 'ի Քրիս֊
տոս խօսիմք, զի ամենայն ինչ, սիրելիք, վասն ձե֊
20 րոյ շինութեան է. այլ երկնչիմ, գուցէ եկեալ՝ ոչ
որպիսիս կամիմ գտանիցեմ զձեզ, և ես գտանիցիմ
ձեզ՝ որպէս և դուք ոչ կամիցիք։ Գուցէ դարձեալ
հեռ, նախանձ, սրտմտութիւնք, գրգռութիւնք,
չարախօսութիւնք, քսութիւնք, հպարտութիւնք,
21 ամբարտաւանութիւնք, խռովութիւնք։ Գուցէ դար֊
ձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ զիս Աս֊
տուած իմ առ ձեզ, և սուգ առնուցում վասն բազ֊
մաց յառաջագոյն մեղուցելոց, և ոչ ապաշխարելոց 'ի
վերայ պղծութեան և պոռնկութեան և գիջու֊
թեան՝ զոր գործեցին։

ԳԼՈՒԽ ԺԳ

1 Այս երիցս անգամ գամ առ ձեզ. զի 'ի բերանոյ
երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան.
2 յառաջ ասացի, և դարձեալ կանխաւ ասեմ, յան֊
դիման երկիցս անգամ, և այժմ 'ի բացուստ գրեմ

յառաջագոյն յանցուցելոցն և այլոցն ամենեցուն, զի
եթէ եկից դարձեալ՝ ոչ խնայեցից։ Եթէ զփորձ ինչ 3
խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ խօսի. որ
հզօրացեալն է 'ի ձեզ, և ոչ տկարացեալ. զի թէ֊ 4
պէտ և խաչեցաւ 'ի մերմէ տկարութենէ, այլ կեն֊
դանի է զօրութեամբն Աստուծոյ. և մեք թէպէտ և
տկարանայցեմք վասն նորա, այլ կենդանի լիցուք ընդ
նմա զօրութեամբն Աստուծոյ։

Դկ. Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք 'ի 5
նոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ոչ գիտէք
զանձինս, զի Քրիստոս Յիսուս 'ի ձեզ է. բայց ե֊
թէ անպիտանք իցէք. այլ ակն ունիմ թէ գիտիցէք, 6
զի մեք ոչ եմք անպիտանք։ Այլ խնդրեմք յԱստու֊ 7
ծոյ՝ զի մի ինչ արասցէ ձեզ չար. ոչ զի մեք ընտիրք
երեւեսցուք, այլ զի դուք զբարիս գործեցէք, և մեք
անպիտանք իցեմք. զի ոչ կարեմք ինչ հակառակ կալ 8
ճշմարտութեանն, այլ վերակացու եմք ճշմարտու֊
թեանն։ Խրախ եմք՝ յորժամ մեք տկարանայցեմք, 9
և դուք զօրաւորք իցէք. զդոյն իսկ և աղօթս առ֊
նեմք՝ զձեր հաստատութիւնդ. վասն այնորիկ զայս 10
'ի հեռուստ գրեմ, զի մի յորժամ եկից՝ սաստկու֊
թեամբ վարեցայց ըստ իշխանութեանս, զոր ետ ինձ
Տէր 'ի շինել՝ և ոչ 'ի քակել։ Այսուհետև, եղբարք, 11
ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք,
միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. և Աս֊
տուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ։ Ող֊ 12
ջոյն տուք միմեանց 'ի համբոյր սրբութեան։ Ողջոյն
տան ձեզ սուրբք ամենայն։ Շնորհք Տեառն մերոյ 13
Յիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ և հաղոր֊
դութիւն Հոգւոյն սրբոյ ընդ ձեզ ամենեսին։

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ՝ ԳՐԵՑԱՒ Ի ՓԻԼԻՊԵԱՑ,
Ի ՁԵՌՆ ՏԻՏՈՍԻ ԵՒ ՂՈՒԿԱՑ։

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա

1 Դդ. Պաւղոս առաքեալ ոչ 'ի մարդկանէ և ոչ 'ի
ձեռն մարդոյ, այլ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, և
Աստուծոյ Հօր՝ որ յարոյց զնա 'ի մեռելոց. և որ
2 ընդ իս են եղբարք ամենեքին, եկեղեցեացդ գաղա֊
3 տացւոց։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱս֊
տուծոյ 'ի Հօրէ, և 'ի Տեառնէ մերմէ Յիսուսէ
4 Քրիստոսէ, որ ետ զանձն իւր վասն մեղաց մերոց,
զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ աստի չարէ, ըստ կա֊
5 մացն Աստուծոյ և Հօր մերոյ. որում փառք յաւի֊
6 տեանս. ամէն։ Զարմանամ՝ զի այդպէս վաղվա֊
ղակի փոփոխիք յայնմանէ որ կոչեացն զձեզ 'ի շը֊
նորհսն Քրիստոսի՝ յայլ Աւետարան, որ ոչ գոյ այլ.
7 բայց եթէ իցեն ոմանք որ խռովեցուցանիցեն զձեզ,
8 և կամիցին շրջել զԱւետարանն Քրիստոսի։ Այլ
թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ
ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզովեալ
9 լիցի. որպէս յառաջագոյնն ասացաք՝ և արդ դար֊
ձեալ ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի
10 քան զոր առէքն, նզովեալ լիցի։ Արդ մարդկա՞ն
հաճոյ լինիցիմ՝ թէ Աստուծոյ, կամ խնդրիցեմ
մարդկա՞ն հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան
հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի։
11 Դձ. Ցուցանեմ ձեզ եղբարք զԱւետարանն, որ
12 աւետարանեցաւ յինէն, զի ոչ է ըստ մարդոյ. քան֊

զի և ոչ ես 'ի մարդոյ առի, և ոչ ուսայ յումեքէ, այլ
'ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի։ Քանզի 13
լուեալ իսկ է ձեր զիմ գնացս որ երբեմն 'ի հրէու-
թեան անդ, զի անչափ հալածէի զեկեղեցին Աստու-
ծոյ, և աւար հարկանէի զնա. և յառաջադէմ էի 14
'ի հրէութեանն՝ քան զբազում հասակակիցս իմ որ
յազգին իմում էին, առաւել նախանձախնդիր էի ի-
մոյ հայրենի աւանդութեանցն։ Այլ յորժամ կա- 15
մեցաւ Աստուած, որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ,
և կոչեաց 'ի ձեռն շնորհաց իւրոց, յայտնել զՈրդին 16
իւր ինև, զի աւետարանեցից զնա 'ի հեթանոսս. ան-
դէն վաղվաղակի ոչ ինչ զգացուցի մարմնոյ և արեան,
և ոչ ելի յԵրուսաղէմ առ որ յառաջագոյն քան զիս 17
Առաքեալքն էին. այլ չոգայ յԱրաբիա, և դարձեալ
դարձայ 'ի Դամասկոս։ Ապա յետ երից ամաց ելի 18
յԵրուսաղէմ տեսանել զՊետրոս. և եղէ առ նմա
աւուրս հնգետասան. զայլ ոք յԱռաքելոց անտի ոչ 19
տեսի, բայց միայն զՅակովբոս զեղբայրն Տեառն։
Այլ զոր գրեմս առ ձեզ՝ ահաւասիկ առաջի Աստու- 20
ծոյ, զի ոչ ստեմ։ Ապա եկի 'ի կողմանս Ասորւոց և 21
կիլիկեցւոց. և յանծանօթս էի երեսօք եկեղեցեացն՝ 22
որ 'ի Թլփատութենէ անտի էին 'ի Քրիստոս։ Բայց 23
զի լսելով լուեալ էր, թէ որ հալածէրն զմեզ յայն-
ժամ, արդ աւետարանէ զհաւատսն՝ զոր երբեմն 24
խախտէր, և փառաւոր առնէին ինև զԱստուած։

ԳԼՈՒԽ Բ

ԵԿ. Ապա յետ ամաց չորեքտասանից, միւսան- 1
գամ ելի յԵրուսաղէմ ընդ Բառնաբայ, առեալ
ընդ իս և զՏիտոս. և ելի ըստ յայտնութեանն, և 2
զգացուցի նոցա զԱւետարանն՝ զոր քարոզէի 'ի հե-
թանոսս, առանձինն այնոցիկ՝ որ կարծեալքն էին,
գուցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ կամ ընթա-
նայցեմ։ Այլ և ոչ Տիտոս որ ընդ իս 'ի հեթանոսաց 3

4 էր, բռնադատեցաւ թլփատել. այլ վասն սպրդողաց
սուտ եղբարցն՝ որք սպրդեցին մտանել դիտել զազա-
տութիւնն մեր՝ զոր ունիմք 'ի Քրիստոս Յիսուս, զի
5 զմեզ ծառայեցուսցեն. որոց և ոչ առ ժամանակ մի
անսացաք հնազանդութեանն. զի ճշմարտութիւն
6 Աւետարանին հաստատեսցի առ ձեզ։ Բայց զկար-
ծելոցն եթէ իցեն ինչ, որպիսիք ոք երբեմն էին, չէ
ինչ ինձ փոյթ. քանզի Աստուած ակն մարդկան ոչ
առնու. զի ինձ կարծեալքն այնպիսի ինչ ոչ զգացու-
7 ցին. այլ զնորին հակառակն, իբրև տեսին եթէ հա-
ւատացեալ է ինձ Աւետարանն անթլփատութեան,
8 որպէս Պետրոսի՝ թլփատութեան. զի որ յաջո-
ղեաց Պետրոսի յառաքելութիւն թլփատութեանն,
9 յաջողեաց և ինձ 'ի հեթանոսս. իբրև գիտացին
զշնորհսն որ տուեալ էին ինձ, Յակովբոս և Կեփաս
և Յովհաննէս, որ կարծեալ սիւնքն էին, ձեռն ե-
տուն հաւանութեան ինձ և Բառնաբայ, զի մեք 'ի
10 հեթանոսս, և նոքա 'ի թլփատութեանն. բայց
միայն զի զաղքատսն յիշեսցուք, զոր և ես փութա-
ցայ զնոյն առնել։
11 ԵԴ. Այլ յորժամ եկն Կեփաս յԱնտիոք, ընդ-
դէմ դարձայ նորա. քանզի գոգ իբրև ստգտեալ իմն
12 էր. քանզի մինչև եկեալ էին ոմանք առ 'ի Յա-
կովբայ, ընդ հեթանոսս ուտէր անխտիր. իսկ իբրև
եկին, զատանէր և որոշէր զանձն, երկուցեալ յայն-
13 ցանէ որ 'ի թլփատութենէ անտի էին. և կեղծա-
ւորեցան ընդ նմա և այլ Հրեայքն, մինչև Բառնա-
բաս անգամ խոնարհեցաւ 'ի նոցա կեղծաւորու-
14 թիւնն։ Այլ իբրև տեսի, թէ ոչ ուղիղ գնան 'ի
ճշմարտութիւն աւետարանին, ասեմ ցԿեփաս ա-
ռաջի ամենեցուն, եթէ դու որ Հրեայդ ես՝ հեթա-
նոսաբար և ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ ստիպես հե-
15 թանոսաց լինել հրէաբէն. զի մեք բուն Հրեայք
16 եմք, և ոչ 'ի հեթանոսաց մեղաւորք։ Զայս գի-
տեմք, եթէ ոչ արդարանայ մարդ 'ի գործոց օրինաց,

եթէ ոչ 'ի հաւատոցն Յիսուսի Քրիստոսի. և մեք
'ի Քրիստոս Յիսուս հաւատացաք, զի արդարասցուք
'ի հաւատոցն Քրիստոսի, և ոչ 'ի գործոց օրինաց.
զի 'ի գործոց օրինացն ոչ արդարասցի ամենայն մարմին:
Իսկ եթէ մինչ խնդրիցեմք արդարանալ 'ի Քրիս- 17
տոս, և գտանիցիմք մեղաւորք, ապա ուրեմն Քրիս-
տոս մեղաց պաշտօնեայ եղև. քաւ լիցի: Զի եթէ 18
զոր քակեցին՝ զնոյն միւսանգամ շինիցեմ, ապա յան-
ցաւոր զանձն իմ ես ինձէն երևեցուցանեմ. զի ես օ- 19
րինօք օրինացն մեռայ, զի Աստուծոյ կեցից, և ընդ
Քրիստոսի 'ի խաչ ելից. և կենդանի եմ այսուհետև, 20
ոչ ես՝ այլ կենդանի է յիս Քրիստոս:

ԵԶ. Ա.յլ որ այժմ կեամ մարմնով, հաւատովք
որդւոյն Աստուծոյ կեամ. որ սիրեաց զիս, և մատ-
նեաց զանձն վասն իմ. և ես ոչ անարգեմ զշնորհսն 21
Աստուծոյ. զի եթէ յօրինաց անտի էր արդարու-
թիւն, ապա Քրիստոս զուր մեռաւ:

Գ Լ Ո Ւ Խ Գ

Ո՜ անմիտ գաղատացիք, ո՞ նախանձ արար զձեզ. 1
որոց գրեթէ առաջի աչաց Յիսուս Քրիստոս գրե-
ցաւ 'ի խաչ ելեալ: Զայս միայն կամիմ ուսանել 'ի 2
ձէնջ. 'ի գործո՞ց օրինաց զՀոգին ընկալարուք՝ եթէ
'ի լրոյ հաւատոց. այդչափ անմի՞տ էք. սկսեալ Հո- 3
գւով՝ և արդ մարմնով վախճանիք. և այնչափ անցք 4
անցին ընդ ձեզ զուր, եթէ իցէ զուր: Իսկ արդ որ 5
բաշխեաց 'ի ձեզ զՀոգին, և աջողեաց 'ի ձեզ զզօ-
րութիւնս, 'ի գործո՞ց օրինաց է՝ եթէ 'ի լրոյ հաւա-
տոց: Որպէս Աբրահամ հաւատաց յԱստուած՝ և 6
համարեցաւ նմա յարդարութիւն. գիտիցէ՞ք արդեօք, 7
զի որք 'ի հաւատոց անտի են, նոքա են որդիք Ա-
բրահամու: Յառաջագոյն գիտէր գիր, եթէ 'ի հա- 8
ւատոց անտի արդարացուցանէ Աստուած զհեթա-
նոսս, յառաջագոյն խօստացաւ Աբրահամու, թէ 'ի

9 քեզ օրհնեսցին ամենայն ազգք: Այսուհետև որք
'ի հաւատոց անտի են, օրհնին ընդ հաւատացելոյն
10 Աբրահամու: Զի որ միանգամ 'ի գործոց օրինացն
են, ընդ անիծիւք են. քանզի գրեալ է, թէ անի-
ծեալ ամենայն մարդ որ ոչ կացցէ յամենայն գրեալ-
ՎԵՐՋ) սըն 'ի գիրս օրինաց՝ առնել զամենայն:
11 Զի օրինօքն ոչ ոք արդարանայ առաջի Աստու-
ծոյ, այն յայտ իսկ է. զի Արդարն, ասէ, 'ի հա-
12 ւատոց կեցցէ. բայց օրէնքն չեն 'ի հաւատոց, այլ
13 որ արասցէ զայն՝ կեցցէ 'ի նոսին: Քրիստոս գնեաց
զմեզ յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք.
զի գրեալ է, թէ անիծեալ ամենայն որ կախեալ
14 կայցէ զփայտէ. զի 'ի հեթանոսս օրհնութիւնն Ա-
բրահամու եղիցի 'ի Քրիստոս Յիսուս. զի մեք զա-
15 ւետիս Հոգւոյն սրբոյ ընկալցուք հաւատովք: Ըստ
մարդկութեան ասեմ, եղբարք. ապաքէն զմարդկան
հաստատեալ կտակ՝ ոչ ոք կարէ անարգել, և ոչ այլ
16 հրաման 'ի վերայ այնր տալ. իսկ Աբրահամու խօս-
տացան աւետիքն, և զաւակի նորա. և ոչ ասէ զա-
ւակաց՝ իբրև բազմաց, այլ իբրև զմիոյ, թէ և զա-
17 ւակի քում, որ է Քրիստոս: Բայց զայս ասեմ.
զկտակն յառաջագոյն հաստատեալ յԱստուծոյ 'ի
Քրիստոս, օրէնքն որ յետ չորեքարիւր և երեսուն
ամի եղան՝ ոչ կարեն խախտել առ 'ի խափանելոյ
18 զաւետիսն. եթէ յօրինաց անտի է ժառանգու-
թիւնն, ապա ոչ ևս յաւետեացն. բայց Աբրահա-
19 մու աւետեօք շնորհեաց Աստուած: Իսկ զի՞նչ իցեն
օրէնք. յանցուածոց վասն յաւելան, մինչև եկեսցէ
զաւակն որում խոստացեալն էր, կարգեալ հրեշ-
20 տակօք 'ի ձեռն միջնորդի. իսկ միջնորդ՝ միոյ ուրուք
21 ոչ է, բայց Աստուած մի է: Իսկ արդ օրէնքն հա-
կառա՞կ ինչ իցեն աւետեացն Աստուծոյ. քաւ լիցի.
զի եթէ տուեալ էին օրէնքն՝ որ կարող էին կենդա-
նի առնել, ապա հաստատ յօրինաց անտի էր արդա-
22 րութիւն: Այլ փակեցին գիրք զամենեսին ընդ մե-

զօք, զի աւետիքն ՚ի հաւատոյ անտի Յիսուսի
Քրիստոսի տացին հաւատացելոց. մինչ չև հա- 23
ւատքն եկեալ էին, ընդ օրինօք փակեալ պահէաք ՚ի
հանդերձեալ հաւատսն որ յայտնելոց էին ՚ի մեզ։
Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ՚ի Քրիստոս 24
Յիսուս, զի ՚ի հաւատոյն արդարասցուք. այլ իբրև 25
եկին հաւատքն, ոչ ևս ընդ դաստիարակաւ եմք.
քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւատովք 26
՚ի Յիսուս Քրիստոս։ Որք միանգամ ՚ի Քրիստոս 27
մկրտեցարուք՝ զՔրիստոս զգեցեալ էք. չիք խտիր, 28
ոչ Հրէի և ոչ հեթանոսի, ոչ ծառայի և ոչ ազատի,
ոչ արուի և ոչ իգի. զի ամենեքեան դուք մի էք ՚ի
Քրիստոս Յիսուս։ Ապա եթէ դուք Քրիստոսի էք, 29
ուրեմն Աբրահամու զաւակ էք, ըստ աւետեացն
ժառանգք։

ԳԼՈՒԽ Դ

Ջկ. Զայս ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն 1
տղայ է, չէ ինչ առաւել քան զծառայն, թէպէտ և
տէր իցէ ամենեցուն. այլ ընդ հազարապետօք է 2
և ընդ գաւառապետօք՝ մինչև ՚ի ժամանակակէտ
հօրն. Նոյնպէս և մեք մինչ տղայքն էաք, ընդ տա- 3
րերբք աշխարհիս ՚ի ծառայութեան կայաք։ Այլ 4
իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած
զՈրդին իւր՝ որ եղև ՚ի կնոջէ, և եմուտ ընդ օ-
րինօք. զի զնոսա որ ընդ օրինօքն իցեն՝ գնեսցէ, 5
զի մեք զորդեգրութիւն ընկալցուք։ Եւ զի էք դուք 6
որդիք, առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն իւրոյ ՚ի
սիրտս մեր, որ աղաղակէ աբբա, հայր. այսուհետև 7
չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, և ժառանգ Աս-
տուծոյ։ Այլ յայնժամ մինչ ոչն գիտէիք զԱստուած, 8
ծառայէիք այնոցիկ՝ որ ոչն էին ՚ի բնէ աստուածք.
այլ այժմիկ ծանեարուք զԱստուած, մանաւանդ թէ 9
ծանուցայք իսկ յԱստուծոյ, զիա՞րդ դառնայք միւս-

անգամ ՚ի տարերս տկարս և յաղքատս, որոց միւս-
10 անգամ զանձինս ծառայեցուցանել կամիք։ Զա-
ւուրս խտրէք, և զամիսս և զժամանակս և զտարիս.
11 երկնչիմ ՚ի ձէնջ, գուցէ թէ ՚ի զուր ինչ վաստա-
12 կեցի ՚ի ձեզ. եղերուք իբրև զիս, քանզի և ես իբրև
զձեզդ էի։ Եղբարք, աղաչեմ զձեզ, չիք ինչ ձեր
13 մեղուցեալ առ իս. գիտէք դուք՝ զի տկարութեամբ
մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն. և զփոր-
14 ձանսն որ ՚ի մարմնի իմում էին, ոչ անարգեցէք և
ոչ անգոսնեցէք. այլ իբրև զհրեշտակ Աստուծոյ
15 ընկալարուք զիս, իբրև զՔրիստոս Յիսուս։ Իսկ
արդ ո՞ւր է երանութիւնն ձեր. վկայեմ ձեզ, եթէ
16 հնար ինչ էր՝ զաչս ձեր հանէիք և տայիք ինձ. արդ
զի՞ թշնամի իմն եղէ ձեզ, զի զստոյգն խօսեցայ։
17 Այլ նախանձեցուցանեն զձեզ ոչ ի բարի. և արգե-
լուլ կամին զձեզ, զի նոցա նախանձաւորք լինիցիք.
18 բայց լաւ է նախանձաւոր լինել ՚ի բարիս յամենայն
ժամ, և ոչ միայն յորժամ ՚ի ձերում միջի իցեմ։
19 Ջդ. Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին երկ-
20 նեմ, մինչև նկարեսցի Քրիստոս ՚ի ձեզ. կամէի
այժմ գալ առ ձեզ, և փոխել զբարբառ իմ. զի տա-
21 րակուսեալ եմ ես վասն ձեր։ Ասէ՛ք ինձ՝ որ ընդ
օրինօքն կամիք լինել. չլսէ՞ք ընթերցեալ ձեր զօրէնս.
22 զի գրեալ է՝ թէ Աբրահամու երկու որդիք էին, մի
23 յաղախնոյ անտի, և մի յազատէն. այլ որ յաղախ-
նոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, և որ յազատէն՝ ըստ
24 աւետեացն. որ է առակ օրինակի։ Զի այս ինքն
են՝ երկու կտակարանք, մի ՚ի լեռնէ Սինեայ ՚ի ծա-
25 ռայութիւն ծնեալ, որ էր Հագար. քանզի Հագար՝
լեառն Սինա է յԱրաբիա. հաւասար է այսմ Ե-
րուսաղէմի. զի ծառայ է որդւովքն իւրովք հան-
26 դերձ։ Այլ վերինն Երուսաղէմ ազատ է, որ է
27 մայր մեր ամենեցուն. զի գրեալ է. Ուրախ լեր, ա-
մուլ, որ ոչ ծնանէիր, գոչեա և աղաղակեա որ ոչդ
երկնէիր. զի բազում են որդիք սնդկին առաւել

քան զարամբւոյն։ Այլ մեք, եղբարք, ըստ Սահա- 28
կայ աւետեացն որդիք եմք. այլ որպէս յայնժամ որ 29
ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հո-
գւոյն, նոյնպէս և այժմ. այլ զի՞նչ ասէ գիր. Ի բաց 30
հան զաղախինդ և զորդի դորա, զի մի՛ ժառանգես-
ցէ որդի աղախնոյդ ընդ որդւոյ ազատին։ Վասն ո- 31
րոյ, եղբարք, չեմք որդիք աղախնոյն, այլ ազատին.
ազատութեամբն որով Քրիստոս զմեզ ազատեցոյց։

ԳԼՈՒԽ Ե

ԶԶ. Պինդ կացէք այսուհետև, և մի՛ միւսանգամ 1
ընդ լծով ծառայութեան մտանէք։ Ահաւասիկ ես 2
Պաւղոս ասեմ ձեզ. զի եթէ թլփատիք, Քրիստոս
ինչ ձեզ ոչ օգնէ. վկայեմ ամենայն մարդոյ՝ որ թլ- 3
փատիցի, թէ պարտական է զամենայն օրէնսն կա-
տարել։ Խափանեալ էք 'ի Քրիստոսէ, որ օրինօքն 4
արդարանայք. և անկեալ էք 'ի շնորհաց անտի. զի 5
մեք Հոգւոյն՝ 'ի հաւատոց յուսոյն արդարութեան
ակն ունիմք. զի 'ի Քրիստոս Յիսուս՝ ոչ թլփատու- 6
թիւն ինչ կարող է, և ոչ անթլփատութիւն. այլ հա-
ւատք՝ սիրով աջողեալք։ Բարւոք ընթանայիք, ո՞ կա- 7
սեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել. զի այն 8
հրապոյրք՝ ոչ յայնմանէ են որ կոչեաց զձեզ. փոքր 9
մի խմոր զամենայն զանգուածն խմորէ։ Այլ ես յու- 10
սացեալ եմ 'ի ձեզ Տերամբ՝ թէ ոչ այլ ազգ ինչ խոր-
հիցիք. և որ խռովեցուցանէ զձեզ, կրեսցէ դատաս-
տան՝ ո՛ ոք և իցէ։ Այլ ես, եղբարք, եթէ թլփա- 11
տութիւն քարոզէի, ընդէ՞ր տակաւին հալածիմ. ա-
պա ուրեմն խափանեալ իցէ գայթագղութիւն խա-
չին։ Երանի թէ մտակտուր իսկ լինէին, որ զձեզն 12
խռովեցուցանեն. զի դուք յազատութիւն կոչեցեալ 13
էք։ Եղբարք, միայն զի ազատութիւնն ձեր ոչ լի-
նիցի 'ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք
միմեանց. զի ամենայն օրէնք 'ի մի բան կատարին, 14

15 'ի սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Ապա թէ
զմիմեանս խածատիցէք և ուտիցէք, զգոյշ լերուք՝
գուցէ 'ի միմեանց սատակիցիք։
16 ԷԴ. Բայց զայս ասեմ. Հոգւով գնացէք, և ըղ-
17 ցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք. զի մարմին ցան-
կայ հակառակ հոգւոյ, և հոգի հակառակ մարմնոյ.
և զի սոքա միմեանց հակառակ են, մի՛ զոր կամի-
18 ցիքն՝ զայն առնիցէք։ Իսկ եթէ Հոգւով վարիք,
19 ապա չէք ընդ օրինօք. զի յայտնի են գործք մարմ-
նոյ. այս ինքն են, շնութիւն, պոռնկութիւն, պղ-
20 ծութիւն, գիջութիւն, կռապաշտութիւն, կախար-
դութիւն, թշնամութիւն, հեռ, նախանձ, բար-
21 կութիւն, հակառակութիւնք, երկպառակութիւնք,
հերձուածք, չարակնութիւն, սպանութիւնք, ար-
բեցութիւնք, անառակութիւնք, և որ ինչ սոյին
նման են. զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս
և կանխաւն ասէի, թէ որ զայսպիսի ինչ գործեն՝
22 զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն։ Իսկ պտ-
ուղ Հոգւոյն այս է. սէր, խնդութիւն, խաղա-
23 ղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բա-
րութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն.
24 զայսպիսեաց աստի օրէնքն չեն հակառակ. իսկ որ
քրիստոսեանքն են՝ զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին
25 կարեօքն և ցանկութեամբք հանդերձ։ Եթէ կեամք
Հոգւով, ընդ Հոգւոյն և միաբանեսցուք. և մի՛ լի-
ցուք սնապարծք՝ միմեանց ձայն տալով, և ընդ մի-
մեանս նախանձելով։

ԳԼՈՒԽ Զ

1 ԻԶ. Եղբարք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք 'ի
ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որ հոգևորդ էք՝
հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան. ըղ-
2 գոյշ լինիցիք անձանց, զի մի՛ և դուք փորձիցիք. ըղ-
միմեանց բեռն բարձէք, և այնպէս կատարեցէք զօ-

րէնսն Քրիստոսի։ Եթէ համարիցի ոք լինել ինչ՝ 3
և չիցէ, զանձն իւր խաբէ. զգործ իւր կշռեսցէ իւ- 4
րաքանչիւր ոք, և ապա անձին իւրում միայն պար-
ծանս տացէ, և մի առ ընկերաւն. զի իւրաքանչիւր 5
ոք զիւր բեռն բառնալոց է. Հաղորդութիւն արասցէ 6
աշակերտն վարդապետին՝ յամենայն բարութիւնս։
Մի խաբիք, Աստուած ոչ արհամարհի. զի զոր ինչ 7
սերմանէ մարդ, զնոյն և հնձեսցէ. որ սերմանէ ՚ի 8
մարմին իւր՝ ՚ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականու-
թիւն, և որ սերմանէ ՚ի հոգին՝ ՚ի հոգւոյ անտի
հնձեսցէ զկեանսն յաւիտենից։ Այլ զբարիս գոր- 9
ծել մի ձանձրասցուք, զի ՚ի ժամանակի իւրում հըն-
ձեսցուք առանց լքանելոյ։ Այսուհետև մինչդեռ 10
ժամանակս ՚ի ձեռս է, գործեսցուք զբարիս առ ա-
մենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ։
Տեսէք որպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձե- 11
ռամբ. զի որ միանգամ կամին բարեմարդիկ լինել 12
մարմնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել. միայն՝ զի
մի զխաչին Քրիստոսի զհետ երթայցեն. քանզի և 13
որ թլփատեալքն իսկ են, նոքա զօրէնսն ոչ պահեն.
այլ կամին զի դուք թլփատեսջիք, զի ձերով մարմ-
ՎԵՐՋ) նովդ պարծեսցին։

Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ՚ի խաչն 14
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով ինձ աշ-
խարհ ՚ի խաչ ելեալ է, և ես աշխարհի։ Զի ոչ 15
թլփատութիւն ինչ է, և ոչ անթլփատութիւն. այլ
նոր արարածս. և որ միանգամ այսմ կանոնի միաբան 16
լինին, խաղաղութիւն ՚ի վերայ նոցա և ողորմու-
թիւն, և ՚ի վերայ Իսրայելին Աստուծոյ։ Այսու- 17
հետև աշխատ ոք զիս մի արասցէ, զի ես զխարշարանս
Քրիստոսի ՚ի մարմնի իմում կրեմ։ Շնորհք Տեառն 18
մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում, եղ-
բարք. ամէն։

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ՝ ԳՐԵՑԱՒ Ի ՀՌՈՎՄԷ։

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԸԿ. Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի
կամօքն Աստուծոյ, սրբոց որ են յԵփեսոս, և հա-
2 ւատացելոց ՚ի Քրիստոս։ Շնորհք ընդ ձեզ և խա-
ղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ՚ի Տեառնէ
3 Յիսուսէ Քրիստոսէ։ Օրհնեալ է Աստուած և
հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհ-
նեաց զմեզ ամենայն հոգևոր օրհնութեամբ յերկ-
4 նաւորս ՚ի Քրիստոս. որպէս ընտրեաց զմեզ նովաւ
յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ սուրբս
5 և անարատս առաջի նորա՝ սիրով։ Յառաջագոյն
սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ՚ի ձեռն Յիսու-
սի Քրիստոսի, ի նոյն. ըստ հաճութեան կամաց
6 իւրոց, ՚ի գովեստ փառաց շնորհաց իւրոց. որով
7 զուարճացոյց զմեզ սիրելեաւն. որով ունիմք զփըր-
կութիւն ՚ի ձեռն արեան նորա, զթողութիւն մե-
8 ղաց ըստ մեծութեան շնորհաց իւրոց. որ առաւե-
լաւ ՚ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտու-
9 թեամբ։ Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց,
ըստ հաճութեան իւրում. զոր յառաջագոյն եդ նո-
10 վաւ, ՚ի տնտեսութիւն լրման ժամանակաց, բովան-
դակել զամենայն Քրիստոսիւ որ ինչ յերկինս և որ
11 ինչ յերկրի, ՚ի նոյն։ Որով և վիճակեցաք յառա-

ջադոյն հրաւիրեալք, ըստ յառաջադրութեանն Աս֊
տուծոյ. որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց կա֊
մաց իւրոց. լինել մեզ 'ի գովեստ փառաց նորա՝ յա֊ 12
ռաջագոյն յուսացելոցս 'ի Քրիստոս: Որով և դուք 13
իբրև լուարուք զբանն ճշմարտութեան, զԱւետա֊
րանն փրկութեան ձերոյ, որով հաւատացեալ կնքե֊
ցայք Հոգւոյն սրբոյ աւետեաց. որ է առհաւատչեայ 14
ժառանգութեան մերոյ 'ի փրկութիւն նուաճու֊
թեան, 'ի գովեստ փառաց նորա:

ԲԳ. Վասն այնորիկ և ես իբրև լուայ զհաւատսն 15
ձեր որ 'ի տէր Յիսուս, և զսէրն որ ընդ ամենայն
սուրբս, ոչ դադարեմ 'ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել 16
զձեզ յաղօթս. զի Աստուած Տեառն մերոյ Յիսու֊ 17
սի Քրիստոսի, հայրն փառաց, տացէ ձեզ զհոգին
իմաստութեան և յայտնութեան՝ գիտութեամբն
իւրով: Լուսաւոր առնել զաչս սրտից, առ 'ի գիտե֊ 18
լոյ մեզ՝ զինչ է յոյս կոչման նորա, և զինչ է մեծու֊
թիւն փառաց ժառանգութեանն նորա 'ի սուրբս. և 19
զինչ է առաւելութիւն մեծութեան զօրութեանն նո֊
րա 'ի մեզ հաւատացեալս, ըստ յաջողութեան կա֊
րողութեան զօրութեանն իւրոյ, զոր յաջողեաց 'ի 20
Քրիստոս: Զի յարոյց զնա 'ի մեռելոց, և նստոյց 21
ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս, 'ի վերայ ամենայն իշ֊
խանութեան և պետութեան և զօրութեան և տէ֊
րութեան, և ամենայն անուան անուանելոյ, ոչ
միայն յաշխարհիս յայսմիկ, այլ և 'ի հանդերձելումն.
և զամենայն ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նո֊ 22
րա: Եւ զնա ետ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկե֊
ղեցւոյ, որ է մարմին նորա, լրումն որ զամենայն յա֊ 23
մենայնի լնու:

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ դուք որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր և յան֊
2 ցանս, յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշխար֊
հիս այսորիկ, ըստ իշխանին իշխանութեան օդոյս
այսոյ, որ այժմ ընդմտեալ է յորդիսն ապստամբու֊
3 թեան. յորս և մեք ամենեքեան շրջէաք երբեմն,
'ի ցանկութիւն մարմնոյ մերոյ, և առնէաք զկամս
մարմնոյ և զմտաց, և էաք արդարև որդիք բարկու֊
թեան իբրև այլքն:
4 ԲԴ. Այլ Աստուած որ մեծն է ողորմութեամբ,
վասն բազում սիրոյն իւրոյ զոր սիրեաց զմեզ, մինչ
5 դեռ մեռեալն էաք 'ի մեղս մեր, կենդանիս արար
զմեզ 'ի Քրիստոս. քանզի շնորհօք ապրեցաք. ընդ
6 նմին յարոյց, և ընդ նմին նստոյց յերկնաւորս 'ի
7 Քրիստոս Յիսուս. զի ցուցցէ 'ի յաւիտեանսն որ
գալոցն են՝ զառաւել մեծութիւն շնորհացն իւրոց՝
8 քաղցրութեամբ 'ի մեզ 'ի Քրիստոս Յիսուս: Զի
շնորհօք նորա էք փրկեալք 'ի ձեռն հաւատոցն. և
9 այս ոչ 'ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգև է. ոչ 'ի գոր֊
10 ծոց, զի մի ոք պարծեսցի. զի նորա արարած եմք,
հաստատեալք Քրիստոսիւ Յիսուսիւ 'ի գործս բա֊
րութեան, յորս յառաջագոյն պատրաստեաց Աս֊
11 տուած, զի 'ի նոյն գնասցուք: Վասն որոյ և դուք
յիշեցէք, զի երբեմն հեթանոսք էիք մարմնով, որ
կոչեցեալն են անթլփատութիւն՝ յանուանեալ թլ֊
12 փատութենէ անտի մարմնաւոր ձեռագործին. զի
էիք 'ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի, և
տարագիրք յուխտից աւետեացն, և յոյս ինչ ոչ ու֊
13 նէիք, և անաստուածք էիք յաշխարհի: Իսկ այժմ
'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, դուք՝ որ երբեմն հե֊
ռաւորքն էիք, մերձաւորք եղերուք արեամբն Քրիս֊
14 տոսի: Զի նա է խաղաղութիւն մեր, որ արար զեր֊

կոսեան մի, և զմիջնորմ ցանկոյն քակեաց՝ զթշնա-
մութիւն 'ի մարմնի իւրում, և զօրէնս պատուիրա- 15
նացն՝ հրամանօքն խափանեաց. զի զերկոսին հաս-
տատեսցէ ինքեամբ 'ի մի նոր մարդ, և արասցէ խա-
ղաղութիւն, և հաշտեցուսցէ զերկոսին միով մարմ- 16
նով ընդ Աստուծոյ խաչիւն իւրով: Քանզի սպան
զթշնամութիւն յանձին իւրում, և եկն աւետարա- 17
նեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց, և խաղա-
ղութիւն մերձաւորաց. զի նովաւ ունիմք զնուաճու- 18
թիւն երկոքին միով Հոգւով առ Հայր: Ապա այ- 19
սուհետև ոչ էք օտարք և պանդուխտք, այլ քաղա-
քակիցք սրբոց և ընտանիք Աստուծոյ. շինեալք 'ի 20
վերայ հիման Առաքելոց և մարգարէից, որոյ է գլուխ
անկեանն Յիսուս Քրիստոս, յորում ամենայն շի- 21
նուածն յօդեալ և պատշաճեալ աճէ 'ի տաճար
սուրբ Տերամբ. յորում և դուք ընդ նմին շինիք 'ի 22
ՎԵՐՋ) բնակութիւն Աստուծոյ Հոգւով:

ԳԼՈՒԽ Գ

Վասն այսորիկ ես Պաւղոս կապեալ Յիսուսի 1
Քրիստոսի, վասն ձեր հեթանոսաց. թերևս լուեալ 2
իցէ ձեր զտնտեսութիւն շնորհացն Աստուծոյ, որ
տուեալ են ինձ 'ի ձեզ: Զի ըստ յայտնութեան 3
ցուցաւ ինձ խորհուրդն, որպէս յառաջագոյն գրեցի
առ ձեզ սակաւուք, առ 'ի կարող լինելոյ ընթեռնուլ 4
և 'ի միտ առնուլ զիմաստութիւնն իմ 'ի խորհըր-
դեանն Քրիստոսի: Զի այլոց ազգաց ոչ ցուցաւ 5
որդւոց մարդկան, որպէս և այժմ յայտնեցաւ սրբոց
իւրոց՝ Առաքելոց և մարգարէից՝ Հոգւովն. լինել 6
հեթանոսաց ժառանգակիցս և մարմնակիցս, և հա-
ղորդս աւետեացն 'ի Քրիստոս Յիսուս՝ Աւետարա-
նաւն, որոյ եղէ ես սպասաւոր, ըստ պարգևաց շնոր- 7
հացն Աստուծոյ որ տուաւ ինձ՝ ըստ յաջողութեան

8 զօրութեանն նորա: Ինձ որ տրուպս եմ ամենայն սըր-
բոց՝ տուան շնորհքս այս՝ 'ի հեթանոսս աւետարա-
9 նել զանքնին մեծութիւնն Քրիստոսի. և լուսաւոր
առնել զամենեսին, թէ զինչ է տնտեսութիւն խոր-
հըրդոյն, որ ծածկեալ էր յամենայն յաւիտենից՝
10 առ Աստուծոյ որ զամենայն ինչ արար: Զի յայտ-
նեսցի արդ իշխանութեանց և պետութեանց՝ որ յեր-
կինս են, 'ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաս-
11 տութիւնն Աստուծոյ. ըստ յառաջադրութեան յա-
ւիտենիցն՝ զոր արար 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսու-
12 սի Քրիստոսի. որով ունիմք զհամարձակութիւն
և զնուաճութիւն յուսով 'ի ձեռն հաւատոց նո-
13 րա. վասն որոյ աղաչեմ մի ձանձրանալ 'ի նեղու-
թեանս մերում, որ վասն ձեր է, որ է փառք մեր:
14 Վասն այսորիկ դնեմ ծունր առ Հայր Տեառն
15 մերոյ Յիսուսի Քրիստոսի, ուստի ամենայն նա-
հապետութիւն յերկինս և յերկրի անուանի, զի
16 տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրոց, հաս-
17 տատել զօրութեամբ 'ի ձեռն Հոգւոյն իւրոյ, 'ի
ներքին մարդն բնակել Քրիստոսի հաւատովք 'ի
սիրտս ձեր. սիրով արմատացեալք և հաստատեալք:
18 Զի կարող լինիջիք հասանել ընդ ամենայն սուրբս,
զինչ է լայնութիւն և երկայնութիւն, և բարձրու-
19 թիւն և խորութիւն. ճանաչել զառաւելութիւն գի-
տութեան սիրոյն Քրիստոսի. զի լցջիք ամենայն
20 լրութեամբն Աստուծոյ: Այլ այնմ որ կարօղն է ա-
ռաւել քան զամենայն ինչ առնել յաճախութեամբ՝
քան զոր խնդրեմքն և իմանամք, ըստ զօրութեանն
21 որ յաջողեալն է 'ի մեզ, նմա փառք յեկեղեցւոջն և
'ի Քրիստոս Յիսուս, յամենայն ազգս յաւիտենից
յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ Դ

Արդ աղաչեմ զձեզ՝ ես որ կապեալս եմ 'ի Տէր՝ 1
արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք. ամենայն
խոնարհութեամբ և հեզութեամբ և երկայնմտու- 2
թեամբ, անսալ միմեանց սիրով. փութալ պահել 3
զմիաբանութիւն Հոգւոյն յօդիւ խաղաղութեան.
մի մարմին և մի հոգի, որպէս և կոչեցարուք 'ի մի 4
յոյս կոչման ձերոյ: Մի է Տէր, մի հաւատք, մի
մկրտութիւն. մի Աստուած և հայր ամենեցուն, որ 5
'ի վերայ ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին 6
'ի մեզ: Այլ իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ տուեալ 7
են շնորհք ըստ չափոյ պարգևացն Քրիստոսի. վասն 8
որոյ և ասէ. Ել 'ի բարձունս՝ գերեաց զգերութիւն,
և ետ պարգևս մարդկան: Որ ելն զի՞նչ է, եթէ ոչ՝ 9
զի էջ նախ 'ի ստորին կողմ երկրի. որ էջն, նոյն է 10
և որ ելն 'ի վերոյ քան զամենայն երկինս, զի լցցէ
զամենայն: Եւ նա ետ զոմանս Առաքեալս, զոմանս 11
մարգարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս հովիւս
և վարդապետս, 'ի հաստատութիւն սրբոց, 'ի գործ 12
պաշտաման, 'ի շինուած մարմնոյն Քրիստոսի. մին- 13
չև հասցուք ամենեքեան 'ի մի միաբանութիւն հա-
ւատոյ և գիտութեան Որդւոյն Աստուծոյ, յայր կա-
տարեալ 'ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի:
Զի մի՛ յայսմհետէ լիցուք տղայք խռովեալք և տա- 14
տանեալք յամենայն հողմոց վարդապետութեան,
խաբէութեամբ մարդկան, խորամանգութեամբ 'ի
խաբէութիւն մոլորութեան. այլ ճշմարտեալք սի- 15
րով՝ աճեցուսցուք 'ի նա զամենայն, որ է գլուխ
Քրիստոս. ուստի ամենայն մարմինն յօդեալ և 16
պատշաճեալ ամենայն խաղալեօք տարաբերութեն՝
ըստ ազդեցութեան՝ չափով ըստ իւրաքանչիւր մա-
սին՝ զաճումն մարմնոյ գործէ՝ 'ի շինած անձին իւ-

17 րոյ սիրով: Արդ զայս ասեմ և ուխտեմ 'ի Տէր. մի՛
ևս ձեզ զնոյն օրինակ գնալ, որպէս և այլ հեթա-
18 նոսք գնան՝ ունայնութեամբ մտաց իւրեանց. որոց
խաւարեալ են սիրտք իւրեանց, և օտարացեալ են
'ի կենաց անտի Աստուծոյ, վասն տգիտութեանն որ
19 է 'ի նոսա, վասն կուրութեան սրտից իւրեանց. որք
զանձանց իւրեանց զյոյսն հատին, և մատնեցին զան-
ձինս գիջութեան, 'ի գործս ամենայն պղծութեան
20 ագահութեամբ: Այլ դուք ոչ այսպէս ուսարուք
21 զՔրիստոս. թէպէտ և լուարուք զնմանէ՝ և նովաւ
22 ուսայք, որպէս է ճշմարտութիւնն Յիսուսի. 'ի բաց
մերկանալ 'ի ձէնջ ըստ առաջին գնացիցն զմարդն հին,
23 զապականեալն ցանկութեամբք խաբէութեանն, և
նորոգել հոգւովն մտաց ձերոց, և զգենուլ զնոր
24 մարդն՝ որ ըստ Աստուծոյն հաստատեալ է, ար-
դարութեամբ և սրբութեամբ ճշմարտութեանն:
25 Վասն որոյ 'ի բաց ընկեցէք զստութիւն, խօսեցա-
րուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւ-
26 րում. զի եմք միմեանց անդամք. բարկանայք՝ և մի՛
մեղանչէք, արեգակն 'ի վերայ բարկութեան ձերոյ
27 մի՛ մտցէ, և մի՛ տայք տեղի սատանայի: Որ գողա-
28 նայրն՝ մի՛ ևս գողասցի, այլ մանաւանդ վաստակես-
ցէ գործել ձեռօք իւրովք զբարիս, զի բաւական ի-
29 ցէ տալ ումեք պիտոյ իցէ: Ամենայն բան տգեղ 'ի բե-
րանոյ ձերմէ մի՛ ելցէ. այլ որ ինչ բարին է, 'ի շինած
30 պիտոյից, զի տացէ շնորհս այնոցիկ որ լսենն. և մի՛
տրտմեցուցանէք զՀոգին սուրբ Աստուծոյ, որով
31 կնքեցարուք յաւուրն փրկութեան: Ամենայն դառ-
նութիւն և բարկութիւն և սրտմտութիւն և աղա-
ղակ և հայհոյութիւն՝ բարձցի 'ի ձէնջ ամենայն չա-
32 րութեամբն հանդերձ: Լերուք ընդ միմեանս քաղ-
ցունք՝ գթածք, շնորհել միմեանց՝ որպէս և Աս-
տուած Քրիստոսիւ շնորհեաց մեզ:

ԳԼՈՒԽ Ե

Եղերուք նմանօղք Աստուծոյ՝ իբրեւ որդիք սիրե- 1
լիք, և գնացէք սիրով՝ որպէս և Քրիստոս սիրեաց 2
զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր՝ պատարագ
և զենումն Աստուծոյ 'ի հոտ անուշից։ Այլ պոռն- 3
կութիւն և ամենայն պղծութիւն կամ ագահու-
թիւն՝ և անուանեսցի մի 'ի միջի ձերում, որպէս և
վայելէ սրբոց. և զազրութիւն, կամ խօսք յիմարու- 4
թեան, կամ խեղկատակութիւն, որ ոչ վայելէ.
այլ մանաւանդ գոհութիւն։ Զայս տեղեկացեալ 5
գիտասջիք, թէ ամենայն պոռնիկ, կամ պիղծ, կամ
ագահ՝ որ է կռապաշտ, ոչ ունի ժառանգութիւն
յարքայութեանն Քրիստոսին և Աստուծոյ։ Մի 6
ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտեօք. զի վասն այ-
սորիկ իսկ գայ բարկութիւն Աստուծոյ 'ի վերայ որ-
դւոցն անհաւանութեան։ Մի այսուհետեւ լինիք 7
բաժանորդք նոցա. զի թէպէտ և երբեմն էիք խա- 8
ւար, արդ լոյս էք 'ի Տէր, իբրեւ զորդիս լուսոյ գնա-
ցէք. զի պտուղ լուսոյ ամենայն բարութեամբ է և 9
արդարութեամբ և ճշմարտութեամբ։ Փորձեցէք՝ 10
զինչ է հաճոյ Տեառն, և մի կցորդ լինիք անպտղու- 11
թեան գործոցն խաւարի, այլ մանաւանդ յանդիմա-
նեցէք. զի որ 'ի ծածուկ ինչ գործի 'ի նոսա, զայն 12
և խօսել աղտեղի է. այլ ամենայն ինչ յանդիմա- 13
նեալ 'ի լուսոյ՝ յայտնի լինի, զի ամենայն ինչ որ
յայտնի է՝ լոյս է։ Վասն որոյ և ասէ. արի որ նն- 14
ջեսդ, և կանգնեաց 'ի մեռելոց, և լուսատու լիցի
քեզ Քրիստոս։

Թկ. Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք. մի իբ- 15
րեւ անիմաստք, այլ իբրեւ իմաստունք. գնեցէք ըզ- 16
ժամանակս, զի աւուրքս չարութեան են. վասն այ- 17
նորիկ մի լինիք անմիտք, այլ իմացարուք զինչ են

18 կամք Տեառն։ Եւ մի արբենայք գինւով՝ յորում
զեղխութիւն է, այլ մանաւանդ լցարուք հոգւով.
19 խօսել 'ի սիրտս ձեր սաղմոսիւք և օրհնութեամբք,
և երգովք հոգեւորօք, երգել և սաղմոս ասել 'ի
20 սիրտս ձեր Տեառն։ Գոհացարուք յամենայն ժամ
'ի վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի
21 Քրիստոսի՝ Հօրն և Աստուծոյ. հնազանդ լերուք
22 միմեանց երկիւղին Քրիստոսի։ Կանայք իւրեանց
23 արանց հնազանդ լիցին իբրեւ Տեառն. զի այր է
գլուխ կնոջ, որպէս և Քրիստոս գլուխ է եկեղե-
24 ցւոյ, և ինքն է փրկիչ մարմնոյ. այլ որպէս եկեղե-
ցին հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս և կանայք
25 իւրեանց արանց յամենայնի։ Արք, սիրեցէք զկա-
նայս ձեր, որպէս և Քրիստոս սիրեաց զեկեղեցի,
26 և զանձն իւր մատնեաց վասն նորա, զի զնա սրբես-
27 ցէ սրբութեամբ աւազանին բանիւ. զի կացուսցէ
ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի ու-
նիցի ինչ արատ, կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ
28 յայսպիսեաց. այլ զի իցէ սուրբ և անարատ։ Նոյն-
պէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ իբրեւ
զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր, զանձն իւր
29 սիրէ. զի ոչ ոք երբեք ատեաց զանձն իւր, այլ սնու-
ցանէ և դարմանէ զնա, որպէս և Քրիստոս զեկե-
30 ղեցի. զի անդամք եմք մարմնոյ նորա, 'ի մարմնոյ
31 նորա և յոսկերաց նորա։ Վասն այսորիկ թողցէ այր
զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ,
32 և եղիցին երկոքին 'ի մարմին մի։ Խորհուրդս այս
մեծ է, բայց ես ասեմ իսկ 'ի Քրիստոս և յեկեղե-
33 ցի. այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրա-
քանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրեւ զիւր
անձն, և կին երկնչիցի յառնէ իւրմէ։

ԳԼՈՒԽ Զ

ԹԴ. Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց 'ի 1
Տէր, զի այն է արժանն: Պատուեա զհայր քո և 2
զմայր, որ է առաջին պատուիրան յաւետիւն, զի
քեզ բարի եղիցի, և երկայնակեաց լինիցիս 'ի վե- 3
րայ երկրի: Հարք, մի զայրացուցանէք զորդիս ձեր, 4
այլ սնուցանիջիք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն:
Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմ- 5
նաւորաց, ահիւ և դողութեամբ և միամտութեամբ
սրտից ձերոց՝ որպէս և Քրիստոսի: Մի առ ակա- 6
նէ ծառայել իբրև մարդահաճոյք, այլ իբրև ծա-
ռայք Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ. սրտի 7
մտօք ծառայել իբրև Տեառն, և մի իբրև մարդկան.
գիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ զինչ առնէ զբա- 8
րին՝ զնոյն ընդունի 'ի Տեառնէ, եթէ ծառայ և եթէ
ազատ: Եւ դուք, տեարք, զնոյն առնիջիք առ նո- 9
սա, ներելով առնել զպատուհասն. գիտասջիք՝ թէ
և նոցա և ձեր Տէր գոյ յերկինս, և ակնառութիւն
ոչ գոյ առաջի նորա: Այսուհետև զօրացարուք Տե- 10
րամբ և կարողութեամբ զօրութեանն նորա. և զգե- 11
ցարուք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող
լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Զի ոչ է 12
մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ
ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, և ընդ աշ-
խարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարու-
թեան որ 'ի ներքոյ երկնից:

ԹԶ. Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն 13
Աստուծոյ, զի կարող լինիցիք 'ի դիմի հարկանել
չարին յաւուրն չարութեան: Եւ իբրև զամենայն 14
ինչ կատարիցէք, հաստատուն կայցէք, զտեղի կալ-
ջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, և
զգեցեալ զզրահսն արդարութեան, և ագուցեալ 15
զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղու-

16 թեան: Եւ 'ի վերայ ամենայնի առէք զվահանն հա-
ւատոց, որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս
17 չարին շիջուցանել. և առէք զսաղաւարտն փրկու-
թեան, և զսուսեր Հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ.
18 ամենայն աղօթիւք և խնդրուածովք՝ աղօթս առ-
նել յամենայն ժամանակի հոգւով. և 'ի նոյն տքնես-
ջիք ամենայն ժուժկալութեամբ և խնդրուածովք՝
19 վասն ամենայն սրբոց, և վասն իմ, զի ինձ տացի բան
'ի բանալ բերանոյ իմոյ՝ համարձակութեամբ ցու-
20 ցանել զխորհուրդս Աւետարանին, վասն որոյ պատ-
գամաւորիմ կապանօքս, զի նովին համարձակեցայց
21 որպէս և պարտ իցէ ինձ խօսել: Բայց զի գիտիցէք
և դուք զինէն զինչ գործիցեմ, զամենայն ինչ ցուց-
ցէ ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայր և հաւատարիմ
22 պաշտօնեայ 'ի Տէր. զոր առաքեցի առ ձեզ դմին ի-
րի, զի գիտասջիք դուք զմէնջ, և մխիթարեսցէ ըզ-
23 սիրտս ձեր: Խաղաղութիւն ընդ եղբարս, և սէր
հաւատովքն հանդերձ յԱստուծոյ 'ի Հօրէ և 'ի
24 Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Շնորհք ընդ ամե-
նեսին՝ ոյք սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս ա-
նեղծութեամբ:

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ՝ ԳՐԵՑԱՒ Ի ՀՌՈՎՄԷ Ի ՁԵՌՆ ՏԻՒՔԻԿՈՍԻ:

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

ԺԿ. Պաւղոս և Տիմոթէոս ծառայք Յիսուսի 1
Քրիստոսի՝ ամենայն սրբոց 'ի Քրիստոս Յիսուս,
որ են 'ի կողմանս փիլիպեցւոց, եպիսկոպոսակցօք և
սարկաւագօք։ Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն 2
յԱստուծոյ Հօրէ մերմէ, և 'ի տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ։ Գոհանամ զԱստուծոյ իմոյ 'ի վերայ 3
ամենայն յիշատակաց ձերոց. յամենայն ժամ յամե- 4
նայն խնդրուածս իմ վասն ձեր ամենեցուն առնել
աղօթս խնդութեամբ, վասն հաղորդութեան ձե- 5
րոյ ընդ Աւետարանին՝ յօրէ յառաջնմէ մինչև ցայժմ։
Վստահ եմ յայդ, թէ որ սկսաւն 'ի ձեզ զգործս 6
բարեաց՝ կատարեսցէ մինչև յօրն Յիսուսի Քրիս-
տոսի. որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս 7
վասն ձեր ամենեցուն, վասն ունելոյ ինձ զձեզ 'ի
սրտի 'ի կապանս իմում և 'ի պատասխանատուութեան
իմում և 'ի հաստատութեան Աւետարանին, կցորդս
ինձ շնորհաց զձեզ ամենեսին լինել։ Վկայ է ինձ 8
Աստուած, որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենե-
սին գթովքն Քրիստոսի Յիսուսի. և զայն աղօթս 9
առնեմ, զի սէրն ձեր ևս քան զևս առաւել լցի 'ի
գիտութեան և յամենայն իմաստութեան. ընտրել 10
ձեզ զլաւն, զի իցէք հաստատունք և առանց գայ-
թագղութեան 'ի յաւուրն Քրիստոսի. լցեալ պտղ- 11

զովք արդարութեան 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի,
'ի փառս և 'ի գովեստ Աստուծոյ։
12 ԺԴ. Կամիմ թէ գիտիցէք, եղբարք, զի որ ինչ
վասն իմ էր, ևս քան զևս 'ի յառաջադիմութիւն
13 Աւետարանին եկն. մինչև կապանաց իմոց յայտնի
լինել 'ի Քրիստոս յամենայն հրապարակիս, և առ
14 այլս ամենեսեան, և առ բազում եղբարս 'ի Տէր,
որ վստահ են կապանօքս իմովք, առաւել ևս հա-
մարձակել՝ առանց երկիւղի զբանն Աստուծոյ խօսել։
15 Ոմանք առ նախանձու և հակառակութեան, և ո-
մանք մտադիւրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն.
16 և ոմանք 'ի սիրոյ, քանզի գիտեն եթէ 'ի պատաս-
17 խանատուութիւն Աւետարանին կամ. և ոմանք առ
հեստութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբու-
թեամբ. քանզի համարին նեղութիւնս յարուցանել
18 'ի վերայ կապանաց իմոց։ Բայց այս զինչ է. որով
օրինակաւ և իցէ, եթէ պատճառանօք և եթէ ճըշ-
մարտութեամբ, Քրիստոս պատմի. և ընդ այս խըն-
19 դամ, այլ և ուրախ ևս եղէց. զի գիտեմ եթէ այս
պահի ինձ 'ի փրկութիւն 'ի ձերոց խնդրուածոց. և
20 'ի պարգևաց հոգւոյն Յիսուսի Քրիստոսի, ըստ
ակնկալութեան և յուսոյն իմոյ. զի մի՛ իւիք յամօթ
եղէց, այլ ամենայն համարձակութեամբ՝ որպէս
յամենայն ժամ՝ և այժմ մեծասցի Քրիստոս 'ի
21 մարմնի իմում, եթէ կենօք և եթէ մահու։ Զի
22 ինձ կեանք Քրիստոս է, և մեռանել շահ. ապա ե-
թէ կեանքս մարմնոյ, այս ինձ պտուղ գործոյ է. և
23 զինչ ընտրեցից, զայն ոչ գիտեմ. Նեղեալ եմ յեր-
կոցունց. զցանկալն ելանել և ընդ Քրիստոսի լի-
24 նել՝ առաւել լաւ համարիմ, և կալ մնալ աստէն 'ի
25 մարմնի՝ կարևոր ևս վասն ձեր։ Եւ զայս յուսացեալ
գիտեմ, եթէ կացից և մնացից ամենեցուն ձեզ, 'ի
26 ձեր զարգանալ և խրախ լինել 'ի հաւատս. զի պար-
ծանք ձեր առաւել լինիցին 'ի Քրիստոս Յիսուս ի-
ՎԵՐՋ) նև 'ի միւսանգամ գալստեան իմում առ ձեզ։

Միայն թէ արժանի աւետարանին գնայցէք. զի ե- 27
թէ գայցեմ և տեսանիցեմ զձեզ, և եթէ հեռի ի-
ցեմ և լսիցեմ զձէնջ, զի հաստատուն կայցէք 'ի մի
հոգի, և միով շնչով նահատակիցիք 'ի հաւատս
Աւետարանին. և մի զանգիտիցէք և մի իւիք 'ի հա- 28
կառակորդաց անտի, որ է նոցա հանդէս կորստեան,
և ձերոյ փրկութեան: Եւ այդ յԱստուծոյ է, որ 29
ձեզ շնորհեցաւ վասն Քրիստոսի, ոչ միայն 'ի նա
հաւատալ՝ այլ և վասն նորա չարչարել. զնոյն պա- 30
տերազմ ունել՝ զոր յիս տեսէք, և այժմ լսէք
յինէն:

ԳԼՈՒԽ Բ

Արդ եթէ մխիթարութիւն ինչ իցէ 'ի Քրիս- 1
տոս, եթէ սփոփութիւն սիրոյ, եթէ հաղորդու-
թիւն հոգւոյ, եթէ գթութիւն և ողորմութիւն,
լցէք զխնդութիւնս իմ. զնոյն խորհիջիք, զնոյն սէր 2
յանձին ունիջիք, համաշունչք, միախորհուրդք. մի 3
ինչ ըստ գրգռութեան և մի ինչ ըստ մնապարծու-
թեան, այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ հա-
մարել առաւել քան զանձինս. մի զանձանց ևեթ 4
գիտել, այլ իւրաքանչիւր ոք զընկերին: Զայն խոր- 5
հեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ, որ և 'ի Քրիստոս
Յիսուս. որ 'ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ 6
յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար
Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս 7
ծառայի առեալ, 'ի նմանութիւն մարդկան եղեալ,
և կերպարանօք գտեալ իբրև զմարդ. խոնարհեցոյց 8
զանձն, լեալ հնազանդ մահու չափ և մահու խա-
չի: Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրա- 9
ցոյց, և շնորհեաց նմա անուն որ 'ի վեր է քան զա-
մենայն անուն. զի յանուն Յիսուսի Քրիստոսի ա- 10
մենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւո-
րաց և սանդարամետականաց. և ամենայն լեզու 11

խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս 'ի
փառս Աստուծոյ հօր:
12 Ժ.Զ. Այսուհետև, սիրելիք իմ, որպէս յամենայ-
նի հնազանդեցարուք, մի միայն 'ի գալստեան ի-
մում, այլ առաւել ևս այժմ՝ յորժամ հեռի եմ 'ի
ձէնջ, ահիւ և դողութեամբ զանձանց փրկութիւն
13 գործեցէք. զի Աստուած է որ յաջողէ 'ի մեզ զկա-
14 մելն և զառնելն վասն հաճութեան: Զամենայն
15 ինչ գործեցէք առանց տրտնջելոյ և քրթմնջելոյ. զի
եղիջիք անբիծք և անարատք՝ որդիք Աստուծոյ, ան-
մեղք 'ի մէջ կամակոր և խեղաթիւր ազգին. յորոց
16 միջի երևիցիք իբրև լուսաւորք յաշխարհի. զբանն
կենաց ունել յանձինս՝ 'ի պարծանս ինձ յաւուրն
Քրիստոսի, զի ոչ ընդունայն ինչ ընթացայ, և ոչ
17 ընդունայն վաստակեցի: Այլ թէպէտ և նուիրիմ
'ի վերայ պատարագի և պաշտաման հաւատոցն ձե-
րոց, խնդամ և ուրախակից եմ ամենեցուն ձեր.
18 նոյնպէս և դուք խնդացէք և ուրախակից եղերուք
19 ինձ: Բայց յուսամ 'ի Տէր Յիսուս՝ զՏիմոթէոս
վաղվաղակի արձակել առ ձեզ. զի և ինձ սրտի դիւր
20 լինիցի, յորժամ գիտիցեմ ինչ զձէնջ. զի ոչ զոք
ունիմ համաշունչ, եթէ ընտանեբար հոգայցէ վասն
21 ձեր. զի ամենեքին զանձանց խնդրեն, և ոչ զՅի-
22 սուսի Քրիստոսի: Բայց զփորձ նորա գիտէք և
դուք, զի իբրև որդի հօր ծառայեաց ընդ իս յԱւե-
23 տարանին. արդ զսա ակն ունիմ արձակել, որպէս
24 նոյնհետայն զանձնէ ստուգեցից. այլ յուսացեալ
25 եմ 'ի Տէր՝ թէ և ես իսկ ընդ հուպ եկից: Բայց
լաւ համարեցայ զԵպափրոդիտոս զեղբայր և զգոր-
ծակից և զինուորակից իմ, զձեր Առաքեալ և զպաշ-
26 տօնեայ իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ. քանզի և
ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամենեսին
զձեզ. և հոգայր, զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ.
27 և արդարև խօթացաւ մերձ 'ի մահ, այլ Աստուած
ողորմեցաւ նմա, ոչ նմա միայն, այլ և ինձ. զի մի

տրտմութիւն՚ի վերայ տրտմութեան կրիցեմ։ Արդ 28
փութապէս յղեցի զնա, զի տեսեալ զնա միւսան-
գամ ուրախ լինիցիք, և ես առանց տրտմութեան ե-
ղէց։ Ընկալջիք զնա՚ի Տէր ամենայն խնդութեամբ, 29
և զայնպիսիսն առ պատուականս ունիջիք. զի վասն 30
գործոյ Տեառն մինչև՚ի մահ մերձեցաւ, դուն գոր-
ծեալ ոգւովք չափ, զի լցցէ զձեր պակասութիւն ի-
ՎԵՐՋ) մոյ սպասաւորութեան։

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Այսուհետև, եղբարք իմ, ուրախ լերուք՚ի Տէր. 1
զնոյն գրել առ ձեզ ինձ ոչ դանդաղելի է, և ձեզ կա-
րի զգուշալի։ Զգոյշ եղերուք ի շանց անտի, զգոյշ 2
եղերուք՚ի չար մշակաց անտի, զգոյշ եղերուք՚ի
կրճատութենէ անտի. զի թլփատութիւնն մեք 3
եմք, որ Հոգւովն Աստուծոյ պաշտեմք, և պար-
ծիմք՚ի Քրիստոս Յիսուս, և ոչ՚ի մարմին պան-
ծացեալ եմք։ Թէպէտ և ես իսկ զնոյն վստահու- 4
թիւն ունիմ և՚ի մարմնի. եթէ ոք համարիցի այլ
ազգ վստահ լինել՚ի մարմին, առաւել ևս ես. թլ- 5
փատութեամբ ութօրեայ, յազգէ Իսրայելի, ՚ի ցե-
ղէ Բենիամինի, եբրայեցի յեբրայեցւոց, ըստ օրի-
նացն փարիսեցի, ըստ նախանձայոյզ լինելոյ՝ հալա- 6
ծէի զեկեղեցին, ըստ արդարութեան օրինացն լինեալ
անարատ։ Այլ որ ինչ ինձ շահն էր, զայն վնաս հա- 7
մարիմ վասն Քրիստոսի. այլ և համարիմ իսկ զա- 8
մենայն վնաս՝ վասն առաւել գիտութեանն Յիսուսի
Քրիստոսի Տեառն մերոյ. վասն որոյ յամենայնէ
զրկեցայ՝ և համարիմ կղկղանս, զի զՔրիստոս շա-
հեցայց, և գտայց՚ի նմա. իբրև ոչ եթէ զիմ ինչ 9
արդարութիւն՝ որ յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ
զհաւատոյն Քրիստոսի՝ որ յԱստուծոյ արդարու-
թիւնն է. հաւատովք ճանաչել զնա, և զզօրութիւն 10

յարութեան նորա, և զհաղորդութիւն չարչարա-
11 նաց նորա, կերպարանակից լինել մահու նորա, թէ
12 որպէս հասից՚ի մեռելոցն յարութիւն։ Իբր ոչ ե-
թէ արդէն առեալ իցէ, կամ արդէն կատարեալ ի-
ցեմ. զհետ մտեալ եմ թէ հասից, մանաւանդ թէ
13 ըմբռնեալ իսկ իցեմ՚ի Քրիստոսէ Յիսուսէ։ Եղ-
բարք, ես ոչ համարիմ զանձն իմ թէ հասեալ ի-
ցեմ. բայց մի ինչ է, զի զառ՚ի յետոյսն մոռացեալ
14 է, և՚ի յառաջադէմսն նկրտեալ եմ. ուշ եդեալ
ընթանամ՚ի կէտ կոչմանն Աստուծոյ, ՚ի Քրիս-
15 տոս Յիսուս։ Այսուհետև որ միանգամ կատա-
րեալքդ էք՝ զայս խորհեցարուք. և եթէ այլ ազգ
ինչ խորհիցիք, սակայն և զայն Աստուած ձեզ յայտ-
16 նեսցէ։ Բայց յոր ժամանեցաքս՝ զնոյն խորհել, և
17 սմին կանոնի միաբան լինել. Նմանօղք ինձ եղիջիք,
եղբարք, և գիտասջիք զայնպիսիսն որ այնպէս գը-
18 նայցեն, որպէս ունիքդ զմեզ ձեզ օրինակ։ Զի բա-
զումք գնան, զորոց բազումանգամ ասէի ձեզ. բայց
արդ և լալով իսկ ասեմ զթշնամեաց խաչին Քրիս-
19 տոսի. որոց կատարածն կորուստ է, որոց Աստուած
որովայնն իւրեանց է, և փառք ամօթն իւրեանց,
20 որք զերկրաւորս ևեթ խորհին։ Այլ մեր առաքի-
նութիւնն յերկինս է, ուստի և Փրկչին ակն ունիմք՝
21 Տեառն Յիսուսի Քրիստոսի. որ նորոգեսցէ զմար-
մին խոնարհութեան մերոյ, կերպարանակից լինել
մարմնոյ փառաց իւրոց, ըստ զօրութեանն՝ առ՚ի կա-
րող լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրև զա-
մենայն։

Գ Լ Ո Ւ Խ Դ.

1 Այսուհետև, եղբարք իմ սիրելիք և անձկալիք,
ուրախութիւն իմ և պսակ, այսպէս հաստատուն կա-
2 ցէք՚ի Տէր, սիրելիք. զԵւոդիա աղաչեմ, և զՍին-
3 տիք աղաչեմ զնոյն խորհել՚ի Տէր։ Այո աղաչեմ

և զքեզ, մտերիմ իմ և լծակից, և դու օգնական
լինիջիր նոցա՝ ոյք յԱւետարանին նահատակեցան
ընդ իս Կղեմաւ հանդերձ, և այլովք գործակցօք ի-
մովք, որոց անուանքն 'ի դպրութեան կենաց: Ու- 4
րախ լերուք 'ի Տէր յամենայն ժամ. դարձեալ ասեմ,
ուրախ լերուք. հեզութիւն ձեր յայտնի լիցի ամե- 5
նայն մարդկան. Տէր մերձ է: Մի ինչ հոգայք. այլ 6
ամենայն աղօթիւք և խնդրուածովք, գոհութեամբ
խնդրուածք ձեր յայտնի լիցին առ Աստուած. և խա- 7
ղաղութիւնն Աստուծոյ՝ որ 'ի վեր է քան զամենայն
միտս, պահեսցէ զսիրտս ձեր և զմիտս 'ի Քրիստոս
Յիսուս:

ԱԿ. Այսուհետև, եղբարք, որ ինչ ճշմարտու- 8
թեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ ար-
դարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով,
որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ
ինչ գովութեամբ, զայն խորհիջիք. զոր ուսարուքն և 9
ընկալարուք, և լուայք և տեսէք յիս, զայն արարէք.
և Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ: Ու- 10
րախ եղէ ես 'ի Տէր յոյժ, զի և դուք զմտաւ ածէք
հոգալ ինչ վասն իմ, որպէս և հոգայիքն. բայց բար-
բարէիք ինձ. իբր ոչ առ կարօտութեան ինչ ա- 11
սեմ. զի ես ուսայ՝ որովք կարեմ բաւական լինել:
Գիտեմ նուաղել, գիտեմ առաւելուլ. յամենայնի 12
ամենևին խելամուտ եմ, և յագել և քաղցենալ, և
առաւելուլ և նուաղել. յամենայնի կարող եմ այնու 13
որ զօրացոյցն զիս. բայց բարւոք արարէք զի կցորդ 14
եղերուք ինձ 'ի նեղութեանս: Գիտէք և դուք, փի- 15
լիպեցիք, զի 'ի սկզբան Աւետարանին իբրև ելի ես
'ի Մակեդոնիա՝ և ոչ մի եկեղեցի հաղորդեաց ինձ
յաղագս տալոյ և առնլոյ, բայց միայն դուք. զի և 16
'ի Թեսաղոնիկ՝ միանգամ և երկիցս զպէտս իմ ե-
տուք բերել: Իբր ոչ եթէ խնդրեմ զտուրսն, այլ 17
խնդրեմ զպտուղն որ յաճախէ 'ի բան ձեր: Այլ 18
իմ առեալ զամենայն և առաւելեալ եմ, ընկալայ և

լի եմ 'ի ձեռն Եպափրոդիտեայ, որ 'ի ձէնջ հոտ
անուշից, պատարագ ընդունելի՝ հաճոյ Աստուծոյ:
19 Եւ Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր,
ըստ իւրում մեծութեանն՝ փառօք 'ի Քրիստոս Յի-
20 սուս: Այլ Աստուծոյ և Հօր մերում փառք յաւի-
21 տեանս յաւիտենից. ամէն: Ողջոյն տաջիք ամենայն
22 սրբոց 'ի Քրիստոս Յիսուս: Ողջոյն տան ձեզ որ
23 ընդ իս են եղբարք: Ողջոյն տան ձեզ ամենայն
24 սուրբք, մանաւանդ որ 'ի տանէ կայսեր են: Շնորհք
Տեառն Յիսուսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն:

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍ՝ ԳՐԵՑԱՒ Ի ՀՌՈՎՄԷ Ի ՁԵՌՆ ԵՊԱՓՐՈԴԻՏԵԱՑ:

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԲ. Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի, 1
կամօքն Աստուծոյ, և Տիմոթէոս եղբայր, առ կո- 2
ղոսացիս սուրբս և հաւատացեալս եղբարս ՚ի Քրիս-
տոս: Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստու- 3
ծոյ Հօրէ մերմէ: Գոհանամ զԱստուծոյ և զՀօրէ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ
վասն ձեր աղօթս առնեմ. իբրև լուաք զհաւատսն 4
ձեր որ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր, և զսէրն
որ ընդ ամենայն սուրբս ունիք. վասն յուսոյն որ 5
պահի ձեզ յերկինս. զորմէ լուարուք բանիւն ճըշ-
մարտութեան՝ Աւետարանին, որ եհաս առ ձեզ. որ- 6
պէս ընդ ամենայն աշխարհ աճէ և պտղաբերէ, որ-
պէս և ՚ի ձերում միջի. յօրէ յորմէ լուարուք և ծա-
նեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ. որ- 7
պէս և ուսարուք յԵպափրեայ սիրելւոյ՝ ծառայակցէ
մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր պաշտօնեայ
Յիսուսի, որ և պատմեաց մեզ զձեր սէրն հոգւով: 8
Վասն այնորիկ և մեք յօրէ յորմէ լուաք՝ ոչ դադա- 9
րեմք վասն ձեր աղօթս առնել և խնդրուածս մատու-
ցանել, զի լնուցուք զգիտութիւն կամաց նորա՝ ամե-
նայն իմաստութեամբ և հոգևոր հանճարով, գնալ 10
ձեզ արժանի Տեառն յամենայն հաճութեան, յա-
մենայն գործս բարութեան, պտղաբերք և աճեցունք
գիտութեամբն Աստուծոյ. ամենայն զօրութեամբ 11

զօրացեալք ըստ զօրութեան փառաց նորա. յամե-
նայն համբերութիւն և երկայնմտութիւն:
12 ԱԳ. Ուրախութեամբ գոհանալ զՀօրէ, որ կո-
13 չեաց զմեզ ՚ի մասն վիճակի սրբոցն ՚ի լոյս. որ փըր-
կեաց զմեզ յիշխանութենէ խաւարի, և փոխեաց
14 զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ, որով
ունիմք զփրկութիւն արեամբն նորա, և զթողութիւն
15 մեղաց մարմնովն նորա: Որ է պատկեր աներևու-
թին Աստուծոյ, անդրանիկ ամենայն արարածոց.
16 զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս և
որ ինչ յերկրի, որ երևին և որ ոչն երևին, եթէ ա-
թոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ
իշխանութիւնք. ամենայն ինչ նովաւ և ՚ի նոյն հաս-
17 տատեցաւ. և նա է յառաջ քան զամենայն, և ամե-
18 նայն ինչ նովաւ եկաց բովանդակ: Եւ նա է գլուխ
մարմնոյ եկեղեցւոյ. որ է սկիզբն, անդրանիկ ՚ի մե-
19 ռելոց. զի եղեցի ինքն յամենայնի յառաջացեալ. զի
՚ի նմա հաճեցաւ ամենայն լրումն աստուածութեան
20 բնակել, և նովաւ հաշտեցուցանել զամենայն ՚ի
նոյն. արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ՝
21 որ ինչ յերկրի և որ ինչ յերկինս: Եւ զձեզ՝ որ եր-
բեմն օտարացեալքն էիք, և թշնամիք խորհրդովք ՚ի
22 գործսն չարութեան, այժմ աւադիկ հաշտեցոյց ան-
դամովք մարմնոյ իւրոյ, ՚ի ձեռն մահուան իւրոյ յան-
դիման կացուցանել զձեզ սուրբս և անբիծս և անա-
23 րատս առաջի նորա. եթէ կայցէք ՚ի հաւատսն ար-
մատացեալք և հաստատեալք, և անշարժք ՚ի յու-
սոյ Աւետարանին զոր լուարուք՝ քարոզելոյ ընդ ամե-
նայն արարածս ՚ի ներքոյ երկնից, որոյ եղէ ես Պաւ-
ղոս պաշտօնեայ:
24 ԱԴ. Եւ արդ ուրախ եմ ՚ի չարչարանս իմ վասն
ձեր, և լնում զպակասութիւն նեղութեանցն Քնի
՚ի մարմնի իմում՝ վասն մարմնոյ նորա, որ է եկեղե-
25 ցի. որոյ եղէ ես Պաւղոս պաշտօնեայ, ըստ տնտե-
սութեանն Աստուծոյ որ տուեալ է ինձ ՚ի ձեզ, կա-

տարել զբանն Աստուծոյ. զխորհուրդն որ ծածկեալ 26
էր 'ի յաւիտենից և յազգաց, որ այժմ յայտնե-
ցաւ սրբոց իւրոց։ Որոց կամեցաւ Աստուած ցուցա- 27
նել, թէ զի՞նչ է մեծութիւն փառաց խորհրդոյն նո-
րա 'ի հեթանոսս. որ է Քրիստոս 'ի ձեզ, յոյսն փա-
ռաց. զոր մեքն քարոզեմք, և խրատեմք զամենայն 28
մարդ, և ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հո-
գևոր իմաստութեամբ, զի կացուսցուք զամենայն
մարդ կատարեալ 'ի Քրիստոս Յիսուս. յոր և աշ- 29
խատիմ պատերազմեալ ըստ աջողութեան նորա, որ
աջողեալ է յիս զօրութեամբ։

Գ Լ Ո Ւ Խ Բ

Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգնութիւն 1
ունիմ յանձին վասն ձեր և վասն Լաւոդիկեցւոցն, և
որոց չիցէ տեսեալ զերեսս իմ մարմնով. զի մխիթա- 2
րեսցին սիրտք նոցա՝ տեղեկացեալք սիրով, և յամե-
նայն մեծութիւն լրութեան իմաստութեան՝ 'ի գի-
տութիւն խորհրդոյն Աստուծոյ 'ի Քրիստոս Յի-
սուս, յորում ամենայն գանձք իմաստութեան և գի- 3
տութեան ծածկեալ կան։ Այլ զայս ասեմ, զի մի՛ 4
ոք զձեզ զառանցուսցէ պատիր բանիւք. զի թէպէտ 5
և մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ. խըն-
դամ՝ իբրև տեսանեմ զկարգն ձեր և զհաստատու-
թիւն հաւատոցն ձերոց որ 'ի Քրիստոս Յիսուս։
Արդ որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, 6
նովին գնասջիք, արմատացեալք և շինեալք 'ի նա, 7
և հաստատեալք 'ի հաւատս, որպէս ուսարուքն՝ ա-
ՎԵՐՋ) ռաւելեալք 'ի նմին գոհութեամբ։
Զգոյշ լերուք, մի՛ ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ 8
ճարտարմտութեամբ և սնոտի խաբէութեամբ, որք
ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարերց աշ-
խարհիս, և ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի. զի 'ի նը- 9
մա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն մարմ-

10 նապէս. և էք դուք նովաւ լցեալք. որ է գլուխ ա-
11 մենայն իշխանութեան և պետութեան։ Որով
թլփատեցարուք հաւատովք զանձեռագործ թլը-
փատութիւնն, 'ի մերկանալ զանդամս մարմնոյ թլը-
12 փատութեամբն Քրիստոսի. թաղեալք ընդ նմին 'ի
մկրտութեանն, որով և ընդ նմին յարեայք հաւա-
տովք՝ Աստուծոյ ազդեցութեանն, որ յարոյց զնա 'ի
13 մեռելոց։ Եւ զձեզ որ երբեմն մեռեալք էիք 'ի մեղս
և յանթլփատութիւն մարմնոյ ձերոյ, կենդանա-
ցոյց յանձին իւրում. շնորհեաց մեզ զամենայն յան-
14 ցանս մեր. և ջնջեաց զձեռագիր մերոյ հակառա-
կութեանն հրամանօքն իւրովք. որ կայր մեզ հակա-
ռակ՝ եբարձ զայն 'ի միջոյ և բևեռեաց ընդ խաչա-
15 փայտին. մերկեաց զիշխանութիւնս և զպետու-
թիւնս, յայտ յանդիման խայտառակեաց նշաւա-
կեալ զնոսա յանձին իւրում 'ի յարութեան իւ-
16 րում։ Մի՛ ոք այսուհետև զձեզ դատեսցի՝ ուտե-
լով կամ ըմպելով, կամ մասամբք տօնից, կամ ամ-
17 սամտիւք կամ շաբաթուք, որ են ստուերք հան-
18 դերձելոցն. այլ մարմինն՝ Քրիստոս է։ Մի՛ ոք զձեզ
խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ և կրօնիւք
Հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ զրահետ վարէ՝
տարապարտ հպարտացեալ 'ի մտաց մարմնոյ իւրոյ.
19 և ոչ ունիցի զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն
մարմինն յօդիւք և խաղալեօք տարաբերեալ և խառ-
20 նեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ։ Եթէ մեռարուք
ընդ Քրիստոսի 'ի տարերց աշխարհիս, զի՞ ևս իբրև
21 զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք. մի՛ մեր-
22 ձենար, մի՛ ճաշակեր, մի՛ հուպ լինիր. որ է ամե-
նայն ինչ 'ի պէտս ապականութեան, ըստ պատուի-
23 րանաց և վարդապետութեան մարդկան. որ յիմաս-
տութիւն իմն համարէ, ինքնակամ կրօնիւք, և խո-
նարհութեամբ, և անխնայութեամբ մարմնոյ. և ոչ
'ի պատիւ ինչ լրութեան մարմնոյ։

ԳԼՈՒԽ Գ

Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն 1
խնդրեցէք՝ ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստու-
ծոյ. զվերինն խորհեցարուք, մի՛ զայս որ յերկրի աստ 2
է. քանզի մեռարուք, և կեանքն ձեր ծածկեալ են 3
ընդ Քրիստոսի յԱստուած. իսկ յորժամ Քրիս- 4
տոս յայտնեսցի կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ
նմա յայտնեսջիք փառօք: Սպանէք այսուհետև զան- 5
դամս ձեր զերկրաւորս. 'ի բաց ընկեցէք զպոռնկու-
թիւն, զպղծութիւն, զախծ, զցանկութիւն չարեաց,
և զագահութիւն՝ որ է կռապաշտութիւն. վասն ո- 6
րոյ գայ բարկութիւն Աստուծոյ 'ի վերայ որդւոցն
անհաւանութեան, որովք և դուք երբեմն գնայիք՝ 7
մինչ կենդանիքն էիք 'ի նոսա: Արդ 'ի բաց թօթա- 8
փեցէք և դուք զայն ամենայն, զբարկութիւն, ըզ-
սրտմտութիւն, զչարութիւն, զհայհոյութիւն, ըզ-
խեղկատակութիւն 'ի բերանոց ձերոց: Մի՛ ստէք 9
միմեանց. մերկացարուք զհին մարդն գործովքն իւ-
րովք և զգեցարուք զնորն նորոգեալ 'ի գիտութիւն, 10
ըստ պատկերի արարչին իւրոյ. ուր ոչ է Հրեայ և ոչ 11
հեթանոս, թլփատութիւն և անթլփատութիւն,
խուժ, դուժ, սկիւթացի, ծառայ, ազատ. այլ ա-
մենայն և յամենայնի Քրիստոս: Զգեցարուք այ- 12
սուհետև իբրև ընտրեալք Աստուծոյ՝ սուրբք և սի-
րեցեալք՝ զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն,
զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն.
Ներել միմեանց, շնորհել իրերաց, եթէ ուրուք զու- 13
մեքէ տրտունջ ինչ իցէ. որպէս Աստուած Քրիստո-
սիւ շնորհեաց ձեզ, նոյնպէս և դուք: Եւ 'ի վերայ 14
այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կատարմանն. և 15
խաղաղութիւնն Քրիստոսի հաստատեսցի 'ի սիրտս
ձեր, յոր և կոչեցարուքն միով մարմնով:

16 ԱԵ. Եւ գոհացօղք լինիջիք. զի բանն Քրիստո-
սի բնակեսցէ 'ի ձեզ առատապէս. ամենայն իմաս-
տութեամբ ուսուցանել և խրատել զմիմեանս, սաղ-
մոսիւք և օրհնութեամբք, և երգովք հոգևորօք՝ և
17 շնորհօք օրհնել 'ի սիրտս ձեր զԱստուած: Եւ զամե-
նայն զոր և առնիցէք բանիւք և արդեամբք, զամե-
նայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք. գոհացօղք
18 լինիջիք զԱստուծոյ և զՀօրէ նովաւ: Կանայք, հը-
նազանդ լերուք արանց ձերոց, որպէս և վայել է 'ի
19 Տէր: Արք, սիրեցէք զկանայս ձեր, և մի՛ դառնա-
20 ցուցանէք զնոսա: Որդիք, հնազանդ լերուք ծնողաց
ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ առաջի Տեառն:
21 Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, զի մի՛ տրտ-
22 մեսցին: Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձե-
րոց յամենայնի. մի՛ առ ականէ ծառայութեամբ իբ-
րև մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտի երկըն-
23 չել 'ի Տեառնէ. զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գոր-
24 ծեսջիք իբրև Տեառն, և ոչ իբրև մարդկան: Գի-
տասջիք զի 'ի Տեառնէ առնուցուք զհատուցումն ժա-
ռանգութեան ձերոյ, քանզի տեառն Քրիստոսի
25 ծառայէք: Իսկ ապիրատն ընկալցի ըստ իւրում ա-
պիրատութեանն. զի չիք ակնառութիւն առաջի
Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Դ

1 Տեարք, զիրաւունս և զհաւասարութիւն ծա-
ռայից ձերոց շնորհեցէք. գիտասջիք զի և ձեր Տէր
2 գոյ յերկինս: Աղօթից ստէպ կացէք, տքնել 'ի նմին
3 գոհութեամբ. աղօթս արարէք միանգամայն և
վասն մեր, զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին,
խօսել զխորհուրդն Քրիստոսի, վասն որոյ և կա-
4 պեալս կամ. զի յայտնի արարից զնա որպէս արժան
իցէ ինձ խօսել:
5 ԱԶ. Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն՝
6 գնոյ առեալ զժամանակս. և բանն ձեր յամենայն

ժամ լի շնորհօք Տեառն՝ իբրև աղիւ համեմեալ
լիցի. գիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր
ումեք տալ պատասխանի: Այլ որ ինչ զինէն իցէ՝ 7
ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եղբայր և
հաւատարիմ պաշտօնեայ և ծառայակից 'ի Տէր. զոր 8
առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք վասն մեր,
և մխիթարեսցէ զսիրտս ձեր. Ոնեսեմաւ հանդերձ 9
եղբարբ հաւատարմաւ և սիրելեաւ՝ որ է 'ի ձէնջ.
զամենայն ինչ ցուցցէ ձեզ՝ որ ինչ աստ է: Ողջոյն 10
տայ ձեզ Արիստարքոս գերեկից իմ, և Մարկոս եղ-
բօրորդի Բառնաբայ. վասն որոյ առէք պատուէր,
եթէ եկեսցէ առ ձեզ՝ ընկալջիք զնա. և Յիսուս որ 11
անուանեալն է Յուստոս, որք են 'ի թլփատութե-
նէ անտի. զի դոքա միայն գործակից եղեն ինձ յար-
քայութեանն Աստուծոյ, որք և եղեն իսկ ինձ մխի-
թարութիւն: Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝ որ 'ի ձէնջ 12
ծառայ Յիսուսի Քրիստոսի է, յամենայն ժամ
պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կա-
տարեալք և լցեալք յամենայն կամս Աստուծոյ. վը- 13
կայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի վասն
ձեր և վասն լաւոդիկեցւոցն, և վասն այնոցիկ՝ որ
յԵրապօլիսն են: Ողջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ՝ 14
և սիրելի, և Դեմաս: Ողջոյն տաջիք եղբարցն որ են 15
'ի Լաւոդիկիա, և Նիմփայ՝ և որ առտնին եկեղե-
ցին է նորա: Եւ յորժամ ընթեռնուցու առ ձեզ 16
թուղթդ, արասջիք զի և 'ի լաւոդիկեցւոց եկեղե-
ցւոյն ընթերցցի. և զառ 'ի լաւոդիկեցւոցն՝ զի և
դուք ընթեռնուցուք: Եւ ասասջիք ցԱրքիպպոս. 17
զգոյշ լեր սպասաւորութեանդ, զոր ընկալար 'ի Տէր,
զի զայդ կատարեսցես: Ողջոյնդ ձեռին իմոյ Պաւ- 18
ղոսի է. յուշ լիցին ձեզ կապանքս իմ: Շնորհք
ընդ ձեզ:

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ՝ ԳՐԵՑԱՒ Ի ՀՌՈՎՄԷ Ի ՁԵՌՆ ՏԻՒՔԻԿՈՍԻ
ԵՒ ՈՆԵՍԻՄԱՅ:

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

1 Բկ. Պաւղոս և Սիղուանոս և Տիմոթէոս, ե-
կեղեցւոյդ թեսաղոնիկեցւոց՝ յԱստուած Հայր մեր,
2 և 'ի տէր Յիսուս Քրիստոս: Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն: Գոհանամք զԱստուծոյ յամենայն
ժամ վասն ձեր ամենեցուն՝ յիշատակ առնել յա-
3 ղօթս մեր անդադար. յիշել զձեր գործն հաւա-
տոյ. և զվաստակ սիրոյ՝ և զհամբերութեան յու-
սոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առաջի Աս-
4 տուծոյ և Հօր մերոյ: Գիտէք, եղբարք սիրեցեալք
5 յԱստուծոյ, զընտրութիւնն ձեր. զի Աւետարանն
մեր ոչ եղև առ ձեզ միայն բանիւ, այլ և զօրու-
թեամբ և հոգւով սրբով, և լրութեամբ բազմաւ.
որպէս և գիտէք իսկ, թէ որպիսիք եղեաք 'ի միջի
6 ձերում վասն ձեր: Եւ դուք նմանեալք մեզ և
Տեառն, ընկալայք զբանն 'ի բազում նեղութեան՝
7 խնդութեամբ Հոգւոյն սրբոյ. լինել ձեզ օրինակ ա-
մենայն հաւատացելոց որ են 'ի Մակեդոնիա և յԱ-
8 քայիա: Զի 'ի ձէնջ հնչեաց բանն Աստուծոյ. ոչ
միայն 'ի Մակեդոնիա և յԱքայիա, այլ յամենայն
տեղիս հաւատքն ձեր որ առ Աստուած են սփռեցան.
զի այսուհետև ոչ ինչ է պիտոյ մեզ և խօսել ինչ.
9 զի նոքին իսկ պատմեն վասն մեր, թէ որպէս եղև
մեզ մուտ առ ձեզ. և որպէս դարձայք առ Աստուած
'ի կռոց անտի, ծառայել Աստուծոյ կենդանւոյ և

Ճշմարտի, և ակն ունել Որդւոյ նորա յերկնից, զոր 10
յարոյցն 'ի մեռելոց՝ զՅիսուս, որ փրկելոցն է զմեզ
'ի բարկութենէ անտի որ գալոցն է։

ԳԼՈՒԽ Բ

Բ Դ. Դուք ինքնին գիտէք, եղբարք, զմուտն մեր 1
առ ձեզ. զի ոչ ընդունայն ինչ եղև. այլ յառաջա- 2
գոյն չարչարեալք և թշնամանեալք, որպէս և դուք
իսկ գիտէք, 'ի մէջ փիլիպեցւոց համարձակեցաք Աս-
տուծով մերով՝ պատմել ձեզ զԱւետարանն Աստու-
ծոյ մեծաւ պատերազմաւ։ Զի մխիթարութիւնն 3
մեր ոչ 'ի մոլորութենէ է, և ոչ 'ի պղծութենէ, և
ոչ նենգութեամբ. այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ 4
հաւատարիմ լինել Աւետարանին, նոյնպէս և խօ-
սիմք. ոչ իբրև մարդկան հաճոյ լինել, այլ Աստուծոյ
որ քննէ զսիրտս մեր։ Զի ոչ երբէք բանիւք ողո- 5
քանաց եղեաք առ ձեզ, որպէս և դուք իսկ գիտէք.
և ոչ 'ի պատճառս ագահութեան, որպէս և Աստուած
վկայ է. և ոչ խնդրեաք փառս 'ի մարդկանէ, ոչ 'ի 6
ձէնջ և ոչ յայլոց։ Կարող էաք՝ որպէս Քրիստոսի 7
առաքեալս՝ ծանրանալ, այլ եղեաք հեզք 'ի միջի ձե-
րում. որպէս դայեակ մի որ սնուցանիցէ մանկունս,
նոյնպէս և մեք գթայաք 'ի ձեզ. հաճոյ թուէր մեզ 8
տալ ձեզ՝ ոչ միայն զԱւետարանն Աստուծոյ, այլ և
զանձինս մեր. քանզի սիրելիք մեր եղերուք։ Յիշե- 9
ցէք, եղբարք, զվաստակս մեր և զջան. զի զցայգ և
զցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ,
և քարոզէաք ձեզ զԱւետարանն Աստուծոյ. դուք ինք- 10
նին վկայէք և Աստուած, որպէս սրբութեամբ և
արդարութեամբ և անբծութեամբ ձեզ հաւատա-
ցելոց եղեաք. որպէս և գիտէք իսկ. զի զիւրաքան- 11
չիւր ոք 'ի ձէնջ՝ իբրև հայր զորդիս՝ մխիթարէաք և 12
սփոփէաք, և դնէաք վկայութիւն գնալ ձեզ արժա-
նապէս Աստուծոյ, որ կոչեաց զձեզ յիւր արքայու-

13 թիւնն և 'ի փառս։ Վասն այնորիկ և մեք գոհա-
նամք զԱստուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին
Աստուծոյ առ 'ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրև զբան
մարդկան, այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ.
որ և յաջողեալ իսկ է 'ի ձեզ հաւատացելոցդ։
14 Զի դուք նմանօղք եղերուք, եղբարք, եկեղեցեացն
Աստուծոյ՝ որ են 'ի Հրէաստանի 'ի Քրիստոս Յի-
սուս. զի զնոյն չարչարանս չարչարեցայք և դուք 'ի
15 ձերոց ազգականաց՝ որպէս և նոքայն 'ի Հրէից. որք
և զտէրն Յիսուս սպանին և զմարգարէսն և զմեզ
հալածեցին, և Աստուծոյ յաչաց ելին, և ամենայն
16 մարդկան հակառակ եղեն. և արգելուին զմեզ խօ-
սել հեթանոսաց՝ զի ապրեսցին. զի կատարեսցեն
զմեղս իւրեանց յամենայն ժամ. քանզի հասեալ է
'ի վերայ նոցա բարկութիւն մինչև 'ի սպառ։
17 Բ Ձ. Այլ մեք, եղբարք, թէպէտ և որբ մնացաք
'ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք՝ և ոչ սրտիւք.
առաւել ևս փութացաք տեսանել զերեսս ձեր մե-
18 ծաւ ցանկութեամբ. վասն այսորիկ կամեցայ գալ
առ ձեզ ես Պաւղոս միանգամ և երկիցս, և խա-
19 փանեաց զմեզ սատանայ։ Քանզի ո՞վ է մեր յոյս,
կամ խնդութիւն, կամ պսակ պարծանաց մերոյ,
եթէ ոչ դուք 'ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսու-
20 սի Քրիստոսի 'ի նորա գալստեանն. զի դուք էք
փառք մեր և խնդութիւն։

ԳԼՈՒԽ Գ

1 Վասն որոյ ոչ ևս ունիմք ժոյժ, զի բարւոք թը-
2 ւեցաւ մեզ միայն մնալ յԱթէնս. և առաքեցաք ըզ-
Տիմոթէոս զեղբայր մեր և զգործակից Աւետարա-
նին Աստուծոյ և Հօրն Քրիստոսի, հաստատել
ՎԵՐՋ) զձեզ և մխիթարել վասն հաւատոյն ձերոյ։
3 Զի մի տաղտկայցէք 'ի նեղութիւնս յայսոսիկ.
քանզի դուք ինքնին իսկ գիտէք, զի 'ի սոյն կամք.

քանզի մինչ առ ձեզն իսկ էաք՝ յառաջագոյն ասէաք 4
ձեզ, թէ նեղութիւնք հասանելոց են 'ի վերայ մեր.
որպէս և եղև իսկ և գիտացէք: Վասն այնորիկ և 5
ես զի ոչ ունէի ժոյժ՝ առաքեցի գիտել զհաւատսն
ձեր. գուցէ արդեօք փորձեաց և զձեզ փորձիչն, և
ընդունայն լինիցի ջանն մեր: Բայց արդ իբրև եկն 6
Տիմոթէոս 'ի ձէնջ առ մեզ, և ետ մեզ զաւետիս
հաւատոյն ձերոյ և զսիրոյ, զի ունիք 'ի մտի զյիշա-
տակս մեր բարեաց յամենայն ժամ, և ցանկացեալ
էք տեսանել զմեզ՝ որպէս և մեք զձեզ, վասն այսո- 7
րիկ մխիթարեցաք 'ի ձեզ, եղբարք, 'ի վերայ ամե-
նայն վշտաց և նեղութեանց մերոց, 'ի ձեռն հաւա-
տոցն ձերոց. զի այժմ կենդանի եմք՝ եթէ դուք հաս- 8
տատուն կայցէք 'ի Տէր: Զի՞նչ կարեմք գոհութիւն 9
մատուցանել Աստուծոյ վասն ձեր, 'ի վերայ ամենայն
խնդութեանն զոր խնդամք վասն ձեր առաջի Աստու-
ծոյ մերոյ. զցայգ և զցերեկ առաւել ևս աղաչեմք՝ 10
տեսանել զերեսս ձեր, և հաստատել զպակասութիւն
հաւատոյն ձերոց: Այլ ինքն Աստուած և Հայր մեր 11
և Տէր մեր Յիսուս Քրիստոս ուղղեսցէ զճանապար-
հըս մեր առ ձեզ. և զձեզ ինքն Տէր բազմապատիկս 12
և առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս և առ ա-
մենեսին՝ որպէս և մեք 'ի ձեզ. հաստատել զսիրտս 13
ձեր անարատս 'ի սրբութիւն առաջի Աստուծոյ և Հօր
մերոյ՝ 'ի գալստեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի՝ հանդերձ ամենայն սրբովք իւրովք:

ԳԼՈՒԽ Դ

Դկ. Այսուհետև, եղբարք, աղաչեմ զձեզ, և 1
մխիթարեմ 'ի Քրիստոս Յիսուս. զի որպէս ընկա-
լարուք 'ի մէնջ, թէ որպէս պարտ իցէ ձեզ գնալ և
հաճոյ լինել Աստուծոյ, որպէս և գնայք իսկ, զի ևս
քան զևս յաւելուցուք 'ի նոյն: Եւ գիտէք՝ թէ որ- 2
պիսի պատուիրանս տուաք ձեզ 'ի տէր Յիսուս. զի 3

այս են կամք Աստուծոյ, սրբութիւն ձեր. 'ի բաց լի-
4 նել ձեզ 'ի պոռնկութենէ, գիտել իւրաքանչիւր ու-
մեք 'ի ձէնջ զիւր աման ստանալ սրբութեամբ և
5 պատուով. մի 'ի ցաւս ցանկութեան՝ որպէս և այլ
6 հեթանոսք որ ոչ գիտեն զԱստուած: Մի զանցա-
նել և զրկել յիրիք յայդմիկ զեղբայր իւր. քանզի
վրէժխնդիր է Տէր 'ի վերայ ամենայնի այդորիկ, որ-
պէս յառաջագոյն ասացաք ձեզ, և եդաք վկայու-
7 թիւն. քանզի ոչ կոչեաց զմեզ Աստուած 'ի պղծու-
թիւն՝ այլ 'ի սրբութիւն. այսուհետև որ անարգէ՝
8 ոչ զմարդ անարգէ, այլ զԱստուած՝ որ և ետ զՀո-
9 գին սուրբ 'ի ձեզ: Այլ վասն եղբայրսիրութեան չէ
ինչ պիտոյ գրել առ ձեզ. զի դուք ինքնին իսկ աստուա-
10 ծուսոյցք էք՝ առ միմեանս սիրելոյ. քանզի և առնէք
իսկ զդոյն յամենայն եղբարս, որ են յամենայն կող-
մանս Մակեդոնացւոց: Աղաչեմ զձեզ, եղբարք, առա-
11 ւել ևս առաւելուլ և առատանալ. հանդարտել և զոր-
ծել զիւրաքանչիւր, և գործել ձեռօք ձերովք, որպէս
և պատուիրեցաք ձեզ. զի գնայցէք պարկեշտութեամբ
12 առ արտաքինսն, և մի ուրուք կարօտեալք իցէք: Ոչ
կամիմ, եղբարք, եթէ տգէտք իցէք վասն ննջեցե-
լոցն. զի մի տրտմիցիք որպէս և այլքն որոց ոչ գոյ
13 յոյս: Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ և
յարեաւ, նոյնպէս և Աստուած զննջեցեալսն 'ի ձեռն
14 Յիսուսի ածցէ ընդ նմա: Բայց զայս ասեմք Տեառն
բանիւ, թէ մեք որ կենդանիքս եմք մնացեալք՝ 'ի
15 գալստեանն Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն. զի
ինքն Տէր հրամանաւ՝ 'ի ձայն հրեշտակապետի և 'ի
փող Աստուծոյ իջանէ յերկնից, և մեռեալք 'ի
16 Քրիստոս յարիցեն յառաջագոյն: Ապա և մեք որ
կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յա-
փղշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս,
և այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք:
17 Այսուհետև մխիթարեցէք զմիմեանս բանիւքս
այսոքիւք:

ԳԼՈՒԽ Ե

Գ.Դ. Այլ վասն ժամուց և ժամանակաց, եղբարք, 1
չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ. զի դուք ինքնին իսկ ըս- 2
տոյգ գիտէք, թէ օր Տեառն իբրև զգող գիշերի՝
այնպէս հասանէ: Յորժամ ասիցեն թէ խաղաղու- 3
թիւն և շինութիւն է, յայնժամ յանկարծակի հաս-
ցէ նոցա սատակումն՝ որպէս և երկն յղւոյ, և մի՛ ապ-
րեսցեն: Այլ դուք, եղբարք, ոչ էք՚ի խաւարի, 4
թէ օրն ձեր իբրև զգող՚ի վերայ հասանիցէ. զի ա- 5
մենեքին դուք որդիք լուսոյ էք և որդիք տուընջեան.
չեմք գիշերոյ, չեմք խաւարի. ապա մի՛ զքնով անկա- 6
նիցիմք՝ որպէս և այլքն, այլ արթունք և զուարթունք
եղիցուք: Զի որ ննջենն՝ գիշերի ննջեն, և որ ար- 7
բենանն՝ գիշերի արբենան. այլ մեք զի տուընջեան 8
եմք, արթունք եղիցուք, և զգեցցուք զզրահն հա-
ւատոյ և զսիրոյ, և դիցուք զսաղաւարտն յուսոյն փըր-
կութեան: Զի ոչ եդ զմեզ Աստուած՚ի բարկու- 9
թիւն, այլ՚ի փրկութիւն կենդանութեան՚ի ձեռն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ մեռաւն վասն
մեր. զի եթէ արթունք իցեմք և եթէ ննջիցեմք, 10
նովաւ հանդերձ կեցցուք. վասն որոյ մխիթարեցէք 11
զմիմեանս, և շինեցէք զիրեարս՝ որպէս և առնէքդ
իսկ:

Գ.Զ. Աղաչեմ զձեզ, եղբարք, ճանաչել զվաստա- 12
կաւորս և զվերակացուս ձեր՚ի Տէր, և զխրատիչս
ձեր. և համարեցարուք զնոսա արժանիս առաւել սի- 13
րոյ՝ վասն գործոյ նոցա. խաղաղութիւն արարէք ընդ
միմեանս: Աղաչեմ զձեզ, եղբարք, խրատեցէք զըս- 14
տահակս, մխիթարեցէք զկարճամիտս, պատսպարան
լերուք տկարաց, երկայնամիտ լերուք առ ամենեսին:
Զգոյշ լերուք՝ գուցէ ոք չարի չար հատուցանիցէ, 15
այլ յամենայն ժամ զբարեաց զհետ երթայք՝ առ
միմեանս և առ ամենեսին: Յամենայն ժամ ուրախ 16

17 լերուք, անդադար աղօթս արարէք, յամենայնի
18 գոհացարուք. զի այս են կամք Աստուծոյ Քրիստո-
19 սիւ Յիսուսիւ՚ի ձեզ: Զհոգին մի՛ շիջուցանէք,
20 զմարգարէութիւնս մի՛ արհամարհէք, զամենայն ինչ
21 փորձեցէք՝ զբարին ընկալարուք, յամենայն իրաց
22 չարաց՚ի բաց կացէք: Եւ ինքն Աստուած խաղա-
23 ղութեան սուրբ արասցէ զձեզ համօրէնս. և բո-
վանդակ ձեր ոգի և շունչ և մարմին՝ անարատ՚ի գա-
լուստ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցի.
24 հաւատարիմ է՝ որ կոչեացն զձեզ, որ և արասցէ
25 զնոյն: Եղբարք, աղօթս արարէք և՚ի մեր վերայ:
26 Ողջոյն տաջիք եղբարց ամենեցուն՚ի համբոյր սըր-
27 բութեան: Երդմնեցուցանեմ զձեզ՚ի Տէր՝ ընթեռ-
նուլ զթուղթդ առաջի ամենայն եղբարց սրբոց:
28 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ
ձեզ:

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ՝ ԳՐԵՑԱՒ ՅԱԹԵՆԱՅ:

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

դկ. Պաւղոս և Սիղուանոս և Տիմոթէոս՝ ե- 1
կեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ յԱստուած հայր մեր,
և 'ի տէր Յիսուս Քրիստոս։ Շնորհք ընդ ձեզ և 2
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ, և 'ի
տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ Գոհանալ պարտիմք 3
զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբարք, որ-
պէս և արժան իսկ է. զի ևս քան զևս աճէն հա-
ւատքդ ձեր, և յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ամե-
նեցուն առ միմեանս։ Որպէս և մեզ ձեօք պարծել 4
յեկեղեցիսն Աստուծոյ՝ վասն համբերութեան ձերոյ
և հաւատոյ՝ յամենայն հալածանս ձեր և 'ի նեղու-
թիւնս, որում դուքն համբերէք. յօրինակ արդար 5
դատաստանին Աստուծոյ. արժանի լինել ձեզ ար-
քայութեանն Աստուծոյ, վասն որոյ և զճգնութիւնդ
կրէք. եթէ պարտ է առաջի Աստուծոյ՝ հատուցանել 6
նեղչացն ձերոց նեղութիւն, և ձեզ նեղելոցդ հան- 7
գիստ ընդ մեզ՝ 'ի յայտնութեանն Տեառն մերոյ Յի-
սուսի, յերկնից Հրեշտակօք զօրութեան իւրոյ. 'ի 8
բոց հրոյ առնուլ զվրէժս յանցանէ ոյք ոչ ճանաչեն
զԱստուած, և որ ոչ հնազանդեն Աւետարանին Տեա-
ռըն մերոյ Յիսուսի։ Որք տայցեն վրէժս 'ի սատա- 9
կումն յաւիտենից՝ յերեսաց Տեառն և 'ի փառաց զօ-
րութեան նորա, յորժամ գայցէ փառաւոր լինել 'ի 10
մէջ սրբոց իւրոց, և սքանչելի 'ի մէջ ամենայն հաւա-

տացելոց. զի հաւատարիմ եղև վկայութիւնն մեր
11 'ի վերայ ձեր յաւուր յայնմիկ։ Յոր և աղօթս առ-
նեմք վասն ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս
արասցէ կոչմանն ձերում Աստուած, մինչև լցցէ զա-
մենայն հաճութիւն բարութեան, և զգործս հա-
12 ւատոյն զօրութեամբ. զի փառաւոր լիցի անուն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ձեզ, և դուք
'ի նմա, ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ և տեառն
Յիսուսի Քրիստոսի։

ԳԼՈՒԽ Բ

1 դ.գ. Աղաչեմ զձեզ, եղբարք, վասն գալստեան
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և մերոյ ժողո-
2 վելոյն առ նա, մի վաղվաղակի խռովել ձեզ 'ի մտաց
և մի զարհուրել, մի հոգւով և մի բանիւ և մի թըղ-
թովք՝ իբրև թէ 'ի մէնջ. որպէս թէ եկեալ հա-
3 սեալ իցէ օր Տեառն։ Մի ոք զձեզ խաբեսցէ և մի
իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբու-
թիւնն, և յայտնեսցի մարդն անօրէնութեան, որ-
4 դին կորստեան, հակառակորդն հպարտացեալ 'ի վե-
րայ ամենայնի՝ որ անուանեալ իցէ Աստուած կամ
պաշտօն. մինչև նստել նմա 'ի տաճարին Աստուծոյ,
5 և ցուցանել զանձն՝ թէ Աստուած իցէ։ Ո՞չ յիշէ-
6 ցէք՝ զի մինչ առ ձեզն իսկ էի՝ ասէի զայս. և արդ
դուք ինքնին գիտէք զայն որ ունին յայտնել նմա
7 յիւրում ժամանակի. զի խորհուրդն անօրէնու-
թեան արդէն իսկ զօրանայ. բայց յայնժամ, մինչ
8 'ի միջոյ բարձցի որ այժմդ ունի, և ապա յայտնեսցի
անօրէնն, զոր տէր Յիսուս սատակեսցէ հոգւովբե-
րանոյ իւրոյ, և խափանեսցէ յայտնութեամբ գալըս-
9 տեանն իւրոյ։ Որոյ գալուստն ըստ ազդեցութեան
սատանայի է, ամենայն զօրութեամբ և նշանօք և
10 արուեստիւք ստովք, և ամենայն պատրանօք անի-
րաւութեան 'ի վերայ կորուսելոցն. փոխանակ զի

զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ապրեսցին,
և վասն այնորիկ առաքեսցէ նոցա Աստուած ազդե-
ցութիւն մոլորութեան՝ հաւատալ նոցա ստութեանն.
զի դատապարտեսցին ամենեքեան որ ոչ հաւատացին 11
ճշմարտութեանն, այլ հաճեցան ընդ անօրէնու-
թիւնն: Այլ մեք պարտիմք գոհանալ զԱստուծոյ 12
յամենայն ժամ վասն ձեր, եղբարք սիրեցեալք 'ի
Տեառնէ, զի ընտրեաց զմեզ Աստուած իսկզբանէ 'ի
փրկութիւն՝ սրբութեամբ Հոգւոյն և հաւատովքն
ճշմարտութեան. յոր և կոչեաց զձեզ Աւետարանաւն 13
մերով՝ 'ի փրկութիւն՝ փառացն Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի: Այսուհետև, եղբարք, հաստատուն 14
կացէք և պինդ կալարուք զաւանդութիւնսն՝ զոր ու-
սարուք եթէ բանիւ և եթէ թղթով մերով: Այլ 15
ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, և Աստուած հայր
մեր, որ սիրեաց զմեզ և ետ մեզ մխիթարութիւն
յաւիտենից և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ
զսիրտս ձեր, և հաստատեսցէ յամենայն բանս և 'ի 16
գործս բարութեան:

ԳԼՈՒԽ Գ

ԴԶ. Այսուհետև, եղբարք, աղօթս արարէք 'ի 1
վերայ մեր, զի բանն Տեառն ընթասցի. և փառա-
ւոր լինիցի յամենայն տեղիս՝ որպէս և առ ձեզ. զի 2
ապրեսցուք յանօրինաց և յանզգամաց մարդոյ. զի
ոչ ամենեցուն են հաւատք: Այլ հաւատարիմ է Տէր, 3
որ և հաստատեսցէ զձեզ, և պահեսցէ 'ի չարէ անտի:
Վստահ եմք 'ի ձեզ Տէրամբ, թէ զոր պատուիրեցաքն 4
ձեզ՝ և առնէք և առնիցէք. այլ Տէր ուղղեսցէ զսիրտս 5
ձեր 'ի սէրն Աստուծոյ և 'ի համբերութիւնն Քրիս-
տոսի: Պատուիրեմ ձեզ, եղբարք, յանուն Տեառն 6
մերոյ Յիսուսի Քրիստոսի, խորշել ձեզ յամենայն
եղբօրէ՝ որ ստահակս գնայցեն, և ոչ ըստ աւան-
դութեանն զոր ընկալարուք 'ի մէնջ: Զի դուք ինք- 7

նին գիտէք՝ թէ որպէս պարտ է ձեզ նմանել մեզ.
զի ոչ երբեք ստահակեցաք առ ձեզ, և ոչ ձրի զու-
8 րուք հաց կերաք. այլ ջանիւ և վաստակով զցայգ
և զցերեկ գործէաք՝ վասն չծանրանալոյ ումեք 'ի
9 ձէնջ. ոչ եթէ չունէաք իշխանութիւն, այլ զի զան-
ձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմանօղս լինել մեզ.
10 քանզի մինչ առ ձեզն իսկ էաք՝ զայս պատուիրէաք
11 ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել՝ և կերիցէ մի: Արդ
լսեմք զոմանց 'ի ձէնջ՝ թէ ստահակութեամբ գնան.
գործ ինչ ոչ գործեն, այլ յուլացեալ հետաքրքիր
12 շրջին. այնպիսեացն պատուէր տամք՝ և աղաչեմք 'ի
տէր Յիսուս Քրիստոս, զի հանդարտութեամբ
13 գործեսցեն՝ և զիւրեանց հաց կերիցեն. այլ դուք,
14 եղբարք, մի ձանձրանայք զբարիս գործել: Ապա ե-
թէ ոչ ոք հնազանդեսցի բանիս մերում թղթովդ
այդուիկ, դուք նշանակեսջիք զնա. և մի խառնակես-
15 ջիք ընդ նմա, զի պատկառեսցէ. բայց մի իբրև ըզ-
թշնամի համարեսջիք, այլ խրատեսջիք իբրև զեղ-
16 բայր: Եւ ինքն Տէր խաղաղութեան, տացէ ձեզ
խաղաղութիւն յամենայն ժամ յամենայն իրս: Տէր
17 ընդ ամենեսին ընդ ձեզ: Ողջոյն՝ իմս ձեռին Պաւ-
ղոսի է, որ է նշանակ յամենայն թուղթս այսպէս
18 գրեմ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի
ընդ ամենեսին ձեզ:

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ՝ ԴՐԵՑԱՒ ՅԱԹԵՆԱՅ:

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԿ. Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի, 1
ըստ հրամանի Փրկչին մերոյ Աստուծոյ, և Յիսուսի
Քրիստոսի յուսոյն մերոյ, Տիմոթեայ որդւոյ սի- 2
րելւոյ հաւատովք: Շնորհք, ողորմութիւն, խա-
ղաղութիւն յԱստուծոյ Հօրէ և 'ի Տեառնէ մերմէ
Յիսուսէ Քրիստոսէ: Որպէս աղաչեցի զքեզ կալ 3
յԵփեսոս, մինչ երթայի 'ի Մակեդոնիա, զի պա-
տուէր տացես ոմանց չլինել օտարուսմունս, և չհայել 4
յառասպելս և 'ի տոհմաթիւս անչափս. որ մանա-
ւանդ խնդիրս յուզեն, և ոչ զտնտեսութիւն Աստու-
ծոյ հաւատովք: Քանզի գլուխ պատուիրանին՝ սէր 5
է, 'ի սուրբ սրտէ և 'ի մտաց բարեաց, և յանկեղ-
ծաւոր հաւատոց. յորոց ոմանք վրիպեցան խոտո- 6
րեալք յունայնութիւն բանից. կամին լինել վարդա- 7
պետք օրինաց, ինքեանք ոչ իմանան զինչ խօսին, և
ոչ վասն որոյ պնդեալն են: Գիտեմք՝ եթէ բարւոք 8
են օրէնք, եթէ ոք զնոսա օրինօք կրեսցէ. բայց զայս 9
գիտասցէ՝ զի 'ի վերայ արդարոյ օրէնք ոչ կան, այլ
'ի վերայ անօրինաց և անհնազանդից, ամպարշտաց
և մեղաւորաց, անսրբոց և պղծոց, զհայր և զմայր
անարգողաց, մարդասպանաց, պոռնկաց, արուագի- 10
տաց, մարդելուզաց, ստոց, ստերդմանց. և եթէ այլ
ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեանս,
որ ըստ Աւետարանի փառաց երանելւոյն Աստուծոյ 11
ՎԵՐՋ) է, որում եղէ ես հաւատարիմ:

12 Շնորհ ունիմ այնմիկ՝ որ զօրացոյցն զիս 'ի Քն
Յիսուս 'ի Տէր մեր. զի հաւատարիմ համարեցաւ
13 կարգել 'ի սպասաւորութիւն, որ յառաջագոյն հայ-
հոյիչն էի և հալածիչ և թշնամանիչ. այլ գտի ո-
ղորմութիւն, զի զայն յանգիտութեան և յանհա-
14 ւատութեան գործէի. և առաւել եղեն շնորհք
Տեառն մերոյ հաւատովքն և սիրովն որ 'ի Քրիս-
15 տոս Յիսուս: Հաւատարիմ է բանս, և ամենայն ըն-
դունելութեան արժանի է, զի Յիսուս Քրիստոս
եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես
16 եմ. այլ վասն այնորիկ գտի ողորմութիւն, զի նախ
յիս եցոյց Յիսուս Քրիստոս զամենայն երկայն-
մտութիւն, յօրինակ այնոցիկ որ հաւատալոցն ի-
17 ցեն 'ի նա՝ 'ի կեանսն յաւիտենից: Այլ թագաւո-
րին յաւիտենից՝ անեղծի և աներևութի, միոյն Աս-
տուծոյ՝ փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից.
18 ամէն: Զայս պատուիրան աւանդեմ քեզ, որդեակ
իմ Տիմոթէոս, ըստ կանխելոյ 'ի քեզ մարգարէու-
թեանցն, զի դու զինուորիցիս նոքօք զգեղեցիկ զի-
19 նուորութիւնն. ունիցիս հաւատս սրբովք մտօք. զոր
ոմանց մերժեալ յանձանց իւրեանց՝ նաւաբեկեցան
20 'ի հաւատսն. որոց սակի են Հիմենոս և Աղէքսանդ-
րոս, զորս մատնեցի սատանայի՝ զի խրատեսցին չհայ-
հոյել:

ԳԼՈՒԽ Բ

1 Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն՝ առնել
աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն
2 ամենայն մարդկան, մանաւանդ վասն թագաւորաց
և ամենայն իշխանաց. զի խաղաղութեամբ և հան-
դարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն
3 աստուածպաշտութեամբ և սրբութեամբ: Զի այն
է բարի և ընդունելի առաջի Փրկչին մերոյ Աստու-
4 ծոյ. որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն՝ և 'ի

գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: Զի մի է 5
Աստուած, և միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդ
Յիսուս Քրիստոս. որ ետ զանձն փրկանս ընդ ամե- 6
նեցուն, վկայութիւն ժամանակաց իւրոց, յոր եդայ 7
ես քարոզ և առաքեալ. ճշմարիտ ասեմ 'ի Քրիստոս
և ոչ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք
և ճշմարտութեամբ:

ԱԴ. Կամիմ զի արք կայցեն յաղօթս յամենայն 8
տեղիս, բառնայցեն զսուրբ ձեռս 'ի վեր առանց բար-
կութեան և երկմտութեան: Նոյնպէս և կանայք 'ի 9
զարդ խոնարհութեան, ակնածութեամբ և զգաս-
տութեամբ զարդարել զանձինս. մի 'ի հիւսս ոսկե-
մանս ընդելուզեալս մարգարտով, կամ 'ի հանդերձս
պաճուճեալս. այլ որպէս վայել է կանանց՝ զաստուած- 10
պաշտութիւն յանձն առելոց գործովք բարութեան:
Կին մարդ ցածութեամբ ուսցի, ամենայն հնազան- 11
դութեամբ. այլ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրա- 12
մայեմ, և ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ, այլ
'ի լռութեան կալ. զի Ադամ նախ ստեղծաւ և ապա 13
Եւա. և Ադամ ոչ պատրեցաւ, այլ կինն պատրե- 14
ցաւ և յանցեաւ. բայց կեցցէ վասն որդեծնութեանն, 15
եթէ կայցեն 'ի հաւատս և 'ի սէր և 'ի սրբութիւն
պարկեշտութեան:

ԳԼՈՒԽ Գ.

Հաւատարիմ է բանս, եթէ ոք եպիսկոպոսու- 1
թեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ: Պարտ է ե- 2
պիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր, արթուն,
հեզ, ցած, պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ. մի թշնա- 3
մանօղ, մի հարկանօղ, այլ հանդարտ. մի կռուօղ, մի
արծաթասէր. զի իւրում տանն իսկ բարւոք վերակա- 4
ցու լեալ իցէ. որդեակս ունիցի՝ որ 'ի հնազանդութե-
կայցեն ամենայն պարկեշտութեամբ: Ապա թէ ոք 5

իւրում տանն վերակացու չգիտիցէ լինել, զիա՞րդ ե-
6 կեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լիցի: Մի մատա-
ղատունկ, զի մի հպարտացեալ 'ի դատաստանս սա-
7 տանայի անկանիցի. այլ պարտ է նմա վկայութիւն
բարի և յարտաքնոցն ունել, զի մի 'ի նախատինս ան-
8 կանիցի՝ և յորոգայթս սատանայի: Նոյնպէս և ըզ-
սարկաւագունս պարկեշտս. մի երկբանս, մի գինե-
9 սէրս, մի զօշաքաղս. այլ ունիցին զխորհուրդս հաւա-
10 տոյն սուրբ մտօք. ինքեանք նախ փորձեսցին, և ապա
11 'ի պաշտօնն մատիցեն, զի անարատք իցեն. Նոյնպէս
և կանայք նոցա պարկեշտք. մի չարախօսք, հեզք,
12 հաւատարիմք յամենայնի: Սարկաւագք լինիցին միոյ
կնոջ արք. որոց որդւոց իւրեանց բարւոք վերակացու
13 լեալ իցեն՝ և տանց իւրեանց. զի որ բարւոքն պաշ-
տիցեն, աստիճան բարի անձանց իւրեանց շահին,
և բազում համարձակութիւն 'ի հաւատսն՝ որ 'ի
վերջ) Քրիստոս Յիսուս:
14 Զայս գրեմ առ քեզ, զի ակն ունիմ 'ի մօտոյ գալ.
15 ապա թէ յամեցից, զի գիտասցես՝ թէ որպէս պարտ
իցէ քեզ 'ի տան Աստուծոյ շրջել, որ է եկեղեցի Աս-
տուծոյ կենդանւոյ, սիւն և հաստատութիւն ճշմար-
16 տութեան: Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աս-
տուածպաշտութեան, որ երևեցաւ մարմնով, ար-
դարացաւ հոգւով, յայտնեցաւ հրեշտակաց, քարո-
զեցաւ 'ի հեթանոսս, հաւատարիմ եղև յաշխար-
հի, և վերացաւ փառօք:

ԳԼՈՒԽ Դ.

1 ԱԶ. Այլ Հոգին սուրբ յայտնապէս ասէ, թէ
'ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք 'ի հաւա-
տոյն. և հայեսցին յայսս մոլորութեան, և 'ի վար-
2 դապետութիւնս դիւաց՝ կեղծաւորութեամբ. ստա-
3 բանք, խարեալք իւրեանց խղճիւն մտաց. որ ար-
գելուցուն յամուսնանալոյ, և մեկնիցեն 'ի կերակ-

րոց՝ զոր Աստուած հաստատեաց 'ի վայելել հաւա-
տացելոց՝ և որք հասեալ իցեն 'ի ճշմարտութեանն
վերայ. զի ամենայն արարածք Աստուծոյ բարի են, 4
և չիք ինչ խոտան. մանաւանդ որ գոհութեամբ ըն-
դունիցին. զի սրբի բանիւն Աստուծոյ և աղօթիւք։ 5
Զայս խրատ տուեալ եղբարց, բարւոք պաշտօնեայ 6
լինիցիս Քրիստոսի Յիսուսի, սնանիցիս բանիւք
հաւատոց, և բարւոք վարդապետութեամբն՝ զորոյ
զհետ իսկ եղեր։ Այլ 'ի պիղծ բանից և յառասպե- 7
լաց պառաւանց հրաժարեսջիր։ Բայց կրթեա զանձն
քոյաստուածպաշտութիւն. զի մարմնոյ կրթութիւն 8
առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտու-
թիւն առ ամենայն ինչ օգտակար է, և զաւետիս կե-
նաց ունի՝ զարդիս և զհանդերձելոցն։ Հաւատարիմ 9
է բանս և ամենայն ընդունելութեան արժանի է.
զի 'ի սոյն իսկ վաստակեմք և նախատինս յանձն առ- 10
նումք. զի յուսացեալ եմք յԱստուած կենդանի, որ
է փրկիչ ամենայն մարդկան, մանաւանդ հաւատա-
ցելոց։

Բկ. Պատուէր տաջիր զայդ և ուսուցանիջիր, զի 11
մի ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ։ Այլ օրի- 12
նակ լինիջիր հաւատացելոց, բանիւք, գնացիւք, սի-
րով, հաւատովք, սրբութեամբ, մինչև գամ ես. 13
միտ դիր ընթերցուածոյ մխիթարութեան վարդա-
պետութեան. մի անփոյթ առներ զշնորհացդ որ 'ի 14
քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռ-
նադրութենէ երիցութեան։ Յայդ խորհեաց և 'ի 15
դոյն կանխեսջիր, զի քո յառաջադիմութիւն ամենե-
ցուն յայտնի լիցի. զգոյշ լինիջիր անձին և վարդա- 16
պետութեանդ, և 'ի դմին յամեսջիր. զայդ եթէ
առնիցես՝ և զանձն ապրեցուցես, և զայնոսիկ որ
քեզն լսիցեն։

ԳԼՈՒԽ Ե

1 Ցծերն մի պատուհասիցես, այլ մխիթարեսջիր
2 իբրև զհայր. զերիտասարդս իբրև զեղբարս, զպա-
ռաւունս իբրև զմարս, զմանկամարդս իբրև զքորս,
3 ամենայն սրբութեամբ ։ Զայրիս պատուեա՝ որ
4 ստոյգ այրիքն իցեն. ապա թէ ոք այրի՝ որդիս և թո-
ռունս ունիցի, ուսանիցին նախ իւրեանց տանց բարի
առնել, և զփոխարէնսն հատուցանել ծնողացն. զի
5 այն է բարի և ընդունելի առաջի Աստուծոյ։ Իսկ որ
ճշմարտիւ այրին իցէ, և մենացեալ յուսացեալ յԱս-
6 տուած, և կանխեալ յաղօթս և 'ի խնդրուածս ըզ-
7 ցայգ և զցերեկ։ Իսկ գիրգ այրին կենդանւոյն մե-
8 ռեալ է. զայս պատուիրեա՝ զի անարատք իցեն։ Իսկ
եթէ ոք իւրոց, և մանաւանդ և ընտանեաց խնամ
ոչ տանիցի, 'ի հաւատոցն ուրացեալ է, և չար եւս քան
9 զանհաւատսն է։ Այրի՝ ընդ այրիս անուանեսցի, որ
չիցէ պակաս 'ի վաթսնամենից, միոյ առն կին լեալ,
10 և 'ի գործս բարիս վկայեալ. եթէ մանկունս սնու-
ցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ զսըր-
բոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական
լեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց զհետ
11 երթեալ իցէ։ Այլ 'ի մանկամարդաց այրեացն հրա-
ժարեա, զի յորժամ խայտան զՔրիստոսիւ՝ ամուս-
12 նանալ կամին. իսկ զդատաստանս ընդունին, զի զա-
ռաջին հաւատսն արհամարհեցին. միանգամայն և
13 դատարկանձունք ուսանին, շրջօղք տանէ 'ի տուն. և
ոչ միայն դատարկք, այլ և փաքուսք և հետաքրքիրք.
14 և խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ։ Կամիմ զմանկամարդացդ
ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս լինել, և մի
ինչ պատճառս տալ հակառակորդին 'ի հայհոյութե
15 աղագս. զի արդէն իսկ ոմանք խոտորեցան զհետ սա-
16 տանայի։ Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս ունիցի, բա-

ւական լիցի նոցա, և մի՛ ծանրասցի եկեղեցւոյն. զի
ճշմարիտ այրեացն բաւական լինիցի։
ԲԴ. Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կըր- 17
կին պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ որ աշխա-
տիցին բանիւ և վարդապետութեամբ. քանզի ասէ 18
գիր. Մի՛ կապեսցես զցռուկ եզին կալոտւոյ, և ար-
ժանի է մշակն վարձու իւրոյ։ Զերիցուէ չարախօ- 19
սութիւն մի՛ ընդունիցիս, բայց եթէ երկուք և ե-
րիւք վկայիւք. իսկ որ մեղանչենն՝ առաջի ամենե- 20
ցուն յանդիմանեա, զի և այլքն երկիցեն։ Վկայու- 21
թիւն դնեմ առաջի Աստուծոյ և Յիսուսի Քրիստո-
սի և ընտրելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցես ա-
ռանց մտահաճութեան. մի՛ ինչ առնել աչառանօք։
Զձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դնիցես, և մի՛ 22
կցորդ լինիցիս մեղաց օտարաց. զանձն քո սուրբ
պահեսջիր։ — Այսուհետև մի՛ ջուր ևեթ ըմպիցես, 23
այլ սակաւիկ մի և գինի խառնեսջիր, վասն ստամոք-
սի և ստէպ հիւանդութեանց։ — Են մարդք՝ որոց 24
մեղքն յայտնի են, և յառաջագոյն հասեալ՚ի դա-
տաստան, և են՝ որոց զկնի երթան. նոյնպէս և բա- 25
րի գործքն՝ յայտնի են, և որ այլազգ ևս ինչ իցեն՝
թաքչել ոչ կարեն։

ԳԼՈՒԽ Զ

Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն՝ զիւ- 1
րաքանչիւր տեարս պատուի արժանի համարեսցին.
զի մի՛ անունն Աստուծոյ և վարդապետութիւնն հայ-
հոյեսցի։ Իսկ որ հաւատացեալ տեարս ունիցին, մի՛ 2
արհամարհեսցեն, զի եղբարք են. այլ առաւել ծա-
ռայեսցեն, զի հաւատացեալքն են և սիրունք. որք
զբարերարութիւնն յանձին ունիցին. զայս ուսուցա-
նիջիր և մխիթարեսջիր։ Իսկ եթէ ոք այլազգ ինչ 3
ուսուցանիցէ, և ոչ անսայցէ ողջմտութեան բանից
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ըստ աստուած-

4 պաշտութեան վարդապետութեանն, այնպիսին հը-
պարտացեալ է, և ոչ ինչ ոչ գիտէ. այլ տապի՚ի
խնդիրս և՚ի բանս հակառակութեան, ուստի լինի
նախանձ, հեռ, հայհոյութիւնք, կարծիք չարեաց,
5 խարդախութիւնք ապականելոց մտաց մարդկան,
և օտարացելոց՚ի ճշմարտութենէ անտի, որք շահա-
վաճառ համարին զաստուածպաշտութիւնն. բայց
դու մերժեսջիր յայնպիսեաց անտի։
6 ԲԶ. Այլ շահավաճառ մեծ աստուածպաշտու-
7 թիւնն է՝ բաւականութեամբ հանդերձ. զի ոչ բե-
րաք ինչ յաշխարհս, և ոչ տանել ինչ կարասցուք.
8 այլ ունիմք կերակուր և հանդերձս, և այնու շա-
9 տասցուք։ Իսկ որք կամին մեծանալ՝ անկանին՚ի
փորձութիւն և յորոգայթ, և՚ի բազում ցանկու-
թիւնս անմիտս և վնասակարս, որք ընկղմեն զմար-
10 դիկ՚ի սատակումն և՚ի կորուստ։ Զի արմատ ա-
մենայն չարեաց՝ արծաթսիրութիւն է, որում ոմանց
ցանկացեալ՝ վրիպեցան՚ի հաւատոյն, և զանձինս
11 արկին ընդ բազում ցաւովք։ Այլ դու, ո՛վ մարդ
Աստուծոյ, փախիր յայնցանէ, և երթ զհետ արդա-
րութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոյ,
12 զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան. և մար-
տիր զբարւոք մարտն հաւատոյ, և բուռն հար զկե-
նացն յաւիտենականաց յոր կոչեցարն, և դաւանե-
ցեր զբարւոք դաւանութիւն առաջի բազում վկայից։
13 Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ՝ որ կենդանի
առնէ զամենայն, և Յիսուսի Քրիստոսի՝ որ վը-
կայեաց առաջի պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք
14 դաւանութիւնն, պահել քեզ զպատուիրանն, ան-
բիծ՝ անարատ, մինչև՚ի յայտնութիւն Տեառն մե-
15 րոյ Յիսուսի Քրիստոսի. զոր յիւր ժամանակս ցուց-
ցէ երանելին, և միայն հզօր, թագաւոր թագաւո-
16 րաց, և Տէր տերանց. որ միայն ունի զանմահու-
թիւն՝ բնակեալ՚ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես
՚ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող է. որում պա-

տիւ և զօրութիւն յաւիտեանս. ամէն: Մեծատանց 17
որ են յայսմ աշխարհի՝ պատուէր տուր՝ մի՛ հպար-
տանալ և մի՛ յուսալ'ի մեծութիւն մնոտի, այլ յԱս-
տուած՝ որ տայ մեզ զամենայն առատապէս'ի վայե- 18
լել. զբարիս գործել, մեծանալ գործովք բարու-
թեան, առատս, սիրունս, հաղորդս լինել. գանձել 19
անձանց հիմն բարի'ի հանդերձեալսն. զի բուռն
հարկանիցեն զճշմարիտ կենացն: Ո՛վ Տիմոթէէ, 20
պահեա զաւանդդ՝ խոտորեալ'ի պղծոց և'ի նորա-
ձայն բանից, և'ի հակառակութենէ և'ի մոլորանուն
գիտութենէ. զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան 21
'ի հաւատոց անտի: Շնորհք ընդ քեզ:

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ՝ ԳՐԵՑԱՒ Ի ԼԱՒՈԴԻԿԵԱՅ,

ՈՐ Է ՄԱՅՐ ՔԱՂԱՔԱՅ ՊԱԿԱՏԻԱՆԱՑԻՈՑ:

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ

ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

1 Գ Կ. Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի
կամօքն Աստուծոյ, ըստ աւետեաց կենացն որ'ի
2 Քրիստոս Յիսուս, Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ,
շնորհք ողորմութիւն, և խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ և'ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ:
3 Շնորհ ունիմ Աստուծոյ զոր պաշտեմ'ի նախնեաց
մտօք սրբովք, իբրև զի անպակաս ունիմ զքեն
4 յիշատակ յաղօթս իմ. զցայգ և զցերեկ ցանկա-
ցեալ եմ տեսանել զքեզ, յիշատակեալ զարտա-
5 սուսն քո, զի լցայց ուրախութեամբ. զմտաւ ածեալ
զանխիղճ հաւատսն որ են'ի քեզ, որ յառաջագոյն
բնակեցաւ'ի հանոյ քում Լաւոդեայ, և'ի մօր
քում Եւնիկեայ. հաստատեալ եմ թէ և'ի քեզ
6 է: Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշ-
նորհսն Աստուծոյ՝ որ են'ի քեզ'ի ձեռնադրութե-
7 նէ իմմէ: Զի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհա-
տութեան, այլ զօրութեան և սիրոյ և զգաստու-
8 թեան. մի՛ այսուհետև ամօթ համարիցիս զվկայու-
թիւնն Տեառն մերոյ, և մի՛ զիս զկապեալ նորա.
այլ կցորդ լեր չարչարանաց Աւետարանին՝ ըստ զօ-
9 րութեանն Աստուծոյ, որ փրկեացն զմեզ, և կոչեաց
'ի կոչումն սուրբ. ոչ ըստ գործոց մերոց, այլ ըստ
կամաց յառաջադրութեանն, և շնորհացն որ տուաւ
մեզ'ի Քրիստոս Յիսուս՝ յառաջ քան զժամանակս
յաւիտենից:

գդ. Բայց յայտնեցաւ այժմիկ՝ յերեւել Փրկչին 10
մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ՝
եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն 'ի ձեռն
Աւետարանին, որոյ եդայ ես քարոզ եւ Առաքեալ եւ 11
վարդապետ հեթանոսաց։ Վասն որոյ եւ զայս չար- 12
չարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ. քանզի
գիտեմ յո հաւատացեալն եմ, եւ հաստատեալ եմ,
թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն յայն։ Ու- 13
նիցիս օրինակ ողջմտութեան բանիցն զորս յինէն
լուար, հաւատովք եւ սիրով որ 'ի Քրիստոս Յի-
սուս. զբարւոք աւանդն պահեսջիր 'ի ձեռն Հոգւոյն 14
սրբոյ 'ի մեզ բնակելոյ։ Զայս գիտասջիր՝ զի մեկ- 15
նեցան 'ի մէնջ ամենեքին՝ որ էին յԱսիա, որոց սա-
կի են Փիգելոս եւ Հերմոգենէս. տացէ Աստուած 16
ողորմութիւն տանն Ոնեսիփորայ. զի բազում ան-
գամ հանգոյց զիս, եւ զկապանս իմ ոչ ամօթ հա-
մարեցաւ. այլ իբրեւ եկն 'ի Հռովմ, պնդագոյնս 17
խնդրեաց զիս եւ եգիտ. տացէ նմա Տէր ողորմու- 18
թիւն գտանել 'ի Տեառնէ յաւուրն յայնմիկ. եւ որ-
չափ ինչ միանգամ յԵփեսոս սպաս կալաւ ինձ, զայն
դու ինքնին քաջ գիտես։

ԳԼՈՒԽ Բ

Այլ դու, որդեակ իմ, զօրացիր շնորհօքն՝ որ 'ի 1
Քրիստոս Յիսուս. եւ զոր լուար յինէն բազում 2
վկայիւք, զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց,
որք բաւական իցեն եւ զայլս ուսուցանել։
գզ. Վշտակից լեր իբրեւ զբարւոք զինուոր Քրիս- 3
տոսի Յիսուսի։ Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ 4
կեանս աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին հա-
ճոյ լինիցի. եւ եթէ մարտիկ ոք իցէ՝ ոչ պսակի եթէ 5
ոչ ըստ օրինին մարտիցէ. եւ հողագործին աշխատե- 6
լոյ՝ պարտ է նախ 'ի պտղոյն վայելել։ Իմաց զինչ ա- 7
սեմ. տացէ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի։

8 Յիշեա զՔրիստոս Յիսուս յարուցեալ 'ի մեռելոց՝
9 'ի զաւակէ Դաւթի, ըստ աւետարանիս իմում. յո-
րում չարչարիմ կապանօք չափ իբրեւ զչարագործ,
10 այլ բանն Աստուծոյ ոչ եթէ կապեալ իցէ։ Վասն
այնորիկ ամենայնի համբերեմ վասն ընտրելոցն, զի
եւ նոքա փրկութեանն հասանիցեն՝ որ 'ի Քրիստոս
11 Յիսուս երկնաւոր փառօքն հանդերձ։ Հաւատա-
րիմ է բանս, զի եթէ ընդ նմա մեռաք, ընդ նմին
12 եւ կեցցուք. եթէ համբերեմք, ընդ նմին եւ թագա-
ւորեսցուք. եւ եթէ ուրանամք, եւ նա ուրանայ զմեզ.
13 եւ եթէ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ, ուրա-
նալ զանձն իւր ոչ կարէ։
14 կիր. Զայս յուշ արասջիր՝ վկայութիւն եդեալ
առաջի Աստուծոյ, մի բանակռիւ լինել յոչինչ պէտս
15 'ի կործանումն լսողաց։ Փութասջիր զանձն քո ըն-
տիր կացուցանել առաջի Աստուծոյ, մշակ առանց
ամօթոյ. ուղիղ համառօտել զբանն ճշմարտու-
16 թեան։ Այլ 'ի պղծոց եւ 'ի սնոտի խօսից մերժես-
ջիր. զի առաւել յառաջ գայցեն յամպարշտու-
17 թիւնս. եւ բանք նոցա իբրեւ զքաղցկեղ ճարակ գը-
18 տանեն. որոց սակի են Հիմենոս եւ Փիլետոս. որք
վրիպեցան 'ի ճշմարտութենէն, եւ ասեն՝ եթէ յա-
րութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է. եւ կործա-
19 նեն զհաւատս ոմանց։ Այլ հաստատուն հիմն Աս-
տուծոյ կայ եւ ունի զկնիքս զայս. թէ ծանեաւ Տէր
զայնոսիկ՝ որ իւրն են. եւ 'ի բաց լիցի յանիրաւու-
20 թենէ՝ ամենայն որ անուանէ զանուն Տեառն։ Այլ
'ի տան մեծի՝ ոչ միայն են անօթք ոսկեղէնք եւ ար-
ծաթեղէնք, այլ եւ փայտեղէնք եւ խեցեղէնք. են որ
21 'ի պատուի են, եւ են որ յանարգութեան. եթէ ոք
սրբեսցէ զանձն իւր յայնպիսեաց անտի, եղիցի ա-
նօթ պատուական, սրբեալ եւ պիտանի Տեառն իւ-
րում՝ յամենայն գործս բարութեան պատրաստեալ։
22 Այլ յերիտասարդական ցանկութեանցն փախիր, եւ
երթ զհետ արդարութեան, զհաւատոյ, զսիրոյ,

զխաղաղութեան, զսրբութեան, ընդ այնոսիկ որ
կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւք։ Այլ ՚ի յի- 23
մար և յանխրատ խնդրոց հրաժարեա. գիտասջիր՝
թէ անտի ծնանին կռիւք. բայց ծառայի Տեառն ոչ 24
է պարտ կռուել, այլ հեզ լինել առ ամենեսեան,
ուսուցիչ, անոխակալ. հանդարտութեամբ խրատել
զհակառակօղսն. թերևս տացէ նոցա Աստուած ա- 25
պաշխարութիւն՝ ՚ի գիտութիւն ճշմարտութեան, և
սթափեսցին յորոգայթից սատանայի որսացեալք ՚ի 26
նմանէ ՚ի նորա կամսն։

ԳԼՈՒԽ Գ.

ԿԻՐ. Զայս գիտասջիր, եթէ յաւուրս յետինս ե- 1
կեսցեն ժամանակք չարք. զի եղիցին մարդիկ անձ- 2
նասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք,
հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, ան-
սուրբք, աննուէրք, անգութք, բանսարկուք, ան- 3
ժոյժք, վէսք, անբարեսէրք, մատնիչք, յանդգունք,
ամբարհաւաճք, ցանկասէրք՝ մանաւանդ քան աս- 4
տուածասէրք. որ ունիցին զկերպարանս աստուած- 5
պաշտութեան, և ՚ի զօրութենէ անտի նորա ուրա-
ցեալ իցեն. և խորշեսջիր ՚ի նոցանէ. քանզի ՚ի նո- 6
ցանէ են՝ որ մտանեն տանէ ՚ի տուն, և գերեն զկա-
նայս շեղջակուտեալս մեղօք, վարեալս ՚ի պէսպէս
ցանկութիւնս. որ յամենայն ժամ ուսանին, և եր- 7
բեք ՚ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն։
Այլ որպէս Յանէս և Յամրէս հակառակ կացին 8
Մովսիսի, նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմար-
տութեանն. մարդք ապականեալք մտօք, անպի-
տանք ՚ի հաւատս. այլ ոչ երբեք գայցեն յառաջ ՚ի 9
լաւ անդր. քանզի անմտութիւն սոցա յայտնի լիցի
ամենեցուն, որպէս և նոցայն իսկ եղև։ Այլ դու 10
զհետ եկիր վարդապետութեան իմոյ, առաջնորդու-
թեան, յօժարութեան, հաւատոյ, երկայնմտու-

թեան, սիրոյ, համբերութեան, հալածանաց, չար-
11 չարանաց. որպիսիք եղեն ինձ յԱնտիոք և յԻկոնիոն
և ՚ի Լիւստրոս. որպիսի հալածանաց համբերի, և
12 յամենայնէ փրկեաց զիս Տէր։ Եւ ամենեքին որ
կամիցին աստուածպաշտութեամբ կեալ ՚ի Քրիս-
13 տոս Յիսուս, ՚ի հալածանս կացցեն. այլ մարդք
չարք և կախարդք՝ յառաջ եկեսցեն ՚ի չար անդր.
14 մոլորեալք՝ և մոլորեցուցանիցեն։ Այլ դու հաստա-
տուն կաց յոր ուսարդ, և հաւատարիմ եղեր. գի-
15 տես ուստի ուսար. զի ՚ի մանկութենէ զգիրս սուրբս
գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ՚ի փըր-
կութիւն՝ ՚ի ձեռն հաւատոյն որ ՚ի Քրիստոս Յիսուս։
16 ԴՇ. Ամենայն գիրք աստուածաշունչք և օգտա-
կարք ՚ի վարդապետութիւն են և ՚ի յանդիմանու-
թիւն, և յուղղութիւն և ՚ի խրատ արդարութեան.
17 զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն
գործս բարութեան հաստատեալ։

ԳԼՈՒԽ Դ.

1 Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ և Յի-
սուսի Քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս և զմե-
ռեալս ՚ի յայտնութեան իւրում և յարքայութեան.
2 և դու քարոզեա զբանն, հաս ՚ի վերայ ժամու և տա-
րաժամու, յանդիմանեա, սաստեա, մխիթարեա, ա-
մենայն երկայնմտութեամբ և վարդապետութեամբ։
3 Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վար-
դապետութեանն ոչ անսայցեն, այլ ըստ իւրաքան-
չիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդա-
4 պետս՝ ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց, և ՚ի ճըշ-
մարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս և յա-
5 ռասպելս կործանեսցին։ Այլ դու զուարթ կաց յա-
մենայնի, ճգնեաց, զգործս աւետարանչի գործեա,
6 զպաշտօնդ քո կատարեալ կալ։ Զի ես այսուհե-
տև նուիրեալ եմ, և ժամանակ դարձի իմոյ հասեալ

կայ. զբարւոք պատերազմ պատերազմեցայ, զըն- 7
թացսն կատարեցի, զհաւատսն պահեցի։ Այսու- 8
հետեւ կայ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հա-
տուսցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատա-
ւոր. ոչ միայն ինձ, այլ եւ ամենեցուն որ սիրեցին
զյայտնութիւն նորա։

ԶՂ. Փութասջիր գալ առ իս վաղվաղակի. զի 9
Դեմաս եթող զիս եւ սիրեաց զաշխարհ, եւ գնաց ’ի
Թեսաղոնիկէ. Կրեսկէս՝ ’ի Գաղղիա, Տիտոս ’ի 10
Դաղմատիա. Ղուկաս միայն է ընդ իս։ Զմար- 11
կոս առեալ ընդ քեզ ածիցես, զի է ինձ պիտանի ’ի
սպասաւորութիւն. զՏիւքիկոս առաքեցի յԵփե- 12
սոս։ Զփիլոնն թողի ’ի Տրովադա առ Կարպոսի. 13
յորժամ գայցես՝ բերջիր եւ զգիրսն, մանաւանդ զմ-
մատեանսն։ Աղեքսանդրոս բազում չարչարանս ե- 14
ցոյց ինձ. հատուսցէ նմա Տէր ըստ գործս նորա.
յորմէ եւ դու անձնապահ լինիջիր, զի շատ հակա- 15
ռակ եկաց բանից մերոց։ Յառաջնում ատենին՝ ոչ 16
ոք ինձ ’ի թիկունս եկաց, այլ ամենեքին թողին
զիս. մի համարեսցի նոցա այն. այլ Տէր օգնեաց ինձ 17
եւ զօրացոյց զիս, զի ինեւ քարոզութիւնն հաստա-
տեսցի, եւ լուիցեն ամենայն հեթանոսք. եւ ապրեցայ
ես ’ի բերանոյ առիւծուն։ Փրկեսցէ զիս Տէր յամե- 18
նայն գործոց չարեաց, եւ զերծուսցէ զիս յարքայու-
թիւն իւր որ յերկինս է. որում փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն։ Ողջոյն տաջիր Պրիսկեայ եւ Ա- 19
կիւղեայ, եւ Ոնեսիփորայ տանն։ Երաստոս մնաց ’ի
Կորնթոս. զՏրոփիմոս թողի ’ի Մելիտոս հիւան- 20
դագին։ Փութասջիր յառաջ քան զձմեռն գալ։ Ող- 21
ջոյն տան քեզ Եւբուղոս եւ Պուդէս եւ Լինոս եւ
Կղաւդիա, եւ եղբարք ամենեքեան։ Տէր Յիսուս 22
Քրիստոս ընդ ոգւոյդ քում։ Շնորհք ընդ քեզ։

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ ԹՈՒՂԹ, ՈՐ ԷՐ ԵՓԵՍԱՑԻՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱԴՐԵԱԼ, ԳՐԵՑԱՒ Ի ՀՌՈՎՄԷ՝ ՅՈՐԺԱՄ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԵԿԱՑ ՅԱՏԵՆԻ ՊԱՒՂՈՍ ԱՌԱՋԻ ՆԵՐՈՆԻ ԿԱՅՍԵՐ ՀՌՈՄԱՑ։

ԱՌ ՏԻՏՈՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԿԻՐ. Պաւղոս ծառայ Աստուծոյ, եւ Առաքեալ
Յիսուսի Քրիստոսի, ըստ հաւատոց ընտրելոցն
Աստուծոյ եւ ’ի գիտութիւն ճշմարտութեան, որ
2 ընդ աստուածպաշտութեամբն է. յուսով կենացն
յաւիտենից, զոր խոստացաւ անսուտն Աստուած
3 յառաջ քան զժամանակս յաւիտենից. բայց յայտ-
նեաց իւրովք ժամանակօք զբանն իւր քարոզու-
թեամբ, որոյ եղէ ես հաւատարիմ, ըստ հրամանի
4 Փրկչին մերոյ Աստուծոյ. Տիտոսի ուղղոյ սիրելոյ
ըստ հասարակաց հաւատոց, շնորհք եւ խաղաղու-
թիւն յԱստուծոյ ’ի Հօրէ եւ ’ի Քրիստոսէ Յի-
5 սուսէ Փրկչէ մերմէ։ Վասն այնորիկ իսկ թողի
զքեզ ’ի Կրետէ, զի որ ինչ միանգամ պակաս իցէ՝
ուղղեսցես, եւ կացուսցես ըստ քաղաքաց երիցունս,
6 որպէս եւ ես քեզ պատուիրեցի. եթէ ոք անարատ
իցէ, միոյ կնոջ այր, որդեակս ունիցի հաւատա-
ցեալս, եւ ոչ յամբաստանութիւն անառակութեան,
7 կամ անհնազանդս։ Զի պարտ է եպիսկոպոսին ա-
նարատ լինել, որպէս եւ Աստուծոյ տնտեսի. մի յան-
դուգն, մի բարկացող, մի թշնամանող, մի հարկա-
8 նող, մի զօշաքաղ. այլ հիւրասէր, բարեսէր, ցած,
9 արդար, սուրբ, ժուժկալ. վերակացու լինել, հա-
ւատարիմ բանին վարդապետութեան. զի կարող
իցէ եւ մխիթարել ողջմտութեամբ վարդապետու-
10 թեանն, եւ զհակառակորդսն կշտամբել։ Քանզի

բազումք են անհնազանդք, զրախօսք և մտախաբք,
մանաւանդ որ 'ի թլփատութենէ անտի են. զորս 11
պարտ է ըմբերանել. որք զամենայն տունս կործա-
նեն, և ուսուցանեն՝ զոր չէ արժան, վասն զօշաքա-
ղութեան։
ԴՇ. Ասաց ոմն 'ի նոցանէ՝ իւրեանց իսկ մարգա- 12
րէ. Կրետացիք հանապազասուտք, չարաճճիք, դա-
տարկապորտք։ Եւ ստոյգ է վկայութիւնս այս. 13
վասն որոյ կշտամբեսցես զնոսա խստագոյնս, զի ա-
ռողջասցին 'ի հաւատս. և մի հայեսցին 'ի հրէական 14
առասպելս, և 'ի պատուէրս մարդկան զառածելոցն 'ի
ճշմարտութենէ։ Ամենայն ինչ սուրբ է սրբոց, բայց 15
պղծոցն և անհաւատից՝ ոչ ինչ է սուրբ. այլ պղ-
ծեալ են միտք և խորհուրդք նոցա, խոստանան գի- 16
տել զԱստուած, և գործովք իւրեանց ուրանան.
պիղծք և անհաւանք, և յամենայն գործս բարեաց
անպիտանք։

ԳԼՈՒԽ Բ

Այլ դու խօսեաց որ ինչ վայելէ ողջամիտ վար- 1
դապետութեանդ։ Ծերոց զգաստս լինել, պար- 2
կեշտս, ցածունս, ողջամիտս 'ի հաւատս, 'ի սէր, 'ի
համբերութեան, 'ի ժուժկալութեան։ Պառաւանց՝ 3
նոյնպէս 'ի զգաստութեան, 'ի սուրբ վայելչութեան,
մի բանսարկուս, մի գինեմոլս, այլ բարեխրատս. զի 4
զգաստացուցանիցեն զմանկամարդսն՝ այրասէրս լի-
նել, որդեսէրս, ցածունս, սուրբս, տնարարս, բա- 5
րեգործս, հնազանդս իւրեանց արանց. զի մի բանն
Աստուծոյ և վարդապետութիւնն հայհոյեսցի։ Զե- 6
րիտասարդս նոյնպէս աղաչեսջիր՝ ցածունս լինել, ա- 7
մենեցուն զանձն օրինակ կացուցանել գործոց բա-
րութեան, վարդապետութեամբ զանեղծութիւն
ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն, զբանն ողջ- 8
մտութեան, անպարսաւ լինել, զի որ հակառա-

կորդն իցէ՝ յամօթ լիցի, և մի ինչ ունիցի ասել
9 զմէնջ չարութիւն։ Ծառայից՝ իւրեանց տերանց
հնազանդ լինել և հաճոյս յամենայնի, մի հակա-
10 ռակօղս, մի հատուս. այլ զամենայն հաւատս ցու-
ցանել բարութեամբ, զի զվարդապետութի՟ Փրկ-
ՎԵՐՋ) չին մերոյ Աստուծոյ զարդարեսցեն յամենայնի։
11 Քանզի երևեցաւ՝ շնորհն Աստուծոյ փրկիչ ամե-
12 նայն մարդկան, որ խրատէն զմեզ, զի ուրասցուք
զամպարշտութիւն և զաշխարհական ցանկութիւնս.
զգաստութեամբ և արդարութեամբ և աստուած-
13 պաշտութեամբ կեցցուք յաշխարհիս. և ակնկալ-
ցուք երանելի յուսոյն, և յայտնութեան փառաց
մեծին Աստուծոյ և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիս-
14 տոսի. որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ զմեզ
յամենայն անօրէնութենէ, և սրբեսցէ իւր ժողո-
վուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարու-
15 թեան։ Զայդ խօսեաց, և մխիթարեա և յանդի-
մանեա ամենայն սաստիւք, զի մի ոք իցէ որ զքեզ
արհամարհիցէ։

ԳԼՈՒԽ Գ

1 ԶՇ. Եւ յուշ արասջիր նոցա՝ իշխանութեանց
և պետութեանց հնազանդ լինել և հպատակ կալ,
և ամենայն գործոց բարութեան պատրաստ գտա-
2 նել. մի զոք հայհոյել, անկռիւս լինել, հեզս, զա-
մենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցա-
3 նել։ Զի էաք երբեմն և մեք անմիտք, անհաւանք,
մոլորեալք ծառայէաք ցանկութեանց և պէսպէս ա-
նառակութեանց. չարութեամբ և նախանձու շըր-
4 ջէաք, ատեցեալք՝ և զմիմեանս ատէաք։ Իսկ յոր-
ժամ քաղցրութիւն և մարդասիրութիւն Փրկչին
5 մերոյ Աստուծոյ յայտնեցաւ, ոչ 'ի գործոց արդա-
րութեան զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողոր-
մութեան ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւս-

անգամ ծննդեանն, և նորոգութեամբ Հոգւոյն
սրբոյ, զոր եհեղ 'ի մեզ առատութեամբ 'ի ձեռն 6
Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ, զի արդարա- 7
ցեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կե-
նացն յաւիտենականաց։ Հաւատարիմ է բանս, և 8
'ի սոյն կամիմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ ա-
րասցեն բարեաց գործոց վերակացու լինել հաւատա-
ցեալքն յԱստուած. զի այն է բարի և օգտակար
մարդկան։ Այլ զյիմարութեան խնդիրս և զտոհ- 9
մաթիւս և զհեռ և զօրինական կռիւս 'ի բաց մեր-
ժեսջիր. զի անօգուտք են և սնոտիք։ Յառնէ հեր- 10
ձուածողէ՝ յետ միանգամ և երկիցս խրատելոյ՝ հրա-
ժարեսջիր. գիտասջիր զի թիւրեալ է այնպիսին, և 11
մեղանչէ անձամբ զանձն դատապարտեալ։ Այլ յոր- 12
ժամ յղեցից առ քեզ զԱրտեմա կամ զՏիւքիկոս,
փութասջիր գալ առ իս 'ի Նիկոպոլիս. զի անդ եդի
'ի մտի ձմերել։ Եւ զԶենոն զօրինական դպիր և 13
զԱպողոս՝ փութով արձակեսջիր, զի մի ինչ պակա-
սիցէ նոցա։ Ուսցին և մերքն ևս՝ բարեաց գործոց 14
վերակացու լինել 'ի պէտս կարևորս, զի մի անպը-
տուղք լինիցին։ Ողջոյն տան քեզ որ ընդ իս են ա- 15
մենեքին։ Ողջոյն տուր սիրելեաց մերոց հաւատովք։
Շնորհք ընդ ձեզ ամենեսին։

ԱՌ ՏԻՏՈՍ՝ ԿՐԵՏԱՑԻՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱԴՐԵԱԼ
ԵՊԻՍԿՈՊՈՍ՝ ԳՐԵՑԱՒ Ի ՆԻԿՈՊՈԼՍԷ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՑ։

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

ԵՒ ԱՌ ԱՐՔԻՊՊՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ

ԵՒ ԱՌ ԱՊՓԻԱ ԹՈՒՂԹ

---

1 Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի, և Տի-
մոթէոս եղբայր, Փիլիմոնի սիրելւոյ և գործակցի
2 մերոյ, և Ապփեայ քեռ, և Արքիպպեայ զինուո-
3 րակցի մերոյ, և առտնին եկեղեցւոյդ։ Շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մե-
4 մէ և 'ի տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։ Գոհանամ
զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ, յիշատակեալ յա-
5 ղօթս իմ վասն քո. իբրև լսեմ զքո հաւատոն և
զսէր, զոր ունիս առ տէր Յիսուս և առ ամենայն
6 սուրբս. զի հաղորդութիւն հաւատոյն քոյ՝ արգոյ
լինիցի, գիտութեամբ ամենայն բարութեան, որ 'ի
7 ձեզ է 'ի Քրիստոս Յիսուս։ Խնդութիւն յոյժ ըն-
կալայ, և մխիթարութիւն 'ի վերայ սիրոյն քոյ. զի
8 գութք սրբոց քև հանգուցեալ են, եղբայր։ Վասն
որոյ բազում համարձակութիւն ունիմ 'ի Քրիս-
9 տոս՝ հրամանս տալ քեզ զարժանն վասն սիրոյ. մա-
նաւանդ թէ աղաչեմ իսկ այնպիսի լինել՝ որպէս և
Պաւղոս ծերացեալ, արդ և կապեալ ևս Յիսուսի
10 Քրիստոսի։ Աղաչեմ զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր
11 ծնայ 'ի կապանս իմ զՈնեսիմոս. որ երբեմն անպի-
12 տան էր քեզ, բայց արդ քեզ և ինձ պիտանի. զոր
յղեցի առ քեզ, և դու զդա ընկալջիր, այսինքն է՝
13 զիմ աղիս։ Զոր կամէի առ իս արգելուլ, զի ընդ
14 քո ունիցի ինձ սպաս 'ի կապանս Աւետարանին. բայց

առանց քո կամաց ոչ ինչ կամեցայ առնել, զի մի
բարիքդ քո 'ի հարկէ լինիցին, այլ կամաւ։ Եւ թերե- 15
ւս վասն այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի, զի
յաւիտեան ունիցիս զդա, մի ևս իբրև զծառայ, այլ 16
'ի վեր քան զծառայ, իբրև զեղբայր սիրելի. եթէ
ինձ այսպէս, ո՞րչափ ևս առաւել քեզ մարմնով և Տե-
րամբ։ Եթէ զիս քեզ հաղորդ համարիցիս, ընկալ 17
զդա իբրև զիս, և եթէ յանցուցեալ ինչ իցէ կամ 18
պարտիցի, զայն ինձ համարեաց։ Ես Պաւղոս գրե- 19
ցի իմով ձեռամբ. ես հատուցից, զի մի ասիցեմ քեզ՝
թէ դու զանձն քո ինձ պարտիս. այո, եղբայր, ես 20
քո փոխանակ եղէց 'ի Տէր. հանգո զաղիսդ իմ 'ի
Քրիստոս։ Յուսացեալ 'ի հնազանդութիւնդ քո 21
գրեցի առ քեզ. քանզի գիտեմ թէ առաւել ևս քան
զոր ասեմդ՝ առնիցես։ Միանգամայն և պատրաս- 22
տեսջիր ինձ վանս. քանզի յուսամ թէ աղօթիւք
ձերովք շնորհեցայց ձեզ։ Ողջոյն տայ ձեզ Եպափ- 23
րաս գերեկից իմ 'ի Քրիստոս Յիսուս, և Մարկոս 24
և Արիստարքոս և Դեմաս և Ղուկաս՝ գործակիցք
իմ։ Շնորհք տեառն Յիսուսի ընդ ոգւոյդ ձերում։ 25

ԱՌ ՓԻԼԻՄՈՎՆ ԵՒ ԱՊՓԻԱ ՏԵԱՐՍ ՈՆԵՍԻՄԱՅ, ԵՒ ԱՌ ԱՐՔԻՊՊՈՍ ՍԱՐԿԱՒԱԳ ԿՈՂՈՍԱՑՒՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅՆ՝ ԳՐԵՑԱՒ Ի ՀՌՈՎՄԷ Ի ՁԵՌՆ ՈՆԵՍԻՄԱՅ ԾԱՌԱՅԻ։

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԹՈՒՂԹ

ԳԼՈՒԽ Ա.

1 Եկ. Բազում մասամբք, և բազում օրինակօք
կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մար-
2 գարէիւք. 'ի վախճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ
ընդ մեզ Որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի, ո-
3 րով և զյաւիտեանսն արար։ Որ է լոյս փառաց և
նկարագիր էութեան նորա, որ կրէ զամենայն բա-
նիւ զօրութեան իւրոյ. սրբութիւն մեղաց մերոց
արարեալ, նստաւ ընդ աջմէ մեծութեանն 'ի բար-
4 ձունս։ Այնչափ առաւել եղեալ քան զհրեշտակս,
որչափ լաւ ևս քան զնոսա անուն ժառանգեաց.
5 քանզի ցո՞ երբեք ասաց 'ի հրեշտակաց. որդի իմ
ես դու, ես այսօր ծնայ զքեզ. և դարձեալ՝ թէ ես
6 եղէց նմա 'ի հայր, և նա եղիցի ինձ յորդի։ Այլ
յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն յաշ-
խարհ, ասէ. Երկիր պագցեն նմա ամենայն հրեշ-
7 տակք Աստուծոյ։ Այլ առ հրեշտակսն ասէ. Ո ա-
րար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր
8 բոց հրոյ։ Իսկ ցորդին ասէ. Աթոռ քո, Աստուած,
յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան,
9 գաւազան արքայութեան քոյ. սիրեցեր զարդարու-
թիւն, և ատեցեր զանօրէնութիւն. վասն այսորիկ
օծ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախու-
10 թեան՝ առաւել քան զընկերս քո. և դու Տէր իս-

կզբանէ զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց
երկինք են. նոքա կորնչին՝ և դու կաս և մնաս. ա- 11
մենեքեան իբրև զձորձս մաշեսցին և իբրև զվերար-
կու. գալարեսցես զնոսա իբրև զհանդերձ, և գալա- 12
րեսցին. բայց դու նոյն իսկ ես՝ և ամք քո ոչ պակա-
սեսցեն: Ցո՞ երբեք ասաց 'ի Հրեշտակաց. Նիստ 13
ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պա-
տուանդան ոտից քոց: Ո՞չ ապաքէն ամենեքեան հո- 14
գիք են հարկաւորք՝ որ առաքին 'ի սպասաւորութիւն
վասն այնոցիկ՝ որ ժառանգելոցն են զփրկութիւն:

ԳԼՈՒԽ Բ

ԵԴ. Վասն այնորիկ պարտ է մեզ առաւել ևս 1
ունկնդիր լինել բանիցն ասացելոց, զի մի՛ երբեք
նուաղեսցուք: Զի եթէ որ 'ի ձեռն Հրեշտակաց 2
խօսեցաւ բանն՝ հաստատուն եղև, և ամենայն յան-
ցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ ըզ-
պատիժ պատուհասի, մեք զիա՞րդ ապրեսցուք հեղ- 3
գացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզըն առ խօ-
սելոյ 'ի Տեառնէ, և 'ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ 'ի
մեզ հաստատեցաւ. վկայեալ յԱստուծոյ նշանօք և 4
արուեստիւք, և պէսպէս զօրութեամբք, և մասամբք
Հոգւոյն սրբոյ՝ ըստ իւրոց կամաց. զի ոչ եթէ Հրեշ- 5
տակաց հնազանդեցոյց զհանդերձեալ աշխարհն,
վասն որոյ և մեքս խօսիմք: Վկայեաց ոք ուրեք և 6
ասէ. Զի՞նչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա, կամ
որդի մարդոյ՝ թէ այց արասցես նմա. փոքր մի խո- 7
նարհ արարեր զնա քան զՀրեշտակս. փառօք և
պատուով պսակեցեր զնա, և կացուցեր զնա 'ի վե-
րայ ձեռակերտաց քոց. զամենայն ինչ հնազանդ ա- 8
րարեր 'ի ներքոյ ոտից նորա: Արդ 'ի հնազանդե-
ցուցանելն զամենայն՝ ոչ ինչ եթող անհնազանդ 'ի
նմանէ. բայց այժմ ոչ ևս տեսանեմք հնազանդեալ
նմա զամենայն: Այլ զփոքր մի խոնարհեալ քան 9

զՀրեշտակս՝ տեսանեմք զՅիսուս՝ վասն չարչարա-
նաց մահուն, փառօք և պատուով պսակեալ. զի շը-
նորհօքն Աստուծոյ վասն ամենեցուն զմահ ճաշա-
10 կեսցէ: Զի վայելէր իսկ նմա, վասն որոյ ամենայն
և որով ամենայն, բազում որդիս 'ի փառս ածել՝ և
զառաջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատա-
ՎԵՐՋ) րել:
11 Զի որ սրբէն և որ սրբին, 'ի միոջէ են ամենե-
քեան. վասն որոյ ոչ ամօթ համարի եղբարս անուա-
12 նել զնոսա, և ասել. Պատմեցից զանուն քո եղբարց
13 իմոց, 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ. և դար-
ձեալ՝ թէ ես եղէց յուսացեալ 'ի նա. և դարձեալ՝
Ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ Աս-
14 տուած: Արդ որովհետև մանկունք հաղորդեցին
արեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութեամբ
կցորդ եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ
զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն է՝
15 զսատանայ. և ապրեցուսցէ զայնոսիկ որ մահուն եր-
կիւղիւ համապազ կէին վտարանդեալք 'ի ծառայու-
16 թիւն: Քանզի ոչ երբեք զՀրեշտակաց բուռն հար-
կանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հարկա-
17 նէ. ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց
նմանել. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ քա-
հանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ
18 'ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն: Զի որով ինքն
չարչարեցաւ՝ զփորձ առեալ, կարող է և փորձանա-
ւորացն օգնական լինել:

ԳԼՈՒԽ Գ

1 Ուստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն բա-
ժանորդք, նայեցարուք ընդ Առաքեալն և ընդ քա-
հանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս
2 Քրիստոս. որ հաւատարիմ է արարչին իւրոյ, որ-
3 պէս և Մովսէս յամենայն տան նորա. զի առաւել

Եւ փառաց քան զՄովսէս արժանի եղեւ, որչափ ա-
ռաւել պատիւ ունիցի քան զտունն՝ տանն առնելն.
զի ամենայն տուն կազմի յումէ կազմի. իսկ որ զա- 4
մենայնն արար, Աստուած է: Մովսէս՝ հաւատա- 5
րիմ է յամենայն տան նորա՝ իբրեւ զծառայ, առ 'ի
վկայութենէ բանից ասացելոց. այլ Քրիստոս իբրեւ 6
որդի 'ի վերայ տան իւրոյ, որոյ տունն՝ մեք իսկ եմք.
միայն թէ զհամարձակութիւն եւ զպարծանս յուսոյն
մինչեւ 'ի վախճան հաստատուն ունիցիմք: Վասն 7
որոյ այսպէս ասէ Հոգին սուրբ. Այսօր եթէ ձայնի 8
նորա լուիցէք, մի խստացուցանէք զսիրտս ձեր իբ-
րեւ 'ի դառնութեանն՝ յաւուրն փորձութեան յանա-
պատի. ուր փորձեցին զիս հարքն ձեր. քննեցին զիս՝ 9
եւ տեսին զգործս իմ զքառասուն ամ. վասն որոյ 10
տաղտկացայ ազգաւն այնուիկ, եւ ասացի, միշտ մոլո-
րեալ են սրտիւք. եւ նոքա ոչ ծանեան զճանապարհս
իմ. որպէս երդուայ 'ի բարկութեան իմում թէ մտա- 11
ցեն 'ի հանգիստ իմ:

ԽԶ. Տեսէք, եղբարք, գուցէ երբէք լինիցի յու- 12
մեք 'ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան՝ ապստամբ
լինել յԱստուծոյ կենդանւոյ. այլ մխիթարեցէք զմի- 13
մեանս զօրհանապազ՝ մինչդեռ այսօրդ առաջի կայ.
զի մի ոք խստասցի 'ի ձէնջ՝ խաբէութեամբ մեղաց:
Քանզի բաժանորդք եղեաք Քրիստոսի. միայն թէ՝ 14
զսկիզբն հաստատութեանն մինչեւ 'ի վախճան պինդ
կալցուք, յասելն. Այսօր եթէ ձայնի նորա լուի- 15
ցէք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր իբրեւ 'ի դառ-
նութեանն: Քանզի ոմանք լուան՝ եւ դառնացուցին, 16
այլ ոչ ամենեքեան որ ելեալ էին յԵգիպտոսէ 'ի
ձեռն Մովսիսի: Յումէ՞ տաղտկացաւ զքառասուն 17
ամն. ո՛չ ապաքէն 'ի յանցուցելոցն, որոց ոսկերքն
անկան յանապատի անդ: Ո՞ւմ երդուաւ չմտանել 18
'ի հանգիստն իւր, եթէ ոչ անհաւատիցն. եւ տե- 19
սանեմք, զի ոչ կարացին մտանել՝ վասն անհաւա-
տութեանն:

ԳԼՈՒԽ Դ.

1 Երկիցուք այսուհետեւ, գուցէ 'ի թողուլ զաւե-
տիսն՝ 'ի մտանելոյ 'ի հանգիստ նորա, գտանիցի ոք
2 'ի ձէնջ նուազեալ. քանզի եմք աւետարանեալք՝ որ-
պէս եւ նոքայն. այլ նոցա ոչ ինչ օգնեաց լուր բա-
նին՝ չամոքելոյն 'ի հնազանդութիւն հաւատոյ:
3 Այլ մեք մտանեմք 'ի հանգիստն, որք հաւատա-
ցաքս՝ որպէս եւ ասացն, թէ որպէս երդուայ 'ի բար-
կութեան իմում, թէ մտցեն 'ի հանգիստ իմ. թէ-
պէտ եւ արդիւնքն իսկզբանէ աշխարհի լինեալ էին.
4 քանզի ասէ ուրեք վասն աւուրն եօթներորդի այս-
պէս. Եւ հանգեաւ Աստուած յաւուրն եօթներոր-
5 դի յամենայն գործոց իւրոց. եւ աստ դարձեալ ասէ՝
6 Թէ մտցեն 'ի հանգիստ իմ: Եւ արդ քանզի ար-
գելան ոմանք մտանել 'ի նա, եւ որք յառաջագոյն ա-
ւետարանեալն էին՝ չմտին վասն անհաւանութեանն,
7 դարձեալ այլ օր սահմանէ՝ զայսօրն 'ի Դաւթի, եւ
ասէ՝ յետ այնչափ ժամանակաց, որպէս յառաջագոյն
ասաց. Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի խստա-
8 ցուցանէք զսիրտս ձեր: Զի եթէ զնոսա Յեսուայ
հանգուցեալ էր, ապա վասն այլոյ աւուր ոչ խօսէր
9 յետ այնորիկ: Արդ ուրեմն նուազեալ է շաբաթումն
10 ժողովրդեանն Աստուծոյ. զի որ եմուտ 'ի հանգիստն
նորա, եւ նա հանգեաւ յիւրոց գործոց անտի, որպէս
ՎԵՐՋ) եւ Աստուած յիւրայոցն:
11 Փութասցուք այսուհետեւ մտանել յայն հան-
գիստ. զի մի ոք ընդ նոյն օրինակ անհաւանու-
12 թեանն անկանիցի. զի կենդանի է բանն Աստուծոյ
եւ ազդօղ եւ հատու քան զամենայն սուր երկսայրի,
եւ անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ եւ յօդից
13 եւ ուղղոյ. եւ քննիչ է մտաց եւ խորհրդոց սրտից: Եւ
չիք արարած աներեւոյթ յերեսաց նորա, այլ ամե-
նայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա՝ զոր-

մէ մեր բանքս են։ Ունիմք այսուհետեւ քահանայա- 14
պետ մեծ՝ անցեալ ընդ երկինս, զՅիսուս զՈրդի
Աստուծոյ. պինդ կալցուք զխոստովանութիւնն.
քանզի ոչ եթէ ունիմք քահանայապետ, որ չիցէ կա- 15
րող չարչարակից լինել տկարութեան մերոյ. այլ փորձ
է ամենայնիւ ըստ նմանութեան առանց մեղաց։
Զկ. Մատիցուք այսուհետեւ համարձակութեամբ 16
առաջի աթոռոյ շնորհացն նորա, զի ընկալցուք ողոր-
մութիւն, եւ գտցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգ-
նականութեան։

ԳԼՈՒԽ Ե

Զի ամենայն քահանայապետ 'ի մարդկանէ առեալ՝ 1
վասն մարդկան կայ յաստուածակոյս կողմն անդր, զի
մատուսցէ պատարագս եւ զոհս վասն մեղաց. չափով 2
չարչարակից կարող է լինել տգիտաց եւ մոլորելոց, քան-
զի եւ ինքն իսկ տկարութեամբ զգածեալ է։ Վասն 3
այնորիկ հարկ է՝ որպէս վասն ժողովրդեանն, նոյն-
պէս եւ ընդ անձին մատուցանել պատարագս վասն մե-
ղաց։ Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ, այլ 4
կոչեցեալն յԱստուծոյ՝ որպէս եւ Ահարոն. Նոյնպէս 5
եւ Քրիստոս, ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քա-
հանայապետ, այլ որ խօսեցաւն առ նա, Թէ Որդի
իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ. որպէս եւ 'ի միւ-
սումն ասէ. Դու ես քահանայ յաւիտեան ըստ կար- 6
գին Մելքիսեդեկի։ Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ ա- 7
ղօթս եւ պաղատանս առ այն որ կարօղն էր ապրեցու-
ցանել զնա 'ի մահուանէ, ուժգին գոչմամբ եւ արտա-
սուօք մատուցանէր. եւ լսելի լինէր առ լաւութեանն.
Թէպէտ եւ որդի է, ուսաւ 'ի չարչարանաց անտի ըզ- 8
հնազանդութիւն։ Եւ իբրեւ կատարեցաւ՝ եղեւ ա- 9
մենայն հնազանդելոց իւրոց պատճառք փրկութեան
յաւիտենից, եւ անուանեցաւ յԱստուծոյ քահանայա- 10
պետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի։

11 Զգ. Վասն որոյ բազում են մեզ բանք, եւ դը-
ժուարապատում՝ 'ի մեկնել. քանզի խօթամիտք ե-
12 ղերուք լսելեօք. փոխանակ զի պարտ էր ձեզ լինել
վարդապետս վասն ժամանակին, դարձեալ պիտոյ է
ձեզ ուսանել՝ թէ զինչ են նշանագիրք սկզբան բա-
նիցն Աստուծոյ. եւ եղերուք կարօտք կաթին, եւ
13 ոչ հաստատուն կերակրոյ։ Զի ամենայն որ կաթըն-
կեր է՝ տգէտ է բանին արդարութեան, քանզի տը-
14 ղայ է. այլ կատարելոցն է հաստատուն կերակուր,
որոց՝ վասն 'ի չափն հասանելոյ՝ ճաշակելիքն կիրթ
են ընտրութեան բարւոյ եւ չարի։

ԳԼՈՒԽ Զ

1 Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քրիստոսի՝
'ի կատարումն եկեսցուք. մի միւսանգամ արկանել
հիմն ապաշխարութեան 'ի մեռելոտի գործոց անտի,
2 եւ հաւատոյն որ յԱստուած, եւ մկրտութեանցն
վարդապետութեան, եւ ձեռնադրութեան ձեռաց,
եւ յարութեան մեռելոց, եւ դատաստանին յաւի-
3 տենից։ Եւ արդ արասցուք զայն՝ եթէ Աստուած
4 հրամայեսցէ. քանզի անհնար է միանգամ մկրտե-
լոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, եւ հա-
5 ղորդք եղեն Հոգւոյն սրբոյ, եւ զգեղեցիկ բանին Աս-
տուծոյ ճաշակսն ճաշակեցին, եւ զզօրութիւնս հան-
6 դերձելոյ աշխարհին, եւ կործանեսցին, միւսանգամ
նորոգել յապաշխարութիւն, եւ վերստին 'ի խաչ
հանել անձանց զՈրդին Աստուծոյ, եւ դարձեալ
7 խայտառակել։ Քանզի երկիր որ ըմպիցէ զանձրեւ
բազում անգամ եկեալ 'ի վերայ նորա, եւ ծնանիցի
արդիւնս շայեկանս նոցա՝ վասն որոց գործիցին, ըն-
8 դունի զօրհնութիւն յԱստուծոյ. իսկ որ բերէ փուշ
եւ տատասկ՝ անպիտան է եւ մերձ յանէծս, եւ վախ-
ճան նորա յայրումն։

ԶԶ. Բայց հաստատեալ եմ վասն ձեր, սիրելիք, 9
'ի լաւ անդր և որ լին է փրկութեամբ, զի թէպէտ
և այսպէս խօսիմք, ոչ եթէ անիրաւ ինչ է Աստուած՝ 10
մոռանալ զգործս ձեր և զսէրն զոր ցուցէք յանուն
նորա. զի պաշտեցիք զսուրբսն և պաշտէք. և մեք ըղ- 11
ձամք, զի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ զնոյն փոյթ
ցուցանիցէ 'ի հաստատութիւն յուսոյն մինչև ցվախ-
ճան. զի մի հեղգամիտք լինիցիք: Նմանօղք եղե- 12
րուք այնոցիկ որ հաւատովքն և երկայնմտութեամբ
ժառանգեցին զաւետիսն. զի Աբրահամու խոստա- 13
ցեալ զաւետիսն Աստուծոյ՝ քանզի յայլ ոք 'ի մեծ ոչ
գոյր երդնուլ, յանձն իւր երդուաւ, և ասէ. Այո՛ 14
օրհնելով օրհնեցից զքեզ, և բազմացուցանելով բազ-
մացուցից: Եւ այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհաս ա- 15
ւետեացն: Ապաքէն մարդիկ որ ինչ 'ի վեր է քան 16
զինքեանս՝ յայն երդնուն. և ամենայն հակառակու-
թեան նոցա վճիռ 'ի հաստատութիւն, երդումն է.
որով առաւել ևս կամեցեալ Աստուծոյ՝ ցուցանել ժա- 17
ռանգաւորաց աւետեացն զհաստատութիւն խորհըր-
դոյն իւրոյ, միջնորդեաց երդմամբ: Զի երկու ան- 18
փոփոխելի իրօքն՝ որովք անհնար իցէ սուտ Աստու-
ծոյ, հաստատուն մխիթարութիւն ունիցիմք, որք ա-
պաստան եղեաք բուռն հարկանել զհանդերձեալ
յուսոյն, զոր իբրև զխարիսխ հաստատուն և անշարժ 19
ունիցիմք անձանց մերոց. որ և մտանիցէ 'ի ներքին
կողմն վարագուրին, ուր կարապետն մեր Յիսուս ե- 20
մուտ վասն մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի եղև
քահանայապետ յաւիտենից:

ԳԼՈՒԽ Է

Քանզի այս Մելքիսեդեկ՝ թագաւոր էր Սաղի- 1
մայ, քահանայ Աստուծոյ բարձրելոյ. որ ել ընդ ա-
ռաջ Աբրահամու, յորժամ դարձեալ գայր 'ի կոտո-
րածէ թագաւորացն՝ և օրհնեաց զնա. որում և տա- 2

սանորդս յամենայնէ ետ Աբրահամ. Նախ թարգմա-
նի թագաւոր արդարութեան, ապա թագաւոր Սա-
3 ղիմայ՝ որ է թագաւոր խաղաղութեան. անհայր՝ ան-
մայր՝ չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց և
ոչ կատարած կենաց. նմանեալ որդւոյն Աստուծոյ՝
4 կայ մնայ քահանայ մշտնջենաւոր: Արդ տեսէք որ-
պիսի ոք էր սա, որում և Աբրահամ տասանորդս ետ
5 յաւարէ անտի՝ նահապետն. և որք յորդւոցն Ղե-
ւեայ զքահանայութիւնն առնուն, պատուէր ունին
տասանորդել զժողովուրդն ըստ օրինացն, այսինքն
է՝ զեղբարս իւրեանց. թէպէտ և ելեալ իցեն յերա-
6 նացն Աբրահամու: Իսկ չհամարեալն յազգս 'ի նո-
ցանէ՝ տասանորդեաց զԱբրահամ, և զնա որոյ զա-
7 ւետիսն ընկալեալ էր՝ օրհնեաց. զի առանց ամենայն
հակառակութեան՝ նուաղն 'ի լաւէ անտի օրհնեսցի:
8 Եւ աստ մարդք մահկանացուք տասանորդս առնուն,
9 բայց անդ վկայեցաւ թէ կենդանի է. և որպէս բանից
կարգ է ասել, թէ Աբրահամաւ և Ղևի իսկ որ
10 զտասանորդսն առնոյր, տասանորդեցաւ. զի դեռ ևս
յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ առաջ եղև նմա
11 Մելքիսեդեկ: Իսկ արդ եթէ կատարումնն 'ի ձեռն
ղևտացւոց քահանայութեանն էր, քանզի ժողո-
վուրդն յայն օրէնսդրեցաւ, զի՞նչ պիտոյ էր ըստ կար-
գին Մելքիսեդեկի այլում քահանայի յառնել, և
12 ոչ ասել՝ եթէ ըստ կարգին Ահարոնի: Այլ 'ի փո-
փոխել քահանայութեանն՝ հարկ էր և օրինացն
13 փոփոխումն լինել. զի զորմէ այսպէսն ասի, յայլմէ
ազգէ կալաւ հաղորդութիւն, յորմէ ոչ ոք երբեք ե-
14 ղև հաղորդ սեղանոյն: Արդ յայտ իսկ է, թէ յազ-
գէ Յուդայ ծագեաց Տէր մեր, յորմէ ազգէ վասն
15 քահանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց: Եւ ևս առա-
ւել յայտ է՝ թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի
16 յառնելոց է այլ քահանայ. որ ոչ ըստ մարմնաւոր
պատուիրանին եղև, այլ ըստ զօրութեան կենացն
17 անվախճանից. քանզի վկայեցաւ, թէ դու ես քա-

հանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի։ Ար֊ 18
համարհութիւն լինէր առաջին պատուիրանին՝ վասն
նորին տկարութեանն և անշահութեան. քանզի ոչ 19
ինչ կատարումն գործեցին օրէնքն, և մուտ ազնուա֊
կան յուսոյն որով մերձենամք առ Աստուած. և այն֊ 20
չափ, զի ոչ առանց երդման. զի են ոմանք՝ որ առանց
երդման են կացեալ քահանայք։ Բայց սա երդմամբ, 21
'ի ձեռն այնորիկ որ ասացն 'ի նա. Երդուաւ Տէր՝ և
ոչ ևս զղջասցի, դու ես քահանայ յաւիտեան։ Եւ 22
այնչափ լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր Յիսուս։
Եւ բազում են կացեալ քահանայք՝ վասն մահու 23
արգել լինելոյ 'ի մշտնջենաւորել։ Իսկ սա վասն յա֊ 24
ւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայու֊
թիւնն. ուստի և կենդանի առնել համօրէն կա֊ 25
րող է զմատուցեալսն նովաւ առ Աստուած. քանզի
միշտ կենդանի է՝ լինել բարեխօս վասն նոցա։
Ա. Զի այսպիսի իսկ և վայելէր մեզ քահանայա֊ 26
պետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ 'ի մեղա֊
ւորաց, և բարձրացեալ քան զերկինս. որում ոչ հա֊ 27
նապազ հարկ է որպէս այլոց քահանայապետիցն՝ նախ
վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցանել, և
ապա վասն ժողովրդեանն. իսկ սա զայն միանգամայն
կատարեաց, զի զանձն իւր մատոյց պատարագ։ Օ֊ 28
րէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս զգա֊
ծեալս տկարութեամբ, իսկ բանն երդման յետ օ֊
րինացն՝ զորդի որ յաւիտեան կատարեալ է։

ԳԼՈՒԽ Ը

Եւ բանից գլուխ խօսիցս, այնպիսի ունիմք քա֊ 1
հանայապետ, որ նստաւ ընդ աջմէ մեծութեան ա֊
թոռոյն յերկինս, սրբութեանցն պաշտօնեայ, և խո֊ 2
րանին ճշմարտութեան՝ զոր Տէրն կանգնեաց և ոչ
մարդ։ Զի ամենայն քահանայապետ վասն մատու֊ 3

ցանելոյ զկօհս և զպատարագս կայ, ուստի հարկ է
4 և նմա ունել ինչ զոր մատուցանիցէ։ Զի թէ էր
յերկրէ, թերևս չէր իսկ քահանայ. զի գոյին որ
5 մատուցանէին ըստ օրինացն պատարագ. որք առա֊
կաւ և օրինակաւ պաշտէին երկնաւորացն. որպէս և
հրամայեցաւ Մովսիսի՝ յորժամ գործելոց էր զվրան
ժամուն. Տեսջիր, ասէ, արասցես զամենայն ըստ օ֊
6 րինակին որ ցուցաւ քեզ 'ի լերինն։ Բայց արդ ա֊
ռաւագոյն ևս պաշտաման եհաս Յիսուս, որչափ
լաւագոյն ևս ուխտի է միջնորդ՝ որ 'ի յառաւել աւե֊
7 տեաց օրինադրեցաւ։ Զի եթէ առաջինն անարատ
8 էր, ապա երկրորդին տեղի ոչ խնդրէր։ Նա աւանիկ
բամբասէ զնոսա և ասէ. Ահաւասիկ աւուրք եկես֊
ցեն, ասէ Տէր, և կատարեցից 'ի վերայ տանն Իսրայելի
9 և 'ի վերայ տանն Յուդայ ուխտ նոր. ոչ ըստ ուխտին
զոր եդի ընդ հարս նոցա յաւուրն յորում առի 'ի
ձեռն՝ հանել զնոսա յերկրէն եգիպտացւոց. և զի
նոքա ոչ կացին յուխտին իմում, և ես անփոյթ ա֊
10 րարի զնոցանէ, ասէ Տէր ամենակալ։ Այլ այս է
ուխտն զոր եդից տանն Իսրայելի յետ աւուրցն այ֊
նոցիկ, ասէ Տէր. տաց զօրէնս իմ 'ի միտս նոցա,
և 'ի սիրտս նոցա գրեցից զնոսա. և եղէց նոցա Աս֊
11 տուած, և նոքա եղիցին ինձ 'ի ժողովուրդ։ Եւ ոչ
ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր,
և իւրաքանչիւր զեղբայր իւր, և ասիցեն թէ ծա֊
նիր զՏէր. զի ամենեքին ծանիցեն զիս 'ի փոքրկանց
12 մինչև ցմեծամեծս նոցա. զի քաւիչ եղէց անիրա֊
ւութեանց նոցա, և զմեղս նոցա և զանօրէնութիւնս
13 այլ ոչ ևս յիշեցից։ Արդ ասելովն նոր՝ հնացոյց զա֊
ռաջինն, և որ հնանայն և ծերանայ՝ մերձ է յապա֊
ԿԱՐԶ) կանութիւն։

ԳԼՈՒԽ Թ

Ունել ունէր և առաջինն իրաւունս պաշտաման 1
յայնժամ զաշխարհական սրբութիւնն։ Զի խո- 2
րանն առաջին հանդերձեցաւ այսպէս, յորում աշ-
տանակն և սեղանն և հացն նուիրաց, որ սրբութիւնն
կոչէր. և յետ երկրորդ վարագուրին՝ խորանն որ կո- 3
չէր սրբութիւն սրբութեանց, յորում կայր բուր- 4
վառն ոսկի, և արկղն կտակարանաց պատեալ ներքոյ
և արտաքոյ ոսկւով, յորում սափորն ոսկի լի մանա-
նայիւ, և գաւազանն Ահարոնի որ ծաղկեցաւ, և
տախտակք կտակարանացն. և 'ի վերայ նորա քերով- 5
բէքն փառաց՝ որ հովանի ունէին 'ի վերայ քաւու-
թեանն. վասն որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։
Եւ այն ամենայն իբրև այնպէս հանդերձեալ կայր, 6
յառաջին խորանն յամենայն ժամ մտանէին քահա-
նայքն զպաշտամունսն կատարել. բայց յերկրորդն՝ 7
մի անգամ'ի տարւոջն քահանայապետն. և զայն ոչ
առանց արեան, զոր մատուցանէր վասն իւր և վասն
ժողովրդեանն անգիտութեան։ Զայս ցուցեալ Հո-
գւոյն սրբոյ՝ մինչ չև յայտնեալ էր ճանապարհի սըր- 8
բութեանցն. քանզի դեռ առաջին խորանն ունէր
զհաստատութիւն, որ է առակ ժամանակին որ ա- 9
ռաջի կայր. յորում պատարագքն և զոհք մատչէին,
որք ոչ կարէին ըստ միտս կատարել զպաշտօնեայսն,
բայց միայն կերակրովք և ըմպելեօք և պէսպէս մը- 10
կրտութեամբք, մարմնոյ արդարութիւնքն՝ որ մինչև
'ի ժամանակս ուղղութեանն 'ի վերայ կային։ Այլ 11
Քրիստոս եկեալ քահանայապետ հանդերձելոցն
բարեաց, մեծաւն և կատարելով և անձեռագործ խո-
րանաւն, այս ինքն է՝ որ ոչ յայսց արարածոց, և ոչ 12
արեամբ նոխազաց և զուարակաց, այլ իւրով ա-
րեամբն եմուտ մի անգամ'ի սրբութիւնսն, յաւի-
տենական գտեալ զփրկութիւն։ Զի թէ արիւն 13

ցլուցն և նոխազաց և մոխիր երինջոյն ցանեալ զպղ-
14 ծեալսն սրբէր առ 'ի մարմնոյ սրբութենէ, որչափ
ևս առաւել արիւնն Քրիստոսի, որ 'ի ձեռն Հոգւոյն
յաւիտենականի մատոյց զանձն անարատ պատարագ
Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց 'ի մեռելո-
տի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կենդանի։
15 Եւ վասն այնորիկ նորոյ ուխտին է միջնորդ. զի յոր-
ժամ մահ լինիցի՝ 'ի փրկութիւն վասն առաջին ուխ-
տին յանցանաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն 'ի
16 ժառանգութիւնն յաւիտենից։ Քանզի ուր կտակ
17 է, հարկ է զմահ 'ի մէջ բերել զկտակագրին. զի
կտակ՝ յետ մահու հաստատուն է. ապա թէ ոչ
զի՞րդ իցէ հաստատուն մինչ կտակագիրն կենդանի
18 է. ուստի և ոչ առաջինն առանց արեան նորոգէր։
19 Քանզի իբրև պատմեցան ամենայն պատուիրանք օ-
րինացն 'ի Մովսիսէ ժողովրդեանն, առեալ զարիւն
ցլուցն և նոխազացն՝ ջրով և բրդով կարմրով և զո-
պայիւ, զկտակարանօքն իսկ և զամենայն ժողովր-
20 դեամբն սրսկեաց, և ասէ. Այս է արիւն կտակին՝
21 զոր պատուիրեաց ձեզ Աստուած։ Եւ զխորանաւն,
և զամենայն կահիւ սպասուն նոյնպէս սրսկեաց զա-
22 րիւնն. և գրեթէ ամենայն ինչ արեամբն սրբէր ըստ
օրինացն, և առանց հեղման արեան չլինէր թողու-
23 թիւն։ Ապա հարկ էր օրինաւորացն՝ այնպիսեօքն
սրբել, և բուն իսկ երկնաւորացն՝ առաւել ևս պա-
24 տարագօք քան զնոյնս. զի ոչ եթէ 'ի ձեռագործ
սրբութիւնսն եմուտ Քրիստոս՝ յօրինակս ճշմար-
տութեանն, այլ 'ի բուն իսկ յերկինս՝ յանդիման լի-
25 նել երեսացն Աստուծոյ վասն մեր։ Ոչ զի բազում
անգամ մատուցանիցէ զանձն պատարագ՝ որպէս քա-
հանայապետն որ մտանէր 'ի սրբութիւն սրբու-
26 թեանցն ամի ամի արեամբ օտարաւ. ապա թէ ոչ՝
պարտ էր նմա բազում անգամ չարչարել իսկզբանէ
աշխարհի. բայց արդ ասաւիկ մի անգամ'ի կատա-
րած յաւիտեանց յանարգութիւն մեղաց իւրով պա-

տարագաւն յայտնեալ է։ Եւ զոր օրինակ կայ մնայ 27
մարդկան միանգամ մեռանել, և յետ այնորիկ դա-
տաստան, նոյնպէս և Քրիստոս մի անգամ մատու- 28
ցեալ պատարագ առ՚ի բառնալոյ զմեղս բազմաց. իսկ
յերկրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ՝
որ ակն ունիցին նմա հաւատովք ՚ի փրկութիւն։

ԳԼՈՒԽ Ժ

Բ. Քանզի զստուեր հանդերձելոց բարեացն ու- 1
նէին օրէնքն, և ոչ զնոյն կերպարանս իրացն. ամի
ամի զնոյն պատարագս մատուցանեն ցանգ, որք ոչ են
կարօղ զմատուցեալսն կատարել. ապա թէ ոչ՝ դա- 2
դարէին ՚ի մատուցանելոյ, վասն և ոչ մի ինչ այնու-
հետև խիղճ մնայ ունելոյ՝ պաշտօնէիցն մի անգամ 3
սրբեցելոց. այլ անդէն ՚ի նմին ՚ի յիշատակս մեղացն
կային ամի ամի. քանզի ոչ կարէր արիւն նոխազացն 4
և ցլուցն բառնալ զմեղս։ Վասն որոյ ՚ի մտանել իւ- 5
րում յաշխարհ՝ ասէ. Զզոհս և զպատարագս ոչ կա-
մեցար, բայց մարմին հաստատեցեր ինձ. ընդ ողջա- 6
կէզս և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար. յայնժամ 7
ասացի՝ թէ ահաւասիկ եկի. ՚ի ճառս գրոց գրեալ
է վասն իմ, առնել զկամս քո Աստուած։ Վերագոյնն 8
ասէ, թէ ընդ զոհս և ընդ պատարագս և ընդ ողջա-
կէզս և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար, և ոչ կամե-
ցար որք ըստ օրինացն մատչէին. ապա ասէ. Ահա- 9
ւասիկ գամ առնել զկամս քո Աստուած. մերժէ զա-
ռաջինն, զի զերկրորդն հաստատեսցէ. որով կամօք 10
և մեք սրբեցաք ՚ի ձեռն պատարագի մարմնոյն Յի-
սուսի Քրիստոսի մի անգամ։ Եւ ամենայն քահա- 11
նայապետ կայ հանապազորդ ՚ի պաշտաման, և զնոյն
պատարագս մատուցանէ բազում անգամ, որք ոչ եր-
բեք կարօղ են բառնալ զմեղս. իսկ սա՝ զմին վասն 12
մեղաց մատոյց պատարագ, և մշտնջենաւոր նստաւ
ընդ աջմէ Աստուծոյ. և այսուհետև ակն ունի՝ մին- 13

14 չև դիցին թշնամիք իւր ՚ի ներքոյ ոտից իւրոց. քան-
զի միով պատարագաւ կատարեաց զսրբեալսն ՚ի
15 մշտնջենաւորս։ Այլ վկայէ մեզ և Հոգին սուրբ՝
16 յետ ասելոյ յառաջագոյն, եթէ այս է ուխտն՝ զոր
եդից ընդ հարս նոցա, յետ աւուրցն այնոցիկ, ասէ
Տէր. տաց զօրէնս իմ ՚ի սիրտս նոցա, և ՚ի խոր-
17 հուրդս նոցա գրեցից զնոսա. ապա ասէ՝ թէ զմեղս
նոցա և զանօրէնութիւնս նոցա այլ ոչ ևս յիշեցից.
18 իսկ ուր թողութիւն է, ոչ ևս պիտոյ է վասն մեղաց
ՎԵՐՋ) պատարագ։
19 Ունիմք այսուհետև, եղբարք, համարձակութիւն
20 ՚ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի, զոր նո-
րոգեաց մեզ ճանապարհ նորոգ և կենդանի ՚ի ձեռն
21 վարագուրին, այսինքն է՝ մարմնոյն իւրոյ. և քահա-
22 նայ մեծ ՚ի վերայ տանն Աստուծոյ. մատիցուք ճշմա-
րիտ սրտիւք լրութեամբ հաւատոց, լուացեալ զսիրտս
՚ի խղճէ չարեաց և մկրտեալ զմարմին ՚ի ջուրն սրբու-
23 թեան. պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ
24 յուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացաւն։ Եւ
զգուշասցուք միմեանց յորդորմամբք սիրոյ և գործոց
25 բարեաց. և մի թողցուք զժողովս միմեանց, որպէս
սովոր են ոմանք. այլ մխիթարեսցուք, և այնչափ ևս
26 առաւել՝ որչափ տեսանիցէք զօրն մերձեալ։ Զի
կամակար մօք եթէ յանցանիցեմք յետ ընդունե-
լութեան գիտութեան ճշմարտութեանն՝ այնուհե-
27 տև ոչ ևս պիտոյ է վասն մեղաց պատարագ, այլ ա-
հեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ
28 հրոյն որ ուտիցէ զհակառակորդսն։ Արհամարհեալ
ուրուք զօրէնսն Մովսիսի, առանց ողորմութեանց՝
29 առ երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր. իսկ ո՞ր-
չափ սաստիկ պատժոյ արժանի համարիցիք զայն,
որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար, և զարիւն նո-
րոյ ուխտին խառնակ համարեցաւ՝ որով սրբեցաւն,
30 և զՀոգին շնորհաց թշնամանեաց։ Այլ գիտեմք
զայն որ ասացն. Իմ են վրէժխնդրութիւնք և ես

հատուցից, ասէ Տէր. և դարձեալ՝ Թէ դատի Տէր
զժողովուրդ իւր: Ահ մեծ է անկանել 'ի ձեռս Աս_ 31
տուծոյ կենդանւոյ: Արդ յիշեցէք զաւուրսն զառա_ 32
ջինս, յորս լուսաւորեալք բազում ձգանց և չարչա_
րանաց համբերեցէք. մերթ 'ի նախատինս և 'ի նեղու_ 33
թիւնս խայտառակեալք, մերթ կցորդք այնպիսեաց
վաստակաւորացն լինել: Քանզի և ընդ կապեալս 34
չարչարեցարուք, և զյափշտակութիւն ընչից ձերոց
խնդութեամբ ընկալարուք. քանզի գիտէիք թէ լա_
ւագոյն ևս ստացուածս ունիք անձանց յերկինս, ուր
կայուն և մնայուն: Արդ մի՛ մերժէք 'ի ձէնջ զհամար_ 35
ձակութիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հա_
տուցումն. պիտոյ է ձեզ համբերութիւն, զի զկամս 36
Աստուծոյ արարեալ հասջիք աւետեացն. զի փոքր 37
մի ևս քան որչափ, որ գալոցն իցէ՝ եկեսցէ և ոչ
յամեսցէ. Զի արդարն իմ 'ի հաւատոց կեցցէ. և 38
եթէ յերկմտեսցի ոք իցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն
իմ: Բայց մեք ոչ եթէ երկմտութեամբ եմք 'ի կո_ 39
րուստ, այլ հաւատովք 'ի փրկութիւն հոգւոց:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց իրաց հաս_ 1
տատութիւն, և յանդիմանութիւն որոց ոչն երևին. 2
զի նովաւ վկայեցան առաջինքն: Հաւատովք իմա_ 3
նամք հաստատեալ զյաւիտեանս բանիւ Աստուծոյ,
յաներևութից զերևելիս եղեալ: Հաւատովք լա_ 4
ւ պատարագս Աբէլ քան զԿային մատուցանէր Աս_
տուծոյ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի 'ի վե_
րայ պատարագացն եղև վկայութիւն նմա յԱստու_
ծոյ. զի թէպէտ և մեռաւ 'ի նմին, սակայն տակա_
ւին խօսի: Հաւատովք Ենովք փոխեցաւ, զի մի՛ 5
զմահ ճաշակեսցէ. և ոչ ուրեք գտանէր, քանզի փո_
խեաց զնա Աստուած. և յառաջ քան զփոխելն նո_

6 րա՝ վկայեցաւ հաճոյ լինել Աստուծոյ. բայց առանց
հաւատոյ՝ անհնար է հաճոյ լինել. այլ հաւատալ
արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած՝ թէ է
Աստուած, և որ խնդրեն զնա՝ լինի պարգևատու:
7 Հաւատովք առեալ հրաման Նոյի՝ վասն չև ևս ե_
րևելեացն զահի հարեալ կազմէր զտապանն 'ի փըր_
կութիւն տան իւրոյ, որով դատեցաւ զաշխարհ. և
8 հաւատոյն արդարութեան եղև ժառանգաւոր: Հա_
ւատովք որ Աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղև ե_
լանել 'ի տեղին զոր առնլոց էր 'ի ժառանգութիւն.
9 ել գնաց՝ և ոչ գիտէր յո՛ երթիցէ: Հաւատովք
պանդխտեցաւ յերկիրն աւետեաց՝ իբրև յօտարու_
թեան. խորանօք բնակեաց Իսահակաւ և Յակով_
բաւ հանդերձ ժառանգակցօք նոյին աւետեաց.
10 քանզի ակն ունէր հիմամբք հաստատելոյ քաղաքին,
11 որոյ ճարտարապետ և արարիչ Աստուած է: Հաւա_
տովք և ինքն Սառա՝ որ ամուլն էր՝ զօրութիւն առ_
նլոյ զսերմն որդեծնութեան ընդունէր, և 'ի տարա_
ժամ հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համա_
12 րեցաւ զայն որ խոստացաւն. վասն որոյ և 'ի միոջէն
ծնանէին, և այն 'ի յանցեալ ժամանակի, իբրև զաս_
տեղս երկնից բազմութեամբ, և իբրև զաւազ առ
13 ափն ծովու անթիւ: Ըստ հաւատոց մեռան
ամենեքին սոքա, և չև ևս ընկալեալ զաւետիսն. այլ
'ի հեռուստ տեսին զնոսա և ցնծացան, և խոստո_
վան եղեն՝ եթէ օտարք և պանդուխտք են յերկրի.
14 զի որք զայնպիսիս խօսին, յայտ առնեն՝ եթէ գա_
15 ւառ իմն խնդրեն. զի եթէ զայն յիշէին ուստի ե_
16 լինն, գոյր ժամանակ դառնալոյ անդրէն. Նա աւա_
նիկ ազնուականի իմն ցանկացեալ են, այս ինքն է՝
երկնաւորին. վասն որոյ ոչ ամօթ համարի Աստուած՝
կոչել Նոցա Աստուած, քանզի պատրաստեաց նոցա
17 քաղաք: Հաւատովք մատոյց Աբրահամ 'ի փոր_
ձութեան իւրում զԻսահակ պատարագ, և զմիա_
մօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր.

որում ասացաւն, թէ Սահակաւ կոչեսցի քեզ զա- 18
ւակ. եդ 'ի մտի իւրում, թէ և 'ի մեռելոց կարող է 19
յարուցանել Աստուած. ուստի և յառակս իսկ ընկա-
լաւ զնա: Հաւատովք վասն հանդերձելոց իրաց՝ օրհ- 20
նեաց Իսահակ զՅակովբ և զԷսաւ: Հաւատովք Յա- 21
կովբ 'ի մեռանելն իւրում՝ զիւրաքանչիւր ոք յորդւոցն
Յովսեփու օրհնեաց, և երկիր եպագ 'ի ծագ գաւազա-
նի իւրոյ: Հաւատովք Յովսէփ 'ի վախճանել իւրում 22
յիշեաց զելս որդւոցն Իսրայելի, և վասն ոսկերաց
իւրոց պատուիրեաց: Հաւատովք զՄովսէս իբրև 23
ծնաւ, թաքուցաւ ամիս երիս 'ի հարց իւրոց. քան-
զի տեսին կայտառ զմանուկն, և ոչ զանգիտեցին 'ի
հրամանէ թագաւորին: Հաւատովք Մովսէս իբրև 24
աճեաց՝ ուրացաւ կոչել որդի դստերն Փարաւոնի.
լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աս- 25
տուծոյ, քան առ ժամանակ մի վայելել 'ի մեղս. կա- 26
րեւոր համարեցաւ զնախատինս Քրիստոսի, քան
զմեծութիւն գանձուցն Եգիպտացւոց. զի հայեցեալ
ակն ունէր վարձուցն հատուցմանն: Հաւատովք թո- 27
ղոյր զերկիրն Եգիպտացւոց, և ոչ երկնչէր 'ի ցասմա-
նէ թագաւորին. զի զաներևոյթն իբրև զտեսեալ
համբերութեամբ համարեցաւ: Հաւատովք արար 28
զզատիկն և զհեղումն արեանն, զի մի՛ սատակիչն անդ-
րանկաց մերձենայցէ 'ի նոսա: Հաւատովք անցին 29
ընդ ծովն Կարմիր՝ իբրև ընդ ցամաք երկիր, զորոյ
զփորձ առեալ Եգիպտացւոցն՝ ընկղմեցան: Հաւա- 30
տովք պարիսպքն Երիքովի անկան, շուրջ եկեալ զնո-
քօք զեօթն օր: Հաւատովք Ռախաբ պոռնիկ ոչ կո- 31
րեաւ ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսսն
խաղաղութեամբ: Եւ արդ զի՞նչ ևս ասացից. զի չէ 32
բաւական ժամանակս պատմելոյ, վասն Գեդէոնի,
Բարակայ, Սամփսոնի, Յեփթայայ, Դաւթի, և
Սամուէլի, և այլոց մարգարէիցն: Որք հաւատովք 33
պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդա-
րութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւ-

34 ծուց, շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան 'ի բե-
րանոյ սրոյ, զօրացան 'ի տկարութենէ, եղեն զօրա-
35 ւորք 'ի պատերազմի, առին զբանակս օտարաց. ըն-
կալան կանայք 'ի յարութենէ զմեռեալս իւրեանց:
Կէսք կոշկոճեցան՝ և չև ևս ընկալեալ զփրկութիւն,
36 զի լաւագոյն յարութեանն հասանիցեն. և կէսք
զտանջանաց և զգանից զփորձ առին, զկապանաց և
37 զբանտից. քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան,
սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լաշկամաշկօք և
մորթովք այծենեօք: Կարօտեալք, նեղեալք, չար-
38 չարեալք, զորս ոչ արժէ աշխարհս. յանապատի մո-
լորեալք և 'ի լերինս և յայրս և 'ի փապարս երկ-
39 րի: Եւ սոքա ամենեքին վկայեալք 'ի հաւատոցն,
40 չև ևս ընկալան զաւետիսն. Աստուծոյ վասն մեր
լաւագոյն համարեալ, զի մի՛ առանց մեր կատա-
րեսցին:

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Այսուհետև և մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք մա-
ծեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն
զամենայն 'ի բաց ընկեսցուք և զմեղս կարևորս.
համբերութեամբ ընթասցուք 'ի պատերազմ որ ա-
2 ռաջի կայ մեզ: Հայեսցուք 'ի զօրագլուխն հաւա-
տոց և 'ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ուրա-
խութեանն որ նմա առաջի կայր՝ յանձն առ զխաչն,
արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ աթո-
3 ռոյն Աստուծոյ: Ածէք զմտաւ, որ զայսպիսի
համբերութիւն 'ի մեղաւորաց հակառակութենէ
անտի կրեաց. զի մի՛ աշխատք լինիցիք անձամբ ձե-
4 րովք և լքանիցիք, զի չև ևս արեամբ չափ պատե-
5 րազմեալք՝ հակառակ կացէք մեղացն, և մոռացա-
րուք զմխիթարութիւնն՝ որ ընդ ձեզ իբրև ընդ որ-
դեակս խօսի:

Դ. Որդեակ իմ, մի՛ լքանիր 'ի խրատու Տեառն,
և մի՛ վհատիցիս յանդիմանեալ 'ի նմանէ. զի զոր սի- 6
րէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի զոր ընդու-
նի։ Ի խրատու համբերութեան կայք, իբրև յոր- 7
դիս մատուցեալ է 'ի ձեզ Աստուած։ Ո՞ր որդի է՝ զոր
ոչ խրատիցէ հայր. զի եթէ առանց խրատու լինի- 8
ջիք, որով ամենեքին բաժանորդք եղեն, ապա խորթք
իցէք՝ և ոչ որդիք։ Զի եթէ 'ի մարմնաւոր հարցն 9
մերոց զոր ունիմք խրատիչս՝ պատկառեմք, ո՞րչափ ևս
առաւել հնազանդեսցուք հօրն հոգւոց՝ և կեցցուք.
զի նոքա առ սակաւ ժամանակս ըստ կամաց իւրեանց 10
խրատեն, իսկ նա՝ վասն օգտի, առ 'ի ընդունելոյ
զսրբութիւն նորա։ Ամենայն խրատ առ ժամանակն 11
ոչ ուրախութեան թուի՝ այլ տրտմութեան. բայց
յետոյ պտուղ խաղաղութեան՝ նոցա կրթեցելոցն
հատուցանէ յարդարութիւն։ Վասն որոյ զձեռս լը- 12
քեալս և զծունկս կթոտս հաստատեցէք. և զշաւիղս 13
ուղիղս արարէք ոտից ձերոց, զի մի՛ որ կաղն իցէ գլը-
րիցի, այլ մանաւանդ բժշկեսցի։ Զխաղաղութեան 14
զհետ երթայք ընդ ամենեսին՝ զսրբութեան, ա-
ռանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր։ Զգոյշ լերուք, 15
գուցէ ոք յետնեալ գտանիցի 'ի շնորհացն Աստու-
ծոյ. մի՛ ոք արմատ դառնութեան 'ի վեր երևեալ նե-
ղիցէ, և նովաւ բազումք պղծիցին։ Մի՛ ոք պոռնիկ 16
և պիղծ իբրև զԵսաւ, որ ընդ միոյ կերակրոյ զանդ-
րանկութիւնսն վաճառեաց. գիտէք՝ զի թէպէտ և 17
յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնսն, խո-
տան գտաւ. զի և ապաշխարութեան տեղի ոչ եգիտ,
թէպէտ և արտասուօք խնդրեաց զնա։
Դ. Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի, 18
որ հրոյն վառեալ էր և մգով և մառախղով և խա-
ւարաւ և մթով, ուր փողն հնչէր և բարբառ պատ- 19
գամացն. ուստի որք լուանն՝ հրաժարեցին, զի մի՛
կրկնեսցի առ նոսա բանն. քանզի ոչ հանդարտէին 20
հրամանին. թէպէտ և գազան մերձենայր 'ի լեառնն՝

21 քարկոծ լինէր. և այնպէս ահագին էր տեսիլն, զի
և Մովսէս ասէր, թէ զահի հարեալ եմ և դողամ։
22 Այլ մատուցեալ էք 'ի Սիոն լեառն, և 'ի քաղաք
Աստուծոյ կենդանւոյ յԵրուսաղէմ՝ յերկինս, և 'ի
23 բիւրաւոր բանակս հրեշտակաց, և յեկեղեցիս անդ-
րանկաց գրելոց յերկինս, և առ դատաւորն ամե-
նեցուն Աստուած, և յոգիս արդարոց կատարելոց,
24 և 'ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, և 'ի
հեղումն արեան նորա՝ որ առաւել խօսի քան զՀա-
25 բելին։ Զգոյշ լերուք՝ գուցէ հրաժարիցէք յայն-
մանէ որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զեր-
ծանել հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրա-
ման տայր, ո՞րչափ ևս առաւել մեք՝ եթէ յերկնա-
26 ւորէն թիկունս դարձուցանիցեմք։ Որոյ ձայնն զեր-
կիր շարժեաց յայնժամ, և այժմ խոստացեալ է և
ասէ. Միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր՝ այլ
27 և զերկինս։ Այլ միւսանգամն յայտ առնէ զշարժե-
լոցն՝ իբրև զեղելոց փոփոխումն, զի հաստատունն կաց-
28 ցեն անշարժքն։ Վասն որոյ թագաւորութիւն ան-
շարժ ընկալեալ՝ պինդ կալցուք զշնորհսն, որով պաշ-
տեմք զԱստուած հաճութեամբք՝ ահիւ և դողու-
29 թեամբ. քանզի Աստուած մեր հուր ծախիչ է։

ԳԼՈՒԽ ԺԳ

1 Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ. զօ-
2 տարսիրութիւն մի՛ մոռանայք, զի այնու ոմանք յան-
3 գէտս ընկալան զհրեշտակս։ Յուշ լիցին ձեզ կա-
պեալքն՝ որպէս թէ դուք ընդ նոսա կապեալք իցէք,
և չարչարեալքն՝ որպէս թէ և դուք իսկ մարմնաւորք
4 էք։ Պատուական է ամուսնութիւն ամենևին, և
սուրբ անկողինք. բայց զշունս և զպոռնիկս դատի
5 Աստուած։ Բարք անարծաթասէրք լինիցին, բաւա-
կան համարել որչափ ինչ 'ի ձեռս իցէ. քանզի ինքն

իսկ ասաց. Ոչ թողից զքեզ և ոչ ընդ վայր հարից.
որպէս համարձակ լիցուք ասել. Տէր է իմ օգնական՝ 6
և ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ: Յիշեցէք զա- 7
ռաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ.
հայեցեալք յելս գնացից նոցա, նմանօղք եղերուք
հաւատոցն: Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն 8
և յաւիտեանս: Յուսմունս պէսպէս և յօտարա- 9
ձայնս մի՛ դանդաչէք. զի լաւ է շնորհօք հաստատել
զսիրտս, և ոչ կերակրովք. որովք ոչ ինչ օգտեցան
որք այնպէսն գնացին:

Ե. Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշխա- 10
նութիւն ճաշակել՝ որք պաշտեն զպաշտօն խորանին:
Զի որոց անասնոց մատչէր արիւնն 'ի սրբութիւնսն՝ 11
վասն մեղաց 'ի ձեռն քահանայապետին, նոցուն մար-
մինք այրէին արտաքոյ բանակին. վասն որոյ և Յի- 12
սուս, զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն,
արտաքոյ դրանն չարչարեցաւ: Արդ եկայք ելցուք 13
առ նա արտաքոյ բանակին, առեալ յանձն զնախա-
տինս նորա. քանզի ոչ եթէ ունիմք քաղաք որ աս- 14
տէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալն խնդրեմք:
Արդ 'ի ձեռն նորա մատուսցուք պատարագ օրհնու- 15
թեան յամենայն ժամ Աստուծոյ, այս ինքն է՝ զպը-
տուղ շրթանց խոստովանելոց յանուն նորա: Զբա- 16
րերարութիւն և զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի
ընդ այնպիսի պատարագս հաճի Աստուած: Ունկնդիր 17
լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա.
զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց՝ որպէս թէ հա-
մարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արաս-
ցեն զայն՝ և մի՛ յոգւոց հանելով. զի այն ոչ յօգուտ
ձեր է:

ԿԻԲ. Աղօթս արարէք վասն մեր. զի հաստատեալ 18
գիտեմք՝ եթէ բարւոք միտս ունիմք. յամենայնի կա-
միմք բարւոք գնացս ցուցանել. և առաւել աղաչեմ՝ 19
զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց ձեզ:
Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան 'ի մեռե- 20

լոց զհովիւն հօտից՝ զմեծն արեամբ յաւիտենական
21 ուխտին զՏէր մեր Յիսուս, հաստատեսցէ զձեզ 'ի
գործս բարութեան՝ առնել զկամս նորա. և արասցէ
'ի մեզ զհաճոյսն առաջի իւր՝ 'ի ձեռն Յիսուսի
22 Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն: Ա-
ղաչեմ զձեզ, եղբարք, անսալ բանիս մխիթարու-
23 թեան. քանզի սակաւուք գրեցի ձեզ. և ճանա-
չէք զեղբայրն մեր զՏիմոթէոս՝ զարձակեալն առ
ձեզ. ընդ որում՝ եթէ վաղագոյն գայցէ՝ տեսից ըզ-
24 ձեզ: Ողջոյն տաջիք ամենայն առաջնորդաց ձերոց և
ամենայն սրբոց: Ողջոյն տան ձեզ՝ որ 'ի կողմանս Ի-
25 տալիացւոց են: Շնորհք ընդ ամենեսին ձեզ:

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ ԳՐԵՑԱՒ ՅԻՏԱԼԻԱՅ Ի ՁԵՌՆ ՏԻՄՈԹԵԱՅ:

ԹՈՒՂԹ

ՍՐԲՈՅ

ԱՌԱՔԵԼՈՅՆ ՅԱԿՈՎԲԱՅ

ԿԱԹՈՂԻԿԷ

ԳԼՈՒԽ Ա.

ԱԴ. Յակովբոս Աստուծոյ և տեառն Յիսուսի 1
Քրիստոսի ծառայ. երկոտասան ազգացդ որ 'ի սփիւ-
ռըդ էք՝ ողջոյն: Ամենայն ուրախութեան արժանի 2
համարիջիք, եղբարք, յորժամ 'ի պէսպէս փորձու-
թեանց 'ի մէջ անկանիցիք. գիտասջիք զի հանդէս 3
ձերոյ հաւատոյն յօրինեալ գործէ զհամբերու-
թիւն: Իսկ համբերութիւնն գործ կատարեալ ունի- 4
ցի. զի իցէք ողջանդամք և կատարեալք, և ոչ ինչ
իւիք նուազեալք: Ապա թէ ոք 'ի ձէնջ իցէ նուա- 5
զեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ՝ որ
տայն ամենայնի առատապէս և ոչ նախատէ, և տա-
ցի նմա: Բայց խնդրեսցէ հաւատովք՝ և մի երկմը- 6
տեսցէ. զի որ երկմիտն է՝ նման է հողմակոծեալ և
տատանեալ ալեաց ծովու. մի ակն կալցի մարդն այն 7
առնուլ ինչ յԱստուծոյ. զի այր երկմիտ՝ առանց 8
հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր:
Պարծեսցի եղբայր խոնարհ 'ի բարձրութիւն իւր, 9
և որ մեծատունն իցէ 'ի խոնարհութիւն իւր. քան- 10
զի իբրև զծաղիկ խոտոյ անցցէ: Զի ծագեաց արև 11
հանդերձ խորշակաւ՝ և ցամաքեցոյց զխոտն, և թօ-

թափեցաւ ծաղիկն նորա, և կորեաւ վայելչութիւն
երեսաց նորա. նոյնպէս և մեծատունն հանդերձ
12 շահիւքն իւրովք թարշամեսցի: Երանեալ է այր որ
համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր ևս գտանի-
ցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց
իւրոց:
13 Ա. Մի ոք որ 'ի փորձութեան իցէ, ասիցէ՝ թէ
յԱստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չա-
14 րեաց, փորձէ նա՝ և ոչ զոք. իւրաքանչիւր ոք փորձի
առ 'ի յիւրոյն ցանկութեանց ձգեալ և պատրեալ.
15 ապա այնուհետև ցանկութիւնն յղացեալ՝ զմեղս
16 ծնանի, և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին: Մի
17 խաբիք, եղբարք իմ սիրելիք, զի ամենայն տուրք
բարիք և ամենայն պարգևք կատարեալք՝ 'ի վերուստ
են իջեալ առ 'ի Հօրէն լուսոյ, յորում չիք փոփո-
18 խումն և կամ շրջելոյստուեր: Կամեցեալ ծնաւ
զմեզ բանիւն ճշմարտութեան՝ լինել մեզ պտուղ
19 ինչ ստացուածոց նորա. գիտասջիք եղբարք իմ սի-
րելիք: Եղիցի ամենայն մարդ արագ առ 'ի լսել, և
20 ծանր առ 'ի խօսել, և ծանր առ 'ի բարկանալ. զի
բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ
21 գործէ: Որով 'ի բաց թօթափեալ զամենայն աղտե-
ղութիւն և զյաւելուածս չարեաց, հեզութեամբ
ընդունիջիք զբանն ընտաբոյս, որ կարօղն է կե-
22 ցուցանել զոգիս ձեր. լինիջիք առնելիք բանին, և
23 մի լսելիք միայն համարեսջիք յանձինս: Զի եթէ
ոք լսելի միայն իցէ բանին՝ և ոչ առնելի, նման է
նա մարդոյ որ պշուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ
24 ծնանիցին 'ի հայելւոջ. զի հայեցեալ եւտես զինքն,
և զանց արար, և անդէն մոռացաւ թէ որպիսի ոք
25 էր: Իսկ որ յառեալ 'ի կատարեալ օրէնս ազատու-
թեանն հայիցի, և 'ի նմին կացցէ, ոչ եղև նա լսօղ
մոռացութեան, այլ առնելի գործոյն. նա յառնելն
26 իւրում լիցի երանելի: Եթէ ոք կամիցի կրօնաւոր
լինել, և ոչ սանձահարեսցէ զլեզու իւր, այլ զբաղե-

ցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայրապար է
կրօնաւորութիւնն։ Կրօնաւորութիւն սուրբ և անա- 27
րատ առ 'ի յԱստուծոյ և 'ի Հօրէ այս է, այցելու
լինել որբոց և այրեաց 'ի նեղութեան իւրեանց, ա-
նարատ պահել զանձն յաշխարհէ։

ԳԼՈՒԽ Բ

ԱՁ. Եղբարք իմ, մի՛ աչառանօք ունիցիք զհա- 1
ւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ Տէրն
է փառաց։ Եթէ մտցէ 'ի ժողովուրդ ձեր այր՝ որ ու- 2
նիցի մատանի ոսկի և հանդերձս պայծառս, մտանի-
ցէ անդր և աղքատ ոք 'ի հանդերձս աղտեղիս, հայի- 3
ցիք ընդ այն՝ որ ունիցի զհանդերձսն պայծառս, և
ասիցէք՝ եթէ դու նիստ աստ պատուով, և աղքատն
ասիցէք՝ եթէ յոտն կաց այտի, կամ թէ եկ նիստ
առ պատուանդանիս իմում. ո՞չ խղճիցէք յանձինս, 4
և լինիցիք դատաւորք չարացն խորհրդոց։ Լուարուք 5
ինձ, եղբարք իմ սիրելիք. ո՞չ ապաքէն Աստուած ընտ-
րեաց զաղքատս աշխարհիս, որ են մեծատունք հա-
ւատովք և ժառանգաւորք արքայութեանն՝ զոր խոս-
տացաւ սիրելեաց իւրոց. և դուք անարգէք զաղ- 6
քատս։ Ո՞չ մեծատունք յաղթահարեն զձեզ՝ և նո-
քա քարշեն զձեզ 'ի դատաստան. ո՞չ նոքա հայհոյեն 7
զբարւոք անունն՝ որ կոչեցեալ է 'ի վերայ ձեր։ Ապա 8
թէ զօրէնսն կատարիցէք զարքունական ըստ գրոց,
եթէ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո, բարւոք
առնէք. իսկ եթէ աչառիցէք, մեղս գործէք՝ յան- 9
դիմանեալք յօրինացն իբրև օրինազանցք։ Որ ոք 10
զամենայն օրէնսն պահիցէ, և միով իւիք ինչ գթի-
ցէ, եղև ամենայն օրինացն պարտապան։ Զի որ 11
ասացն՝ թէ մի՛ սպանանիցես, ասաց թէ և մի՛ շնայ-
ցես. զի եթէ սպանանիցես ոչ՝ բայց շնայցես, եղեր
յանցաւոր օրինացն։ Այնպէս խօսեցարուք և այն- 12
պէս արարէք, որպէս զի ազատութեան օրինօքն ի-

13 ցէք դատելոց. զի անողորմ դատաստան լինելոց է
այնմ, որ ոչ առնիցէ զողորմութիւն. քանզի բարձրի-
գլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւն։
14 ԱԷ. Զի՞նչ օգուտ իցէ, եղբարք իմ, եթէ ասի-
ցէ ոք հաւատս ունել՝ և գործս ոչ ունիցի. միթէ
15 կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցանել զնա։ Եթէ եղ-
բայր ոք կամ քոյր՝ իցեն մերկք կամ կարօտեալ ա-
16 ւուրն կերակրոյ, ասիցէ ոք 'ի ձէնջ ցնոսա. երթայք
խաղաղութեամբ ջեռարուք և յագեցարուք. և տայ-
ցէք ոչ՝ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ օգուտ իցէ.
17 սոյնպէս և հաւատք՝ եթէ գործս ոչ ունիցին, մե-
18 ռեալ են առանձինն։ Այլ թերևս ասիցէ ոք. եթէ
դու հաւատս ունիս՝ և ես գործս ունիմ. ցոյց ինձ ըզ-
հաւատսն քո առանց գործոց, և ես ցուցից քեզ 'ի գոր-
19 ծոց իմոց զհաւատսն։ Դու հաւատաս՝ զի մի է Ա-
ստուած, բարւոք առնես. և դևք հաւատան և սար-
20 սեն։ Կամի՞ս գիտել, ո՛վ մարդ սնոտի, զի հաւատք
21 առանց գործոց դատարկ են։ Աբրահամ հայր մեր
ո՞չ ապաքէն 'ի գործոց արդարացաւ՝ հանեալ 'ի սե-
22 ղան զորդին իւր զԻսահակ պատարագ։ Տեսանե՞ս՝
զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա. և 'ի
23 գործոց անտի հաւատքն կատարեցան. և կատարե-
ցաւ գիրն՝ որ ասէ. Հաւատաց Աբրահամ յԱստուած,
և համարեցաւ նմա յարդարութիւն, և կոչեցաւ
24 բարեկամ Աստուծոյ։ Տեսանէ՞ք՝ զի 'ի գործոց ար-
25 դարանայ մարդ՝ և ոչ 'ի հաւատոց միայն։ Սոյնպէս
և Ռախաբ պոռնիկ՝ ո՞չ ապաքէն 'ի գործոց արդարա-
ցաւ, ընկալեալ զլրտեսսն՝ և ընդ այլ ճանապարհ
26 արձակեաց։ Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ
մեռեալ է, սոյնպէս և հաւատք առանց գործոց մե-
ռեալ են։

ԳԼՈՒԽ Գ

ԲԱ. Մի՛ բազում վարդապետս լինել, եղբարք իմ. 1
գիտասջի՛ք՝ զի մեծ դատաստան ընդունելոց եմք. քան- 2
զի բազում ինչ յանցանեմք ամենեքեան: Եթէ ոք
բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ կատարեալ, որ
կարօղն է սանձահարել զամենայն մարմին իւր: Տես՝ 3
զի ձիոց սանձս 'ի բերան դնեմք՝ առ անսալոյ նոցա
մեզ, և զամենայն մարմինս նոցա նուաճեմք: Ահա- 4
ւասիկ և նաւք՝ որպիսի՛ ինչ են, և 'ի սաստիկ հողմոյ
վարին. և փոքր թևոփն շրջին՝ յոր կոյս և միտք ուղղ-
չին կամիցին: Սոյնպէս և լեզու՝ փոքր ինչ անդամ 5
է՝ և մեծամեծս բարբառի. ահա և սակաւ ինչ հուր
զորպիսի՛ անտառս հրդեհէ. և լեզու հուր՝ զարդ ա- 6
նիրաւութեան, լեզու հաստատեալ է յանդամս մեր,
որ զամենայն մարմինն ապականէ, և վառէ հրով զա-
նիւ ծննդեան, և բորբոքեալ տոչորի 'ի գեհենի: Ա- 7
մենայն բնութիւն գազանաց և թռչնոց և սողնոց, և
որ 'ի ծովու են, հնազանդեալ է և հնազանդի մարդ-
կեղէն բնութեան: Բայց զլեզու մարդկան ոչ ոք կարէ 8
հնազանդել, զչարն և զանկարգն և զլի թունոք մա-
հաբերին: Նովաւ օրհնեմք զՏէրն և զՀայր, և նո- 9
վաւ անիծանեմք զմարդիկ որ ըստ նմանութեան Ա-
ստուծոյ արարան. 'ի նմին բերանոյ ելանեն օրհնու- 10
թիւնք և անէծք. ոչ է պարտ, եղբարք իմ, այսմ այս-
պէս լինել: Մի թէ աղբիւր անտստին 'ի միոյ ականէ 11
բղխիցէ՞ քաղցր և դառն. մի թէ մա՞րթ ինչ իցէ, եղ- 12
բարք իմ, թզենւոյ ձէթ բերել, կամ որթոյ թուզ. և
ոչ աղտաղտին տեղւոյ ջուր քաղցր առնել:

ԲԲ. Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ 'ի ձեզ, 13
ցուցցէ 'ի բարւոք գնացից զգործս իւր հեզութեամբ
իմաստութեան: Ապա թէ նախանձ և դառնութիւն 14
և հակառակութիւն ունիցիք 'ի սիրտս ձեր, մի՛ պար-
ծիք սուտ առնել զճշմարտութիւն: Ոչ է իմաստու- 15

թիւնս այս իջեալ 'ի վերուստ, այլ երկրաւոր՝ շնչա-
16 ւոր և դիւական. զի ուր հեռ և նախանձ, անդ է
17 անկարգութիւն և ամենայն իրք չարք: Իսկ վերին
իմաստութիւնն, նախ՝ զի սուրբ է, և ապա խաղա-
ղարար, հեզ, դիւրահաւան, լի ողորմութեամբ և
պտղովք բարեաց, անխիղճ, առանց կեղծաւորու-
18 թեան. պտուղ արդարութեան խաղաղութեամբ
սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն:

ԳԼՈՒԽ Դ

1 Ուստի՞ պատերազմունք և ուստի՞ կռիւք 'ի ձեզ.
ո՞չ յայդպիսի ցանկութեանց ձերոց՝ որ զօրացեալ են
2 յանդամս ձեր: Ցանկայք, և ոչ ունիք. սպանանէք
և նախանձիք, և ոչ կարէք հասանել. պատերազմիք
3 կռուիք՝ և ոչ ունիք, վասն զի ոչ խնդրէք. խնդրէք՝
և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք. զի անդէն
4 'ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք: Շնացօղք, ո՞չ գի-
տէք՝ զի սէր աշխարհիս թշնամութիւն է առ Ա-
ստուած. զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ, թշնամի
5 առնէ զանձն Աստուծոյ: Կամ թէ վայրապա՞ր հա-
մարիցիք՝ զոր ասէ գիրն առ նախանձ ինչ, որում փա-
6 փաքէ հոգին՝ որ բնակեաց 'ի մեզ, տալ զառաւել
շնորհսն. վասն որոյ ասէ. Տէր ամբարտաւանից հա-
կառակ կայ, տայ շնորհս խոնարհաց:
7 ԲԳ. Հնազանդեցարուք այսուհետև Աստուծոյ,
և կացէք հակառակ չարախօսին, և լիցի փախստա-
8 կան առ 'ի ձէնջ. մերձեցարուք առ Աստուած, և
մերձեսցի առ ձեզ: Սրբեցէք զձեռս, մեղաւորք, և
9 ուղիղ արարէք զսիրտս, երկմիտք. տառապեցա-
րուք, սգացարուք, և լացէք. ծաղր ձեր 'ի սուգ
դարձցի, և ուրախութիւն ձեր 'ի տրտմութիւն.
10 խոնարհեցարուք առաջի Տեառն՝ և բարձրացուսցէ
11 զձեզ: Մի՛ բամբասէք զմիմեանս, եղբարք. որ բամ-
բասէ զեղբայր իւր, կամ դատի զեղբայր իւր, զօ-

րէնսն բամբասէ և զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն
դատիցիս, ոչ առնելի օրինացն ես՝ այլ դատաւոր։
Մի է օրէնսդիր և դատաւոր, որ կարօղն է փրկել 12
և կորուսանել. դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն։ Ահա֊ 13
ւասիկ են որ ասեն. այսօր և վաղիւ երթիցուք յայս
անուն քաղաք, եղիցուք անդ տարի մի, վաճառես֊ 14
ցուք և շահեսցուք. որք ոչ գիտէք զվաղիւն. որպի֊ 15
սի՞ ինչ իցեն կեանք ձեր. զի իբրև զմրրիկ էք, որ
առ սակաւ մի երևեալ՝ և ապա ապականեալ. փոխա֊
նակ զի ասելիք. եթէ Տէր կամեսցի, կեցցուք և ա֊
րասցուք զայս ինչ կամ զայն. և արդ պարծիք յամ֊ 16
բարտաւանութեան ձերում. ամենայն ինչ այնպիսի
պարծանք՝ չարութեան են։ Որ ոք գիտիցէ զբարին՝ 17
և ոչ առնիցէ, մեղք են նմա։

ԳԼՈՒԽ Ե

ԲԴ. Արդ այսուհետև, մեծատունք, լացէք և ող֊ 1
բացէք'ի վերայ թշուառութեանցն, որ գալոց են'ի
վերայ ձեր։ Զի մեծութիւնդ ձեր յոչինչ է, և հան֊ 2
դերձ ձեր կերակուր ցեցոյ, և արծաթ ձեր և ոսկի՝ 3
ժանգահար, և ժանգն նոցա լիցի ձեզ'ի վկայու֊
թիւն, և կերիցէ զմարմինս ձեր. իբրև զհուր գան֊
ձեցէք աւուրցն յետնոց։ Ահաւասիկ վարձք մշակաց 4
որ գործեն զանդս ձեր՝ առ ձեզ են. զրկեալն'ի ձէնջ
աղաղակէ, և բողոք հնձողացն եհաս յականջս Տեա֊
ռըն զօրութեանց։ Փափկացայք'ի վերայ երկրի և 5
զբօսայք. սնուցէք զսիրտս ձեր՝ իբրև աւուր սպան֊
ման. զրկեցէք սպանէք զարդարն, որ ոչ կայր ձեզ 6
հակառակ։ Երկայնամիտ լերուք, եղբարք իմ, մին֊ 7
չև'ի գալուստն Տեառն. ահա մշակ երկայնամտեալ
սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչև առցէ
զկանուխ և զանագան։ Երկայնամտեցէք և դուք, 8
հաստատեցէք զսիրտս ձեր. զի գալուստն Տեառն
մերձեալ է։ Մի՛ տրտմեցուցանէք զմիմեանս, եղ֊ 9

բարք, զի մի՛ դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ
10 դուրս կայ։ Օրինակ առէք, եղբարք, չարչարանաց
և երկայնմտութեան զմարգարէսն, որք խօսեցան
11 յանուն Տեառն։ Ահաւասիկ երանեմք համբերո֊
ղաց. զհամբերութիւնն Յոբայ լուարուք՝ և զկա֊
տարումն Տեառն տեսէք. զի բազմագութ է Տէր
և ողորմած։
12 ԲԵ. Յառաջ քան զամենայն ինչ, եղբարք իմ, մի՛
երդնուցուք, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, մի՛ յայլ ինչ
երդումն, այլ եղիցի ձեր այոն՝ այո, և ոչն՝ ոչ. զի մի՛
13 'ի կեղծաւորութիւն ինչ անկանիցիք։ Վշտանայցէ՞ ոք
'ի ձէնջ, յաղօթս կայցէ. բերկրիցի՞ ոք, սաղմոս ա֊
14 սասցէ. հիւանդանայցէ՞ ոք'ի ձէնջ, կոչեսցեն զերի֊
ցունս եկեղեցւոյն, և արասցեն 'ի վերայ նորա ա֊
15 ղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն. և աղօթքն
հաւատովք՝ փրկեսցէ զաշխատեալն, և յարուսցէ
զնա Տէր. և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցին
16 նմա։ Խոստովան եղերուք միմեանց զմեղս, և ա֊
ղօթս արարէք'ի վերայ միմեանց, որպէս զի բժշկես֊
ջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոյ
17 յօգնականութիւն։ Եղիա մարդ էր իբրև զմեզ
չարչարելի. և յաղօթս եկաց, և ոչ տեղեաց յերկիր
18 զերիս ամս և զվեց ամիս. և դարձեալ եկաց յա֊
ղօթս, և ետուն երկինք զանձրև և բուսոյց երկիր
19 զպտուղ իւր։ Եղբարք իմ, եթէ ոք 'ի ձէնջ մոլո֊
րեսցի 'ի ճանապարհէ ճշմարտութեան, և դար֊
20 ձուսցէ ոք զնա, գիտասցէ՝ զի որ դարձուսցէ զմեղա֊
ւորն 'ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեսս֊
ցէ զոգի իւր 'ի մահուանէ, և ծածկեսցէ զբազմու֊
թիւն մեղաց։

ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԲՁ. Պետրոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի, 1
ընտրելոց նժդեհից որ 'ի սփիւռս պոնտացւոց, գաղա-
տացւոց և կապադովկեցւոց և ասիացւոց և բիւթա-
նացւոց, ըստ կանխագիտութեանն Աստուծոյ Հօր, 2
սրբութեամբ Հոգւոյն, 'ի հնազանդութիւն և 'ի
հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի: Շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցի: Օրհնեալ է 3
Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ
զմեզ վերստին 'ի յոյսն կենդանի, 'ի ձեռն յարու-
թեանն Յիսուսի Քրիստոսի 'ի մեռելոց, յանեղծ 4
և յանարատ և յանթառամ ժառանգութիւնն՝ որ
պահեալ է յերկինս 'ի ձեզ. որ զօրութեամբն Աս- 5
տուծոյ պահեալ էք հաւատովք 'ի պատրաստեալ
փրկութիւնն յայտնել 'ի յետին ժամանակս. որով 6
ուրախ լինիջիք, որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատ-
շաճի իրացդ տրտմեալ էք 'ի պէսպէս փորձութիւնս:
Զի հանդէս ձերոյ հաւատոյն առաւել քան զոսկի 7
կորստական՝ պատուական է, որ հրով փորձեալ՝ գը-
տաւ 'ի գովութիւն և 'ի փառս և 'ի պատիւ 'ի յայտ-
նութեանն Յիսուսի Քրիստոսի: Զոր ոչն տեսէք՝ 8
և սիրեցէք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք, բայց հա-
ւատացէք. և ուրախ էք անճառ և փառաւորեալ

9 խնդութեամբն. ընկալեալ զկատարումն հաւատոյն
10 ձերոյ՝ զոգւոյն փրկութիւն: Վասն որոյ փրկու-
թեան՝ խնդրեցին և քննեցին մարգարէքն, որք
վասն որոյ 'ի ձեզ լինելոց էին շնորհքն՝ մարգարէա-
11 նային. քննէին յորում և յորպիսի ժամանակի գու-
շակէր 'ի նոսա Հոգին Քրիստոսի. որ նախ՝ չար-
չարանացն Քրիստոսի վկայէր, և յետ այնորիկ՝ ըզ-
12 փառացն: Որոց և յայտնեցաւ իսկ. զի ոչ թէ ան-
ձանց, այլ մեզ մատակարարք լինէին, նոցին՝ որք
այժմ պատմեցան, այնոքիւք որք աւետարանեցինն
ձեզ Հոգւովն սրբով որ առաքեցաւ յերկնից, զոր ցան-
կային տեսանել գոնեայ ընդ աղօտ Հրեշտակք:
13 ԲԷ. Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց՝ զուար-
թացեալք, բովանդակ սպասեցէք հասելոց ձեզ
շնորհացն 'ի յայտնութեանն Յիսուսի Քրիստո-
14 սի, իբրև զորդիս հնազանդութեան. մի կերպարա-
նեալք առաջին ձերովք անգիտութեանն ցանկու-
15 թեամբք: Այլ ըստ սրբոյն որ կոչեաց զձեզ, և դուք
16 սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք. վասն որոյ
գրեալ է, եթէ եղերուք սուրբ՝ զի ես սուրբ եմ:
17 Եւ եթէ հայր կոչիցէք զայն, որ առանց ակնառու-
թեանն դատի ըստ իւրաքանչիւր գործոց, ապա եր-
կիւղիւ զձերոյ պանդխտութեան ժամանակդ գնաս-
18 ջիք: Գիտասջիք, զի ոչ ապականացու արծաթե-
ղինօք և ոսկեղինօքն փրկեցարուք 'ի ձերոց ունայ-
19 նութեան հայրենատուր գնացիցն, այլ պատուական
արեամբն Քրիստոսի, իբրև անբիծ և անարատ գա-
20 ռին, որ յառաջծանօթն էր նախ քան զսկզբանէ
աշխարհի, և երևեցաւ 'ի վախճան ժամանակաց
21 վասն ձեր. որք նովաւ հաւատացէք յԱստուած, որ
յարոյց զնա 'ի մեռելոց, և ետ նմա փառս. զի հա-
22 ւատքն ձեր և յոյս իցեն յԱստուած: Զանձինս
ձեր սրբել հնազանդութեամբ ճշմարտութեան,
յեղբայրսիրութեան առանց կեղծաւորութեան, 'ի
23 սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս: Ծնեալք 'ի

վերստին՝ ոչ յապականութեան սերմանէն, այլ
յանապականացուէն, կենդանի և մշտնջենական բա-
նիւն Աստուծոյ։ Քանզի ամենայն մարմին իբրև 24
զխոտ է, և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ
խոտոյ. խոտն ցամաքեցաւ և ծաղիկն թօթափեցաւ,
և բան Տեառն մնայ յաւիտեան, այսինքն է՝ բանն 25
որ 'ի ձեզ աւետարանեցաւ։

ԳԼՈՒԽ Բ

ԳԱ. Ի բաց թօթափել այսուհետև զամենայն չա- 1
րութիւն և զամենայն նենգութիւն, և զկեղծաւո-
րութիւնս և զնախանձ, և զամենայն չարախօսու-
թիւն. իբրև զարդի ծնեալ մանկունս՝ խօսուն և ան- 2
խարդախ կաթին փափաքեցէք. զի նովաւ աճիցէք 3
'ի փրկութիւն, եթէ ճաշակեցէք՝ զի քաղցր է Տէր։
Առ որ մատուցեալ էք 'ի վէմ կենդանի, որ թէպէտ 4
'ի մարդկանէ անարգեալ, այլ առ 'ի յԱստուծոյ ընտ-
րեալ և պատուական է. և դուք իբրև զվէմս կեն- 5
դանիս շինիք տաճար հոգևոր՝ յանարատ քահանայու-
թիւն, մատուցանել զհոգևորս պատարագս՝ հաճոյս
Աստուծոյ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի։ Քանզի 6
կայ իսկ 'ի գրի, եթէ ահաւասիկ դնեմ 'ի Սիոն
վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, և որ 'ի
նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ։ Ձեզ այսուհետև 7
հաւատացելոցդ՝ վէմ պատուական, իսկ անհաւա-
տիցն՝ վէմ զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ
անկեան. և վէմ գլորման և վէմ գայթագղութեան, 8
որ գայթագղին ապստամբեալք 'ի բանէն՝ յոր և ե-
դան։ Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, 9
քահանայութիւն. ազգ սուրբ, ժողովուրդ սեպհա-
կան. որպէս զի զձեր առաքինութիւնս նուիրիցէք
այնմ, որ զձեզ 'ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի
լոյսն. որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ 10
Աստուծոյ. որք չողորմեալք, այժմ ողորմութիւն

11 գտէք։ Սիրելիք, աղաչեմ, իբրև զպանդուխտս և
զնժդեհս 'ի բաց մերժել 'ի մարմնաւոր ցանկու-
12 թեանցն, որ զինուորին ընդդէմ ոգւոց. զվարս ձեր
'ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել. զի որով
բամբասիցեն զձեզ իբրև զչարագործս, 'ի բարւոք
գործոցն ձերոց դիտեալ՝ փառաւոր առնիցեն զԱս-
տուած յաւուրն այցելութեան։
13 ԳԲ. Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ըս-
տեղծուածոյ վասն Տեառն. եթէ թագաւորի՝ իբ-
14 րև առաւել ումեք, եթէ դատաւորաց՝ իբրև 'ի նո-
մանէ առաքելոց 'ի վրէժխնդրութիւն չարագործաց,
15 և 'ի գովութիւն բարեգործաց։ Զի այսպէս են
կամք Աստուծոյ, բարեգործացն պապանձեցուցանել
16 զանզգամ մարդոց զանգիտութիւն։ Իբրև զազատս
լինել, և մի իբրև պատրուակ չարութեան ունել
17 զազատութիւնն, այլ իբրև Աստուծոյ ծառայք. զա-
մենեսեան պատուեցէք, զեղբայրսիրութիւն սիրե-
ցէք, յԱստուծոյ երկերուք, զթագաւորս պատուե-
18 ցէք։ Ծառայք, հնազանդ լինել յամենայնի եր-
կիւղիւ տերանց, ոչ միայն բարերարացն և հեզոցն,
19 այլ և կամակորացն. զի այս շնորհք յԱստուծոյ են,
եթէ բարւոք ինչ մտօք տանիցի ոք վշտաց յանիրա-
20 ւի։ Քանզի զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ
մեղանչիցէք՝ տանջիցիք և համբերիցէք. այլ եթէ
զբարիս գործիցէք՝ չարչարիցիք և համբերիցէք, այն
շնորհք յԱստուծոյ են. քանզի 'ի դոյն իսկ կոչեցա-
21 րուք։ Զի և Քրիստոս վասն ձեր մեռաւ, և ձեզ
եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոց նորա։
22 Որ ոչն արար մեղս, և ոչ գտաւ նենգութիւն 'ի բե-
23 րան նորա. որ բամբասեալ՝ և ոչ փոխարէն բամբա-
սէր, չարչարեալ՝ և ոչ պահէր սպառնալիս. բայց ի-
24 րաւամբք մատնէր դատաւորին. որ զմեր մեղսն ի-
րով մարմնովն վերացոյց 'ի խաչափայտն. զի լիցուք
զերծեալք 'ի մեղաց անտի, և իցեմք արդարութեանն
25 կենակիցք. որոյ վիրօքն բժշկեցայք։ Քանզի էիք

իբրև զոչխարս մոլորեալս, այլ այժմ դարձարուք առ
հովիւն և տեսուչ ոգւոց ձերոց։

ԳԼՈՒԽ Գ

ԳԳ. Սոյնպէս և կանայք հնազանդ լինել արանց 1
իւրեանց· զի եթէ իցեն նոքա ապստամբք 'ի բանէ ան-
տի, յաղագս կանանց գնացից և առանց բանին իսկ
շահեսցին, դիտել երկիւղիւ զձեր պարկեշտ գնացս։ 2
Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք և ոսկեհուռ ծա- 3
մակալօք կամ պաճուճեալ զգեստուք զարդ· այլ ծա- 4
ծուկ սրտին մարդն, անեղծութեամբ հեզութեան
և հանդարտութեան հոգւոյն, որ է առաջի Աստու-
ծոյ բազմապատիկ։ Քանզի այսպէս երբեմն և կա- 5
նայք որ յուսացեալ էին յԱստուած՝ զարդարէին
զանձինս հնազանդել իւրեանց արանց։ Որպէս և 6
Սառա՝ զի հնազանդ էր Աբրահամու, և տէ՛ր իւր
կոչէր զնա· որոյ եղերուքն դուք որդիք· բարեգործք
էին, և ոչ կասկածէին՝ և ոչ 'ի միոջէ ինչ երկիւղէ։
Սոյնպէս և արք իմաստութեամբ բնակեսցեն ընդ նո- 7
սա· իբրև տկար անօթոյ առնիցեն պատիւ կանանց՝
և իբրև ժառանգակցաց շնորհացն կենաց· զի մի՛
խափան լինիցին աղօթիցն ձերոց։ Եւ գլուխ ամե- 8
նայնի, զի համամիտք իցէք, համակարիք, եղբայրա-
սէրք, ազնուագութք, խոնարհք։ Մի՛ չար փոխա- 9
նակ չարի հատուցանել, կամ բամբասանս ընդ բամ-
բասանաց, այլ զնորին հակառակն՝ օրհնել· զի յայս
իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութիւնն ժառանգիցէք։
ԳԴ. Զի որ կամի զկեանս սիրել, և զաւուրս իւր 10
տեսանել 'ի բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր 'ի
չարութենէ, և զշրթունս իւր 'ի չխօսելոյ զնենգու-
թիւն· խոտորեսցի 'ի չարէ և արասցէ զբարի, խնդ- 11
րեսցէ զխաղաղութիւն և երթիցէ զհետ նորա· զի 12
աչք Տեառն 'ի վերայ արդարոց, և ականջք նորա յա-
ղօթս նոցա· երեսք Տեառն 'ի վերայ չարագործաց։

13 Եւ ո՞ իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն
14 նախանձաւորք լինիցիք։ Այլ թէ և չարչարիցիք ևս
վասն արդարութեան, երանելի էք· բայց յերկիւ-
15 ղէ նոցա մի՛ երկնչիցիք, և մի՛ խռովեսջիք· այլ զՏէր
զնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք 'ի սիրտս ձեր։
Պատրաստք իցէք տալ պատասխանի ամենայնի որ
16 խնդրիցէ զբանն՝ որ է վասն յուսոյն ձերոյ· այլ հե-
զութեամբ և երկիւղիւ ունիցիք բարս քաղցունս·
զի որով չարախօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին, որք
17 բամբասեն զձեր բարւոք գնացս 'ի Քրիստոս։ Զի
լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ
18 կամացն չարչարել՝ քան չարագործացն· զի և Քրիս-
տոս մի անգամ վասն մեղաց 'ի վերայ մեր մեռաւ,
արդարն 'ի վերայ անարդարոց· զի զմեզ մերձեցու-
ցէ առ Աստուած· զի թէպէտ և մեռաւ մարմնով,
19 այլ կենդանի է հոգւով։ Որով և ոգւոցն որ էին 'ի
20 բանտին, երթեալ քարոզեաց, երբեմն ապստամ-
բելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայն-
մտութիւնն յաւուրս Նոյի յորս տապանն կազմէր·
յորս նուազունք, այս ինքն՝ ոգիք իբրև ութ ապրե-
21 ցան 'ի ջրոյն։ Որ և զձեզ ըստ նմին օրինակի կե-
ցուսցէ մկրտութիւնն· ոչ զմարմնոյ աղտն 'ի բաց ըն-
կենլով, այլ զբարւոք մտաց հանդէս առ Աստուած,
22 'ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի· որ է
ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս, 'ի հնա-
զանդել նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօ-
րութեանց։

ԳԼՈՒԽ Դ

1 ԳԵ. Քրիստոսի չարչարելոյ մարմնով վասն մեր,
և դուք 'ի նոյն միտս վառեցարուք· զի որ չարչարի
2 մարմնով՝ դադարէ 'ի մեղաց· զի մի՛ ևս ըստ մարդ-
կան ցանկութեանց՝ այլ ըստ կամացն Աստուծոյ կեց-
3 ցէ զայլ ևս ժամանակն։ Քանզի բաւական է ան-

ցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց, որք
գնացին գիջութեամբք, ցանկութեամբք, գինեհա֊
րութեամբք, անառակութիւք, արբեցութեամբք,
անօրէն կռապաշտութեամբք. որով օտարացեալք՝ 4
ոչ ընդ ձեզ վարին 'ի նոյն անկարգութեան զեղխու֊
թիւն, և հայհոյեն. որ տացեն պատասխանի այնմ 5
որ 'ի պատրաստին ունի դատել զկենդանիս և զմե֊
ռեալս: Զի 'ի սոյն իսկ և մեռելոց խոստացեալ է, 6
զի դատեսցին ըստ մարդկան մարմնով, և կենդանի
լիցին ըստ Աստուծոյ հոգւով: Ամենեցուն վախճան 7
մերձեալ է. զգաստացարուք այսուհետև՝ և լերուք
զուարթունք յաղօթս: Նախ քան զամենայն սէր 8
սերտ ունել ընդ միմեանս. զի սէր ծածկէ զբազմու֊
թիւն մեղաց: Օտարասէրք լինել ընդ միմեանս ա֊ 9
ռանց տրտնջելոյ. իւրաքանչիւր ոք որպէս և ընկալաւ 10
շնորհս ինչ՝ 'ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև
զբարւոք հազարապետս պէսպէս շնորհացն Աստու֊
ծոյ: Եթէ ոք խօսիցի՝ իբրև զԱստուծոյ պատգամս. 11
եթէ ոք մատակարարիցէ՝ իբրև 'ի զօրութենէ զոր
շնորհէ Աստուած. զի յամենայնի փառաւորեսցի
Աստուած 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում
փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն:
ԳԶ. Սիրելիք, մի՛ օտարոտի համարել զեռանդն 12
ինչ որ 'ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ օտար
ինչ իրք ձեզ դիպիցին. այլ իբրև հաղորդեալք 13
Քրիստոսի չարչարանացն՝ ուրախ լինիջիք, զի և 'ի
յայտնութեան փառաց նորա ցնծացեալ բերկրես֊
ջիք: Իսկ եթէ նախատիցիք ես վասն անուանն Քրիս֊ 14
տոսի, երանելի էք. զի փառացն և զօրութեան ա֊
նուն, և Աստուծոյ հոգին 'ի վերայ ձեր հանգուցեալ
է: Մի՛ ոք 'ի ձէնջ չարչարեսցի իբրև զսպանող, կամ 15
իբրև զգող, կամ իբրև զչարագործ, կամ իբրև զօ֊
տարատեսուչ: Ապա թէ իբրև զքրիստոնեայ, մի՛ ամա֊ 16
չեսցէ. այլ փառաւոր առնիցէ զԱստուած անուամբս
այսուիկ: Զի ժամանակ է սկիզբն լինելոյ դատաս֊ 17

տանին 'ի տանէն Աստուծոյ. զի եթէ նախ 'ի մէնջ,
իսկ զի՞նչ կատարած իցէ այնոցիկ՝ որ ոչ հաւանեցան
18 Աստուծոյ աւետարանին: Եւ եթէ արդարն հազիւ
կեցցէ, իսկ ամպարիշտն և մեղաւորն ո՞ւր գտանիցի:
19 Որպէս զի որ չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն,
հաւատարիմ հաստչին աւանդեսցեն զիւրեանց ոգիս
բարերարութեամբք:

ԳԼՈՒԽ Ե

1 ԳԷ. Զերիցունս այսուհետև աղաչեմ իբրև զե֊
րիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և
2 հանդերձեալ փառացն յայտնելոյ՝ հաղորդ. արածե֊
ցէք որ 'ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լի֊
նել՝ մի՛ իբրև ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ.
3 մի՛ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի՛
իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօ֊
4 տին. զի յերևել հովուապետին՝ ընդունիջիք զան֊
5 թառամ փառաց պսակն: Սոյնպէս և երիտասարդք
հնազանդ լերուք ծերոց. ամենեքին ընդ միմեանս
զխոնարհութիւն ունիցիք. զի Աստուած ամբարտա֊
6 ւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց: Խո֊
նարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի ըզ֊
7 ձեզ բարձրացուսցէ 'ի ժամանակի. զամենայն հոգս
ձեր ընկեցէք 'ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր:
8 ԳԸ. Արթուն լերուք՝ հսկեցէք, զի ոսոխն ձեր
սատանայ իբրև զառիւծ գոչէ, շրջի և խնդրէ՝ թէ
9 զով կլանիցէ. որում 'ի դիմի հարկանիցիք հաստա֊
տեալք հաւատովք. գիտասջիք զնոյն անցս չարչա֊
րանաց՝ եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձինս
10 կատարեալ: Եւ Աստուած ամենայն շնորհաց, որ
կոչեաց զձեզ յիւր 'ի յաւիտենական 'ի փառսն
Քրիստոսի Յիսուսի, որում փոքր մի եղերուք
չարչարակիցք; նա կազդուրեցուսցէ, կարողացուս֊

ցէ, հաստահիմն արասցէ. նմա իշխանութիւն և 11
փառք յաւիտեանս։ Ի ձեռն Սիղուանոսի հաւա- 12
տարիմ եղբօր, որպէս կարծեմ՝ փոքր 'ի շատէ գրե-
ցի ձեզ, մխիթարել և 'ի վերայ սորին վկայել. զի և
այս ճշմարիտ շնորհք յԱստուծոյ են՝ յոր հաստա-
տեալ կայցէք։ Ողջոյն տայ ձեզ որ 'ի Բաբելոն 13
ընտրելակիցն եկեղեցի է, և Մարկոս որդի իմ։ Ող- 14
ջոյն տաջիք միմեանց 'ի համբոյր սրբութեան։ Խա-
ղաղութիւն ընդ ձեզ ամենեսեան՝ որ էք 'ի Քրիս-
տոս Յիսուս. ամէն։

ԹՈՒՂԹ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԴԲ. Շմաւոն Պետրոս ծառայ և Առաքեալ Յի-
սուսի Քրիստոսի, որոց հանդիտապատիւ մեզ հա-
սեալ հաւատոց յարդարութիւն Աստուծոյ մերոյ և
2 փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Շնորհք ընդ ձեզ և
խաղաղութիւն բազմասցի, գիտութեամբն Աստու-
3 ծոյ և Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ։ Որպէս
ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուածեղէն զօրութեանն
առ 'ի կենաց և աստուածպաշտութիւն շնորհեալ,
'ի ձեռն գիտութեան այնորիկ որ կոչեաց զմեզ յիւր
4 'ի փառսն և 'ի վայելչութիւն. որովք մեծամեծքն և
պատուականն աւետիք պարգևեալ են մեզ. զի նո-
քիմբք աստուածեղէն բնութեանն լինիցիք հաղոր-
դակիցք, փախուցեալք 'ի ցանկութեանց աշխարհիս
5 և յապականութեանց։ Եւ սմին այսմիկ զամենայն
փոյթ 'ի մէջ առեալ՝ ձերովքն հաւատովք մատակա-
րարիջիք զառաքինութիւնն, և առաքինութեամբն
6 զգիտութիւն, և գիտութեամբն զժուժկալութիւն,
և ժուժկալութեամբն զհամբերութիւն, և համբե-
7 րութեամբն զաստուածպաշտութիւն, և աստուած-
պաշտութեամբն զեղբայրսիրութիւն, և եղբայրսի-
8 րութեամբն զսէր։ Զայսոսիկ ձեր յանձին կալեալ և
'ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս և անպտուղս հաս-
տատիցեն զձեզ 'ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-

տոսի գիտութիւնն։ Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ՝ 9
կոյր է և զաչացու, ՚ի մոռացօնս դարձուցեալ զսըր-
բութիւն առաջնոց իւրոցն յանցանաց։ Վասն որոյ, 10
եղբարք, առաւել փութասջիք՝ զի բարեացն գոր-
ծովք հաստատուն զձեր կոչումն և զընտրութիւն
պահիցէք։ Զայս արարեալ՝ ոչ երբեք յանցանիցէք.
զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ՚ի յա- 11
ւիտենական արքայութիւն Տեառն մերոյ և փրկչի
Յիսուսի Քրիստոսի։

ԴԳ. Որով պատրաստ իցեմ միշտ ձեզ յիշեցու- 12
ցանել վասն սոցին, առաւել ես գիտակացն և հաս-
տատելոցն եկեալ հասեալ ճշմարտութեանն։ Քան- 13
զի իրաւունս համարիմ մինչդեռ եմ՚ի մարմնի աստ՝
զարթուցանել զձեզ յիշատակօք։ Գիտեմ թէ 14
վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս,
որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ. և 15
փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել, զի և յետ
իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշատակս այ-
սոցիկ։ Քանզի ոչ եթէ պաճուճեալ ինչ առասպե- 16
լաց զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի զզօրութիւն և զգալուստն, այլ
մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն։
Քանզի առեալ յԱստուծոյ Հօրէ զփառս և զպա- 17
տիւ՝ յեկեալ յայնպիսի բարբառոյ՚ի մեծվայելչու-
թեան փառաց անտի, եթէ դա է որդի իմ սիրելի
ընդ որ հաճեցայ։ Եւ զայս բարբառ մեք իսկ լուաք 18
եկեալ յերկնից՝ որ ընդ նմա իսկ էաք ՚ի սուրբ լե-
րինն։ Եւ ունիմք հաստատագոյն զբանն մարգարէա- 19
կան, որում եթէ անսայցէք՝ բարւոք առնէք. իբրև
ճրագի որ տայցէ լոյս ՚ի խաւարչտին տեղւոջ, մինչև
տիւն լուսաւորեսցէ, և արուսեակն ծագեսցէ ՚ի
սիրտս ձեր։

ԴԴ. Բայց նախ այսմ գիտակ լինիջիք, զի ամե- 20
նայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ ունի.
քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մար- 21

գարէութիւն երբէք, այլ ՚ի Հոգւոյն սրբոյ կրեալք՝
խօսեցան մարդիկ յԱստուծոյ։

ԳԼՈՒԽ Բ

1 Լինէին և սուտ մարգարէք՚ի ժողովրդեանն, որ-
պէս և այժմ՚ի ձեզ լինիցին սուտ վարդապետք, որք
սպրդեալք մուծանիցեն հերձուածս կորստեան. և
զոր Տէր գնեաց՝ զնոսա ուրացեալ՝ ածեն՚ի վերայ ան-
2 ձանց զարագահաս կորուստ։ Եւ բազումք անկեալ
երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն ո-
3 րոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյիցի. և ա-
գահութեամբ մտացածին բանիւք առնիցեն զձեզ
վտարանդիս. որոց դատաստանն՚ի բնէ ոչ դատար-
4 կանայ, և կորուստ նոցա ոչ նիրհէ։ Զի եթէ ՚ի
հրեշտակսն յանցուցեալս Աստուած ոչ խնայեաց,
այլ խաւարին կապանօք արկեալ՚ի տարտարոսն՝ ետ
5 պահել՚ի դատաստան։ Նա՝ և ոչ իսկզբանն աշ-
խարհիս խնայեաց. բայց զութերորդն զՆոյ՝ զար-
դարութեանն քարոզ, պահեաց՚ի ջրհեղեղէ աշ-
6 խարհի՝ ամպարշտելոցն ածեալ. և զքաղաքս սոդո-
մացւոցն և գոմորացւոց դարձուցեալ յաճիւն՝ դա-
տեցաւ, օրինակ առ յապայ ամպարշտելոցն կացու-
7 ցանէր։ Եւ զարդարն զՂովտ ձանձրացեալ յա-
8 կարգ գիջութեան գնացից՝ փրկեաց. քանզի ակա-
նատես և ականջալուր արդարն բնակեալ՚ի մէջ նոցա,
որ ըստ օրէ զլուր սուրբ ոգին՝ նոցա անօրէն գնա-
ցիւքն տանջէր։

9 ԴԵ. Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել՚ի
փորձութենէ, և զանիրաւս պահել՚ի տանջանս ա-
10 ւուրն դատաստանի. մանաւանդ որ զհետ մարմնոյ
պղծալից ցանկութեանց իցեն երթեալ. արհամար-
հօղք տէրութեանն, ժպիրհք, յանդգունք, չզան-
11 գիտեն զփառսն հայհոյել. ուր Հրեշտակք զօրու-
թեամբ և կարողութեամբ քան զնոսա մեծամեծք՝

չածեն զնոքօք 'ի Տեառնէ զհայհոյութեանն դա-
տաստան: Այլ սոքա իբրեւ զանխօս անասունս ըստ 12
բնածին բարուցն յեղծումն եւ յապականութիւն, որոց
չէնն գիտակ, հայհոյեն յապականութեան իւրեանց,
եւ ապականեսցին՝ տանջեալք 'ի վարձուցն անիրաւու- 13
թեան. որ ցանկութիւն զաւուրն փափկութիւն հա-
մարին. բծկանք, արատաւորք, փափկացեալք 'ի պա-
տիրս իւրեանց, լինել ձեզ խրախճանակիցք. աչս 14
ունին հանգոյնս պոռնկաց՝ անդադարս 'ի մեղաց,
պատրեն զանձինս յողդողդաց. որ ունին սիրտ հա-
րեալ զագահութեան, մանկունք անիծից: Թողեալ 15
զուղորդ ճանապարհն՝ մոլորեցան. զհետ երթեալ
ճանապարհին Բաղամայ Բէովրեայ, զվարձս անի-
րաւութեան սիրեցին. որ կշտամբանս իւրոյ անօրէ- 16
նութեանն ստացաւ զէշն անխօսուն. մարդկեղէն
բարբառովն բարբառեալ՝ արգել զմարգարէին զանօ-
րէնութիւնն: Այսպիսիքն են աղբիւրք անջրդիք, եւ 17
մէգք վարեալք 'ի մրրկէ. որոց աղջամուղջք խաւարին
յաւիտեան պահեալ կան: Մեծաբանս սնոտեաց 18
բարբառեալ պատրեն գիջութ̃ք ցանկութեամբք
մարմնոյ՝ զայնոսիկ որ ստոյգն փախչիցին յայնցանէ
որ 'ի մոլորութեանն շրջիցին. Նոցա ազատութիւն 19
խոստանան, եւ ինքեանք ապականութեանն ծառայք
են. զի որով իւիք եւ յաղթիցի ոք, նորին եւ ծառայ
է: Զի եթէ փախուցեալք 'ի պղծութեանց աշխար- 20
հի՝ գիտութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի
Քրիստոսի, եւ դարձեալ ընդ նոյնս շաղեալք պա-
տիցին, եղեւ նոցա վախճանն չար քան զառաջինն:
Զի լաւ էր նոցա՝ թէ բնաւ չէր իսկ ծանուցեալ 21
զարդարութեանն ճանապարհ, քան՝ զի ծանեան եւ
յետս կացին 'ի սուրբ պատուիրանէն որ նոցա աւան-
դեցաւ: Եկեալ 'ի դէպ նոցա ճշմարիտ առակն զգօ- 22
նութեան, եթէ շուն դառնայ անդրէն 'ի փսխած
իւր, եւ խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ:

ԳԼՈՒԽ Գ

1 ԴՁ. Զայս ձեզ, սիրելիք, երկրորդ թուղթ գրեմ,
որով զարթուցից 'ի յիշատակ զհաստատուն միտս
2 ձեր, յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս 'ի
սրբոց մարգարէից, եւ յԱռաքելոցն ձերոց՝ զպա-
3 տուէրս Տեառն եւ փրկչին: Բայց զայս նախ գիտաս-
ջիք, զի յաւուրս յետինս եկեսցեն արհամարհօղք,
այպանօղք, որ ըստ իւրեանց ցանկութեանցն գնայ-
4 ցեն. եւ ասիցեն, ո՞ւր են աւետիք գալստեան նորա.
զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն ինչ նոյն-
5 պէս կայ մնայ իսկզբանէ արարածոց: Եւ զայն մո-
ռացեալ իցէ նոցա՝ որք զայսն կամին, եթէ երկինք
եղեն իսկզբանէ, եւ երկիր 'ի ջրոց, եւ ջուրբ հաստա-
6 տեալ կան բանիւն Աստուծոյ. վասն որոյ երբեմն
7 աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ կորեաւ: Եւ այ-
ժմ երկինք եւ երկիր նովին բանիւ գանձեալ են,
հրոյ պահեալք յօրն դատաստանի, եւ կորստեան ամ-
8 պարիշտ մարդկան: Եւ այս մի լիցի 'ի ձէնջ
ծածկեալ, սիրելիք, զի մի օր Տեառն իբրեւ զհազար
9 ամ է, եւ հազար ամ իբրեւ զմի օր: Ոչ յամեցու-
ցէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր համարին,
այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի՝ եթէ
ոք կորիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխա-
րութիւն:
10 ԴԻ. Այլ եկեսցէ օր Տեառն իբրեւ զգող. յորում
երկինք տագնապաւ անցցեն, եւ բնութիւնք հրով
կիզեալ լուծցին, եւ երկիր՝ եւ որ միանգամ 'ի նմա
11 գործք գտանիցին: Եւ 'ի լուծանել այսպէս այսր ա-
մենայնի, որպիսի՞ ինչ պարտ իցէ ձեզ գտանել. այլ
12 սուրբ եւ աստուածապաշտ կարգաւ ակն ունել, եւ
փութալ հասանել գալստեան աւուրն Տեառն. յո-
րում երկինք հրայրեացք լուծանիցին, եւ բնութիւնք
13 հրդեհեալ հալիցին: Նորոյ երկնից եւ նորոյ երկրի

ըստ աւետեացն հայեցեալ սպասեմք յորս արդարու-
թիւնն բնակէ։ Վասն որոյ, սիրելիք, այսոցիկ սպա- 14
սեալ՝ փոյթ յանձին ունիջիք՝ անբիծք և անարատք
գտանել նմա 'ի խաղաղութիւն, և զՏեառն երկայն- 15
մտութիւնն՝ փրկութիւն համարեսջիք։ Զոր օրինակ
և սիրելի եղբայրն մեր Պաւղոս, ըստ շնորհելոյ ի-
մաստութեանն նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ. որպէս 16
և յամենայն իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ, յորս
գտանի ինչ ինչ դժուարիմաց, զոր անուսմունքն և
յողդողդքն կամակորեն, որպէս և զամենայն իսկ գիրս
առ իւրեանց անձանցն կորուստ։ Դուք այսուհետև, 17
սիրելիք, իբրև զկանխագէտս զգուշասջիք, զի մի ա-
նառակ մոլորութեամբն զգածեալք անկանիջիք յաս-
տեաց հաստատութեանն։ Աճեցէք շնորհօք և գի- 18
տութեամբն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիս-
տոսի։ Նմա փառք՝ և այժմ և յօրն յաւիտենից.
ամէն։

ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԵԱ. Որ էրն իսկզբանէ, զորմէ լուաքն, որում
ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, և
2 ձեռք մեր շօշափեցին 'ի վերայ բանին կենաց։ Եւ
կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք, և պատ-
մեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էրն առ Հօր՝
3 և երևեցաւ մեզ։ Զոր տեսաքն և լուաք՝ պատ-
մեմք և ձեզ, զի և դուք հաղորդութիւն ունիցիք
ընդ մեզ. և մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր և
4 ընդ Որդւոյ իւրում Յիսուսի Քրիստոսի։ Եւ զայս
գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ լի-
5 ցէ։ Եւ այս էն աւետիք զոր լուաք առ 'ի նմանէ և
պատմեմք ձեզ, զի Աստուած լոյս է, և խաւար 'ի
6 նմա չիք և ոչ մի։ Եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդու-
թիւն ունիմք ընդ նմա, և 'ի խաւարի շրջիցիմք,
7 ստեմք՝ և ոչ առնեմք զճշմարտութիւնն։ Իսկ եթէ
ընդ լոյս գնասցեմք՝ որպէս նա 'ի լոյս է, հաղորդու-
թիւն ունիմք ընդ միմեանս. և արիւնն Յիսուսի
8 Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց։ Եթէ
ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զանձինս
9 խաբեմք. և ճշմարտութիւն 'ի մեզ ոչ գոյ։ Ապա ե-
թէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ
է նա և արդար՝ առ 'ի թողուլ մեզ զմեղս մեր, և
սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։

ԻԲ. Եթէ ասիցեմք՝ եթէ ոչ ինչ մեղաք, սուտ 10
առնեմք զնա, և բանն նորա ոչ է ՚ի մեզ։

ԳԼՈՒԽ Բ

Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ մեղիցէք. 1
և եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ Աստուած
զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատ. և նա 2
է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն միայն՝
այլ ամենայն աշխարհի։ Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ 3
ծանեաք զնա, եթէ զպատուիրանս նորա պահի-
ցեմք։ Որ ասիցէ՝ եթէ ծանեայ զնա, և զպատուի- 4
րանս նորա ոչ պահիցէ, սուտ է, և ճշմարտութիւն
՚ի նմա ոչ գոյ։ Իսկ որ պահէ զբան նորա, արդարև 5
՚ի նմա է կատարեալ սէրն Աստուծոյ. այսուիկ ճանա-
չեմք՝ եթէ ՚ի նմա եմք։ Որ ասիցէ ՚ի նմա բնակել, 6
այնպէս պարտի գնալ՝ որպէս և նայն գնաց։
ԻԳ. Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ 7
ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր իսկզբանէ ունէիք.
և հին պատուիրանն՝ բանն է զոր լուարուք։ Դար- 8
ձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարտիւ ՚ի
նմա և ՚ի ձեզ. զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմա-
րիտ արդէն իսկ երևի։ Որ ասէ եթէ ՚ի լոյսն իցէ՝ 9
և զեղբայր իւր ատիցէ, սուտ է՝ և ՚ի խաւարի է տա-
կաւին։ Որ սիրէ զեղբայր իւր՝ ՚ի լոյս բնակէ, և 10
գայթագղութիւն ՚ի նմա չիք։ Իսկ որ ատեայ զեղ- 11
բայր իւր՝ ՚ի խաւարի է, և ընդ խաւար շրջի. և ոչ
գիտէ յո երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նո-
րա։ Գրեմ ձեզ, որդեակք, զի թողեալ են ձեզ 12
մեղքն ձեր՝ վասն անուան նորա։ Գրեմ ձեզ, հարք, 13
զի ծանեայք դուք զայն՝ որ իսկզբանէն է։ Գրեմ
ձեզ, երիտասարդք, զի յաղթեցէք դուք չարին։ Գրե- 14
ցի ձեզ, մանկունք, զի ծանեայք դուք զՀայրն։ Գրե-
ցի ձեզ, հարք, զի ծանեայք դուք զայն որ իսկզբա-
նէն է։ Գրեցի ձեզ, երիտասարդք, զի էք դուք

հզօրացեալք, և բանն Աստուծոյ ՚ի ձեզ բնակէ, և
15 յաղթեցէք դուք չարին։ Մի՛ սիրէք զաշխարհս,
16 և մի՛ որ ինչ յաշխարհի է. եթէ ոք սիրէ զաշ-
խարհ, ոչ է ՚ի նմա սէր Հօր։ Զի ամենայն որ ինչ
յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ, և ցանկու-
թիւն է աչաց, և ամբարտաւանութիւն աստի կե-
նացս. որ չէ առ ՚ի Հօրէ՝ այլ յաշխարհէ աստի է.
17 և աշխարհս անցանէ՝ և ցանկութիւնն, իսկ որ առ-
նէ զկամս Աստուծոյ՝ մնայ ՚ի յաւիտեան։
18 ԻԴ. Որդեակք, յետին ժամանակ է, և որպէս
լուարուք՝ եթէ նեռն գալոց է, և արդէն իսկ նե-
ռինք բազումք եկեալ են, որով մարթեմք իմանալ՝
19 եթէ յետին ժամանակ է։ Առ ՚ի մէնջ ելին, այլ
ոչ էին ՚ի մէնջ. զի եթէ ՚ի մէնջ էին, ապա առ մեզ
մնային. այլ զի յայտնի լինիցին՝ եթէ ոչ էին ամենե-
20 քեան նոքա ՚ի մէնջ։ Եւ դուք օծութիւն ունիք առ
21 ՚ի սրբոյն, և գիտէք ամենեքին։ Ոչ գրեցի ձեզ՝ եթէ
ոչ գիտէք զճշմարտութիւնն, այլ եթէ գիտէք զնա,
և եթէ՝ զի ամենայն ստութիւն ոչ է ՚ի ճշմարտու-
22 թենէ անտի։ Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուրա-
նայ եթէ Յիսուս չէ Քրիստոսն. նա իսկ է նեռն,
23 որ ուրանայ զՀայր և զՈրդի։ Ամենայն որ ուրա-
նայ զՈրդի, և ոչ զՀայր ընդունի. որ խոստովանի
24 զՈրդի, նա և զՀայր ընդունի։ Դուք զոր լուա-
րուքն իսկզբանէ՝ ՚ի ձեզ բնակեսցէ. զի եթէ ՚ի ձեզ
բնակեսցէ զոր իսկզբանէն լուարուք, և դուք յՈր-
25 դին և ՚ի Հայր բնակեսջիք։ Եւ այս են աւետիքն՝
զոր աւետարանեաց նա մեզ՝ զկեանսն յաւիտե-
նականս։
26 ԻԵ. Զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք զձեզ մոլորե-
27 ցուցանիցէ. և դուք օծութիւնն զոր ընկալարուք ՚ի
նմանէ, բնակեսցէ ՚ի ձեզ. և չէ ինչ պիտոյ՝ եթէ ոք
զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ու-
սուցանիցէ զձեզ վասն ամենայնի. և ճշմարիտ է՝ և
28 չէ սուտ. և որպէս ուսոյցն զձեզ, կայք ՚ի նմա։ Եւ

այժմ, որդեակք, կացէք ՚ի նմին. զի եթէ յայտնես-
ցի, ունիցիմք համարձակութիւն, և մի ամաչեսցուք
՚ի նմանէ ՚ի գալստեան նորա։ Զի եթէ գիտիցէք՝ 29
եթէ արդար է նա, իմասջիք եթէ ամենայն որ առ-
նէ զարդարութիւն՝ առ ՚ի նմանէ է ծնեալ։

Գ Լ Ո Ւ Խ Գ.

Տեսէք որպիսի սէր շնորհեաց մեզ Հայր, զի որ- 1
դիք Աստուծոյ կոչեսցուք մեք. վասն այսորիկ աշ-
խարհ ոչ ճանաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ զնա։
ԵՁ. Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք, և 2
չև ևս է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք. գիտեմք՝
զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք,
զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն։ Եւ ամենայն 3
որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր, որպէս
և նայն սուրբ է։ Ամենայն որ զմեղս գործէ, նա՝ և 4
զանօրէնութիւն առնէ, և ինքն իսկ մեղքն անօրէ-
նութիւն է. և գիտեմք՝ զի նա յայն սակս յայտնե- 5
ցաւ՝ զի զմեղս բարձցէ, և ՚ի նմա մեղք ոչ են։ Ամե- 6
նայն որ ՚ի նա է հաստատեալ, ոչ մեղանչէ. և ամե-
նայն որ մեղանչէ, ոչ ետես զնա և ոչ ծանեաւ զնա։
Մանկունք, մի ոք զձեզ խաբեսցէ. որ առնէ զար- 7
դարութիւն, արդար է՝ որպէս և նայն արդար է։
Եւ որ առնէ զմեղս՝ ՚ի սատանայէ է, զի իսկզբանէ 8
սատանայ մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ որ-
դին Աստուծոյ՝ զի լուծցէ զգործս սատանայի։ Ամե- 9
նայն որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն
նորա ՚ի նմա մնայ. և ոչ կարէ մեղանչել, զի յԱս-
տուծոյ է ծնեալ. այսուիկ յայտնի են ՚ի միմեանց 10
որդիք Աստուծոյ և որդիք սատանայի։
ԵԷ. Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա
յԱստուծոյ, և որ ոչ սիրէ զեղբայր իւր. զի այս է 11
պատուիրանն զոր լուարուք իսկզբանէ, զի սիրեսցուք
զմիմեանս։ Ոչ որպէս Կայէնն ՚ի չարէ անտի էր՝ և 12

սպան զեղբայրն իւր. և յո՞ր սակս սպան զնա. զի իւր
13 գործքն չար էին, և եղբօրն բարի։ Եւ մի ինչ զար-
մանայք, եղբարք, եթէ աշխարհ զձեզ ատեայ։
14 Մեք գիտեմք՝ զի փոխեցաք ՚ի մահուանէ ՚ի կեանս,
քանզի սիրեմք զեղբարս. իսկ որ ոչն սիրէ, անդէն
15 ՚ի մահու մնայ։ Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝
մարդասպան է. և գիտէք՝ զի ամենայն մարդա-
սպան ոչ ունի զկեանս յաւիտենականս յանձին հաս-
16 տատեալ։ Այսուիկ գիտացաք զսէրն, զի նա զանձն
իւր եդ վասն մեր, և մեք վասն եղբարց մերոց պար-
17 տիմք դնել զանձինս։ Որ ունիցի զկեանս ինչ զաշ-
խարհիս, և տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ ի-
ւիք, և փակիցէ զգութս իւր առ ՚ի նմանէ, զիա՞րդ
սէրն Աստուծոյ ՚ի նմա իցէ բնակեալ։
18 ՁԱ. Որդեակք, մի բանիւք և լեզուօք սիրես-
19 ցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ. և այ-
սուիկ լիցուք ծանուցեալք՝ եթէ ՚ի ճշմարտութե-
նէ անտի իցեմք, և առաջի նորա արասցուք հան-
20 դէս սրտից մերոց։ Եթէ ըստգտանիցեն զմեզ սիրտք
մեր, այլ Աստուած մեծ է քան զսիրտս մեր և գիտէ
21 զամենայն։ Սիրելիք, եթէ սիրտք մեր զմեզ ոչ ըստ-
գտանիցեն, համարձակութի ունիմք առ Աստուած.
22 և զոր ինչ հայցեմք՝ առնումք ՚ի նմանէ. զի զպա-
տուիրանս նորա պահեմք, և զհաճոյս առաջի նորա
23 առնեմք։ Եւ այս է պատուիրան նորա, զի հաւա-
տասցուք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի,
և սիրեսցուք զմիմեանս, որպէս և ետ մեզ պատուէր։
24 Եւ որ պահէ զպատուիրանս նորա՝ ՚ի նմա է հաս-
տատեալ՝ և նա ՚ի սմա. և յայսմանէ գիտեմք եթէ
բնակէ ՚ի մեզ ՚ի Հոգւոյ անտի զոր ետ մեզ։

ԳԼՈՒԽ Դ

Զբ. Սիրելիք, մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք, 1
այլ ընտրեցէք զհոգիսն եթէ յԱստուծոյ իցեն. զի
բազումք սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ. և մեք 2
այսուիկ ճանաչեմք զհոգին Աստուծոյ։ Ամենայն հո-
գի որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով ե-
կեալ, յԱստուծոյ է նա. և ամենայն հոգի որ ոչ 3
խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով եկեալ, չէ
նա յԱստուծոյ. և այս նեռինն է, զորմէ լուարուքն
եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի է։ Դուք 4
յԱստուծոյ էք, որդեակք, և յաղթեցէք նոցա. զի
մեծ է որ 'ի ձեզդ է, քան զայն որ յաշխարհին է։
Նոքա յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ 5
խօսին, և աշխարհ լսէ նոցա։ Մեք յԱստուծոյ եմք, 6
որ զԱստուած ճանաչէ՝ լսէ մեզ, և որ չէ յԱստու-
ծոյ՝ ոչ լսէ մեզ. այսուիկ ճանաչեմք զհոգին ճշմար-
տութեան, և զհոգին խաբէութեան։
Զգ. Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱս- 7
տուծոյ է. և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ,
և ճանաչէ զԱստուած. և որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ 8
զԱստուած, զի Աստուած սէր է։ Եւ զի յայտ ե- 9
րևեցաւ սէրն Աստուծոյ 'ի մեզ, զի զՈրդին իւր միա-
ծին առաքեաց Աստուած յաշխարհ, զի եղիցուք նո-
վաւ կենդանիք։ Յայսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք 10
զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց
զՈրդին իւր 'ի քաւութիւն մեղաց մերոց։ Սիրե- 11
լիք, եթէ Աստուած այսպէս սիրեաց զմեզ, ապա և
մեք պարտիմք զմիմեանս սիրել։
Զդ. ԶԱստուած ուրուք երբէք չէ տեսեալ. ե- 12
թէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած 'ի մեզ բնակէ,
և սէր նորա 'ի մեզ կատարեալ է. այսուիկ գիտեմք 13
եթէ մեք 'ի նա բնակեալ եմք և նա 'ի մեզ, զի 'ի
Հոգւոյն իւրմէ ետ մեզ։ Եւ մեք տեսաք և վկայեմք, 14

15 զի Հայր առաքեաց զՈրդի իւր փրկիչ աշխարհի։ Որ
ոք խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ,
16 Աստուած 'ի նմա բնակէ՝ և նա յԱստուած. և մեք
հաւատացաք, և ծանեաք զսէրն Ա՟Յ՝ զոր ունի առ
մեզ։ Աստուած սէր է, և որ կայ 'ի սէրն՝ բնակեալ
17 է յԱստուած, և Աստուած 'ի նմա բնակէ։ Յայսմիկ
է կատարեալ սէրն նորա ընդ մեզ, զի համարձակու-
թիւն ունիցիմք յաւուրն դատաստանի. զի որպէս և
նայն է, նոյնպէս և մեք եմք յաշխարհի յայսմիկ։
18 Երկիւղ ոչ գոյ 'ի սէր, այլ սէրն կատարեալ 'ի բաց
մերժէ զերկիւղն. զի երկիւղ ընդ տանջանօք է. իսկ
19 որ երկնչին, չէ կատարեալ 'ի սէրն։ Մեք սիրեսցուք
20 զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ։ Եթէ
ոք ասիցէ՝ եթէ սիրեմ զԱստուած, և զեղբայր իւր
ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ,
21 զԱստուած զոր ոչն տեսէ՝ զիա՞րդ կարիցէ սիրել. և
զայս պատուէր ունիմք առ 'ի նմանէ, զի որ սիրէ
զԱստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր։

ԳԼՈՒԽ Ե

1 Զե. Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յիսուս է
Քրիստոսն, յԱստուծոյ է ծնեալ. և ամենայն որ
2 սիրէ զծնօղն, սիրէ և զծնեալն 'ի նմանէ։ Այսուիկ
ճանաչեմք՝ եթէ սիրեմք զՈրդին Աստուծոյ, յոր-
ժամ զԱստուած սիրեսցուք՝ և զպատուիրանս նորա
3 արասցուք։ Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ
զպատուիրանս նորա պահեսցուք. և պատուիրանքն
4 նորա չեն ինչ ծանունք. զի ամենայն որ յԱստուծոյ
ծնեալ է, յաղթէ աշխարհի։ Եւ այս է յաղթու-
5 թիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր։ Եւ
ո՞ իցէ որ յաղթիցէ աշխարհի. եթէ ոչ՝ որ հաւա-
6 տայցէ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ։ Սա է որ
եկն ջրով և հոգւով և արեամբ, Յիսուս Քրիստոս.
ոչ ջրով միայն, այլ և արեամբ և ջրով. և Հոգին է
7 որ վկայէ, զի Հոգին իսկ է ճշմարտութի՟ն։ (Զի երեք

են որ վկայեն յերկինս Հայր, Բանն և Հոգին սբ. և ե-
րեքին մի են)։ Եւ երեքին են որ վկայեն. հոգին, և 8
ջուրն, և արիւնն. և երեքին մի են։ Եթէ զմարդկան 9
ինչ վկայութիւն ունիցիմք, ապաքէն Աստուծոյ վկա-
յութիւնն մեծ իցէ. այս է վկայութիւնն Աստու-
ծոյ, որ վկայեաց 'ի վերայ Որդւոյն իւրոյ։
ԶԶ. Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի յան- 10
ձին զվկայութիւնս զայս. որ ոչ հաւատայ Որդւոյ
Աստուծոյ, սուտ առնէ զնա. քանզի չհաւատայ վը-
կայութեան զոր վկայեաց ԱԾ 'ի վերայ Որդւոյն իւրոյ։ 11
Եւ այս իսկ է վկայութիւն, զի կեանս յաւիտենականս
ետ մեզ ԱԾ. և այս են կեանքն, որ յՈրդին նորա
են։ Որ ընդունի զՈրդին, ընդունի և զկեանսն. և 12
որ ոչ ընդունի զՈրդին ԱՅ, և ոչ զկեանսն ընդունի։
ԶԷ. Զայս գրեցի ձեզ, զի գիտասջիք եթէ կեանս 13
յաւիտենականս ունիցիք, և զի հաւատայցէք յա-
նուն Որդւոյն Աստուծոյ։ Եւ այս է համարձակու- 14
թիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցես-
ցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ։ Զի եթէ գիտի- 15
ցեմք՝ եթէ լսէ հայցուածոցն մերոց, ապա գիտեմք՝
եթէ առնումք զհայցուածսն զոր հայցեմք առ 'ի նը-
մանէ։ Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝ 16
որ ոչ առ 'ի մահ, խնդրեսցէ՝ և տացէ նմա կեանս
մեղուցելոյն ոչ առ 'ի մահ։ Են մեղք՝ որ մահուչափ
են, ոչ վասն այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես. ամե- 17
նայն անիրաւութիւն մեղք են. և են մեղք որ մա-
հուչափ են։ Գիտեմք եթէ ամենայն որ յԱստուծոյ 18
է ծնեալ՝ ոչ մեղանչէ. այլ որ յԱստուծոյն է ծնեալ՝
պահէ զանձն, և չարն առ նա ոչ մերձենայ։ Գի- 19
տեմք եթէ յԱստուծոյ եմք, և աշխարհ ամենայն
'ի չարի կայ. և գիտեմք եթէ Որդին Աստուծոյ եկն 20
և ետ մեզ միտս, զի ծանիցուք զՃշմարիտն. և եմք
'ի Ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. զի
նա է Ճշմարիտ Աստուած և կեանք յաւիտենականք։
Որդեակք, պահեցէք զանձինս 'ի կռապաշտութենէ։ 21

ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՐԿՐՈՐԴ

1 ԻԱ. Յերիցուէ առ ընտրեալ Կիւրիա, և առ
որդեակս իւր զոր ես սիրեմ Ճշմարտութեամբ. և
ոչ եթէ ես միայն, այլ և ամենեքեան ոյք գիտակ
2 են Ճշմարտութեանն. վասն որոյ Ճշմարտութեանն՝
որ 'ի մեզ հաստատեալ է, զի և ընդ ձեզ իցէ, և
3 դուք յաւիտենից ընդ մեզ իցէք։ Շնորհք, ողոր-
մութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ 'ի Հօրէ, և
'ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ որդւոյն Հօր, Ճըշ-
4 մարտութեամբ և սիրով եղիցի ընդ ձեզ։ Ուրախ
եղէ յոյժ, զի գտի յորդեկացդ քոյ՝ որ գնան Ճըշ-
մարտութեամբ, ըստ պատուիրանին զոր առաք 'ի
5 Հօրէ։ Եւ այժմ աղաչեմ զքեզ, Կիւրիա. իբրև
ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ քեզ, այլ զոր
6 իսկզբանէ ունէաք, զի սիրեսցուք զմիմեանս։ Եւ
այս է սէրն, զի գնասցուք ըստ պատուիրանաց նո-
րա. և այս է պատուիրանն, զի որպէս լուարուքն
7 իսկզբանէ՝ ըստ նմին գնասջիք. զի բազում մոլորե-
ցուցիչք ելին յաշխարհս. որ ոք ոչ խոստովանի ըզ-
Յիսուս Քրիստոս եկեալ մարմնով, նա մոլորեցու-
ցիչ է և նեռն։
8 ԻԲ. Զգոյշ լինիջիք անձանց, զի մի կորուսանի-
ցէք զոր վաստակեցէքն, այլ զի առնուցուք բովան-
9 դակ զվարձսն։ Ամենայն որ յանցանիցէ՝ և ոչ կայցէ
'ի վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ոչ

ճանաչէ. որ կայ 'ի վարդապետութեանն, նա՛ և
զՈրդին և զՀայր ընդունի։ Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ 10
և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի՛ ընդունիցիք
զնա 'ի տուն, և մի՛ ողջոյն տայցէք նմա. որ ասասցէ 11
նմա ողջոյն, կցորդ լիցի չարաց գործոց նորա։ Բա- 12
զում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կամեցայ քար-
տիսիւ և դեղով. զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ
ձեզ և բերան 'ի բերան խօսել, զի ուրախութիւնն
մեր իցէ կատարեալ։ Ողջոյն տան քեզ որդիք քեռ 13
քո ընտրելոյ։ Շնորհք ընդ ձեզ։

ԹՈՒՂԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՐՐՈՐԴ

1 ԻԳ. Յերիցուէ առ Գայիոս սիրելի, զոր եսդ սի-
2 րեմ ճշմարտութեամբ։ Սիրելի, վասն ամենայն ի-
րաց քոց աջողութեան և առողջութեան՝ աղօթս առ-
3 նեմ. որպէս է իսկ յաջողութիւն անձինդ քո։ Յոյժ
ուրախ եղէ 'ի գալ եղբարց, և լինել վկայ քոյոյ
ճշմարտութեանդ, որպէս գնասդ դու ճշմարտու-
4 թեամբ։ Մեծ ևս ինչ ուրախութիւն քան զայս ոչ
ունիմ, զի լսեմ եթէ իմ որդեակքն ճշմարտու-
5 թեամբ գնան։ Սիրելի, հաւատարիմ գործես զայդ,
զոր եթէ առնիցես առ եղբարս՝ զդոյն և առ օտարս.
6 որք վկայեցին քոյոյ սիրոյդ առաջի եկեղեցւոյ. որոց
բարիս արարեալ յուղարկես արժանիս Աստուծոյ.
7 զի վասն անուանն ելին, և ոչ ինչ յումեքէ առնուն
8 զհեթանոսականացն։ Մեք այսուհետև պարտիմք
ընդունել զայնպիսիսն, զի գործակիցք լիցուք ճշմար-
տութեանն։

9 ԻԴ. Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յառաջա-
դէմն 'ի նոցանէ է Դիոտրեփէս, ոչ ընդունի զմեզ։
10 Վասն այսորիկ եթէ եկից՝ յիշեցուցից զգործս նո-
րա զոր առնէ, բանիւք չարօք շատախօսութեան առ-
նէ զմեզ աշխատ. և ոչ այսոքիւք շատացեալ, ոչ
ինքն ընդունի զեղբարս, և զայնոսիկ որ ընդունին՝
11 արգելու. նա՝ և յեկեղեցւոյ ևս հանէ։ Սիրելի, մի՛

լիցիս նմանօղ չարի՝ այլ բարւոյ. զի որ զբարին առ-
նէ՝ յԱստուծոյ է. և որ զչարիս գործէ՝ նա ոչ ետես
երբեք զԱստուած։ Զդեմետրեայ վկայեալ է յա- 12
մենեցունց, և յեկեղեցւոյն և 'ի ճշմարտութենէն,
և մեք վկայեմք. և դու գիտես զի ճշմարիտ է մեր
վկայութիւնն։ Բազում ինչ ունէի գրել քեզ, այլ 13
ոչ կամիմ քարտիսիւ և դեղով գրել. զի ակն ունիմ 14
'ի մօտոյ իսկ տեսանել զքեզ, և բերան 'ի բերան
խօսել։ Խաղաղութիւն ընդ քեզ։ Ողջոյն տան քեզ 15
սիրելիք։ Ողջոյն տաջիր սիրելեաց մերոց իւրաքան-
չիւր յանուանէ։

ԹՈՒՂԹ

ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԿԱԹՈՂԻԿԷ

---

1 ԻԵ. Յուդա, Յիսուսի Քրիստոսի ծառայ, և
եղբայր Յակովբայ, հեթանոսաց որ յԱստուծոյ Հօ-
րէ էք սիրեցեալք, և Յիսուսի Քրիստոսի պա-
2 հեալք և ընտրեալք. ողորմութիւն ձեզ՝ խաղաղու-
3 թիւն և սէր բազմասցի։ Սիրելիք, զամենայն փոյթ
յանձին կալեալ գրել ձեզ՝ վասն մերոյ հասարակաց
փրկութեանն, հարկ յանձին կալայ գրել ձեզ, և ա-
ղաչել զի ճգնիցիք 'ի վերայ հաւատոյն որ միանգամ
4 աւանդեցաւն սրբոց։ Քանզի սպրդեցին մոլին ո-
մանք, որ յառաջագոյն իսկ կատարեալ էին 'ի սոյն
դատաստան. ամպարիշտք, որ զԱստուծոյ մերոյ շը-
նորհսն դարձուցին յանկարգութիւն. և զմի միայն
զիշխանն՝ և զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրա-
5 ցեալք։ Յիշեցուցանել ձեզ այսուհետև կամ է ինձ՝
որ գիտէքդ զամենայն, զի Աստուած միանգամ ըզ-
ժողովուրդն փրկեաց յԵգիպտոսէ, երկրորդ անգամ
6 զանհաւատսն կորոյս։ Եւ զհրեշտակս որ ոչ պահե-
ցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւ-
րեանց բնակութիւնն, 'ի դատաստանս մեծի աւուրն՝
7 մշտնջենաւոր կապանօք պահեաց 'ի խաւարի։ Որ-
պէս Սոդոմն և Գոմոր, և որ շուրջ զնոքօք քա-
ղաքքն, որ ըստ նմին օրինակի պոռնկեցան զհետ ըն-
կերացն մարմնոց, կան առաջի օրինակ՝ զյաւիտե-
8 նական հրոյն ընկալեալ զդատաստան։ Ըստ նմին օ-

րինակի և սոքա իբրև քնով դանդաչեալք՝ զմարմին
պղծեն, զտէրութիս քամահեն, զփառսն հայհոյեն։
Ուր Միքայէլ Հրեշտակապետն՝ յորժամ բանսար- 9
կուն սատանայի վիճեալ տայր պատասխանի վասն
Մովսիսեանն մարմնոյ, ոչ ժպրհեցաւ հայհոյութեանն
դատաստանի հանդուրժել, այլ ասէ՝ Սաստեսցէ 'ի
քեզ Տէր։ Իսկ սոքա զոր ինչ ոչն իմանան՝ հայ- 10
հոյեն. և զայլսն ևս զոր բնութեամբ իբրև զանխօս
անասունս գիտեն, 'ի նոսին ապականեսցին։ Վայ է 11
նոցա, զի ըստ Ճանապարհին Կայենի գնացին, և ըստ
մոլորութեանն Բաղաամայ զեղխեցան զհետ վարձուց,
և ըստ հակառակութեանն Կորխայ կորեան։ Սոքա 12
են ատեցեալք, շոգմոգք, երթեալ զհետ ցանկու-
թեանց իւրեանց. 'ի սէրս իւրեանց՝ խարդախու-
թեամբ, լինին ընդ ձեզ ուրախակիցք, աներկիւղ
զանձինս ճարակեն։ Ամպք անջրդիք, հողմակոծեալք,
ծառք պտղակորոյսք, անպտուղք, կրկնամեռք, խը-
լեալք արմատաքի. անսաստ ալիք ծովու, որ միշտ 13
փրփրեն զիւրեանց անձանցն զամօթ. աստեղք մո-
լարք, որոց վիհ խաւարին յաւիտենից պահեալ է։

ԻԶ. Մարգարէացաւ վասն նոցա և եօթներորդն 14
յԱդամայ Ենովք՝ և ասէ. Ահաւասիկ եկն Տէր բիւ-
րովք սրբովք Հրեշտակօք, առնել դատաստան ըստ 15
ամենայնի, և յանդիմանել զամենայն ամպարիշտս
վասն գործոց իւրեանց՝ զոր ամպարշտեցին. և վասն
ամենայն խիստ բանից, զոր խօսեցան զնմանէ մեղա-
ւորք և ամպարիշտք։ Սոքա են տրտնջօղք և շոգմոգք, 16
երթեալ ըստ իւրեանց անձանց ցանկութեանց. և
բերանք նոցա զամբարտաւանս բարբառին. առնուն
ակն երեսաց վասն օգտի։

ԻԷ. Բայց դուք, սիրելիք, յիշեցէք զկանխասաց 17
բանս զԱռաքելոցն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
սի. զի ասէին ձեզ, եթէ 'ի յետին ժամանակս եղի- 18
ցին մարդք արհամարհօղք, երթեալք ըստ իւրեանց
ամպարշտութեանցն ցանկութեանց. սոքա են նշա- 19

20 ւակեալք շնչաւորք, որ զոգին ոչ ունիցին։ Այլ մեք,
սիրելիք, եղիցուք շինել զանձինս սրբութեամբն հա-
21 ւատոյ 'ի Հոգին սուրբ. կացցուք յաղօթս, պահել
զանձինս սիրովն Աստուծոյ, ակն ունել ողորմու-
թեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի կեանսն
22 յաւիտենականս։ Եւ ոմանց դատապարտելոց լինի-
23 ջիք կշտամբիչք, և զոմանս ապրեցուցանիջիք՝ յա-
փշտակեալ 'ի հրոյ. և ոմանց ողորմեսջիք՝ երկիւ-
ղիւ ատել և զպատմուճանն որ 'ի մարմնոյն իցէ աղ-
24 տեղեալ։ Եւ այնմ որ կարօղն իցէ պահել զձեզ
անարատս և անբիծս, հաստատեալ առաջի իւրոյ
25 փառաց աներկեանն ցնծութեամբ, միոյն Աստուծոյ
և Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մե-
րոյ՝ փառք, մեծութիւն, զօրութիւն և իշխանու-
թիւն՝ յառաջ քան զամենայն յաւիտեանս, և այժմ
և յամենայն յաւիտեանս. ամէն։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ԳԼՈՒԽ Ա.

Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի, 'ի ձեռն 1
որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց՝ որ ինչ
լինելոց է վաղվաղակի. և նշանակեաց առաքելով 'ի
ձեռն Հրեշտակի իւրոյ առ ծառայ իւր Յովհաննէս։
Որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ, և զվը- 2
կայութիւն Յիսուսի Քրիստոսի զոր ետես. որ էր,
և որ լինելոցն էր յետ այնորիկ։ Երանի որ կարդասցէ 3
կամ լուիցէ զբանս մարգարէութեանս, և պահեսցէ
զոր 'ի սմա գրեալ է. զի ժամանակս մերձեալ է։
Ի Յովհաննէ առ եօթն եկեղեցիս՝ որ են յԱսիա, 4
շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ՝ յէէն՝
և որ էն՝ և որ գալոցն է, և յեօթն զօրութեանց
Հոգւոյն՝ որ է առաջի աթոռոյն իւրոյ. և 'ի Յիսու- 5
սէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է անդրա-
նիկ 'ի մեռելոց, և իշխան թագաւորութեանց երկ-
րի. որ սիրեաց զմեզ, և եղոյծ զկապանս մեղաց մե-
րոց արեամբն իւրով. և արար զմեզ թագաւորս և 6
քահանայս Աստուծոյ և Հօր իւրոյ, որում փառք և
զօրութիւն՝ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն։ Ահաւասիկ գալոց է ընդ ամպս, և տես- 7

ցեն զնա ամենայն աչք, և տեսցեն զնա ծագք երկ-
րի, և որք խոցեցին զնա՝ ամենեքեան յերկրի, և
8 կոծեսցին 'ի վերայ նորա. այո՝ ամէն։ Ես եմ այբ,
և ես եմ քէ, ասէ տէր Աստուած, որ էն՝ և որ է՝ և
9 որ գալոցն է՝ ամենակալ։ Ես Յովհաննէս եղբայր
ձեր և հաւասարակից նեղութեան և արքայութեան
և համբերութեան որ 'ի Քրիստոս Յիսուս, եղէ
ես 'ի կղզւոջն որ անուանեալ կոչի Պատմոս՝ վասն
բանին և վասն վկայութեանն Յիսուսի Քրիստո-
10 սի։ Եւ եղէ յիս հոգի 'ի կիւրակէի աւուր, և լը-
ւայ զձայն զհետ իմ զմեծ իբրև զձայն փողոյ՝ որ ա-
սէր ցիս. Ես եմ ալփա և ով, առաջին և վերջին.
11 զոր տեսանես՝ գրեա 'ի գիրս, և տուր տանել յեօ-
թըն եկեղեցիս, որ յԵփեսոս, և 'ի Զմիւռնիա, և
'ի Պերգամոն, և 'ի Թիւատիր, և 'ի Սարդիկէ,
12 և 'ի Փիլադելփիա, և 'ի Լաւոդիկեա։ Եւ դարձայ
տեսանել զձայնն՝ որ խօսէր ցիս. և 'ի դառնալն ի-
13 մում տեսի եօթն ճրագարան ոսկի. և 'ի մէջ եօթն
ճրագարանացն նման որդւոյ մարդոյ, զգեցեալ պատ-
մուճան պճղնաւոր, և գօտեւորեալ առ ստեամբքն
14 գօտի ոսկեղէն. և գլուխ նորա և հերքն իբրև զասր
սպիտակ և որպէս զձիւն, և աչք նորա որպէս բոց հրոյ,
15 և ոտք նորա նմանեալ պղնձոյ ծխելոյ 'ի մէջ հնոցի
հրաշէկ, և ձայն նորա իբրև զձայն ջուրց բազմաց։
16 Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում աստեղս եօթն, և
'ի բերանոյ նորա ելանէր սուր երկբերանեան, և ե-
րեսք նորա իբրև զարեգակն ճառագայթեալ երևէ-
17 ին։ Եւ իբրև տեսի զնա՝ անկայ առ ոտս նորա իբ-
րև զմեռեալ. և եդ 'ի վերայ իմ զաջ իւր՝ և ասէ
ցիս. Մի երկնչիր, ես եմ առաջին, և ես եմ յե-
18 տին. և ես եմ կեանք, և ես նոյն որ մեռայ, և եմ
կենդանի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն։ Եւ ունիմ զփականս մահու և դժո-
19 խոց. գրեա զոր տեսանես դ՝ որ էն, և որ հանդեր-
20 ձեալ է լինել յետ այնորիկ։ Զխորհուրդ եօթն

աստեղացդ՝ զոր տեսեր դ յաջս իմ, և զեօթն ճրագա֊
րանս ոսկիս, եօթն աստեղքն՝ հրեշտակք եօթն ե֊
կեղեցեացն են, և ճրագարանքն եօթն՝ եօթն եկե֊
ղեցիքն են։

ԳԼՈՒԽ Բ

Առ հրեշտակ եփեսացւոց եկեղեցւոյն գրեա. 1
Այսպէս ասէ կալողն՝ որ ունի զաստեղս եօթն յա֊
ջու ձեռին իւրում, և շրջի ՚ի մէջ եօթն աշտանակի
ոսկւոյ։ Գիտեմ զգործս քո և զվաստակս քո և ըզ֊ 2
համբերութիւն քո. և զի ոչ բառնաս զչարս, և
փորձեցեր որ ասեն զինքեանս Առաքեալս՝ և ոչ են,
և հեբրայեցիս՝ և ստեն։ Եւ համբերեցեր, և վըշ֊ 3
տացար վասն անուան իմոյ՝ և աշխատեցար։ Այլ 4
ասեմ առ քեզ, զի զսէրն քո զառաջին թողեր. յի֊ 5
շեա այժմ ուստի անկարն և ապաշաւեա, և զառա֊
ջին գործսն քո արա. ապա թէ ոչ, գամ ես վաղվա֊
ղակի, և շարժեցից զաշտանակս քո ՚ի տեղւոջէ իւ֊
մէ՝ եթէ ոչ ապաշխարեսցես։ Արդ զայս արա՝ զի ա֊ 6
տեսցես զգործսն Նիկողայոսի, զոր ես ատեամ։ Որ 7
ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ Հոգին սուրբ
առ եկեղեցիս. որ յաղթէն՝ տաց նմա ուտել ՚ի փայ֊
տէն կենաց որ է ՚ի մէջ դրախտին Աստուծոյ։ Եւ առ 8
հրեշտակ զմիւռնացւոց եկեղեցւոյն գրեա. Այսպէս
ասէ անսկիզբնն և անվախճանն, որ եղև մեռեալ և
կենդանացաւ։ Տեսի զգործս քո և զնեղութիւն և 9
զաղքատութիւն. այլ աղքատութիւն քո՝ մեծու֊
թի եղիցի. և զհայհոյութիւնն՝ որ ասէին զինքեանս
Հրեայս գոլ, և չէին ինչ, այլ ժողով սատանայի։
Մի երկնչիր՝ վասն որոյ կամիս չարչարել. ահա համ֊ 10
դերձ է բանսարկուն արկանել ՚ի ձէնջ ՚ի բանտ, զի
փորձիցիք, և ունիք նեղութիւն աւուրս տասն. լեր
հաւատարիմ մինչև ՚ի մահ, և տաց քեզ զպսակն կե֊
նաց։ Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին 11
սուրբ ասէ առ եկե ղեցիս. որ յաղթէ, ոչ անիրաւի

12 յերկրորդ մահուանէն։ Եւ առ հրեշտակն՝ որ ՚ի
Պերգամոյ եկեղեցին՝ գրեա. Այսպէս ասէ՝ որ ու֊
13 նի զսուրն երկսայրի սրեալ։ Տեսի զգործս քո, և զի
բնակեալ ես ուր աթոռն է սատանայի. և ունիս զա֊
նուն իմ, և ոչ ուրացար զհաւատս իմ յաւուր յո֊
րում Անթիպաս վկայն իմ հաւատարիմ եղև. զի
վկայ է իմ հաւատարիմ ամենայն հաւատացելոց,
որ սպանաւ ՚ի ձէնջ որ կայք՝ ուր սատանայ է բնա֊
14 կեալ։ Այլ ունիմ առ քեզ սակաւ. զի կայ առ քեզ
վարդապետութիւնն Բաղաամու, որ ուսոյց զԲա֊
ղակ դնել գայթագղութի առաջի որդւոցն Իսրայե֊
15 լի, ուտել նոցա զոհեալ և պոռնկել. այսպէս և դու
ունիս զվարդապետութիւնն Նիկողայեցեաց՝ զոր ես
16 ատեամ։ Արդ ապաշխարեա, ապա թէ ո՛չ գամ
վաղվաղակի, և պատերազմեցայց ընդ նոսա սրով
17 բերանոյ իմոյ։ Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ
Հոգին ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ՝ տաց նմա
ուտել ՚ի մանանայէն թաքուցելոյ, և տաց նմա ըզ֊
գիրն սրբութեան. և գրեալ անուն նոր ՚ի գիրն՝ զոր
18 ոչ ոք գիտէ, բայց միայն որ առնուն։ Եւ առ հրեշ֊
տակն որ ՚ի Թիւատրոյ եկեղեցին՝ գրեա. Այսպէս
ասէ որդին Աստուծոյ, որոյ աչք իւր են իբրև զբոց
19 հրոյ, և ոտք նորա նման պղնձի ծխելոյ։ Տեսի ըզ֊
գործս քո և զսէր և զհաւատ, և զպաշտօն քո համ֊
բերութեամբ. զի բազում է վաստակ քո վերջինն
20 քան զառաջինն. այլ ասեմ առ քեզ բազում. զի
թողեր զկինն զՅեզաբէլ, որ ասէր զինքն մարգա֊
րէ, և ուսուցանէր մոլորութիւն զծառայս իմ՝ պոռնը֊
21 կել և ուտել զզոհեալ. և ետու նոցա ժամանակ ա֊
պաշխարել զպոռնկութիւնն իւրեանց՝ և ոչ ապաշ֊
22 խարեցին։ Ահաւասիկ ես արկանեմ զնա ՚ի հնոց,
և զգործակիցս իւր ընդ որս շնացաւ՝ ՚ի նեղութիւնս
մեծամեծս, եթէ ոչ ապաշխարեսցեն ՚ի գործոց իւ֊
23 րեանց. և զորդիս նոցա սպանից մահուամբ. և ծա֊
նիցեն ամենայն եկեղեցիք՝ թէ ես եմ որ յանդի֊

մանեմ զերիկամունս և զսիրտս, և տամ ձեզ իւրա֊
քանչիւր ըստ գործոց իւրեանց։ Այլ ձեզ ասեմ որք 24
՚ի Թիւատիր էք, և ոչ ունիք զվարդապետութիւնս
զայս. որ ոչ ծանեայք զխորս սատանայի զոր խօսին.
ոչ արկից զձեօք ծանրութիւն. այլ զոր ունիք պա֊ 25
հեցէք մինչև ես գամ։ Եւ որ յաղթէ և պահէ զգոր֊ 26
ծըս իմ մինչև ցվախճան, տաց նմա իշխանութիւն
՚ի վերայ ազգաց. և հովուեսցէ զնոսա գաւազանաւ 27
երկաթեաւ, և իբրև զանօթ բրտի փշրեսցէ զնոսա.
որպէս և ես ընկալայ ՚ի Հօրէ իմմէ, և տաց նոցա 28
զաստղն առաւօտուն։ Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ 29
Հոգին ասէ առ եկեղեցիս։

ԳԼՈՒԽ Գ.

Եւ առ հրեշտակ սարդիացւոց եկեղեցւոյն գրեա. 1
Այսպէս ասէ՝ որ ունի զեօթն Հոգին Աստուծոյ և
զեօթն աստեղս։ Տեսի զգործս քո, զի անուն կեն֊
դանւոյ ունիս՝ և. մեռեալ ես. լեր արթուն, և հաս֊ 2
տատեա այսուհետև՝ զի հանդերձեալ ես մեռանել.
քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի Աստու֊
ծոյ։ Արդեօք յիշեա թէ որպէս լուարն, և պահեա 3
և ապաշխարեա. ապա թէ ոչ զուարթանաս՝ գամ
որպէս գող, և ոչ ոք իմանայ զգալուստ իմ առ քեզ։
Ունիս սակաւ մի զանուն սարդիացւոցն, որք ոչ աղ֊ 4
տեղացուցին զհանդերձս իւրեանց, և շրջին ՚ի սպի֊
տակս՝ որում արժանի եղեն։ Որ յաղթէ՝ այսպէս 5
զգեցցի սպիտակս, և ոչ ջնջեսցի անուն նորա ՚ի դըպ֊
րութենէն կենաց, և խոստովանեցայց զանուն նորա
առաջի Հօր իմոյ և առաջի Հրեշտակաց։ Որ ունի 6
ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղե֊
ցիս։ Եւ առ հրեշտակն Փիլադելփեայ եկեղեցւոյն 7
գրեա. Այսպէս ասէ սուրբն, ճշմարիտն, որ ունի
զփականս Դաւթի. բանայ՝ և ոչ ոք է որ փակէ, և
փակէ՝ և ոչ ոք է որ բանայ։ Տեսի զգործս քո. ահա 8

ետու առաջի քո դուռն բացեալ, զոր ոչ ոք կարէ փա֊
կել. զի սակաւիկ ունիս զօրութիւն, և պահեցեր
9 զբանս իմ, և ոչ ուրացար զանուն իմ։ Ահաւասիկ ես
տամ քեզ զժողովն սատանայի, որք ասեն զինքեանս
Հրեայս գոլ՝ և ոչ են, այլ ստեն. արարից զնոսա՝ զի
եկեսցեն և երկիր պագցեն առաջի ոտից քոց, և ծա֊
10 նիցեն զի ես սիրեցի զքեզ. զի պահեցեր զբան համ֊
բերութեան իմոյ, և ես պահեցից զքեզ ՚ի ժամ
փորձութեան քոյ, որ հանդերձեալ է գալ յամե֊
նայն տիեզերս՝ փորձել զամենայն բնակեալս յե֊
11 րեսս երկրի։ Ահա գամ վաղվաղակի, կալ զոր ու֊
12 նիսդ՝ զի մի ոք առցէ զպսակ քո։ Որ յաղթէ՝ արա֊
րից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, և արտաքս
այլ մի ևս ելցէ. և գրեցից ՚ի վերայ նորա զանուն
Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝
զնորն Երուսաղեմի, որ իջանելոց է յերկնից Աս֊
13 տուծոյ իմոյ. և անուն նորա նոր։ Որ ունի ականջս՝
14 լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։ Եւ առ
հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա. Այս֊
պէս ասէ ամէնն՝ վկայն հաւատարիմ և ճշմարիտ,
15 սկիզբն սկզբան արարածոց Աստուծոյ։ Գիտեմ զգ֊
գործս քո՝ զի ոչ ցուրտ ես և ոչ ջերմ. պարտ էր
16 քեզ ցուրտ լինել և կամ ջերմ. այլ դու գաղջ ես, և
ոչ ջերմ և ոչ ցուրտ. հանդերձեալ ես փսխել ՚ի բե֊
17 րանոյ իմմէ։ Զի ասես. մեծատուն էի և մեծացայ,
և ոչ ինչ կարօտ եմ. և ոչ գիտես՝ եթէ դու ես ո֊
18 ղորմելի և հեգ և աղքատ, մերկ և կոյր։ Արդ ես
խորհրդակից եղէց քեզ. առ գնեա յինէն ոսկի փոր֊
ձեալ ՚ի հրոյ՝ զի մեծասցիս, և հանդերձս սպիտակս՝
զի զգեցցիս, զի մի երևեսցի անվայելչութիւն մեր֊
կութեան քոյ. և դիր դեղ յաչս քո՝ զի տեսցես։
19 Ես՝ զոր սիրեմ, յանդիմանեմ և խրատեմ. նախան֊
20 ձեա այժմ, և ապաշխարեա. ահաւասիկ կամ ես
առ դուրս և բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի իմում
և բանայցէ զդուռնն, մտից առ նա և ընթրիս արա֊

րից առ նա, և նա ընդ իս։ Որ յաղթէ՝ տաց նմա 21
նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և ես յաղթեցի
և նստայ յաթոռ Հօր իմոյ։ Որ ունի ականջս՝ լուի֊ 22
ցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։

ԳԼՈՒԽ Դ

Եւ յետ այսր ամենայնի տեսի՝ և ահա դրունք 1
երկնից բացեալ էին, և ձայն փողոյն առաջնոյ զոր
լուայ՝ խօսէր ընդ իս և ասէր. Ել այսր՝ և ցուցից
քեզ զինչ լինելոց է յապա ժամանակս։ Եւ ժամա֊ 2
նեալ յիս հոգի, և տեսի աթոռ մի՝ զի կայր յեր֊
կինս. և 'ի վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան ա֊ 3
կանց յասպոյ և սարդիոնի. և քահանայք շուրջ զա֊ 4
թոռովն՝ նմանք տեսլեան զմրըխտի. և շուրջ զա֊
թոռովն՝ աթոռք քսան և չորք, և 'ի վերայ աթո֊
ռոցն նստէին քսան և չորք երիցունք՝ զգեցեալ հան֊
դերձս սպիտակս, և 'ի գլուխս իւրեանց պսակս ոս֊
կիս. և յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք և 5
ձայնք և որոտմունք. և եօթն լամբարք հրոյ բորբո֊
քելոյ առաջի աթոռոյն, որ են եօթն Հոգիքն Ա֊
տուծոյ։ Եւ էր առաջի աթոռոյն ծով ապակեղէն՝ 6
նման սպիտակութեան սառին, և 'ի մէջ աթոռոյն
չորք կենդանիք՝ և լի էին աչօք առաջոյ և յետոյ։ Եւ 7
էր կենդանին առաջին նման առիւծու, և երկրորդ
կենդանին նման զուարակի, և երրորդ կենդանին ե֊
րես մարդոյ, և չորրորդ կենդանին նման արծուոյ
թռուցելոյ։ Եւ չորից կենդանեացն էին միոյ միոյ ի 8
նոցանէ վեց թևք շուրջանակի, և 'ի ներքոյ լի էին
աչօք, ոչ հանգչէին՝ ոչ զտիւ և ոչ զգիշեր՝ ասելով.
Սուրբ սուրբ սուրբ, սուրբ սուրբ սուրբ, սուրբ ս̃
սուրբ, տէր Աստուած ամենակալ՝ որ էն և ես և որ
գալոց ես։ Եւ յորժամ տային կենդանիքն փառս և 9
պատիւ և գոհութիւն նստելոյն 'ի վերայ աթոռոյն՝
կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից, անկանէին ա֊

ռաջի աթոռոյն քսան և չորք երիցունքն և երկիր պա֊
10 գանէին կենդանւոյն յաւիտենից, և դնէին զպսակս
11 իւրեանց առաջի աթոռոյն ասելով. Արժանի ես,
տէր Աստուած մեր սուրբ, առնուլ փառս և պատիւ
և զօրութիւն, զի դու ստեղծեր զամենայն, և 'ի
կամըն քո ստեղծան՝ և կան հաստատուն։

ԳԼՈՒԽ Ե

1 Եւ տեսի յաջոյ ձեռինն՝ որ նստէր 'ի վերայ ա֊
թոռոյն՝ գիրք գրեալ ներքոյ և արտաքոյ, և կնքեալ
2 եօթն կնքով։ Եւ տեսի Հրեշտակ մի զօրաւոր՝ զի
քարոզէր 'ի ձայն մեծ. Ո՞վ է արժանի բանալ զգիրքս՝
3 և լուծանել զկնիք նորա։ Եւ ոչ ոք կարէր՝ ոչ յեր֊
կինս և ոչ յերկրի և ոչ 'ի ներքոյ երկրի՝ բանալ
4 զգիրքն, զի ոչ տեսին զնա։ Եւ ես լայի ուժգին՝ զի
ոչ ոք գտաւ արժանի բանալ զգիրքն և հայել 'ի նա.
5 և մի յերիցանցն ասէ ցիս. Մի լար, ահաւասիկ յաղ֊
թեաց առիւծն յազգէն Յուդայ յարմատոյն Դաւ֊
թի՝ բանալ զգիրքն և լուծանել զեօթն կնիքս նո֊
6 րա։ Եւ տեսի 'ի մէջ աթոռոյն և 'ի մէջ չորից կեն֊
դանեացն և 'ի մէջ երիցանցն՝ գառն կայր զենեալ,
որ ունէր եօթն եղջիւրս, և աչս եօթն՝ որ են եօթն
Հոգիք Աստուծոյ, որ են առաքեալ ընդ ամենայն եր֊
7 կիր. և եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նորա՝ որ նըս֊
8 տէր 'ի վերայ աթոռոյն։ Եւ յորժամ ա՛ռ զգիրն,
չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն անկա֊
նէին առաջի գառինն. և ունէին իւրաքանչիւր քնար՝
9 և բուրվառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբոցն. և
օրհնէին երգս նորս և ասէին. Արժանի ես առնուլ
զգիրդ՝ և բանալ զկնիք դորա, զի զենար՝ և գնեցեր
զմեզ Աստուծոյ արեամբդ քով՝ յամենայն ազգաց և
10 'ի լեզուաց և 'ի ժողովոց հեթանոսաց. և արարեր
զսոսա Աստուծոյ մերոյ թագաւորս և քահանայս՝
11 թագաւորել 'ի վերայ երկրի։ Եւ տեսի և լուայ ըզ֊

ձայն Հրեշտակաց բազմաց՝ որք կային շուրջ զաթո-
ռովն և զչորիւք կենդանեօքն և զքահանայիւքն. և
էր թիւ նոցա՝ բիւրք բիւրուց և հազարք հազարաց.
ասէին ձայնիւ մեծաւ. Արժան է գառնդ զենելոյ՝ 12
առնուլ զմեծութիւն և զիմաստութիւն և զզօրու-
թիւն և զպատիւ և զփառս և զօրհնութիւն։ Եւ ա- 13
մենայն արարածք՝ որ են յերկինս և յերկրի և 'ի
ծովու և որ 'ի նոսա՝ լուայ զի ասէին. Որ նստի յա-
թոռն՝ և գառինն՝ օրհնեալ բարձրացեալ և փառա-
ւորեալ յաւիտեանս յաւիտենից. և չորք կենդանիքն 14
ասէին, ամէն. և երիցունքն անկանէին առաջի նորա
և երկիր պագանէին։

ԳԼՈՒԽ Զ

Եւ տեսի զի եբաց զմին 'ի կնքոյն, և լուայ 'ի 1
միոյ 'ի չորից կենդանեացն իբրև զձայն որոտման՝ զի
ասէր՝ թէ գամ. և տեսի և ահա ձի սպիտակ, և որ 2
հեծեալն էր 'ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա
պսակ, և եկն յաղթօղն զի յաղթեսցէ։ Եւ յոր- 3
ժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկրորդ կենդա-
նւոյն՝ զի ասէր. Գամ։ Եւ ել այլ ձի կարմիր, և որ 4
հեծեալն էր 'ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ ըզ-
խաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս զենցեն. և
տուաւ նմա սուր մի մեծ։ Եւ յորժամ եբաց զկնիքն 5
երրորդ, լուայ յերրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ
գամ. և տեսի և ահա ձի սեաւ, և որ նստեալն էր
'ի վերայ նորա՝ ունէր կշիռս 'ի ձեռին իւրում. և լուայ 6
ձայն 'ի միջոյ չորից կենդանեացն. Կապիճ մի ցորեան
դենարի միոյ, և երեք կապիճ գարի դենարի միոյ.
և ձէթ և գինի մի՛ փասեսցես։ Եւ յորժամ եբաց 7
զկնիքն չորրորդ, լուայ ձայն 'ի չորրորդ կենդանւոյն՝
զի ասէր՝ թէ գամ, և տեսի և ահա ձի շլոռոս, և որ 8
նստեալն 'ի վերայ նորա՝ ունէր զմահ, և դժոխք եր-
թային զհետ նորա. և տուաւ նմա իշխանութիւն

չորրորդ մասին աշխարհի՝ սատակել սրով և սովով
9 և մահուամբ և գազանօք երկրի։ Եւ յորժամ ե-
բաց զկնիքն հինգերորդ՝ տեսի 'ի ներքոյ սեղանոյն
զհոգիս ամենայն մարդկան կնքեալ վասն բանին Աս-
տուծոյ՝ և վասն վկայութեան նորա զոր ունէին.
10 որք ասէին ձայնիւ մեծաւ. Մինչև յե՞րբ, Տէր սուրբ
և ճշմարիտ, ոչ դատիս և խնդրես զվրէժ արեան մե-
11 րոյ 'ի բնակչաց երկրի։ Եւ տուաւ նոցա արկանելիս
սպիտակս, և ասացաւ նոցա զի հանգիցեն փոքր մի
ժամանակ, մինչև լցցին ծառայակիցք նոցա և եղ-
բարք նոցա՝ որք հանդերձեալ են կատարիլ իբրև ըզ-
12 նոսա։ Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝
եղև շարժումն մեծ, և արեգակն եղև սեաւ իբրև
զկապերտ այծեայ, և լուսինն բոլորովին եղև արիւն.
13 և աստեղք երկնից թօթափեցան 'ի յերկիր, որպէս
14 տերև թզենւոյ զի ուժգին շարժիցի 'ի հողմոյ. և
երկին իբրև զմագաղաթեայ գիրս գալարէր, և ա-
մենայն լերինք և կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժե-
15 ցան։ Եւ թագաւորք երկրի և իշխանք՝ հազարա-
պետք և մեծամեծք և զօրաւորք և ամենայն ծա-
ռայք և ամենայն ազատք թաքուցին զինքեանս յայրս
16 և 'ի ծերպս վիմաց. և ասէին լերանց՝ թէ անկերուք
17 'ի վերայ մեր, և ցբլուրս՝ թէ ծածկեցէք զմեզ. զի
եկն օր մեծ բարկութեան նորա, և ո՞վ կարէ կալ
առաջի նորա։

ԳԼՈՒԽ Է

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս Հրեշտակս՝ զի կային
'ի չորս անկիւնս երկրի, և ունէին զչորս հողմս երկ-
րի՝ զի մի՛ շնչեսցէ հողմ 'ի վերայ երկրի, և մի՛ 'ի
2 ծովու և մի՛ 'ի ծառս։ Եւ տեսի այլ Հրեշտակ զի
ել յարևելից, և ունէր զկնիք Աստուծոյ կենդա-
նւոյ, և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս Հրեշ-
տակսն՝ որոց առեալ էր իշխանութիւն ապականել

զերկիր և զծով. և ասէր. Մի՛ վնասէք երկրի, մի՛ 3
ծովու, մի՛ ծառոց, դադարեցէք մինչև կնքեցից զծա-
ռայս Աստուծոյ իմոյ: Եւ լուայ զթիւ կնքելոյն՝ հա- 4
րիւր քառասուն և չորք հազար՝ կնքեալք յազգէ որ-
դւոցն Իսրայէլի. յազգէն Յուդայ՝ երկոտասան հա- 5
զար կնքեալ, յազգէն Ռուբէնի՝ երկոտասան հա-
զար կնքեալ, յազգէն Գադայ՝ երկոտասան հազար
կնքեալ, յազգէն Ասերայ՝ երկոտասան հազար կըն- 6
քեալ, յազգէն Նեփթաղիմայ՝ երկոտասան հազար
կնքեալ, յազգէն Մանասէի՝ երկոտասան հազար
կնքեալ, յազգէն Շմաւոնի՝ երկոտասան հազար 7
կնքեալ, յազգէն Ղևեայ՝ երկոտասան հազար կըն-
քեալ, յազգէն Իսաքարայ՝ երկոտասան հազար կըն-
քեալ, յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան հազար 8
կնքեալ, յազգէն Յովսեփու՝ երկոտասան հազար
կնքեալ, յազգէն Բենիամինի՝ երկոտասան հազար
կնքեալ: Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա ժողովուրդ 9
բազում որոց ոչ գոյր թիւ, յամենայն հեթանոսաց
և յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յամե-
նայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն և ա-
ռաջի գառինն՝ արկեալ զիւրեամբք հանդերձս սպի-
տակս, և արմաւենիս 'ի ձեռս իւրեանց. աղաղակէին 10
'ի ձայն մեծ՝ և ասէին. Փրկութիւն Աստուծոյ մե-
րոյ՝ որ նստի 'ի վերայ աթոռոյն, և գառինն: Եւ ա- 11
մենայն Հրեշտակք կային շուրջ զաթոռովն և զերի-
ցամբքն և զչորիւք կենդանեօքն, և անկանէին յե-
րեսս առաջի աթոռոյն՝ և երկիր պագանէին Աստու-
ծոյ, ասելով. Ամէն. օրհնութիւն և փառք և իմաս- 12
տութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և
շնորհք տեառն Աստուծոյ մերոյ՝ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն: Եւ ասէ ցիս մի յերիցանց անտի. 13
Սոքա որ զգեցեալ են զհանդերձս սպիտակս՝ ո՞յք են,
և կամ ուստի՞ գան: Եւ ասացի ցնա. Տէր, դու գի- 14
տես: Եւ ասէ ցիս. Սոքա են որ գան 'ի վշտաց մե-
ծաց, և լուացին զարկանելիս իւրեանց և սպիտակա-

15 ցուցին արեամբ գառինն: Վասն այնորիկ են առա-
ջի աթոռոյն Աստուծոյ, և պաշտեն զնա զտիւ և ըզ-
գիշեր 'ի տաճարի նորա. և որ նստի 'ի վերայ աթո-
16 ռոյն՝ բնակեալ է 'ի նոսա. ոչ քաղցիցեն, և ոչ ծա-
րաւիցեն, և ոչ ոք մեղիցէ նոցա՝ ոչ արեգակն և ոչ
17 տօթ. և գառնն 'ի միջոյ աթոռոյն իւրոյ հովուեսցէ
զնոսա, և առաջնորդեսցէ նոցա 'ի կենաց աղբիւր ջրոյ
կենդանւոյ. քանզի եհատ Աստուած զամենայն ար-
տօսր յերեսաց նոցա:

ԳԼՈՒԽ Ը

1 Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝ եղև լը-
2 ռութիւն յերկինս որպէս կէս ժամու. և տեսի
Հրեշտակս եօթն, որ առաջի Աստուծոյ կային. և
3 տուաւ նոցա եօթն փող: Եւ այլ Հրեշտակ եկն ե-
կաց առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի. և տուաւ
նմա խունկ բազում, զի մատուսցէ զաղօթս ամենայն
սրբոց 'ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն.
4 և ել ծուխ խնկոյն՝ աղօթք սրբոցն 'ի ձեռաց Հրեշ-
5 տակացն առաջի Աստուծոյ. և էառ Հրեշտակն ըզ-
խնկանոցն 'ի հրոյ սեղանոյն, և արկ զնա յերկիր.
և եղև որոտումն և ձայնք և փայլատակումն և շար-
6 ժումն մեծ. և եօթն Հրեշտակքն որ ունէին եօթն
փողս՝ պատրաստեցին զինքեանս առ 'ի հարկանել:
7 Եւ առաջին Հրեշտակն եհար զփողն, և եղև կար-
կուտ և հուր և արիւն խառնեալ՝ և անկաւ յերկիր,
և զերրորդ մասն երկրի այրեաց, և զերրորդ մասն
ծառոց այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեաց:
8 Եւ երկրորդ Հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն
մի մեծ հրդեհեալ անկաւ 'ի ծով, և եղև երրորդ
9 մասն ծովու արիւն. և սատակեցաւ երրորդ մասն
լուղակաց, և որ ունէր շունչ կենդանի՝ ապականե-
10 ցաւ: Եւ երրորդ Հրեշտակն փողեաց, և անկաւ
յերկնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև զլամբար,

և անկաւ յերրորդ մասն գետոց և աղբերաց. և էր 11
անուն աստեղն Դառնութիւն. և բազումք մեռան
'ի դառնութենէ ջուրցն։ Եւ չորրորդ Հրեշտակն փո- 12
ղեաց, և վիրաւորէր երրորդ մասն արեգական՝ և եր-
րորդ մասն լուսնի՝ և երրորդ մասն աստեղաց. և խա-
ւարէր երրորդ մասն նոցա, և երրորդ մասն գիշերւոյ
նոյնպէս։ Եւ տեսի և լուայ ձայն Հրեշտակի թռու- 13
ցելոյ 'ի մէջ երկնից՝ զի ասէր 'ի ձայն մեծ. Վա՛յ վա՛յ
վա՛յ՝ որ բնակեալ են յերկրի. յորժամ լինիցի ձայն
երից ևս փողոց, զոր կամիցին Հրեշտակքն հար-
կանել։

ԳԼՈՒԽ Թ

Եւ հինգերորդ Հրեշտակն փողեաց. և տեսի զի 1
աստղ մի անկաւ յերկնից, և տուաւ նմա բանալի
գբոյն անդընդոց. և ելանէր ծուխ 'ի գբոյն որպէս 2
զծուխ հնոցի մեծի. և խաւարեցաւ արեգակն և
օդք։ Եւ 'ի գբոյն ելանէր մարախ 'ի յերկիր. և 3
տուաւ նոցա իշխանութիւն իբրև զխայթոցս կարճի.
և ասացաւ նոցա զի մի մեղիցեն խոտոյ երկրի, և մի 4
ամենայն ծառոց, բայց միայն մարդոյ երկրայնոյ, որ
ոչ ունիցին զկնիք 'ի վերայ ճակատու իւրեանց։ Եւ 5
տուաւ նոցա հրաման՝ զի մի սպանանիցեն զնոսա,
այլ չարչարեսցեն զնոսա ամիս հինգ. և չարչարանք
նոցա իբրև զխայթոցս կարճի՝ որ հարկանիցէ զմարդ.
և յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և 6
մի գտցեն, և ցանկան մեռանել՝ և փախիցէ 'ի նո-
ցանէ մահ։ Եւ նմանութիւն մարախոյն՝ նմանու- 7
թիւն ձիոյ պատրաստելոյ 'ի պատերազմ. և 'ի վերայ
գլխոց նոցա իբրև զպսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք
նոցա իբրև զերեսս մարդոյ, և հերք նոցա իբրև ըզ- 8
հերս կնոջ, և ատամունք նոցա իբրև զառիւծու։ Եւ 9
ունէին զրահս՝ իբրև զզրահս երկաթի. և ձայն թե-
ւոց նոցա իբրև զձայն կառավար ձիոց բազմաց՝ որ

10 արշաւեն 'ի պատերազմ. և ունէին ագիս ըստ նմա-
նութեան կարճի, և խայթոց յագիս նոցա. և ու-
նէին իշխանութիւն չարչարել զմարդիկ ամիս հինգ.
11 և ունին թագաւոր 'ի վերայ իւրեանց զհրեշտակն
դժոխոց. և անուն նորա եբրայեցերէն Աղբադոն,
12 որ կոչի 'ի հայ բարբառ՝ կորուստ։ Ահաւասիկ վայ
13 մի էանց, և վայք երկու գալոց են։ Եւ վեցերորդ
Հրեշտակն հարկանէր զփողն. և լուայ ձայն 'ի չորից
կենդանեացն որ էին առաջի սեղանոյն Աստուծոյ,
14 զի ասէր ցՀրեշտակն վեցերորդ որ ունէր զփողն.
Լոյծ զչորս Հրեշտակսն զկապեալս 'ի վերայ գետոյն
15 Եփրատայ։ Եւ լուծան չորս Հրեշտակքն պատրաս-
տեալք 'ի ժամ և յօր և յամիս և 'ի տարի, զի
16 սպանցեն զերրորդ մասն մարդկան. և համարք հե-
ծելոց զօրացն նոցա՝ բիւրք բիւրուց և հազարք հազա-
17 րաց լուայ զթիւ նոցա։ Եւ տեսի ձիս 'ի տեսլեանն, և
հեծեալս 'ի նոսա՝ որք ունէին զրահս հրեղէնս, և
յակնթս հրդեհեալս ծծմբով. և գլուխք ձիոցն իբ-
րև զգլուխս առիւծուց. և 'ի բերանոյ նոցա հուր ե-
18 լանէր՝ և ծուխ և ծծումբ։ Եւ 'ի հարուածոցս
յայսցանէ մեռաւ երրորդ մասն մարդկան՝ 'ի հրոյն
և 'ի ծխոյն և 'ի ծծմբոյն, որ ելանէր 'ի բերանոյ
19 նոցա. զի իշխանութիւն 'ի բերանս է նոցա և յա-
գիս նոցա, և ագիք նոցա նմանութիւն օձի. և ու-
20 նէին գլուխս՝ որով սատակէին զանիրաւս։ Եւ այլք
'ի մարդկանէ որ ոչ մեռան 'ի հարուածոցս յայսցա-
նէ, ոչ ապաշխարեցին և ոչ դարձան 'ի գործոց ձե-
ռաց իւրեանց, յերկրպագութենէ դիւաց և կռոց՝
յոսկեղինաց և յարծաթեղինաց և 'ի պղնձոյ և 'ի
քարէ և 'ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն և ոչ
21 լսել և ոչ գնալ. և ոչ ապաշխարեցին 'ի մարդասպա-
նութենէ և 'ի դեղատուութենէ, և 'ի պոռնկութե-
նէ և 'ի գողութենէ իւրեանց։

ԳԼՈՒԽ Ժ

Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր յերկ- 1
նից և զգեցեալ էր ամպ, և ծիածան 'ի գլուխ նորա.
և երեսք նորա իբրև զարեգակն, և ոտք նորա որպէս
սիւն հրոյ։ Եւ ունէր 'ի ձեռին իւրում գրկոյք մի 2
բացեալ. և եդ զոտն իւր զաջ 'ի վերայ ծովու, և ըզ-
ձախն 'ի վերայ երկրի. և աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ 3
գոչեաց իբրև զառիւծ. և յորժամ աղաղակեաց՝ խօ-
սեցան եօթն որոտմունք յիւրեանց ձայնս։ Եւ յոր- 4
ժամ խօսեցան եօթն որոտմունքն՝ կամէի գրել. և
լուայ ձայն յերկնից՝ զի ասէր. Կնքեա զոր խօսեցան
եօթն որոտմունքն՝ և մի՛ գրեր։ Եւ հրեշտակն զոր 5
տեսի՝ որ եդ զոտն իւր 'ի վերայ ծովու և զմիւսն 'ի
ցամաքի, համբարձ զձեռն իւր զաջ յերկինս, և եր- 6
դուաւ 'ի կենդանին յաւիտենից, որ հաստատեաց
զերկինս և որ 'ի նմա, և զերկիր և որ 'ի նմա, զի ոչ
եւս կայ այլ ժամանակ. այլ յաւուրս ձայնի եօթնե- 7
րորդ հրեշտակին՝ յորժամ հարցէ զփողն, կատարես-
ցի խորհուրդն Աստուծոյ՝ որ աւետարանեցաւ 'ի ծա-
ռայից իւրոց մարգարէիցն։ Եւ ձայնն զոր լուայ յերկ- 8
նից՝ դարձեալ խօսեցաւ ընդ իս և ասէ. Երթ առ
զգրկոյսն՝ զոր ունի հրեշտակն բացեալ 'ի ձեռին իւ-
րում, և կայ 'ի վերայ ծովու և ցամաքի։ Եւ ես եր- 9
թեալ առ հրեշտակն՝ խնդրեցի 'ի նմանէ. և ասէ
ցիս. Ա՛ռ զսա՝ և կեր զդոյն, և դառնասցի յորովայն
քո. այլ 'ի բերան քո է քաղցր իբրև զմեղր։ Եւ ա- 10
ռի զգրկոյսն բացեալ 'ի հրեշտակէն՝ և կլայ զնա.
և էր 'ի բերան իմ որպէս մեղր. և յորժամ կերայ,
դառնացաւ որովայն իմ. և ասէ ցիս. Հասանէ քեզ 11
դարձեալ մարգարէանալ 'ի ժողովուրդս և 'ի լեզուս
և 'ի թագաւորս երկրի։

ԳԼՈՒԽ ԺԱ

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի, և կայր
հրեշտակն և ասէր ցիս. Արի և չափեա զտաճարն
Աստուծոյ և զսեղանն, և զերկրպագուսն որ 'ի նմա։
2 Եւ զգաւիթն որ արտաքոյ տաճարին՝ թող զնա և
մի՛ չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց. և զքա-
ղաքն սուրբ կոխեսցեն ամիս քառասուն և երկուս։
3 Եւ տաց երկուց վկայից իմոց, և մարգարէասցեն ա-
ւուրս հազար երկերիւր և վաթսուն՝ զգեցեալ քուրձ։
4 Սոքա են երկու ձիթենիքն և երկու ճրագք, որ կան
5 առաջի Աստուծոյ յերկրի։ Եւ ոքք կամիցին վնասել
նոցա՝ հուր ելցէ 'ի բերանոյ նոցա և կերիցէ զթշնա-
միս նոցա. և ոքք կամիցին մեղանչել նոցա՝ այսպէս
6 սատակեսցին։ Սոքա ունին իշխանութիւն փակել
զերկինս՝ զի մի՛ տեղասցէ զաւուրս մարգարէութեան
նոցա. և ունին իշխանութիւն 'ի վերայ ջուրց՝ դար-
ձուցանել զնոսա յարիւն, և հարկանել զերկիր յա-
7 մենայն հարուածս՝ քանիցս անգամ և կամիցին։ Եւ
յորժամ կատարեսցեն զամենայն աւուրս վկայու-
թեան իւրեանց, յայնժամ գազանն որ ելանէ յան-
դընդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ, և յաղթեսցէ
8 նոցա և սպանցէ զնոսա. և դի նոցա անկեալ կայցէ
'ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա մեծի, որ ա-
նուանեալ կոչի ըստ հոգւոյն Սոդոմ և Եգիպտոս,
9 ուր և Տէրն նոցա խաչեցաւ։ Եւ տեսցեն զնոսա ա-
մենայն ցեղք և ժողովուրդք՝ և ամենայն լեզուք և
հեթանոսք, զի դի նոցա անկեալ կայցէ զերիս ա-
ւուրս, և ոչ տացեն թաղել 'ի գերեզմանս զոսկերս
10 նոցա։ Եւ որ բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին և
խնդան 'ի վերայ նոցա, մինչև ընծայս և պատարագս
տան տանել միմեանց. վասն զի սոքա երկոքին մար-
11 գարէքս չարչարեսցեն զբնակիչս երկրի։ Եւ յետ

երից աւուրց և կիսոյ՝ հոգի կենդանի յԱստուծոյ
մտցէ 'ի նոսա, և յարիցեն կացցեն 'ի վերայ ոտից
իւրեանց. և ահ և երկիւղ մեծ անկաւ 'ի վերայ ա֊
մենեցուն՝ որ տեսինն զնոսա։ Եւ լուայ զձայն մեծ՝ 12
որ ասէր ցնոսա. Վերացիք ելէք աստ։ Եւ վերա֊
ցան ելին յերկինս ամպովք. և տեսին զնոսա թշնա֊
միք իւրեանց. և 'ի ժամուն յայնմիկ շարժումն մեծ 13
եղև. և տասներորդ մասն քաղաքին ընկղմեցաւ, և
մեռան 'ի շարժմանէն արք եօթն հազար. և յետ այ֊
նորիկ ահ մեծ եղև յամենեսեան, և փառս տային
Աստուծոյ երկնաւորի։ Ահաւասիկ վայն երկրորդ 14
էանց, և վայն երրորդ գալոց է վաղվաղակի։ Եւ յոր֊ 15
ժամ եօթներորդ Հրեշտակն հարկանէր զփողն, ե֊
ղև ձայն յերկինս և ասէ. Եղև թագաւորութիւն
ամենայն տիեզերաց Տեառն մերոյ և Քրիստոսի իւ֊
րոյ, և թագաւորեսցէ 'ի վերայ ամենայնի յաւի֊
տեանս յաւիտենից։ Եւ քսան և չորս երիցունքն՝ 16
որ նստէին յաթոռս իւրեանց առաջի Աստուծոյ՝ ան֊
կանէին 'ի վերայ երեսաց իւրեանց և երկիր պագա֊
նէին տեառն Աստուծոյ, և ասէին. Գոհանամք 17
զքէն, տէր Աստուած ամենակալ, որ էն և ես, և ա֊
ռեր զզօրութիւն քո մեծ և թագաւորեցեր. և հե֊ 18
թանոսք բարկացան, և եկն բարկութիւն քո, և ժա֊
մանակ մեռելոց՝ զի դատեսցին. և տաս վարձս ծա֊
ռայից քոց մարգարէից, և սրբոց երկիւղածաց ա֊
նուան քոյ՝ փոքունց և մեծամեծաց, և ապականես
զապականիչս երկրի։ Եւ բացաւ տաճարն Աստուծոյ 19
որ յերկինս, և երևեցաւ տապանակն Աստուծոյ 'ի
տաճարն իւր. և եղեն փայլատակմունք և ձայնք և ո֊
րոտմունք և շարժումն և կարկուտ մեծամեծ։

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Եւ նշան մեծ երևեցաւ յերկինս. կին մի արկեալ
զիւրև զարեգակն, և լուսին 'ի ներքոյ ոտից նորա.
և 'ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղեայ յերկոտա֊
2 սանից. և էր յղի, և ճչէր յերկնելն, և բազում
3 վշտօք մերձ էր 'ի ծնանել։ Եւ երևեցաւ այլ նշան
յերկինս, և ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն, որոյ
էին գլուխք եօթն և եղջիւրք տասն. և 'ի վերայ
4 գլխոց նորա եօթն խոյրք. և տուտն նորա քարշէր
զերրորդ մասն աստեղաց երկնից, և արկ զնոսա
յերկիր. և վիշապն կայր առաջի կնոջն՝ որ հանդեր֊
ձեալ էր ծնանել, զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝
5 կլցէ զնա վիշապն։ Եւ ծնաւ կինն արու՝ որ հան֊
դերձեալ է հովուել զամենայն հեթանոսս գաւա֊
զանաւ երկաթեաւ. և յափշտակեցաւ որդի նորա
6 առ Աստուած և առ աթոռ նորա. և կինն փախեաւ
յանապատ՝ ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱս֊
տուծոյ, զի կերակրեսցի անդ աւուրս հազար երկե֊
7 րիւր և վաթսուն։ Եւ եղև պատերազմ յերկինս,
Միքայէլ և Հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին,
8 և վիշապն պատերազմէր զօրօք իւրովք. և ոչ կարա֊
ցին կալ ընդդէմ, և տեղի ոչ գտաւ նոցա յերկինս։
9 Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին որ անուա֊
նեալ կոչի Բէեղզեբուղ և սատանայ, որ մոլորեցոյց
զամենայն տիեզերս երկրի. և հրեշտակք նորա ընդ
10 նմա անկան։ Եւ լուայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր.
Արդ եղև զօրութիւն և փրկութիւն և արքայու֊
թիւն Աստուծոյ մերոյ, և իշխանութիւն օծելոյ նո֊
րա. զի անկաւ չարախօսն եղբարց մերոց, որ չարա֊
խօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ զտիւ և զգիշեր։
11 Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ գառինն, և բա֊
նիւ վկայութեան նորա, և ոչ հաճեցան ընդ վիշապն
12 մինչև 'ի մահ. վասն այսորիկ ուրախ լիջին երկինք

և ամենայն որ բնակեալ են 'ի նմա։ Վա՜յ երկրի և
ծովու, զի անկաւ բանսարկուն առ ձեզ, որ ունի
զցասումն բազում, և կայցէ առ սակաւ մի ժամա-
նակս։ Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ յեր- 13
կիր, զհետ եղև կնոջն որ ծնաւ զմանուկն արու։ Եւ 14
տուաւ կնոջն երկու թևք արծուոյ մեծի՝ զի թռիցէ
յանապատ 'ի տեղի իւր, ուր կերակրէր անդ՝ ժամա-
նակ և ժամանակս և կէս ժամանակի՝ յերեսաց օ-
ձին. և եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն 15
ջուր՝ զի ընկղմեսցէ զնա։ Եւ օգնեաց երկիր կնոջն, 16
և եբաց երկիր զբերան իւր և եկուլ զջուրն՝ զոր ե-
հեղ վիշապն 'ի բերանոյ իւրմէ։ Եւ ցասեաւ վի- 17
շապն ընդ կնոջն, և գնաց պատերազմել ընդ այլ զա-
ւակս նորա որք պահէին զպատուիրանս Աստուծոյ,
և ունէին զվկայութիւնն Յիսուսի, և կաց 'ի վերայ 18
աւազոյ ծովու։

ԳԼՈՒԽ ԺԳ

Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, և ունէր 1
գլուխս եօթն և եղջիւրս տասն, և 'ի վերայ եղջերաց
նորա տասն խոյր, և 'ի վերայ գլխոյ նորա անուն
հայհոյութեան։ Եւ գազանն զոր տեսի՝ նման ըն- 2
ձու, և ոտք նորա իբրև զարջու, և բերան նորա որ-
պէս զառիւծու. և ետ նմա վիշապն զզօրութիւն իւր՝
և զաթոռ իւր և զիշխանութիւն մեծ. և մի 'ի գլ- 3
խոյ նորա վիրաւորեալ էր 'ի մահ, և վէր մահուան
նորա ողջանայր։ Եւ զարմացաւ ամենայն երկիր ընդ
գազանն, զի ետ նմա վիշապն զթագաւորութիւն
իւր. և երկիր պագին վիշապին՝ որ ետ զիշխանու- 4
թիւնն գազանին, և ասէին. Ո՞վ իցէ նման գազա-
նիս, կամ ո՞վ կարիցէ պատերազմել ընդ դմա։ Եւ 5
տուաւ նմա բերան խօսել զմեծամեծս և զհայհոյու-
թիւն, և տուաւ նմա իշխանութիւն զամիս քառա-
սուն և երկու։ Եւ եբաց զբերան իւր հայհոյու- 6

թեամբ առ Աստուած, և հայհոյեաց զանուն նորա
7 և զխորանն նորա և զերկնային խորանն։ Եւ տուաւ
նմա իշխանութիւն 'ի վերայ ամենայն ազգաց և լե-
8 զուաց և ժողովրդոց. զի երկրպագեսցեն նմա ամե-
նայն որ բնակեալ են ընդ երեսս երկրի. որոց ոչ են
գրեալ անուանք նոցա 'ի դպրութիւն կենաց գառինն
9 զենլոյ իսկզբանէ աշխարհի։ Ոյք ունին ականջս
լսելոյ՝ լուիցեն։ Զի են ոմանք՝ որք 'ի գերութեան
10 վարեսցին, և են ոմանք՝ որ սրով մեռցին, և են ո-
մանք՝ որ անձամբ զանձինս սպանանիցեն. աստ է
11 համբերութիւն և հաւատ սրբոց։ Եւ տեսի այլ
գազան զի ելանէր յերկրէ, և ունէր եղջիւրս երկու՝
12 նման գառինն. և խօսէր իբրև զվիշապն. և զիշխա-
նութիւն զամենայն զառաջնոյ գազանին գործէր ա-
ռաջի նորա. և առնէր զերկիր և զամենայն բնակիչս
նորա՝ զի երկիր պագանիցեն գազանին առաջնոյ՝ մին-
13 չև ողջացի վէր մահու նորա. և առնէր նշանս բա-
զումս, և տայր հրոյ իջանել յերկնից յերկիր՝ առա-
14 ջի մարդկան, և մոլորեցուցանէր զորս բնակեալ են
յերկիր նշանօքն, որ տուեալ են 'ի ձեռս նորա՝ առ-
նել առաջի գազանին. ասեն ցնա բնակիչք երկրի.
Արա զպատկեր գազանին, որ 'ի վերայ սրոյն եկեաց։
15 Եւ տուաւ նմա իշխանութիւն, զի տացէ հոգի պատ-
կերի գազանին, և զի խօսեսցի պատկերն, և երկիր
պագցեն նմա ամենայն բնակիչք երկրի. և որ ոչ
պագցէ երկիր պատկերի գազանին, սպանցէ զնա։
16 Եւ արասցէ զամենայն փոքունս և զմեծամեծս և
զմեծատունս և զաղքատս և զազատս և զծառայս,
զի տացէ նոցա դրոշմ յաջոյ ձեռին և 'ի վերայ ճա-
17 կատու նոցա. և ոչ ոք կարասցէ գնել և վաճառել՝
եթէ ոչ ունիցի զդրոշմ դրոյն՝ և զանուն գազանին
18 և զթիւ անուան նորա։ Աստ է իմաստութիւն. որ
ունի միտս՝ համարեսցի զթիւ գազանին. թիւ ե-
ղեալ մարդոյ, և թիւ անուան նորա՝ է այս. վեց
հարիւր վաթսուն և վեց։

ԳԼՈՒԽ ԺԴ

Եւ տեսի՛ և ահա գառն կայր 'ի վերայ լերինն 1
Սիոնի, և ընդ նմա հարիւր քառասուն և չորս հա-
զարք, որ ունէին զանուն նորա, և անուն Հօր նորա
գրեալ'ի վերայ ճակատուց նոցա։ Եւ լուայ ձայն 2
յերկնից՝ որպէս զձայն ջուրց բազմաց, և ձայն որոտ-
ման մեծի. և լուայ իբրև զձայն քնարահարաց, զի
հարկանէին զքնարս իւրեանց. և երգէին զերգս նորս 3
առաջի աթոռոյն՝ և առաջի չորից կենդանեացն՝ և
առաջի երիցանցն, և ոչ ոք կարէ գիտել զերգս նո-
ցա. բայց միայն հարիւր քառասուն և չորս հա-
զարքն, որք ազատեալ են յերկրէ։ Սոքա են՝ որք 4
ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք. սոքա
զկնի երթան գառինն ուր և երթիցէ. սոքա ընտ- 5
րեցան'ի մարդկանէ առաջի Աստուծոյ և գառինն, և
'ի բերան նոցա ոչ գտաւ սուտ, զի անբիծք են։ Եւ 6
տեսի այլ Հրեշտակ թռուցեալ'ի մէջ երկնից. և
ունէր աւետիս յաւիտենական՝ աւետարանել ամե-
նայն ազգաց և լեզուաց որ բնակեալ են յերկրի. և
ասէր'ի ձայն մեծ. Երկերուք յԱստուծոյ՝ և տուք 7
փառս նմա, զի եկն ժամ դատաստանի նորա. և
երկիր պագէք արարչին երկնի և երկրի և ծովու և
աղբերաց ջուրց։ Եւ այլ Հրեշտակ երկրորդ գայր 8
զհետ նորա և ասէր. Անկաւ անկաւ Բաբելոն մեծն՝
'ի գինւոյ արբեցութենէ 'ի ցասմանէ՝ 'ի պոռնկու-
թենէ իւրմէ, որ արբեցոյց զամենայն հեթանոս։
Եւ այլ Հրեշտակ երրորդ գայր զհետ նոցա և 'ի 9
ձայն մեծ ասէր. Ով ոք երկրպագեաց գազանին և
պատկերի նորա, և կամ զդրոշմ նշանի նորա առ 'ի
ճակատ իւր, և կամ 'ի վերայ աջու ձեռին իւրոյ,
այնպիսին արբցէ 'ի բաժակէ ցասմանն Աստուծոյ՝ 10
արկելոյ յանապակ բարկութեան բաժակին, և
տանջեսցի հրով և ծծմբով առաջի Աստուծոյ և գա-

11 ռինն. և ծուխ նոցա ելցէ յաւիտեանս յաւիտենից.
և ոչ ունին հանգիստ՝ որք երկիր պագին գազանին
'ի տուէ և 'ի գիշերի. և որք երկիր պագին պատկե-
12 րին, և առին զդրոշմ և զանուն նորա։ Եւ համբե-
րութիւն սրբոցն աստ է. այս որք պահեն զպատուի-
13 րանս Աստուծոյ, և զհաւատս Յիսուսի։ Եւ լուայ
ձայն յերկնից՝ որ ասէր ցիս. Գրեա, երանի մեռե-
լոյն որք 'ի Տէր ննջեցին այժմիկ վաղվաղակի. զայս
ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւ-
րեանց. բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ
14 նոցա։ Եւ տեսի և ահա ամպ սպիտակ, և 'ի վերայ
ամպոյն նստէր նման որդւոյ մարդոյ, և 'ի գլուխ իւր
պսակ ոսկի, և 'ի ձեռին իւրում ունէր գերանդի
15 սրեալ։ Եւ այլ Հրեշտակ ելանէր յերկնից, աղա-
ղակէր 'ի ձայն մեծ և ասէր. Որ նստիդ 'ի վերայ
ամպոյդ՝ առաքեա զգերանդիդ քո և հնձեա, զի եկն
16 ժամանակ հնձոց, և հասեալ են հունձք երկրի։ Եւ
արկ՝ որ նստէր 'ի վերայ ամպոյն՝ զգերանդին իւր
17 յերկիր, և հնձէր զամենայն բնակիչս երկրի։ Եւ
այլ Հրեշտակ ելանէր 'ի տաճարէն որ յերկինս, և
18 ունէր և սա գերանդի սրեալ։ Եւ այլ Հրեշտակ ե-
լանէր 'ի սեղանոյն, որ ունէր իշխանութիւն 'ի վե-
րայ հրոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ առ Հրեշ-
տակն՝ որ ունէր զգերանդին սրեալ, և ասէր. Կթեա
զողկոյզս այգւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ 'ի
19 դմա։ Եւ արկ Հրեշտակն զգերանդի իւր յերկիր,
և կթէր զխաղող նորա, և արկանէր 'ի հնծանն
20 Աստուծոյ 'ի մեծ։ Եւ կոխեցաւ հնծանն արտաքոյ
քաղաքին, և ելանէր 'ի հնծանէն արիւն մինչև 'ի
սանձս ձիոյն. և երկայնութիւն նորա հազար և վեց
հարիւր ասպարէս։

ԳԼՈՒԽ ԺԵ

Եւ տեսի այլ նշան յերկինս՝ մեծ և սքանչելի. 1
Հրեշտակս եօթն՝ որք ունէին եօթն վէրս զկնի,
զի նոքօք կատարէր բարկութիւն Աստուծոյ։ Եւ տե- 2
սի որպէս ծով ապակեղէն խառնեալ հրով. և որք
յաղթեցին գազանին և թուոյ անուան նորա՝ և պատ-
կերի նորա և դրոշմի նորա, նոքա կային 'ի վերայ ծո-
վուն ապակեղինի, և ունէին զքնարս Աստուծոյ, և 3
երգէին զերգս Մովսիսի առաջի Աստուծոյ, և զեր-
գըս գառինն՝ ասելով. Թէ մեծամեծ և սքանչելի են
գործք քո, տէր Աստուած ամենակալ, արդար՝ և
ճշմարիտ են ճանապարհք քո, Թագաւոր ամենայն
հեթանոսաց. և ո՛վ ոք ոչ երկիցէ՝ և փառաւորեսցէ 4
զՏէր անուն քո. զի դու միայն սուրբ և արժանի
երկրպագելոյ. զի ամենայն հեթանոսք եկեսցեն և
երկիր պագցեն առաջի քո, Տէր, յորժամ արդա-
րութիւն քո յայտնեսցի։ Եւ յետ այսորիկ տեսի՝ և 5
բացաւ տաճարն խորանին վկայութեան որ էր 'ի յեր-
կինս. և ելանէին եօթն Հրեշտակք՝ որ ունէին 6
եօթն հարուածս, և զգեցեալ էին 'ի տաճարին կը-
տաւս մաքուրս և պայծառս, և գօտեւորեալք էին առ
ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս։ Եւ 'ի չորից 7
կենդանեացն տուաւ եօթն Հրեշտակացն եօթն
սկաւառակս լի ցասմամբն Աստուծոյ կենդանւոյն յա-
ւիտեանս յաւիտենից։ Եւ լցաւ տաճարն ծխով փա- 8
ռացն Աստուծոյ և զօրութեան նորա. և ոչ ոք կարէ
մտանել 'ի տաճարն՝ մինչև կատարեսցին եօթն հա-
րուածքն յեօթն Հրեշտակացն։

ԳԼՈՒԽ ԺԶ

1 Եւ լուայ ձայն մեծ 'ի տաճարէն՝ զի ասէր ցեօթն
Հրեշտակսն. Երթայք հեղէք զեօթն սկաւառակսդ
2 ցասմամբն Աստուծոյ յերկիր։ Եւ գնաց առաջինն
Հրեշտակն, և եհեղ զսկաւառակ իւր յերկիր. և
եղև հարուածք չարաչար 'ի վերայ մարդկան, որ ու-
նէին զդրոշմ գազանին և երկիր պագին պատկերի
3 նորա։ Եւ երկրորդ Հրեշտակն եհեղ զսկաւառակ
իւր 'ի ծով, և դարձան Ջուրքն յարիւն մեռեալ. և
ամենայն շունչ կենդանի որ էր 'ի ծովու՝ սատակե-
4 ցաւ։ Եւ երրորդ Հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր
5 'ի գետս և յաղբիւրս Ջուրց, և եղև արիւն։ Եւ
լուայ 'ի Հրեշտակէն՝ զի ասէր. Արդար է՝ որ էնն
և է, և սուրբ 'ի գործս իւր, զի այսպէս դատեցաւ.
6 վասն զի զարիւն սրբոց և զարիւն մարգարէիցն հե-
ղին ամպարիշտք, վասն այնորիկ արիւն ետ ըմպել
7 նոցա ըստ արժանւոյն։ Եւ լուայ 'ի սեղանոյ անտի
զի ասէր. Այո, տէր Աստուած ամենակալ, արդար
8 և ճշմարիտ են դատաստանք քո։ Եւ չորրորդ Հրեշ-
տակն եհեղ 'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ արեգա-
9 կան. և տուաւ նմա խորշակահար առնել զմարդիկ
հրով. և տապացան մարդիկ 'ի տապ մեծ, և հայ-
հոյեցին զԱստուած՝ որ ունի իշխանութիւն 'ի վերայ
հարուածոցս այսոցիկ, և ոչ ապաշխարեցին 'ի փառս
10 Աստուծոյ։ Եւ հինգերորդ Հրեշտակն եհեղ 'ի
սկաւառակէ իւրմէ 'ի վերայ աթոռոյ գազանին, և
եղև թագաւորութիւն նորա խաւարեալ. և ծամէին
11 զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն, և հայհոյեցին
զԱստուած երկնից 'ի ցաւոց իւրեանց՝ և յախտէ
դառնութեանն, և ոչ ապաշխարեցին 'ի գործոց իւ-
12 րեանց։ Եւ վեցերորդ Հրեշտակն եհեղ 'ի սկաւա-
ռակէ իւրմէ 'ի վերայ գետոյն մեծի Եփրատայ, և
ցամաքեցան Ջուրք նորա, զի պատրաստեսցի ճանա-

պարհ Թագաւորի ելից արևու: Եւ տեսի՝ զի ելա- 13
նէր 'ի բերանոյ վիշապին՝ և 'ի բերանոյ գազանին՝ և
'ի բերանոյ սուտ մարգարէին ոգիք երեք անսուրբք
իբրև զգորտս: Քանզի նոքա էին ոգիք դիւականք՝ 14
որք առնէին զնշանս, և երթային առ Թագաւորս ա-
մենայն երկրի՝ ժողովել զնոսա 'ի պատերազմ՝ յօրն
մեծ Տեառն ամենակալի. քանզի այսպէս ասաց Տէր.
Ահա գամ իբրև զգող, երանի որ իցեն արթունք, 15
և պահեսցեն զհանդերձս իւրեանց. զի մի մերկ շըր-
ջեսցին, և երևեսցին ամօթանք իւրեանց. և ժողո- 16
վեցից զնոսա 'ի տեղի մի, որ կոչի եբրայեցերէն Ար-
մաքեդոն: Եւ եօթներորդ Հրեշտակն եհեղ 'ի սկա- 17
ւառակէ իւրմէ 'ի վերայ օդոյ. և ել ձայն մեծ յերկ-
նից և յաթոռոյն՝ ասելով. Եղև: Եւ եղեն փայլա- 18
տակմունք և ձայնք և որոտմունք, և եղև շարժումն
մեծ՝ որպիսի չիք եղեալ իսկզբանէ՝ յորմէհետէ ե-
ղև մարդ 'ի վերայ երկրի՝ այնպիսի շարժումն մեծ:
Եւ եղև քաղաքն մեծ յերիս մասն, և քաղաքք ազ- 19
գացն անկան. և Բաբելոն մեծ յիշեցաւ առաջի Աս-
տուծոյ, տալ նմա զբաժակն գինւոյ ցասման բարկու-
թէ նորա: Եւ ամենայն կղզիք փախեան, և լերինք 20
'ի միջոյ բարձան. և կարկուտ մեծ իբրև կշիռ տա- 21
ղանդոյ միոյ իջանէր յերկնից 'ի վերայ մարդկան. և
հայհոյեցին մարդիկ զԱստուած յերկինս՝ վասն հա-
րուածոյ կարկտին, զի մեծ էր հարուածն և սաստիկ:

ԳԼՈՒԽ ԺԷ

Եւ եկն մի ոմն յեօթն Հրեշտակացն՝ որք ունէին 1
զեօթն սկաւառակսն, խօսեցաւ ընդ իս և ասէ. Եկ
այսր և ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռնկին՝ որ
նստի 'ի վերայ ջուրց բազմաց. ընդ որում պոռնկեցան 2
Թագաւորք երկրի, և արբեցան բնակիչք երկրի 'ի գի-
նւոյ արբեցութեան պոռնկութեան նորա: Եւ ա՛ռ 3
տարաւ զիս յանապատ Հոգւովն. և տեսի կին մի՝

զի նստէր 'ի վերայ կարմիր գազանի, և լի էր ա-
նուամբ հայհոյութեան. և գազանն զոր տեսի՝ ու-
4 նէր գլուխս եօթն և եղջիւրս տասն: Եւ կինն զգե-
ցեալ էր ծիրանիս և կարմիրս, և զարդարեալ ոսկւով
և մարգարտով և ականբք պատուականօք, ունելով
բաժակ ոսկի 'ի ձեռին իւրում, և լի էր գարշելի և
5 անմաքուր պոռնկութեամբ. և 'ի ճակատն նորա գը-
րեալ անուն՝ խորհրդով. Մեծն Բաբելոն՝ մայր
6 պոռնկաց և գարշելեաց երկրի: Եւ տեսի զկինն ար-
բեցեալ յարենէ սրբոց և յարենէ ամենայն վկայ-
ից ն, և զարմացայ՝ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ:
7 Եւ ասէ ցիս Հրեշտակն. Ընդէ՞ր զարմացար. ես ա-
սացից քեզ զխորհուրդս կնոջն, և գազանին որ բար-
ձեալ ունի զնա. որ ունի զեօթն գլուխն և տասն եղ-
8 ջիւր: Եւ գազանդ զոր տեսեր՝ որ էր և չէր, և հան-
դերձեալ է ելանել 'ի դժոխոց՝ և 'ի կորուստ եր-
թալ, և զարմասցին ամենեքեան որ բնակեալ են 'ի
վերայ երկրի, որոց ոչ էր գրեալ անուանք նոցա 'ի
գիր կենաց իսկզբանէ աշխարհի, զոր տեսանէին ըզ-
9 գազանն, զի էր և չէ, և մերձ է: Աստ է իմաստու-
թիւն՝ որ ունի միտս. և եօթն գլուխն՝ եօթն լե-
րինք են, ուր կինն նստեալ էր 'ի վերայ նոցա. և նո-
10 քին Թագաւորք են եօթն. և Թագաւորք եօթն գո-
լով, հինգն անկան, և մին եկաց, և մինն ոչ է ե-
կեալ. և յորժամ գայ՝ սակաւիկ մի ժամանակ ու-
11 նի. և գազանն՝ որ էր և չէ, և նա ութերորդ է. և
12 է յեօթանց անտի, և 'ի կորուստ երթալոց է: Եւ
տասն եղջիւրքն զոր տեսեր՝ տասն Թագաւորք են.
որոց չև ևս է առեալ զԹագաւորութիւն, այլ առ-
նուն՝ և կան իշխանք 'ի մի ժամ. և առնուն նոքա
13 զիշխանութիւն ընդ գազանին: Սոքա մի կամս ունին,
և զզօրութիւն և զիշխանութիւն գազանին տան.
14 և ընդ գառինն պատերազմին, և գառնն յաղթէ նո-
ցա, զի Տէր է նոցա և Թագաւոր Թագաւորաց. և
որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք և հաւա-

տացեալք։ Եւ ասաց ցիս. Եւ զջուրսն զոր տեսեր՝ 15
ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են, և բազմու-
թիւնք և ազգք և լեզուք. և տասն եղջիւրքն՝ զոր տե- 16
սեր գազանին, նոքա ատեսցեն զպոռնիկն՝ և աւերեսցեն
զնա, և զմարմին նորա կերիցեն՝ և այրեսցեն զնա
հրով. քանզի Աստուած ետ 'ի սիրտս նոցա առ 'ի լի- 17
նել նոցա մի կամս, և տալ զթագաւորութիւն գա-
զանին՝ մինչև կատարեսցի բանն Աստուծոյ։ Եւ կինն 18
զոր տեսեր՝ է քաղաքն մեծ, որ ունի զթագաւորու-
թիւն 'ի վերայ թագաւորութեանց երկրի։

ԳԼՈՒԽ ԺԸ

Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ յերկ- 1
նից՝ որ ունէր իշխանութիւն մեծ, և երկիր լուսա-
ւորեցաւ 'ի փառաց նորա. և աղաղակեաց 'ի ձայն 2
մեծ՝ ասելով. Անկաւ Բաբելոն մեծն, որ եղեալ էր
բնակութիւն դիւաց, և արգել ամենայն այսոց պղ-
ծոց, և բանտ պահպանութեան ամենայն ոգւոց ան-
սրբից և ատեցելոց։ Վասն զի 'ի բարկութենէ գի- 3
նւոյ պոռնկութեան նորա արբին ամենայն ազգք և
թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան, և վա-
ճառականք երկրի՝ 'ի նորա զօրութեանն յօրանալոյ
մեծացան։ Եւ լուայ ձայն յերկնից զի ասէր. Ելէք 4
'ի միջոյ դորա, ժողովուրդ իմ, զի մի հաղորդ լիցիք
մեղաց դորա, և մի զհարուածս դորա ընդունիցիք.
զի հասին կցեցան մեղք դոցա մինչև յերկինս, և 5
յիշեաց Աստուած զամպարշտութիւնս դորա. և հա- 6
տուցանէք դմա՝ որպէս և հատոյցն մեզ, և առցէ դա
երկպատիկ ըստ գործոց իւրոց. և զբաժակն որով
խառնեացն՝ խառնեցէք դմա կրկին. և որչափ փա- 7
ռաւորեաց զինքն և խայտաց, այնչափ հատուցէք դմա
սուգ. զի 'ի սրտի իւրում ասէր՝ թէ յամենայն ժամ
նստայց ես թագուհի, և այրի ոչ ևս եղէց։ Վասն 8
այնորիկ 'ի միում աւուր եկեսցեն 'ի վերայ դորա

հարուածք, մահ և սուգ և սով, և 'ի հուր այրես-
ցի. զի հզօր է տէր Աստուած՝ որ դատեցաւն զդա.
9 և լայցեն և կոծեսցին 'ի վերայ դորա թագաւորք
երկրի՝ որք ընդ դմա պոռնկեցան և խաղացին. և հե-
ծեսցեն յորժամ տեսցեն զծուխ կիզման տանջանաց
10 դորա. 'ի հեռաստանէ կայցեն վասն երկիւղի տան-
ջանաց դորա՝ և ասասցեն. Վա՜յ քաղաքիդ մեծի
Բաբելովնի. քաղաք հզօր՝ զի 'ի միում ժամու եկին
11 հասին դատաստանք քո։ Եւ վաճառականք երկրի
ողբասցեն և սգասցեն 'ի վերայ քո, զի զբեռն նոցա
12 ոչ ոք գնէ. և շահք որ 'ի քէն՝ ոչ ևս իցէ, ոսկւոյ և
արծաթոյ և ականց պատուականաց՝ և մարգարտոյ
և բեհեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելի և որդան, և
ամենայն փայտ խնկոյ՝ և ամենայն անօթ փղոս-
կրեայ, և ամենայն անօթ 'ի փայտէ պատուականէ
13 և 'ի պղնձոյ և յերկաթոյ և 'ի կճոյ, և կինամոմոն
և ամենայն խունկ, և իւղ և կնդրուկ, և գինի և
ձէթ, և նաշիհ և ցորեան, և ստացուածք ամե-
նայն, արջառ և ոչխար. և երիվարաց և կառաց՝ որ
14 վայել է մարմնոց և ոգւոց մարդկան. և ամենայն
ցանկութիւն անձին քոյ գնաց 'ի քէն, և ամենայն
լուսափայլ վայելչութիւնն, պարարտն և գէրն և
15 սպիտակն գնաց 'ի քէն, և ոչ ևս գտցես զայդ։ Եւ
ամենայն շահավաճառք այսոքիւք մեծացեալք 'ի քէն
'ի բաց կացցեն վասն երկիւղի տանջանաց քոց լա-
16 լով և սուգ առնլով, ասասցեն. Վա՜յ վա՜յ քաղաք
մեծ, որ զգեցեալ էիր բեհեզս և ծիրանիս և որ-
դան, ոսկեզօծս և քարինս պատուականս և մարգա-
17 րիտս. զի 'ի միում ժամու պակասեցաւ այնչափ մե-
ծութիւն քո. և ամենայն նաւավար՝ և ամենայն որ
'ի տեղիս տեղիս նաւէն, և նաւազք, և որք միան-
գամ ուռկանաւ գործեն՝ 'ի հեռաստանէ կացցեն
18 լալով, և աղաղակեսցեն՝ տեսանելով զծուխ կիզման
նորա, ասելով. Ո՞ նմանէ քաղաքիս այսմիկ մեծի։
19 Եւ արկցեն հող 'ի վերայ գլխոց իւրեանց, և գու-

ժալով ձայնիւ մեծաւ՝ լալով և սգալով ասասցեն.
Վա՜յ վա՜յ քաղաք մեծ, որով ամենեքեան մեծանայաք՝
որք ունէաք զնաւս 'ի ծովս՝ վասն պատուականու֊
թեան քո. զի՞ 'ի միում ժամու ապականեալ կործա֊
նեցար: Ուրախ լերուք 'ի վերայ նորա, երկինք և 20
սուրբ Առաքեալք և մարգարէք, զի դատեցաւ Աս֊
տուած զդատաստան ձեր 'ի դմանէ: Եւ ա՛ռ Հրեշ֊ 21
տակն հզօր՝ քար մի իբրև զերկան մեծ, և ընկէց 'ի
ծով՝ ասելով. Այսպէս յարձակմամբ անկցի Բա֊
բելովն քաղաք մեծ, և այլ ոչ ևս գտցի. և ձայն քնա֊ 22
րերգաց և երաժշտականաց արուեստականաց և փո֊
ղահարաց և Թմբկի՝ այլ ոչ ևս լուիցի 'ի քեզ. և լոյս 23
ճրագի և ձայն երկանի այլ ոչ ևս երևեսցի 'ի քեզ.
և ձայն փեսայի և ձայն հարսին՝ այլ ոչ ևս լուիցի 'ի
քեզ. և ոչ վաճառականք քո փառաւորք և մեծա֊
մեծք երկրի, որ զուարճացեալ էին 'ի քեզ. վասն զի
կախարդութեամբ դեղատուութեան քո մոլորեցան
ամենայն ազգք. և 'ի քեզ ամենայն արիւն մարգա֊ 24
րէից և սրբոց գտաւ, և ամենայն զենելոց յերկրին
կենդանեաց:

ԳԼՈՒԽ ԺԹ

Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան 1
յերկինս՝ ասելով. Ալէլուիա, փրկութիւն և փառք
և պատիւ և զօրութիւն Աստուծոյ մերում. զի ճշ֊ 2
մարիտ և արդար են դատաստանք նորա. զի դատեաց
զպոռնիկն մեծ 'ի պոռնկութեան իւրում, և խնդրեաց
զվրէժ արեան ծառայից իւրոց 'ի ձեռաց նորա: Եւ 3
կրկին անգամ օրհնեցին և ասացին. Ալէլուիա: Եւ
ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից. և ան֊ 4
կան քսան և չորք երիցունքն և չորք կենդանիքն, և
երկիր պագին Աստուծոյ՝ որ նստէրն յաթոռ փառաց,
ասելով. Ամէն, ալէլուիա: Եւ ձայն յաթոռոյն ե֊ 5
լանէր՝ ասելով. Օրհնեցէք զԱստուած, ամենայն

ծառայք նորա, և որք երկնչիք 'ի նմանէ՝ փոքունք և
6 մեծամեծք: Եւ լուայ ձայն բազմութեան մեծի՝ իբ֊
րև զձայն ջուրց բազմաց, և իբրև զձայն հզօր որոտ֊
ման, ասելով դարձեալ. Ալէլուիա, վասն զի Թա֊
7 գաւորեաց Աստուած ամենակալ: Խնդամք և տամք
8 փառս նմա, զի եկն հարսանիք գառինն: Եւ կինն
հարսն նորա պատրաստեաց զինքն, և տուաւ նմա զգե֊
նուլ բեհեզս սպիտակս սուրբս և լուսափայլս. որ է
9 բեհեզն՝ արդարութիւն սրբոցն: Եւ մի յերիցանցն
ասէր ցիս. Գրեա զայդ. երանելիք են ամենեքեան՝
10 որ կոչեցեալ են յընթրիս հարսանեաց գառինն: Եւ
ես անկեալ առաջի ոտից նորա՝ երկիր պագի նմա,
և ասէ ցիս. Անսա, մի՛ անկանիր առաջի իմ. քանզի
և ես ծառայակից քո եմ, և եղբարց քոց՝ որք ունին
զվկայութիւնն Յիսուսի Քրիստոսի. Տեառն Աս֊
տուծոյ միայն երկրպագեա. քանզի հաստատու֊
թեամբ Յիսուսի է տեսիլդ, և հոգի մարգարէու֊
թեանդ. զի վկայութիւն Յիսուսի է՝ Հոգւովն
11 սրբով որ 'ի մարգարէսն էր: Եւ տեսի զերկինս բա֊
ցեալ, և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր 'ի նմա՝
հաւատարիմ և Ճշմարիտ, և արդարութեամբ դա֊
12 տի և պատերազմի. և աչք նորա բոց հրոյ, և 'ի վե֊
րայ գլխոյ նորա պսակս բազումս. և ունէր անուն
13 գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն ինքն. և արկեալ
զիւրև հանդերձ ներկեալ արեամբ. և կոչէր անուն
14 նորա՝ Բան Աստուծոյ. և զօրավարք երկնից և զօրք
երկնից զհետ երթային նորա ձիովք՝ զգեցեալք բե֊
15 հեզս սուրբս և սպիտակս: Եւ 'ի բերանոյ նորա ելա֊
նէր սուր սրեալ, զի նովաւ հարցէ զազգս. և նա հո֊
վուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ, և նա կո֊
խեսցէ զհնձան գինւոյ ցասման բարկութեան Աս֊
16 տուծոյ ամենակալի. և ունէր 'ի վերայ պատմուճա֊
նի իւրոյ և 'ի վերայ անդամոց իւրոց՝ գիր գրեալ.
17 Թագաւոր Թագաւորաց և Տէր տերանց: Եւ տե֊
սի այլ Հրեշտակ՝ որ կայր 'ի վերայ արեգական, զի

աղաղակեաց 'ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցե-
լոց ընդ մէջ երկնից՝ ասելով. Եկայք ժողովեցարուք
յընթրիս մեծին Աստուծոյ. և կերիջիք զմարմինս 18
թագաւորաց, և զմարմինս հզօրաց, և զմարմինս ե-
րիվարաց և ամենայն հեծելոց 'ի նոսա, և զմարմինս
ազատաց և ծառայից՝ մեծի և փոքու: Եւ տեսի 19
զգազանն և զթագաւորս երկրի և զզօրս նոցա ժողո-
վեալս՝ առնել պատերազմ ընդ այնմ որ հեծեալն էր
'ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա: Եւ ըմբռնեցաւ 20
գազանն, և որ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առնէր
զնշանս առաջի նորա, և զօրս մոլորեցոյց և ետ առ-
նուլ զդրոշմ գազանին՝ և զերկրպագուս պատկերի
նորա. և կենդանւոյն արկին զնոսա 'ի լիճ հրոյ այրե-
ցելոյ ծծմբով. և այլքն մեռան 'ի սրոյ հեծելոյն 'ի 21
վերայ ձիոյն՝ յորոյ բերանոյ ելանէր սուրն, և ամե-
նայն թռչունք յագեցան 'ի մարմնոց նոցա:

ԳԼՈՒԽ Ի

Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկնից, և 1
ունէր զփականս դժոխոց, և շղթայս մեծ 'ի ձեռին
իւրում. և ըմբռնեաց զվիշապն զառաջին, որ է բան- 2
սարկուն և սատանայ, և կապեաց զնա հազար ամ. և 3
արկ զնա յանդունդս դժոխոց, և փակեաց և կնքեաց
զնա՝ զի այլ մի ևս մոլորեցուսցէ զազգս, մինչև կատա-
րեսցի հազար ամն. և յետ այնորիկ պարտ է լուծանել
նմա սակաւ մի ժամանակ: Եւ տեսի աթոռս, և 4
նստան 'ի վերայ նոցա. և դատաւորութիւն տուաւ
նոցա՝ ընտրել զհոգիս չարչարելոցն վասն վկայու-
թեանն Յիսուսի և վասն բանին Աստուծոյ, և զորս
ոչ երկիր պագին գազանին, և ոչ առին զդրոշմ նո-
րա 'ի ճակատս իւրեանց՝ և ոչ 'ի վերայ աջոյ ձեռին
իւրեանց. և կացին և թագաւորեցին ընդ Քրիս-
տոսի հազար ամ: Եւ յետ այսորիկ 'ի մեռելոց ոչ 5
ոք եկաց, մինչև 'ի կատարել հազար ամն. այս է

6 յարութիւն առաջին: Երանի սրբոյն, որք ունին
բաժին 'ի յարութեանն առաջնում. 'ի վերայ սոցա
երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն, այլ եղիցին
քահանայք Աստուծոյ և Տեառն Յիսուսի Քրիստո-
7 սի, և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ: Եւ յետ
հազար ամին լուծցէ զսատանայ և հանցէ 'ի բան-
տէ անտի. ելցէ և մոլորեցուսցէ զազգս ամենայն ընդ
չորս կողմանս երկրի. և զԳոգ և զՄագոգ առցէ 'ի
ձեռս՝ ժողովել նոքօք զամենայն զօրս 'ի պատերազմ,
8 որոց թիւ նոցա իբրև զաւազ ծովու. և ելցեն 'ի լայ-
նութիւն երկրի, և պատեսցեն շուրջ զբանակս սըր-
9 բոցն և զքաղաքն սիրելոյ: Եւ իջցէ հուր յերկ-
նից առ 'ի յԱստուծոյ՝ և կերիցէ զնոսա, և զզօրա-
գլուխն նոցա զսատանայ՝ որ մոլորեցոյց զնոսա. և
արկցէ զնոսա 'ի ծովն հրոյ և ծծմբոյ՝ ուր էր գա-
10 զանն և սուտ մարգարէն, և չարչարեսցին զտիւ և
11 զգիշեր: Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ, և 'ի վե-
րայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին և փախ-
12 չէին երկինք և երկիր, և տեղի ոչ գտաւ նոցա: Եւ
տեսի զմեռեալս մեծամեծս և զփոքունս որ կային
առաջի աթոռոյն. և գրեանք բանային, և այլ գիրք
բացաւ կենաց, և դատեցան մեռեալք 'ի գրելոցն՝
13 ըստ գործոց իւրեանց: Եւ ետ ծով զմեռեալս իւր,
և մահ և դժոխք զիւրեանց մեռեալս. և դատեցան
14 իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց. մահ և դժոխք
15 մատնեցան 'ի լիճ հրոյն. և որ ոչ ոք գտաւ 'ի գիրն
կենաց գրեալ՝ արկաւ 'ի լիճ հրոյն:

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Եւ տեսի երկին նոր և երկիր նոր. քանզի առա-
2 ջինն երկինք և երկիր էանց. և ծով ոչ գոյր. և ըզ-
քաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի՝ զի իջանէր
յԱստուծոյ և յերկնից՝ զարդարեալ և պատրաս-
3 տեալ որպէս հարսն առն իւրոյ: Եւ լուայ ձայն

յերկնից՝ որ ասէր. Ահաւասիկ խորանն Աստուծոյ ՚ի
մէջ մարդկան, և բնակեսցէ ընդ նոսա. և նոքա ժո-
ղովուրդ նմա, և սա Աստուած նոցա. և ջնջեսցէ զա- 4
մենայն արտօսր յաչաց նոցա. և մահ ոչ ևս դոյ, ոչ
սուգ և ոչ աղաղակ, ոչ ցաւք և ոչ աշխատանք ոչ ևս
դոյ, զի առաջինն անցին։ Եւ ասաց ցիս՝ որ նստէր ՚ի 5
վերայ աթոռոյն. Ահաւասիկ առնեմ զամենայն նոր.
և ասաց ցիս. Գրեա. այս բանք ճշմարիտ և հաւա-
տարիմք։ Եւ ասէ ցիս. Եղէ ես ալփա և ով, սկիզբն 6
և կատարած. ես ծարաւելոցն տամ յաղբերէ ջրոյ
կենաց ձրի։ Որ յաղթէ՝ ժառանգեսցէ զայս ամե- 7
նայն, և ես եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին
ինձ որդիք. և ծուլացն և անհաւատից՝ սպանողաց 8
և պոռնկաց՝ և կախարդաց և կռապաշտից՝ և դեղա-
տուաց, և ամենայն ստոց՝ ամպարշտաց, որոց բաժինն
իւրեանց ՚ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով. որ է
մահն երկրորդ։ Եւ եկն առ իս մի յեօթն Հրեշտա- 9
կացն, որք ունէին զեօթն սկաւառակսն լցեալս եօթն
վախճանաւ կատարածովք, խօսեցաւ ընդ իս և ասէ.
Եկ՝ ցուցից քեզ զհարսնն և զկին գառինն։ Եւ առ 10
տարաւ զիս ՚ի լեառն մի բարձր և մեծ՝ հոգւովն, և
եցոյց ինձ զքաղաք մեծ և սուրբ՝ Երուսաղէմ, զի ի-
ջեալ էր յերկնից առ ՚ի յԱստուծոյ, և ունէր զփառս
Աստուծոյ. և էր ՚ի նմա լուսաւորութիւն նմանեալ 11
ականց պատուականաց, քար յասպիս սառնատեսակ
և կենդանի։ Եւ էին պարիսպք նորա մեծ և բարձր, 12
և ունէր դրունս երկոտասան, և յերկոտասան դրունսն
երկոտասան Հրեշտակս, և անուանք իւրաքանչիւ-
րոցն ՚ի վերայ դրանցն գրեալ էին՝ ըստ երկոտասան
ցեղիցն Իսրայելի։ Յարևելից կողմանէ դրունք ե- 13
րեք, և ՚ի հիւսիսոյ կողմանէ դրունք երեք, և ՚ի
հարաւոյ կողմանէ դրունք երեք, և յարևմտից կող-
մանէ դրունք երեք։ Եւ պարիսպ քաղաքին ունէր 14
հիմունս երկոտասան, և ՚ի նոսա երկոտասան ա-
նուանք երկոտասան Առաքելոց գառինն։ Եւ որ խօ- 15

սէրն ընդ իս՝ ունէր եղէգն ոսկի ՚ի ձեռին իւրում,
զի չափեսցէ զքաղաքն և զդրունս նորա և զպարիսպս
16 նորա։ Եւ էր քաղաքն քառակուսի. և որչափ եր-
կայնութիւն նորա՝ նոյնչափ և լայնութիւն և բարձ-
րութիւն հաւասար. և էր չափ երկայնութեան
նորա՝ երկոտասան հազար ասպարէզս, և լայնու-
17 թիւն նորա և բարձրութիւն միաչափ՝ կիւլօս։ Եւ
չափեաց զպարիսպն նորա հարիւր և քառասուն և
չորս ասպարէզս. չափ մարդոյ՝ որ է Հրեշտակի.
18 և էր շինուած պարսպաց քաղաքին յասպիս. և
քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման սուրբ և ապիտակ
19 ապակւոյ։ Եւ հիմունք քաղաքին յամենայն ականց
պատուականաց. հիմն առաջին պարսպին յասպիս,
երկրորդն՝ շափիղա, երրորդն՝ պղնձադոյն, չորրորդն՝
20 զմրուխտ, հինգերորդն՝ եղեգնաքար, վեցերորդն՝
սարդիոն, եօթներորդն՝ ոսկեքար, ութերորդն՝ բիւ-
րեղ, իններորդն՝ տպազիոն, տասներորդն՝ քրիսո-
պրասոս, մետասանն՝ յակինթ, երկոտասանն՝ ամե-
21 թոյս։ Եւ էին երկոտասան դրունք յերկոտասան
մարգարտաց՝ միաձև. և իւրաքանչիւրոցն դրունքն
էին մի մի դուռն ՚ի միոյ միոյ մարգարտէ. և ընդար-
ձակութիւն քաղաքին ոսկի մաքուր՝ որպէս զապակի
22 պայծառ. և տաճար ոչ տեսի ՚ի նմա, քանզի տէր
Աստուած ամենակալ տաճար էր ՚ի նմա՝ և գառնն։
23 Եւ քաղաքին չէին պէտք արեգական և լուսնի, զի
լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն Աստուծոյ լու-
սաւորէին զնա յամենայն ժամ. և ճրագ ՚ի նմա
24 գառնն. և գնային հեթանոսք ՚ի լոյս նորա, և թա-
գաւորք երկրի լուսազգեաց լինէին ՚ի փառաց նորա։
25 Եւ դրունք նորա ոչ փակէին ՚ի տուէ և ՚ի գիշերի,
26 այլ բաց կային հանապազորդ. և գիշեր ոչ ևս լինէր
27 ՚ի նմա, այլ փառք և պատիւ ազգաց. և ոչ մտցէ
անդ ամենայն չարակամ և պիղծ և ստութիւն,
բայց միայն որ գրեալ են ՚ի դպրութիւն կենաց
գառինն։

ԳԼՈՒԽ ԻԲ

Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ՝ սառնա- 1
տեսակ, որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ և գառինն,
և գնայր’ի մէջ հրապարակաց քաղաքին. և զեզերբ 2
գետոյն աստի և անտի ծառ կենաց՝ որ բերէր պտուղս
երկոտասան. ըստ միոյ միոյ ամսոց տային զպտուղս
իւրեանց. և տերև ծառոյն էր բժշկութիւն հեթա-
նոսաց։ Եւ նզովք անդ ոչ ևս էին. և աթոռն Աս- 3
տուծոյ և գառին նորա էր’ի նմա, և ծառայք նորա
պաշտէին զնա, և տեսանէին զերեսս նորա. և անուն 4
նորա գրեալ էր’ի ճակատս նոցա. և գիշեր ոչ անդ, 5
և չէր ինչ անդ պէտք ճրագի և լուսոյ արեգական.
վասն զի Տէր Աստուած լուսաւորէր զնոսա. և թա-
գաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից։ Եւ ասէ ցիս. 6
Այս բանք հաւատարիմ է և ճշմարիտ. և տէր Աս-
տուած մարգարէից սրբոց՝ առաքեաց զհրեշտակ իւր
ծառայից իւրում ցուցանել զոր լինելոց է վաղվաղա-
կի։ Երանի որ պահէ զբանս մարգարէութեանս զայս։ 7
Եւ ես Յովհաննէս լուայ և տեսի զայս ամենայն. 8
և յորժամ լուայ և տեսի, անկայ և երկիր պագի
Հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ զայս ամենայն։ Եւ 9
ասէ ցիս. Մի՛ անկանիր առաջի իմ և երկիր պագա-
նէր. քանզի և ես ծառայակից քո եմ և եղբարց քոց՝
որ պահեսցեն զբան մարգարէութեան գրոցս այսորիկ.
Աստուծոյ երկիր պագ։ Եւ ասէ ցիս դարձեալ. Մի՛ 10
կնքեր զբանս մարգարէական գրոցս այսմիկ. քանզի
ժամանակս մերձ է։ Որ ամպարշտելոցն է՝ ամպարշ- 11
տեսցի, և որ աղտեղանալոցն է՝ աղտեղասցի, և որ
արդարանալոցն է՝ արդարասցի, և որ սրբելոցն է՝
սրբեսցի. ահա գամ վաղվաղակի՝ և վարձք իմ ընդ 12
իս, հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց։
Ես եմ ալփա և օվ, սկիզբն և կատարած, առաջին 13
և վերջին։ Երանելիք են որ պահեն զպատուիրանս 14

նորա. Նոքա ունին իշխանութիւն ուտել’ի փայտէն
15 կենաց և մտանել ընդ դրունս քաղաքին։ Այլ ել-
ցեն արտաքս շունք և դեղատուք, սպանօղք և կռա-
16 պաշտք, և ամենեքեան որ սիրեն զստութիւն։ Ես
Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ՝ վկայել զայս ձեզ
17 եկեղեցեացդ. ես արմատ և սեռ’ի Դաւթայ, և
աստղ պայծառ առաւօտին, և հոգի և փեսայն որ
գալոցն եմ. և որ լսէ ասելով թէ եկ, և որ ծարա-
ւի իցէ՝ եկեսցէ, և որ ոք կամի առնուլ զջուրն կե-
18 նաց ձրի։ Վկայեմ և ես ամենայնի՝ որ լսէ զբանս
մարգարէութեան գրոցս այսմիկ. թէ ոք յաւելցէ’ի
սա, յաւելցէ Աստուած’ի վերայ նորա զեօթն հա-
19 րուածսն գրեալս’ի գիրս յայս։ Եւ եթէ ոք պա-
կասեցուսցէ’ի բանից մարգարէութեան գրոցս այս-
միկ, պակասեցուսցէ և հատցէ Աստուած զբաժին
նորա’ի ծառոյն կենաց, և’ի քաղաքէն սրբոյ՝ որ
20 գրեալ է’ի գիրս յայս։ Ասաց որ վկայեացն զայս.
21 գամ ես վաղվաղակի. ամէն։ Եկն տէր Յիսուս
Քրիստոս։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի’ի վերայ ամենայն սրբոց. Ամէն։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀՍԽՀ-ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ԳՈՐԾՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

ԵՒ ԹՂԹՈՑ

Գործք Առաքելոց	3
Թուղթ Պաւղոսի առ հռովմայեցիս	77
Թուղթ Պաւղոսի առ կորնթ. առաջին	108
Թուղթ Պաւղոսի առ կորնթ. երկրորդ	137
Թուղթ Պաւղոսի առ գաղատացիս	157
Թուղթ Պաւղոսի առ եփեսացիս	167
Թուղթ Պաւղոսի առ փիլիպեցիս	178
Թուղթ Պաւղոսի առ կողոսացիս	186
Թուղթ Պաւղոսի առ թեսաղ. առաջին	193
Թուղթ Պաւղոսի առ թեսաղ. երկրորդ	200
Թուղթ Պաւղոսի առ տիմոթէոս առաջին	204
Թուղթ Պաւղոսի առ տիմոթէոս երկրորդ	213
Թուղթ Պաւղոսի առ տիտոս	219
Թուղթ Պաւղոսի առ փիլիմոն	223
Թուղթ Պաւղոսի առ եբրայեցիս	225
Թուղթ Կաթողիկեայց Յակոբու	248
Թուղթ Կաթող. Պետ. առաջին	256
Թուղթ Կաթող. Պետ. երկրորդ	265
Թուղթ Յովհաննու առաջին	271
Թուղթ Յովհաննու երկրորդ	279
Թուղթ Յովհաննու երրորդ	281
Թուղթ Յուդայի առաքելոյ	283
Յայտնութիւն Յովհաննու	286

1426

ՀՀ Ազգային գրադարան
NL0028265

1426